¹³ «Տան-դո», **Է. Աղայան**, *Արդի հայերենի բացառական բառարան*, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 1409: «Տան-դո», *ժամանակակից հայոց լեզվի բացառական բառարան* Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., հատ. 4, 1980, էջ 442:

համար Կոմիտասը դիմել է այնպիսի տեխնիկայի, որն իր ժամանակ արոճեստիոնալ երաժշտության մեջ գոյություն չուներ: Համատեղվում են զանգերի վերարտադրության 3/4 և բուն բովանդակային նյութի 5/4 չափերով շարադրանքները: Արդյունքում՝ յուրաքանչյուր տակտոմ տարբերվում է մետրական բախումների հարաբերակցությունը: Կերպարային երկու ոլորտների տարանջատումն ակնարկում է անձնական մասնավոր խնդիրների և հավերժական երևույթների հակադրությունը:

Հատված Կոմիտասի «Տանդո» խմբերգի¹⁴.

Օրինակ 1

The image shows a musical score for the piece "Tando" by Komitas. It consists of eight staves. The top two staves are vocal lines (Soprano and Alto/Tenor), and the bottom six staves are piano accompaniment (Right and Left Hand). The score includes dynamic markings such as *p*, *resc.*, *f*, and *mf*. The lyrics are in Armenian and are written below the vocal lines. The piece is in a minor key and features a complex rhythmic structure with a 5/4 time signature.

Ռ. Աթայանը «Տանդո» խմբերգը համարում է 1891 թ. կամ ավելի վաղ գրված ստեղծագործություն¹⁵: Հիմքում Հովհաննես Հովհաննիսյանի «Գյուղի ժամը» բանաստեղծությունն է: Այս ստեղծագործությունը ժողովրդական երգերի մի քանի դաշնակումների հետ շարադրված է ճեմարանի ուսանողների կազմած երգարաններից մեկում: Այստեղից Ռ. Աթայանը եզրակացնում է, որ դրանք ուսանողների շրջանում կատարվել են: Ռ. Աթայանն ինքն այս գործը Կոմիտասի առաջին ստեղծագործությունը համարվող «Ազգային օրհներգի» հետ միասին

¹⁴ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 4, էջ 150:

¹⁵ Ռ. Աթայան, Կոմիտասի երաժշտական ժառանգությունը, *Կոմիտասական 1*, էջ 61:

որակում է որպես «դեռևս մասնագիտական պատրաստություն չունեցող Կոմիտասի ստեղծագործական շնորհքի եռուզեռը»¹⁶:

Կոմիտասն իրականացրել է տարբեր մետրերի տեխնիկական զուգակցումը XX դարի վերջին, երբ պոլիմետրն արևմտաեվրոպական երաժշտության մեջ դեռևս գործնական կիրառություն չուներ: Անգամ եթե այն տարածված լիներ, 1890-ական թվականների դրությամբ Կոմիտասը, դեռևս ճեմարանի ուսանող լինելով, չէր կարող տեղյակ լինել դրա մասին:

Պոլիմետրը երկու կամ ավելի մետրական կառույցների միաժամանակյա համակցությունն է¹⁷: Նրա վաղագույն դրսևորումները հայտնի են Վերածննդի դարաշրջանից, մասնավորապես՝ Գիյոմ դե Մաշոյի պոլիֆոնիկ ստեղծագործություններից¹⁸: Հայտնի է նաև Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտի «Դոն ժուան» օպերայի առաջին գործողության ֆինալում 3/4, 2/4 և 3/8 մետրերով երեք տարբեր պարերի զուգակցումը: Սակայն այս օրինակները մասնավոր դեպքեր են միայն: Պոլիմետրի ստեղծագործական տեխնիկական համակարգված կիրառություն և զարգացում է ստացել միայն XX դարում, մասնավորապես՝ Իգոր Ստրավինսկու, Օլիվյե Մեսիանի, Չարլզ Այվզի, Էլիոտ Քարթերի, Դյերո Լիգետիի ստեղծագործությունների մեջ:

Պոլիմետրն ունի երկու տարատեսակ՝ թաքնված և բացահայտ¹⁹: Ի տարբերություն թաքնված պոլիմետրի, որտեղ ընդհանուր մետրի պայմաններում ռիթմիկ ստորաբաժանումների արդյունքում «գաղտնի» դրսևորվում են տարբեր մետրեր, բացահայտ պոլիմետրը ենթադրում է նոտագրության մեջ տարբեր մետրական միավորների համակցություն: Կոմիտասը «Տանդո» խմբերգը նոտագրել է բացահայտ պոլիմետրի մեթոդով: Հարց է առաջանում, թե նա ինչպես է ճեմարանում սովորելու դրությամբ, դեռևս չունենալով բեռլինյան կրթություն, երաժշտական նյութը շարադրել այդ սկզբունքով: Երևույթը հատկանշական է ժամանակագրության առումով: Կոմիտասը պոլիմետր իրականացրել է այն ժամանակ, երբ արևմտաեվրոպական երաժշտությունը դեռևս կիրառում էր միայն ավանդական դասական մետրերի: Տեղին է հիշել, որ Կոմիտասը հետագայում իր ստեղծագործությունների մեջ հաճախ հրաժարվում էր դասական տակտատումից առհասարակ՝ հիմք ընդունելով խոսքի իմաստային

¹⁶ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 4, էջ 151:

¹⁷ Jacob D. Rundall, *Polymer: Disambiguation, Classification and Analytical Techniques*, PhD diss., University of Illinois at Urbana-Champaign, 2011, p. 4.

¹⁸ Այդպիսի օրինակ է Մաշոյի 19-րդ Ռոնդոն՝ “Quant ma dame”. Տե՛ս Ursula Günter, *Polymetric Rondeaux from Machaut to Dufay: Some Style-Analytical Observations*, in *Studies in Musical Sources and Style: Essays in Honor of Jan LaRue*, Madison: A-R Editions, 1990, p. 78.

¹⁹ Տե՛ս Read Gardner, *Modern Rhythmic Notation*, Bloomington and Lomdom, Indiana University Press, 1978, p. 123.

միավորները²⁰:

Ֆոլկլորային երաժշտական գործիքները նվագախմբում

XX–XXI դարերի արևմտյան երաժշտության մեջ որպես նորույթ առաջ է եկել դասական սիմֆոնիկ նվագախմբի մեջ ֆոլկլորային երաժշտական գործիքներ կիրառելու գաղափարը: Հայ երաժշտության մեջ, մասնավորապես, Ավետ Տերտերյանը ձևավորել է ֆոլկլորային երաժշտական գործիքները սիմֆոնիկ նվագախմբի մեջ ընդգրկելու ավանդույթ²¹, այդպիսով ապացուցելով երևույթի գեղարվեստական արժեքը: Իհարկե, տարբեր մշակույթներում գոյություն ունեցող ժողովրդական անսամբլներն ու նվագախմբերը ֆոլկլորային երաժշտական գործիքների կիրառության լայնամասշտաբ ավանդույթ են ձեռք բերել: Մատնանշելի օրինակ են արևելյան գամելանները, որոնցում ընդգրկված ձայնաբարձրություն ունեցող և չունեցող հարվածային բոլոր գործիքներն էլ ֆոլկլորային ծագում ունեն²²: Այնուամենայնիվ, ֆոլկլորային անսամբլները կամ նվագախմբերը և դասական նվագախմբերը տարբեր դերակատարում և նշանակություն ունեն:

Նշված դիտարկումների հարաբերակցությամբ կարևոր է նկատել Կոմիտասի մեկ այլ նորարարական մոտեցում՝ սիմֆոնիկ պարտիտուրի մեջ ֆոլկլորային երաժշտական գործիքների կիրառությունը: Հայտնի են Կոմիտասի օպերային մտահղացումները²³: «Անուշ» օպերայից պահպանված ուրվագրերից ակնհայտ են Կոմիտասի գործիքավորման որոշ մանրամասնություններ: Այսպես, ԳԱԹ Կոմիտասի արխիվում պահվող ձեռագիր մի էջից պարզվում է, որ Կոմիտասը նպատակ է ունեցել օպերայի նվագախմբային պարտիտուրում դասական սիմֆոնիկ նվագախմբի գործիքների հետ մեկտեղ ներգրավել նաև ֆոլկլորային երաժշտական գործիքներ: Սարոյի «Բարձր սարեր» արիայի անավարտ շարադրանքում²⁴ նվագախմբային պարտիտուրի գործիքային կազմը հետևյալն է. տավիղ, սրինգ, շավառն, բլուլ, նայ, ծնծղա, գոսեր, ջութակ, ջութ, թավջութակ, բամբջութակ:

Այս առնչությամբ վկայություն ենք հանդիպում Ղևոնդ Տայյանի հետազոտության մեջ. «...ուզած է երգահանը յօրինել նոր հայկական

²⁰ Օրինակ են Պատարագի երգեցողությունների մշակումները: **Կոմիտաս, Երկերի ժողովածու**, հատ. 7:

²¹ Ա. Տերտերյանի սիմֆոնիկ պարտիտուրներում տարբեր ավանդական գործիքների կիրառության մասին տե՛ս **М. Рухкян, Авет Тертерян, творчество и жизнь**, Ереван, изд. “Наири”, 2002.

²² **Benjamin Brinner, Knowing music, making music: Javanese gamelan and the theory of musical competence and interaction.** University of Chicago Press, 1995. **Michael Bakan, Music of death and new creation: Experiences in the world of Balinese gamelan beleganjur.** University of Chicago Press, 1999.

²³ **Г. Тигранов, Оперные замыслы** Комитаса, *Армянский музыкальный театр*, Ереван, 1956, с. 191-218; **Ռ. Աթայան**, Կոմիտասի «Անուշ» անավարտ օպերայի ուրվագրերը, *Կոմիտասական* 2, էջ 42-82:

²⁴ **ԳԱԹ, Կոմիտասի արխիվ**, ծրար 489:

նուագախումբ մը, ուր ընտանօք պիտի ընդունէր երոպական գործիներ ու պիտի ներմուծէր հայկական եւ արեւելեան գործիներ ու մասնատրապէս սրինգներ: Յաւալի է, որ այս կարեւոր երկը չէ ամբողջացած, որովհետեւ նոյն իսկ եղածներուն դաշնատրման մասը յօրինած չէ»²⁵:

Օպերային նվագախմբում ֆուլկլորային երաժշտական գործիքների ընդգրկումն այսօրվա հայացքով զարմանալի չէ, սակայն իրագործման ժամանակաշրջանի տեսանկյունից՝ XX դարի առաջին տասնամյակի դիրքերից, սա պետք է մեկնաբանել որպես ինքնատիպ գաղափար:

Կոմիտասյան համահնչյուն

Կոմիտասի ստեղծագործությունների հարմոնիկ դրսևորումներն ուսումնասիրելու արդյունքում երաժշտագետները եկել են մի շարք կարևոր եզրահանգումների՝ կվարտ-կվինտակորդների առնչությամբ²⁶, ինչպես նաև բազմալադային և բազմատոնայնական մտածողության պայմաններում ինքնատիպ հարմոնիայի մեկնաբանմամբ²⁷: Կառուցվածքով և ֆունկցիոնալ նշանակությամբ ուշագրավ է կոմիտասյան մի համահնչյուն: Այն բազմահարկ ուղղահայաց կազմավորում է, որը դժվար է միանշանակ մեկնաբանությամբ բնութագրել:

XX դարի համաշխարհային երաժշտության զարգացման հիմքերից մեկը համարվում է դասական եռահնչյունների ընդլայնումը՝ տերցիային նոր հավելումների ճանապարհով: Այսպես, երեք տերցիա պարունակող սեպտակորդի և չորս տերցիա պարունակող նոնակորդի զարգացումը հանգեցրել է հինգ տերցիայով ունդեցիմակորդի, վեց տերցիայով տերցդեցիմակորդի և այլն: Տեսականորեն և գործնականորեն այս շարքը շարունակական է: Այս ճանապարհին անկյունաքարային դեր է կատարել ֆրանսիացի կոմպոզիտոր Կլոդ Դեբյուսին, որն ազատորեն կիրառել է տերցիային կառուցվածք ունեցող ակորդներ՝ դրանք տեղադրելով այնպիսի պայմաններում, որտեղ չկա դասական հարմոնիայի մտածողության ֆունկցիոնալ համակարգի պարտադիր գործածությունը:

Սեպտակորդների և նոնակորդների «կոնսոնանսացումը» համարվել է ֆրանսիական երաժշտության, այսպես կոչված, «վերջին նորույթը», ըստ որի տոները դիսոնանս են և ունեն համապատասխան ֆունկցիոնալ լուծումներ, բայց

²⁵ Հայր Ղեոնդ Տայեան, *Կոմիտաս Վարդապետ* (ուսումնասիրական տեսություն), Ս Ղազար, Մխիթարեան տպարան, 1936, էջ 75-76:

²⁶ Ռ. Ստեփանյան, նշվ. հոդվ.:

²⁷ Է. Փաշինյան, նշվ. հոդվ.:

մինևույն ժամանակ, նրանք համարվում են եռահնչյունների հարստացում²⁸: Մասնավորաբար, այդպես է մեկնաբանվում Էրիկ Սատիի «Երեք սարաբանդներ»-ի հարմոնիան: Սարաբանդները գրվել են 1887 թ., սակայն ասպարեզ են հանվել 1911 թ.. մի հանգամանք, որը կարևոր է կոմիտայան ակորդի հետազոտության տեսանկյունից:

XX դարի երաժշտության զարգացման բեկումնային ընթացքն ապահովող ևս մեկ գործոն էր կվարտակորդների ի հայտ գալը: Ըստ Էլիոտ Անտոկոլեցի, այդ ընթացքն սկսվեց ֆրանսիացի և ռուս կոմպոզիտորների կողմից, ովքեր հատուկ հակադրվում էին Եվրոպայում գերիշխող դիրք ունեցող գերմանական «ուլտրախրոմատիկ» երաժշտությանը: Է. Անտոկոլեցը պատմականորեն կարևորում է հատկապես ռուս կոմպոզիտոր Ալեքսանդր Սկրյաբինի կվարտակորդները՝ C-Fis-H-E-A-D-G²⁹:

Կոմիտասի ստեղծագործությունների մեջ դեռևս XIX-XX դարազվիսին դրսևորվել են քննարկվող հարմոնիկ ուղղահայացների թե՛ մեկ, թե՛ մյուս նորարարությունները:

XIX դարի վերջում Կոմիտասն իրականացրել է Պատարագի մեղեդիների մշակումներ, որոնք Ռ. Աթայանը դասակարգել է որպես Երրորդ Պատարագ³⁰: Այստեղ առաջին անգամ հանդիպում են բնորոշ «բազմահարկ» համահնչյուններ: Հետևյալը «Մարմին տերունական» խմբերգից հատված է³¹:

Օրինակ 2



F dur-ում A-E-G-Des համահնչյունը (օրինակում առաջին առանձնացված ուղղահայաց կազմավորումը) դասական իմաստով լուծում չի ստանում: Այս համահնչյունը կարելի է դիտարկել որպես երկու կվինտաների զուգակցում (A-E և G-Des), կարելի է մեկնաբանել որպես ունդեցիմակորդ՝ բաց թողնված տերցիային և նոնային տոներով (A-[C]-E-G-[B]-Des): Համահնչյունը պատահական բնույթ չի կրում. դրա տարբեր դրսևորումներն այս Պատարագում բազմիցս հանդիպում են: Այդպիսին է բերված օրինակի «ասեն» բառի «ա» վանկին համապատասխանող

²⁸ Richard Taruskin, Christopher H. Gibbs, *The Oxford History of Western Music*, Oxford University Press, New York, 2012, p. 825.
²⁹ Elliot Antokoletz, *Twentieth-Century Music*, 1998, Prentice-Hall, USA, p. 100-104.
³⁰ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 8, էջ 19-26:
³¹ Նույն տեղում, էջ 21-22:

համահնչյունը (օրինակ 2, երկրորդ առանձնացված համահնչյունը), որը կարելի է բնորոշել որպես նոնակորդ՝ բաց թողնված տերցիային տոնով (H-[D]-F-As-C; G-ն հապաղիկ է): Ուղղահայացի կազմակերպման նշված սկզբունքն առկա է նաև հետևյալ օրինակում.

Օրինակ 3, «Մարմին տերունական»



Օրինակի առաջին համահնչյունը՝ Ces-Ges-Es-Des, ևս թերի նոնակորդ է՝ բաց թողնված սեպտիմային տոնով (Ces-Es-Ges-[B]-Des): Այն նույնպես հաջորդ քայլում լուծում չի ստանում:

Բազմահարկ տերցիային կառուցվածքով ակորդի կիրառության սկզբունքը տարբերվում է եվրոպացի կոմպոզիտորների և Կոմիտասի ստեղծագործություններում: Կոմիտասն ավելի հաճախ բազմահարկ ակորդի հնչյունները լայն է դասավորում, ինչն էլ ակորդի ոչ միանշանակ մեկնաբանությունների հնարավորություն է տալիս:

Հետևյալը Կոմիտասի՝ 1914 թ. Պատարագից է³²:

Օրինակ 4




Նախավերջին ակորդն է՝ As-C-Es-Fis, որի հիմնական ձևը տերցիային դասավորվածության պարագայում Fis-As-C-Es է, այսինքն՝ դասական մեկնաբանությամբ փոքրացված սեպտակորդ՝ երրորդ աստիճանի իջեցումով: Տվյալ համատեքստում՝ G dur-ի պայմաններում, այն «կոմիտասյան» բնորոշ հնչողությամբ է օժտված: As հնչյունի բասում տեղակայումն այսպես կոչված նեպոլիտանական ակորդի նմանություն է ստեղծում: Ավելին, հաջորդ քայլում այս համահնչյունը դասական լուծում չի ստանում:

³² Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 7, էջ 35:

Մեկ այլ բնորոշ օրինակ է հետևյալ դրվագը՝ Պատարագի «Հաատամք»-ի բաժնից³³:

Օրինակ 5



Կրկին գործ ունենք նույն համահնչյունի հետ, որն ի հայտ է գալիս արդեն նկարագրված պայմաններում: Ավելին, «Մարմին տէրունական» խմբերգում՝ «կայ առաջի» բառերի շարադրանքում, H կենտրոնի պայմաններում հայտնվում է Ais-C-Es-G համահնչյունը, այսինքն՝ փոքրացված սեպտակորդ, իջեցված տերցիային և կվինտային տոներով:

Բազմահարկ տերցիային համահնչյունը գործածվում է ոչ միայն հոգևոր, այլև ֆոլկլորային երգերի մշակումներում: Հետևյալը քաղված է «Ել, ել» («Սայլի երգ») խմբերգից³⁴:

Օրինակ 6



G moll տոնայնության պայմաններում՝ 5-րդ տակտում հնչում է G-B-D-F սեպտակորդը, որը 6-րդ տակտում մեղեդու A և տենորի C նոտաների համակցությամբ վերածվում է ունդեցիմակորդի: Հաջորդ քայլին վերականգնվում է g moll տոնայնությունը: Ավելի ստույգ՝ սեպտակորդ/ունդեցիմակորդը դասական իմաստով լուծում չի ստանում: Այս խմբերգի ստեղծումը Ռ. Աթայանը վերագրել է Էջմիածնի վաղագույն շրջանին՝ 1900-ականների սկզբին: Կրկին համաշխարհային երաժշտության համատեքստում ուշագրավ է նման դետալի դրսևորումը՝ սեպտակորդի կամ նոնակորդի ինքնաբավ կիրառությունը: Ակնհայտորեն, տերցիաներից բաղկացած այս բազմահարկ համահնչյունը, որոշակի համատեքստի պայմաններում, իրավունք ունի համարվելու բնորոշ **կոմիտասյան համահնչյուն**:

³³ Նույն տեղում, էջ 37:
³⁴ **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 3, 1969, էջ 21-22:

Պատարագի մեղեդիների առաջին մշակման մեջ Կոմիտասն ավանդական մեղեդին շարադրում է զուգահեռ կվարտաներով՝ հակադրվելով XIX դարի վերջում ընդունված պայմաններին և խախտելով դասական արգելքները³⁵: Կվարտա-կվինտային համահնչյունների ինքնուրույն և էական դերը Կոմիտասի աշխարհիկ գործերում հանգամանորեն նկարագրել է Ռաֆայել Ստեփանյանը³⁶: Տվյալ դեպքում նպատակ ունենք ցույց տալու կվարտակորդի փոխակերպումը Պատարագի մեղեդիների մշակումներում:

1914 թ. Պատարագի «Մարմին տերունական» խմբերգի³⁷ բնորոշ համահնչյուններից է H կենտրոնի պայմաններում Ais-D-G համահնչյունը:

Օրինակ 7



Փոքրացված սեպտակորդի հիմք հանդիսացող յոթերորդ աստիճանից (Ais, բաս) մինչև փոքրացված սեպտակորդի գագաթ հանդիսացող վեցերորդ աստիճանն (G, երկրորդ տենոր) ընկած տարածությունը բաժանվել է երկու կվարտայի՝ փոքրացված և մաքուր: Կվարտաները «կիսող» D հնչյունը տեղակայված է ավելի բարձր ռեգիստրում, ուստի համահնչյունը, դասական մեկնաբանման դիրքերից, լայն դասավորություն ունի: Այս համահնչյունը պատահական բնույթ չի կրում, այլ խմբերգի ամբողջ ընթացքում բազմիցս կրկնվելով, հարմոնիկ որոշակի կարևորություն է ձեռք բերում:

Հաջորդ օրինակը «Սուրբ, սուրբ»-ի³⁸ վերջին տակտն է, որտեղ նույնպես դրսևորվում է կվարտակորդ՝ բաղկացած փոքրացված և մաքուր կվարտաներից: Կրկին հիմքում յոթերորդ աստիճանն է, այս անգամ՝ A dur-ի շրջանակներում: Gis-F սեպտիման «կիսվում» է Cis հնչյունով, որը կրկին տեղակայված է ավելի բարձր ռեգիստրում: «Կիսող» հնչյունը, որն առաջ է բերում կվարտակորդ, գտնվում է մեղեդիում: Արդյունքում՝ մեղեդու և բասի հարաբերությունը կազմում է մաքուր կվարտա, իսկ մեղեդու և ակորդի գագաթը հանդիսացող հնչյունի միջև տարածքը՝ մեծացված կվինտա:

³⁵ **Տ. Շախկույան**, Կոմիտասի առաջին Պատարագի փորձը, *Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական երրորդ նստաշրջանի նյութեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, էջ 108-112:

³⁶ **Ռ. Ստեփանյան**, նշվ. հոդվ.:

³⁷ **Կոմիտաս**, հատ. 7, էջ 40-41:

³⁸ **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 7, էջ 50:

Օրինակ 8

ի բարձունս:
 ի բարձունս:
 ի բարձունս:

Բերված երկու օրինակում էլ հատկանշական է ակորդի հնչյունների դասավորությունն, ըստ որի բասում յոթերորդ աստիճանն է, իսկ մեջտեղում՝ ակորդի սեպտիմային հնչյունը: Ցանկացած տեսանկյունից ակորդի էությունը չի փոխվում, և պահպանվում է կվարտային կառույցը:

Հետևյալը ևս մեկ օրինակ է Պատարագի «Սուրբ Աստուած» հաստիճանից³⁹:

Օրինակ 9

Սուրբ Աստուած, սուրբ եւ իր զօր, սուրբ եւ անմահ,
 Սուրբ, սուրբ, սուրբ եւ անմահ,
 Սուրբ, սուրբ,

Երկրորդ տակտի վերջին բախման մեջ դրսևորվում է Fis-H-Es համահնչյունը: Այն G կենտրոնի պայմաններում իրենից ներկայացնում է յոթերորդ աստիճանի վրա կառուցված Fis-Es փոքրացված սեպտիմա՝ համալրված H հնչյունով, որը սեպտիման բաժանում է երկու կվարտաների:

Ինչպես և տերցիային բազմահարկ ակորդի պարագայում, փոքրացված և մաքուր կվարտաների համակցությամբ համահնչյուն հանդիպում ենք նաև ֆոլկլորային երաժշտության մշակումներում: Հետևյալը Կոմիտասի «Վայ, լե, լե» («Ողբերգ»)՝⁴⁰ խմբերգից է՝ գրված արական կազմի համար.

Օրինակ 10, «Վայ, լե, լե»

վայ, լե, լե, լե, լե, լե
 վայ, լե, լե, լե, լե, լե

³⁹ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 7, էջ 33:

⁴⁰ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 3, էջ 25:

A moll-ի սահմաններում, 4-րդ տակտում հնչում է Gis-F-C համահնչյունը: Այսինքն՝ Gis-F փոքրացված սեպտիման «կիսվել» է C-ով՝ ռեգիստրային ավելի բարձր տեղակայմամբ: Նույնը կրկնվում է 10-րդ տակտում: Գուշակելի է նմանությունը վերը քննարկված համահնչյունների հետ: Այսինքն՝ ակորդը պատահական չի կիրառվել, այլ հանդիպում է Կոմիտասի թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ երգերի մշակումներում, ուստիև կարելի է խոսել ստեղծագործական տարրի, ավելին՝ մեկ այլ **կոմիտասյան համահնչյունի** մասին: Բնական է նաև առնչություն նկատել Կոմիտասի՝ հայ երաժշտության հնչյունաշարերի վերաբերյալ հայտնի տեսության հետ⁴¹: Հետաքրքիր է նաև նկատել, որ բոլոր դեպքերում համահնչյունն ընդգրկում է փոքրացված սեպտիմա ինտերվալ՝ համակցվելով մի դեպքում մաքուր, մյուս դեպքում՝ փոքրացված կվարտային:

Փաստորեն, երկու տարբեր համահնչյուններ, մեկը տերցիային կառուցվածքով, մյուսը՝ կվարտային, Կոմիտասի մշակումներում դրսևորվում են որպես ինքնատիպ երևույթ: Կոմիտասի բազմահարկ ակորդներն ի հայտ են եկել այնպիսի շրջանում, երբ ֆրանսիական երաժշտության առաջարկած տերցիային կառուցվածք ունեցող բազմահարկ ակորդները դեռևս տարածում չունեին, և, հավանաբար, Կոմիտասն անգամ չգիտեր դրանց մասին: Ավելին, եթե ֆրանսիացիները կիրառում են նեղ դասավորությամբ, հիմնական տոնի մեղեդային դիրքով համահնչյուններ, ապա Կոմիտասը դասավորում է լայն, ֆակտուրային այլ պայմաններով, ինչը նույնպես ցույց է տալիս, որ այս ակորդի «ֆրանսիական» և «հայկական» դրսևորումների միջև ուղղակի առնչություն չկա: Թե՛ տերցիային, թե՛ կվարտային համահնչյունները, առավել ևս դրանց յուրահատուկ կոմիտասյան շարադրանքի սկզբունքները հիմքեր ունեն Կոմիտասի գրած ավելի վաղ գործերում և, ավելին, հայ ավանդական երաժշտության մեջ, որոնց կառուցվածքային առանձնահատկությունների բացահայտողը նույնպես ինքը՝ Կոմիտասն էր:

Ամփոփում

Սույն հոդվածի նպատակն է՝ քննել Կոմիտասի մշակումների որոշ ստեղծագործական դրվագներ, որոնք կոմպոզիտորի ժամանակաշրջանում նորույթ էին և համաշխարհային պրոֆեսիոնալ երաժշտության մեջ դեռևս տարածում չունեին: Ակնհայտ է, որ Կոմիտասը, կրթվելով էջմիածնում, ապա՝ Բեռլինում, ըստ դասական երաժշտության ավանդույթների ուսումնական սկզբունքների, առաջ է քաշել բազմաթիվ գաղափարներ, որոնք ավելի ուշ՝ XX դարի ընթացքում միայն պիտի դրսևորվեին կոմպոզիտորական արվեստում: Այդ գաղափարները նրա մոտ մասամբ կարող էին ձևավորվել եվրոպական առաջատար

⁴¹ **Կոմիտաս**, Հայ յեկեղեցական յերաժշտոյուն, *Հողվածներ և ուսումնասիրություններ*, հավաքեց՝ Ռ. Թերլեմեզյան, Երևան, Պետական հրատ., 1941, էջ 153-165: **Կոմիտաս**, *Յերգեցողությունք ս. պատարագի*, նույն տեղում, էջ 137-152:

կենտրոնների (Հումբոլդտի համալսարան, Միջազգային երաժշտական ընկերություն և այլն) ներկայացուցիչների հետ շփման արդյունքում՝ ազդեցությունների անուղղակի դրսևորմամբ, սակայն փաստ է, որ գործնականորեն այդ նույն հաստատություններն այդ գաղափարներին դեռ չէին հանգել: Եթե անգամ ոչ առաջինն աշխարհում (թեև մենք հակված ենք դրան հավատալու), ապա գոնե առաջիններից մեկը Կոմիտասն առաջադրեց պոլիռիթմը, ինքնաբավ նոնակորդները կամ դրանց հետ որոշակի համեմատության հանգեցնող ակորդները, ֆոլկլորային գործիքների՝ օպերային նվագախմբում կիրառությունը և այլն: Հաշվի առնելով այս ամենը՝ պետք է Կոմիտասին համաշխարհային երաժշտության մասշտաբով արժևորելու խիստ բարձր չափանիշ ունենալ:

Քանակի բաներ՝ Կոմիտաս, XX դարի երաժշտություն, հարմոնիա, պոլիմետր, ֆոլկլորային երաժշտական գործիք:

КОМИТАС И ЗАПАДНАЯ МУЗЫКА XX ВЕКА

Резюме

Татевик Шахкүлян, кандидат искусствоведения
Музей-институт Комитаса
Институт искусств НАН РА
Ереванская государственная консерватория им. Комитаса

В статье обсуждаются некоторые композиционные новаторства Комитаса, которые в момент осуществления не были распространены во всемирной музыке. Одно из новаторств – полиметрия. В хоровом произведении “Тандо” (Комитас, Собр. соч., т. 4, 1976) Комитас присоединял 3/4 с 5/4 в вертикальном измерении, с целью показать идейный контраст между вековой непрерывностью церковных колоколов (3/4) и человеческими размышлениями (5/4). Произведение было написано в 1890-ых годах, а полиметрия была распространена в западной музыке только в XX веке.

Интересен факт использования армянских народных музыкальных инструментов в симфоническом оркестре, доказательство которого мы нашли в черновиках неоконченной оперы Комитаса “Ануш” (архив Комитаса, Музей литературы и искусств им. Чаренца, 489). В начале XX столетия включение фольклорных инструментов в симфоническую партитуру – идея новая.

Следующее новаторство относится гармонии. Квартовые аккорды, в составе которых обязательно присутствует уменьшенная септима, предлагается именовать *Комитасовской гармонией*. Кроме того, Комитасовскими гармониями являются много-ярусные терцовые аккорды – нонаккорды и ундецимаккорды, в широком расположении звуков, не имеющие классические разрешения.

Ключевые слова: Комитас, музыка XX века, гармония, полиметрия, фольклорный музыкальный инструмент.

KOMITAS AND THE XX CENTURY WESTERN MUSIC

Abstract

Tatevik Shakhkulyan (Armenia), PhD in Art
Komitas Museum Institute
Institute of Arts of NAS RA
Komitas State Conservatory in Yerevan

In this article, some compositional novelties are discussed, which were realized by Komitas in his works. The phenomena are noteworthy, since at the time being displayed they were yet unknown in world music. One of the novelties is polimeter. Komitas composed his choral work “Tando” (Komitas, Works, V.4, 1976) conjoining 3/4 with 5/4 in vertical dimension, to present the contrast between permanence of church’s bells (3/4) and human deliberation (5/4). Komitas wrote this work in 1890s, meanwhile polimeter was circulated in Western music later in the XX century.

The usage of Armenian folk music instruments in the symphony score is noteworthy, the evidence of which we found in the drafts of Komitas's uncompleted opera *Anoush* (Komitas archives, Charents Museum of Literature and Art, No. 489). In the beginning of the XX century, involving folk music instruments in symphony orchestra was not common yet.

The other novelty refers to harmony. The chords consisted of the fourths resulting in diminished sevens, are suggested to be named as *Komitas's Harmony*. Besides, multi-layered chords consisted of the thirds making together ninth-chords or eleventh-chords, and being in open rather than closed arrangement, are also considered as *Komitas's Harmony*.

Key words: Komitas, XX century music, harmony, polymeter, folk music instrument.

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Լուսինե Սահակյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Հայ-ռուսական պատմամշակութային և հոգևոր առնչությունները, ձևավորվելով դեռևս միջնադարում, անցել են դարերի փորձություն: Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը դեռ հնուց է եղել Ռուսաստանում: Մոսկվայի Կարմիր հրապարակում, Վասիլի Երանելու տաճարի համալիրի մեջ, ավելի քան հինգ դար կանգնած է Հայոց Գրիգորի եկեղեցին (Церковь Григория Армянского)՝ Երանելու տաճարի գմբեթին կից վեր խոյացող գմբեթով: Այն կառուցվել է Իվան Ահեղի հրովարտակով¹:

Հայ-ռուսական կապերն ավելի ամրապնդվեցին XIX դարում, երբ 1828 թ. Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Հայկական մշակույթն ապրեց զարգացման ու վերելքի բուռն շրջան, ստեղծվեցին հայ մշակութային և կրթական օջախներ ոչ միայն Հայաստանում, այլև Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Մոսկվայում, Աստրախանում, Ղրիմում, Թիֆլիսում և Բաքվում: Այսօր էլ Ռուսաստանի տարածքում գործում են ճարտարապետական ինքնատիպ լուծումներով աչքի ընկնող բազմաթիվ հայկական եկեղեցիներ ու դպրոցներ²: Իրենց լուսավորական գործունեությամբ առանձնանում էին Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին հայ երաժշտական մշակույթի համար ռուսական առաջադիմական արվեստի հսկայական դերն անուրանալի իրողություն է: Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում մասնագիտական կրթություն են ստացել հայազգի նշանավոր կոմպոզիտորներ Մակար Եկմալյանը (1856-1905), Ալեքսանդր Սպենդիարյանը (1871-1928), Ռոմանոս Մելիքյանը (1883-1935), երաժշտագետ Բարսեղ Ղորղանյանը (Վասիլի Կորգանով, 1865-1934), երաժիշտ-կատարողներ Նադեժդա Պապայանը, Բեգլար

¹ Տե՛ս *Քրիստոնյա Հայաստան* հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2002, էջ 226:

² X դարից հայկական սրբեր Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմեի պաշտամունքը տարածում է գտել ռուսական եկեղեցիներում, օրինակ՝ Նովգորոդի Սպաս Ներեդիցա տաճարի (1198) որմնակարներում: Տե՛ս *Հայկական սովետական հանրագիտարան*, հատ. 10, Երևան, էջ 73:

Ամիրջանյանը, Հովհաննես Նալբանդյանը³: Ի դեպ, Բ. Ղորղանյանը⁴ առաջին երաժշտագետներից էր, ով նկատել է երիտասարդ Ֆյորդոր Շայապինի տաղանդը, լուսաբանել «Պուշկինը երաժշտության մեջ» թեման: Երաժշտության պատմության մեջ հայտնի է Սպենդիարով-Գորկի ստեղծագործական համագործակցությունը⁵: Այդպիսի բազում օրինակներ կան ընդհուպ մինչև XX դարը⁶:

XX դարում Մոսկվայում էր զարգանում հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի տաղանդը: Մայրաքաղաքում գործող Հայ արվեստի տունը կարևոր ազդեցություն ունեցավ «Հայկական հնգյակի»⁷ կոմպոզիտորների մասնագիտական կատարելագործման համար:

Հայոց հոգևոր կյանքում բացառիկ դեր և նշանակություն ուներ մեծանուն Կոմիտաս Վարդապետը, որի կենսագրությունն անքակտելիորեն կապված է սեփական ժողովրդի պատմության հետ: Նրա ճակատագիրը, սակայն, առ այսօր մեր առջև դնում է բարդ ու հետաքրքիր խնդիրներ: Հանճարեղ գեղարվեստագետի կյանքի փառքի ու ողբերգության բազում էջեր պարուրված են խորհրդավորության շղարշով: Կիսելով սեփական ժողովրդի ճակատագիրը՝ նա ևս իր ողբերգական վախճանն ունեցավ Հայոց Մեծ եղեռնից հետո:

Ժամանակի ընթացքում անհրաժեշտություն են դարձել Կոմիտասի կյանքի թվացյալ կամ «հայտնի» փաստերի նորովի մեկնաբանությունը, գիտական կենսագրության առավել խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունը: Մեծ արվեստագետի կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված էին և՛

³ Տե՛ս Ա. Աղայան, Ա. Ասատրյան, *Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից*, Սանկտ Պետերբուրգ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015:

⁴ Բ. Ղորղանյանը 1900 թ. Անդրկովկասում հիմնադրել է “Кавказский вестник” գիտական-գրական ամսագիրը: Լուսաբանել է Կովկասի մշակութային կյանքը: 1902 թ. հրապարակված Բեթհովենի մասին ռուսերեն մենագրությունը նրա առաջին լուրջ ուսումնասիրությունն էր՝ հիմնված նամակագրության և այլ փաստերի վրա: Կորգանովը հայ մեծ բարերար, Ռուսական կայսրության մեջ հայտնի արդյունաբերող Ա. Մանթաշյանցի փեսան էր: Ինչպես հայտնի է, Մանթաշյանցի հովանավորությամբ է Կոմիտասը ուսանել Գերմանիայում:

⁵ 1902 թ. Ղրիմում Մ Գորկին, հանդիպելով Ա. Սպենդիարյանին, նրան է հանձնել «Ձկնորսը և փերին» երկը, որը դարձել է Ա. Սպենդիարյանի երաժշտական բալլադի հիմնանյութը: Ռուս կոմպոզիտոր Ա. Չերեպինը ևս բարձր է գնահատել Ա. Սպենդիարյանի արվեստը՝ իր երաժշտության մեջ ընդունելով հայ կոմպոզիտորի ազդեցությունը:

⁶ Հայտնի է նաև ռուս կոմպոզիտոր Գ. Սվիրիդովի «Հայերի երկիր» վոկալ շարքը՝ Ա. Իսահակյանի խոսքերով, Ս. Ռախմանինովի «Գիշերն իմ այգում» ռոմանսը՝ դարձյալ Ա. Իսահակյանի խոսքերով (Ա. Բոլկի թարգմանությամբ), ինչպես նաև հայ միջնադարյան տաղերգու Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի (թարգմ.՝ Ն. Գրեբնյով) հիման վրա խառը երգչախմբի համար Ա. Շիրտկեի հեղինակած խմբերգային կոնցերտը, որի գաղափարը տվել է հայ անվանի կոմպոզիտոր, Ա. Շիրտկեի մտերիմ բարեկամ Տ. Մանստրյանը:

⁷ Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ղ. Սարյանը և Ա. Խուրդյանը «Հայկական հնգյակի» անդամներ էին կոչվում ռուսական «Հզոր խմբակի» օրինակով (անդամներն էին՝ Մ. Բալակիրը, Յ. Կյոփն, Ա. Բորոդինը, Մ. Մուսորգսկին և Ն. Ռիմսկի-Կորսակովը):

անբաժանելի համաշխարհային մշակույթի, և՛, մասնավորապես, ռուսական մշակույթի նվաճումներին:

Խորհրդային շրջանում տարբեր շեշտադրումներով են լուսաբանվել Ռուսաստանի հետ Կոմիտասի առնչությունները: Հայտնի են հիմնականում ռուս երաժիշտներ Թոմաս Հարտմանի (1885-1956) և Միխայիլ Գնեսինի (1883-1943) արժեքավոր հուշագրությունները նրա մասին⁸:

Հայ գրող, հրապարակախոս Դերենիկ Դեմիրճյանը (1877-1956), անդրադառնալով Կոմիտասին, կոմիտասագիտության հիմնախնդիրներին, 1956 թ. գրում էր. «...մրահոգության առարկա է դարձել Կոմիտասի՝ դեպի ռուսական երաժշտությունն ունեցած առնչությունների համար նյութ գտնելու հարցը: Ապրելով և ստեղծագործելով նախկին Ռուսաստանում, նա (Կոմիտասը – Լ.Ս.) չէր կարող վերաբերմունք և տեսակետ չունենալ դեպի ռուսական երաժշտությունը... Մենք ունենք ընդարձակ նյութ այն մասին, որ Փարիզում և Պոլսում նա սերտ հարաբերություն ուներ ռուսական երաժշտության հետ, մեծապես գնահատում էր «Հզոր հնգյակը», գրի էր առնում ռուս ժողովրդական երգերը: ...Գնեսինի հետ ծանոթությունը, Արենսկու և Տանենի արժանավոր աշակերտ Հարտմանի հեղինակավոր կարծիքները և մասնագիտական գնահատությունները, նմանապես մեր մեծապաշանդ երաժշտի հմայքի ու գործունեության հանդեպ հայ և օտար հասարակության ցուցաբերած հիացքն ու սերը միանգամայն վկայում են նրա երաժշտության մեծ արժեքն ու նշանակությունը»⁹:

Մեր հոդվածի շրջանակներում, առաջին անգամ պատմաքաղաքական տեսանկյունից, հնարավոր ամբողջությամբ մեկտեղելու և դիտարկելու ենք Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության, այսպես ասած, «ռուսական» շրջանը, ինչն, անշուշտ, նոր լույս կսփռի Կոմիտաս Վարդապետի պատմական դերի ճշմարտացի գնահատականի վրա¹⁰:

Արդի երաժշտագիտության մեջ առկա է Կոմիտասի կյանքն ու ստեղծագործությունը լուսաբանող պատկառազու գրականություն¹¹:

⁸ Ս. Գասպարյան, *Կոմիտաս*, Երևան, Հայպետհրատ, 1947: Ի. Յոլյան, *Կոմիտաս*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969: Գ.Գյոդակյան, *Կոմիտաս*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1969: А. Шавердян, *Комитас и армянская музыкальная культура*, Армгосизд., Ереван, 1956.

⁹ Ժամանակակիցները *Կոմիտասի մասին*, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 5: Դերենիկ Դեմիրճյանը 1892 թ. ուսանել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, մասնակցել Կոմիտասի երգչախմբային դասերին: Դեմիրճյանին է պատկանում Ն. Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպի առաջին հատորի հայերեն թարգմանությունը:

¹⁰ Տե՛ս Լ. Սահակյան, Կոմիտաս Վարդապետը և ֆրանսիական մշակույթը, *Կանթեղ*, Գիտական հոդվածներ, N3 (68), Երևան, 2016, էջ 242-263: Մեզ համար առանձին ուսումնասիրության նյութ է նաև Վարդապետի կյանքի՝ Կ. Պոլսի հետ կապված շրջանը:

¹¹ Լ. Սահակյան, *Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2010, էջ 145-167:

Վարդապետի բանահավաքչական և գիտական աշխատանքները, մեծավ մասամբ, իրականացվել են Արևելյան Հայաստանում, որը XX դարասկզբին Ռուսական կայսրության մի մասն էր¹², նաև Անդրկովկասի մշակութային կենտրոններ էջմիածնում, Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, որտեղ մեկտեղված հայ և օտարազգի մտավորականները ոգեշնչվում էին ռուսական մշակույթի առաջադեմ, լուսավորական գաղափարներով: Վարդապետի ստեղծագործական գործունեությունը նաև ռուս առաջադեմ մտավորականների ուշադրության կենտրոնում էր: Նա ժամանակի ուսյալ արվեստագետներից մեկն էր, որը տիրապետում էր նաև գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուներին: Ի դեպ, Գևորգյան ճեմարանում Կոմիտասը ռուսաց լեզու սովորել է հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանից (1864-1929), որը նկատելով Կոմիտասի՝ երաժշտության հանդեպ ունեցած բացառիկ ընդունակությունները, Ռուսաստանից բերել էր տալիս երաժշտական դասագրքեր¹³: Հնգևոր ճեմարանում ռուս գրականություն և պատմություն է ուսանել հայտնի բանասեր, պատմաբան Ստեփան Լիսիցյանի (1865-1947) դասարանում:

Շրջելով աշխարհի տարբեր երկրներում, հստակ գիտակցելով իր ապրած բարդ ժամանակաշրջանն ու իր առաքելությունը՝ Կոմիտասը հայերի ճակատագիրը կապում էր Ռուսաց կայսրության հետ. «*Չը պէ՛տք է բաժնուենք. չը պէ՛տք է խաբուենք Երոպայի զանազան խոստումնայից խաբկանքներէն. միանալու ենք եւ գործնական ճամբան բռնելու. ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայրութիւնն ամփոփել Ռուսի իշխանութեան տակ... Ես վախ չունեմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիւ մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է եւ եթէ խելօք շարժուենք կը վաստկենք. ես այս կարծիքն ունեմ*»¹⁴: Վարդապետի Նամականու մեջ տեղ են գտել նաև ռուսերեն հեռագրեր ու նամակներ¹⁵:

Կոմիտասի գործունեության առաջին լուրջ գնահատականները տվել են ռուսական մշակույթի գործիչները¹⁶: Իր «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» արժեքավոր հոդվածում երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը գրում է. «1919-ին Թիֆլիսում պրոֆեսոր Հարությունի նշանավոր ելույթից հետո, որ «հայրնագործեց» (մասնավորապես «արևելահայերի» համար) Կոմիտաս-

¹² Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1984, հատ. 10, էջ 36:

¹³ Ռ. Թերլեմեզյան, Կոմիտաս, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1992, էջ 14:

¹⁴ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Նամականի, աշխատասիրութեամբ Գուրգէն Գասպարեանի, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», 2009, էջ 216:

¹⁵ Նույն տեղում, էջ 219, 243-244:

¹⁶ Կոմիտաս Վարդապետի գործի գնահատության մեջ կարևորում ենք նաև ժամանակակիցների՝ Շ. Պերպերյանի, Ս. Մելիքյանի, Վ. Կորգանովի վերլուծական հոդվածները:

կոմպոզիտորին, թերևս ոչ ոք այլևս չփորձեց վիճարկել նրա բացառիկ դերը հայ պրոֆեսիոնալ երաժշտության ազգային ոճի ձևավորման մեջ»¹⁷:

Վարդապետի գործի գնահատության մեջ Թ. Հարտմանի կարևոր գնահատություններին մանրամասն կանդադառնանք մեր հաջորդ շարադրանքում: Փորձենք փաստերը դիտարկել ըստ ժամանակագրության:

Իր գիտակցական կյանքի մի զգալի հատված Կոմիտասն ապրել է Արևելահայաստանում կամ Հայաստանի ռուսահպատակ հատվածում, և, ինչպես վերը նշեցինք, նրա «ծանոթությունը» ռուսական մշակույթի հետ սկսվել է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, շարունակվել Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, որտեղ գործում էին հայկական եկեղեցիներ, մշակութային միություններ, դպրոցներ, թատրոններ, պարբերական մամուլ¹⁸: Չնայած լուսավորական հաստատությունների առատությանը՝ ցարական իշխանությունները վերահսկում էին Անդրկովկասի մշակութային կյանքը: Օրինակ, երբ 1906 թ. Կոմիտաս Վարդապետը և Գարեգին Լևոնյանը մտադրվել էին Վաղարշապատում հրատարակել «Գեղարուեստ» գրական-գեղարվեստական հանդեսը, Երևանի նահանգապետից մերժում են ստանում այն պատրվակով, որ Վաղարշապատը քաղաք չէ, և Անդրկովկասի գյուղերում հանդեսներ չեն հրատարակվում: Հավելենք, որ ըստ նահանգապետի, Կոմիտասը «ռուսահպատակ» չէր, և բացառության մեջ նաև գրված էր. «*Խմբագիրներից մեկը՝ Կոմիտաս Գևորգյանը*¹⁹, *ռուսահպատակ չէ, իրավունք չունի այդ պաշտոնին հաստատվելու*»²⁰: Կոմիտաս Վարդապետը, որպես «թուրքահպատակ», մշտապես գտնվում էր Էջմիածնի միաբանության «ռուսահպատակ» կղերականության ուշադրության կենտրոնում²¹: Իր հերթին, Հայ առաքելական եկեղեցին ևս, որը պետականություն չունեցող հայ ժողովրդի միակ հոգևոր և կրթական օջախն էր, ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր: 1907 թ., Խրիմյան Հայրիկի մահվանից հետո, սրվեց հակահայկական քաղաքականությունը, և յուրաքանչյուր «այլախոհ» ճեմարանական

¹⁷ Տե՛ս Գ. Գյոդակյան, Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը, *Կոմիտասական* 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 84:

¹⁸ Դարասկզբին Թիֆլիսում հրատարակվում էին հայալեզու «Մշակ», «Նոր-Դար», «Հասկեր», «Գեղարուեստ», «Հորիզոն», «Սուրհանդակ», ռուսալեզու «Новое обозрение», «Новая речь», «Тифлисский листок», «Заквказье» լրագրերը, «Տարազ» շաբաթաթերթը, Բաքվում «Զանգ» շաբաթաթերթը, «Եսկյ» թերթը և այլն:

¹⁹ Գևորգյան հոգևոր ճեմարանը համարելով իր Alma Mater-ը, Կոմիտաս Վարդապետը «Գևորգյան»-ը որոշ ժամանակ որդեգրել էր որպես իր ազգանուն: Չի բացառվում, որ կարող էր օգտագործել իրո՞ր Գևորգ Սողոմոնյանի անունն իբրև ազգանուն:

²⁰ Տե՛ս Գ. Լևոնյան, Մեր Կոմիտասը, *Կոմիտաս ժողովածու*, Երևան, Հայպետհրատ, կազմ.՝ Բ. Թերլեմեզյան, 1930, էջ 83:

²¹ Մասնավորապես, Կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի:

հետապնդվում ու հալածվում էր: Կոմիտասի «ազատ» լուսավորական գործունեության հանդեպ կղերականության ռուսահպատակ հատվածի հետապնդումներն ու սահմանափակումները ժամանակի ընթացքում առավել մեծ թափ ստացան: Մայր Աթոռը լքեցին կամ ակտիվ գործունեությունից մեկուսացվեցին Գարեգին Լևոնյանը (1872-1947), Երվանդ Տեր-Մինասյանը (1879-1974), Գարեգին Հովսեփյանը (1867-1952), Կարապետ Տեր-Մկրտչյանը (1866-1915): 1910 թ. Էջմիածինը լքեց նաև Կոմիտաս Վարդապետը:

Հայտնի է, որ 1893 թ. Էջմիածնի հոգևոր ճեմարանն ավարտելուց հետո Կոմիտաս Վարդապետը ծրագրում էր կատարելագործել իր ընդհանուր և երաժշտական գիտելիքները: 1895 թ. նա երաժշտական մասնագիտական համակողմանի կրթություն ստանալու նպատակով մեկնում է Անդրկովկասի մտավորականության կենտրոն Թիֆլիս՝ դասեր առնելու հայ անվանի կոմպոզիտոր, Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ռեկտոր Մակար Եկմայանի մոտ²²: Անտարակոյս է, որ դասական հարմոնիայից բացի Եկմայանը Կոմիտասին հնարավորինս ծանոթացնում էր ռուսական ազգային երաժշտական դպրոցի գեղարվեստական բարձր ձեռքբերումներին: 1905 թ. Թիֆլիսում Կոմիտասը ձեռք է բերում և ուսումնասիրում 1891 թ. Մոսկվայում հրատարակված՝ ռուս կոմպոզիտոր, դաշնակահար Անտոն Արենսկու (1861-1906) “Краткое руководство к практическому изучению гармонии”, ինչպես նաև Պետերբուրգում 1883 թ. լույս տեսած՝ ռուս կոմպոզիտոր և մանկավարժ Անդրեյ Կազրիրյուկի (1845-1885) “Руководство к практическому изучению гармонии”, ռուս կոմպոզիտոր ու խմբավար Վասիլի Օռլովի (1858-1901) “Искусство церковного пения” աշխատությունները²³: Հետագա տարիներին նրա սեղանի գիրքը դարձավ հայտնի կոմպոզիտոր, երաժշտա-հասարակական գործիչ, մանկավարժ Նիկոլայ Ռիմսկի-Կորսակովի (1844-1908) “Практический учебник гармонии” ձեռնարկը:

Կոմիտասը մտադրություն ուներ սովորել Պետերբուրգի կոնսերվատորիայում, ծրագրել էր հետագայում հայ ուսանողների համար Թիֆլիսում կոնսերվատորիա բացել, սակայն հանգամանքների բերումով և հայ

²² Մ. Եկմայանը Պետերբուրգում ուսանել և ստեղծագործական շփումների մեջ է եղել ռուս մեծանուն երաժիշտներ Ն. Ռիմսկի-Կորսակովի, Ն. Սոլովյովի, Պ. Չայկովսկու, Ա. Ռուբինշտեյնի, Ա. Լյադովի հետ:

²³ Խ. Սամվելյան, Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրություն, *Սովետական արվեստ*, 1969, N 11, էջ 56:

եկեղեցական գործիչ Մաղաքիա Օրմանյանի (1841-1918) խորհրդով նա նախընտրում է ուսանել Գերմանիայում²⁴:

Ժողովրդական երգամտածողության հիմքով XIX դարում բուռն ծաղկում ապրող ռուսական երաժշտությունը, ազգային կոմպոզիտորական դպրոցի իր խոշորագույն ներկայացուցիչներով, չէր կարող վրիպել հզոր ինտուիցիայով օժտված երաժիշտ և գիտնական Կոմիտասի տեսադաշտից: 1890-ականներից Կոմիտաս Վարդապետը հայ, արևելյան և եվրոպական երաժշտությանը զուգահեռ գիտականորեն ուսումնասիրում է նաև ռուսական երաժշտական հարուստ մշակույթը: XX դարի սկզբին ռուս երաժշտության հսկայական ազդեցությունը երաժշտարվեստի վրա անուրանալի և բազմիցս արձանագրված փաստ է: Կոմիտաս Վարդապետը քաջաճանոթ է եղել այդ երաժշտությանը, ռուս կոմպոզիտորների՝ ազգային-ժողովրդականի վրա խարսխված լադակառուցողական նորարարական սկզբունքներին: Կան բազմաթիվ փաստեր, թե ինչպես էր Վարդապետը Փարիզում կամ Կ. Պոլսում մասնակցում «Ռուսաց» համերգներին կամ ունկնդրում դրանք: Հայտնի են Վարդապետի ելույթները Փարիզի «Ռուսաց երեկոյթում», որտեղ նա հանդես է եկել իր նոր ձայնագրած երգերով²⁵:

1905 թ. Իսրիմյան Հայրիկին (1820-1907) Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնող գնացքով ուղեկցում էր Կոմիտաս Վարդապետը: Ճամփորդության ընթացքում խոսելով տարբեր ազգերի երաժշտարվեստի մասին՝ Վարդապետը բավական մանրամասն անդրադարձել է ժողովրդական երգերին: Նա առանձնացրել է ռուսական ազգային երգերի լայնահուն՝ հարթավայրի պես անձայրածիր բնույթն ու լադային ինքնատիպությունը: Ի հավաստումն իր ասածի՝ Հայոց կաթողիկոսի համար Վարդապետը կատարել է ռուսական երգեր²⁶:

Կոմիտասի «Լեռնային բարձունքներ» ռոմանսը գրված է Մ. Լերմոնտովի բանաստեղծության խոսքերով: Նրա գրչին է պատկանում նաև Պ. Չայկովսկու (1840-1893) “Был у Христа-младенца сад” երգի խմբերգային տարբերակը²⁷: Փարիզում, որտեղ XX դարի սկզբին շատ բարձր էր գնահատվում ռուսական

²⁴ Հայ եկեղեցական անվանի գործիչ, աստվածաբան Մաղաքիա Օրմանյանը 1887 թ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Օրմանյանի միջնորդությամբ եվրոպական համալսարաններում իրենց կրթությունն են շարունակել ճեմարանական իր սաները՝ Կոմիտաս Վարդապետը, Գարեգին Հովսեփյանցը (1867-1952, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս), Գևորգ Զ Չորեքյանը (1868-1954, հետագայում՝ Ամենայն հայոց 129-րդ կաթողիկոս):

²⁵ *Արարատ*, Վաղարշապատ, 1907, N 10, էջ 907:

²⁶ **Х. Бадикян**, Русские ноты великого Комитаса, *Голос Армении*, Ереван, 1999, 9 октября. «Արարատ», 1905, N 9, с. 807:

²⁷ Տե՛ս **Մ. Հարությունյան**, Կոմիտասը ազգային և այլազգային աղբյուրների մարմնավորող, *Ավանդույթներ և արդիականություն*, *Հայ երաժշտության հարցեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 236:

երաժշտական մշակույթը, Վարդապետն առավել բազմակողմանիորեն է ընկալում ժողովրդական հարուստ ակունքներից բխած ռուսական երաժշտարվեստը: Ինչպես ճշմարտացիորեն նշել է Կոմիտասի սան Աղավնի Մեսրոպյանը, «Կոմիտասի նախասիրությունը եղավ ռուսական ժողովրդական երգի զարմանալի պոլիֆոնիզմը: Անոր պարզ ու հստակ հնչականությունը գրավեց իր հոգին, խորապես հուզեց իր մեծ փաղանդը»²⁸: Ա. Մեսրոպյանն իր «Կոմիտաս և ռուսական երաժշտությունը» ակնարկում անդրադառնալով Կոմիտասի՝ ռուս երաժշտությանն ունեցած վերաբերմունքին՝ գրում է. «Հայկական ժողովրդական երգերեն դուրս՝ Կոմիտասի ամենասիրած եղանակները մնացին Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա»-ի արիաները, Մուսորգսկիի «Երգ լվի մասին», Ռիմսկի-Կորսակովի «Շեհերազադը» և Դորգոմիժսկիի «Ռուսալկա» օպերան: Կոմիտաս բացառիկ սեր մը ուներ վերջինիս «Ջաղացպանի երգ»-ի նկատմամբ: Ունկնդիրներու հիշողության մեջ երբեք չեն կրնար մոռցվիլ այն պահերը, երբ Կոմիտաս մրերմական հավաքույթներու ժամանակ հաճախ կանցներ դաշնամուրի առաջ և անոր մեղեդիներուն միացնելով իր քաղցրալուր ձայնի ելևէջները, խորունկ վերապրումով կորսնորեր ռուս աշխարավոր ջրաղացպանի ներքնաշխարհը»²⁹: Կոմիտաս Վարդապետն իր գրադարանում հատուկ խնամքով առանձնացնում և ուսումնասիրում էր ռուս դասականներ Մ. Մուսորգսկու, Ա. Բորոդինի և Ն. Ռիմսկի-Կորսակովի գործերը, իսկ իր «Նվիրական պահարանում» Խրիմյան Հայրիկի, Խ. Աբուլյանի, Կ. Դեբյուսիի նկարների կողքին պահում էր Մ. Գլինկայի, Պ. Չայկովսկու և Մ. Գնեսինի նկարները³⁰, հավաքում և խնամքով պահպանում էր ռուս երաժշտության մասին մամուլում հրատարակված հոդվածները: 1913 թ. Ռուսաստանից Պոլիս ժամանած երգչախումբը հանդես էր գալիս Ստեպան Սմոլենսկու (1848-1908) Պատարագի կատարումով. Վարդապետը շատ բարձր էր գնահատում այդ գործը՝ իր աշակերտներին հորդորելով ներկա գտնվել բոլոր համերգներին: «Կոմիտասը մեծ ոգևորություն կապրեր ամեն անգամ, – գրում է Ա. Մեսրոպյանը, – որ Ռուսաստանեն Պոլիս կայցելեին ռուսական երաժշտական կարարողական ուժեր: Անոնցմե ամեն մեկուն հետ Կոմիտաս կժանոթանար Պոլսո հայտնի երաժշտական «Կոմանդիներ» փան մեջ... Հաճախ, երբ այդ առիթով մենք կերթայինք

²⁸ Տե՛ս ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 291:

²⁹ Նույն տեղում, էջ 292:

³⁰ Նույն տեղում, էջ 202:

նուսական եկեղեցին, դասի մեջ կրեսենիք Կոմիտասը կանգնած իր պարզավոր տեղը, որ վերացած վիճակի մեջ կմասնակցեր երգչախմբի երգեցողության»³¹:

1909 թ. հայ անվանի պետական գործիչ, գրականագետ Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925) նամակ է գրել Կոմիտաս Վարդապետին և հայ ուսանողական միության անունից խնդրել է գալ Մոսկվա, ուսանողներից մի երգեցիկ խումբ կազմել և համերգներ տալ այդ միության օգտին³²: Վարդապետը, պատճառաբանելով իր զբաղվածությունը, մերժել է Ա. Մյասնիկյանին: Նույն թվականին Էջմիածնից Մոսկվա՝ Մյասնիկյանին հղած Կոմիտասի նամակը Վարդապետի կախյալ վիճակի ևս մի փաստի վկայությունն է. «Ձեր ուզած եւ իմ ցանկացած համերգը պարտաւոր գլուխ բերելու համար անհրաժեշտ է առնուազն մէկ եւ կէս ամիս՝ գալու, գնալու եւ պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժուար թէ թողնեն բացակայեմ: Բայց եւ այնպէս, փորձեցէք՝ դիմեցէք պաշտօնապէս Վեհափառին, գուցէ թոյլատրում է, այն ժամանակ կը գամ. ես պատրաստ եմ ծառայելու»³³: Այս կախյալ վիճակում ռուսական մեծ քաղաքներում դժվար էր ճանաչելի դարձնել Վարդապետի երաժշտական և գիտական ժառանգությունը:

Կոմիտաս Վարդապետի տեսական աշխատությունների բավական քիչ հատված է թարգմանվել օտար լեզուներով³⁴: Ռուսական լայն լսարանի համար ևս անհայտ էր նրա գիտական ուսումնասիրությունների մեծ մասը: Նրա ժառանգության արժեքավոր հատվածը առաջին անգամ ռուսերեն թարգմանել և հրատարակել է ռուս երաժշտագիտության մեջ զգալի վաստակ ունեցող անվանի երաժշտագետ, քննադատ Վասիլի Կորգանովը: Անդրադառնալով Կոմիտասի բանահավաքչական աշխատանքների կարևորությանը՝ Թիֆլիսի ռուսալեզու պարբերականներում Կորգանովը հանդես է եկել նրա անձն ու գործը լուսաբանող տարաբնույթ հոդվածներով: 1900 թ. Թիֆլիսի “Кавказский вестник” ամսագրում նա գերմաներենից ռուսերեն է թարգմանել և հրատարակել Վարդապետի «Հայկական եկեղեցական երաժշտություն» խորագրով հոդվածը³⁵: 1902 թ. նույն ամսագրում Վ. Կորգանովը իր “Взгляд в нечто” հոդվածում մանրամասն դիտարկել է Վարդապետի «Հայ գեղջուկ պարը» խորագրով

³¹ Գլինկան և Կոմիտասը, *Սովետական արվեստ*, 1957, N 2, էջ 39:

³² Ալեքսանդր Մյասնիկյանը և արվեստը, *Սովետական արվեստ*, 1956, N 2, էջ 11:

³³ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, *Նամականի*, էջ 171:

³⁴ “Die armenische Kirchenmusik” («Հայ եկեղեցական երաժշտություն»), հրատարակվել է 1899 թ., Լայպցիգում: “La musique rustique Arménienne” («Հայ գեղջուկ երաժշտություն») հրատարակվել է 1907 թ., Փարիզում:

³⁵ *Кавказский вестник*, 1900, N 1, с. 107.

ուսումնասիրությունը³⁶:

1904 թ. իշխան Թումանյանի (1870-1947) խմբագրությամբ Թիֆլիսում հրատարակվող “Новое обозрение” ռուսերեն օրաթերթի «Կովկասյան երաժշտությունը» խորագրով հոդվածում Վ. Կորգանովը գրում է. «Վերջապես, շատ փարիներ անցնելուց հետո, գտնվեց մի մարդ, որ զինված մասնագիտական կարողություններով, նվիրվեց կովկասյան երգերի ուսումնասիրությանը՝ արհամարհելով ամեն մի դժվարություն: Կոմիտասն հանդիսանում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերողը ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության»³⁷:

Երկու արվեստագետների՝ Կոմիտասի և Կորգանովի բարեկամության վկայությունն է 1904 թ. անվանի երաժշտագետին հղած Վարդապետի նամակը՝ հետևյալ վերջաբանով. «Ուրախությամբ սպասում եմ Ձեզ սեպտեմբերին, Յարգանքներով միշտ պատրաստ Ձեզ ծառայելու Ձեր անձնուէր, խոնարհ ծառայ Կոմիտաս Վարդապետ»³⁸:

Ժամանակի ընթացքում Վ. Կորգանովը դարձել է նաև Կոմիտասի առաջին քննադատներից: Իր «Կոմիտաս Գևորգյան» վերնագրով հոդվածում, անդրադառնալով Կոմիտասի փարիզյան ելույթներին և, մասնավորապես, «Հայ քնարի» հրատարակությանը, Վ. Կորգանովը գրել է. «Կոմիտաս Վարդապետը չպետք է հրատարակեր այդ ժողովածուն, որ երաժշտական ու գիտական տեսակետից ունի ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն»³⁹:

Զխորանալով կոմիտասյան մշակումների գեղարվեստականության մեջ՝ Կորգանովը նսեմացնում է դրանց արժանիքները: Երաժշտագետը պնդում է, որ ժողովրդական երգը, «հում նյութը» պետք է տպագրել այնպես, ինչպես երգում է ժողովուրդը: Ըստ նրա, մշակումը չի կարող վերարտադրել բնական երգի իսկական արտահայտչականությունը. “Я настаивал и настаиваю на желательности издания народных напевов в подлинном, аутентичном виде”⁴⁰: Կորգանովը գտնում էր, որ Կոմիտասի հետազոտությունները պիտի հրապարակվեն ռուսերեն և հայերեն, քանզի դրանք ավելի շատ հետաքրքրում են հայերին և ռուսներին, այլ ոչ թե ֆրանսիացիներին և գերմանացիներին⁴¹:

³⁶ Նույն տեղում, 1902, N 6, էջ 32:

³⁷ Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 15:

³⁸ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Նամականի, էջ 85:

³⁹ Տե՛ս В. Корганов., Кавказская музыка, 1908, с. 81.

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ В. Корганов, Еще о кавказской музыке, Тифлис, 1907, N 292, с. 7-8.

1905 թ. Կոմիտաս Վարդապետը Թիֆլիսի Հովնանյան դպրոցում կարդում է դասախոսություն հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Դրան հաջորդում է Թիֆլիսի Արտիստական ընկերության համերգը, որն իր աննախադեպ հաջողությամբ դառնում է մշակութային մեծ իրադարձություն: Թիֆլիսի հայալեզու և ռուսալեզու մամուլը հիացական կարծիքներ է հայտնել Կոմիտասի մասին՝ մասնավորապես, արվեստի ու հայ երաժշտության վերաբերյալ՝ ընդհանրապես: Եվրոպական շրջագայություններից հետո՝ 1908 թ., Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոնի՝ Բաքվի ժողովարանի դահլիճում, Վարդապետը հանդես է եկել երկու նվագահանդեսով և ելույթ-դասախոսությամբ, որի մասին գրել է Պետերբուրգի “Русская музыкальная газета” շաբաթաթերթը⁴²: Հոդվածագիրը “Лекции по музыке в России” վերնագրով հոդվածում անդրադարձել է հայ եկեղեցական երաժշտության մասին Բաքվում հրատարակված Կոմիտասի արժեքավոր ուսումնասիրությանը: Նույն շաբաթաթերթում “Музыка в провинции” ընդհանուր խորագրի ներքո հրապարակվել է հաղորդագրություն ապրիլի 1-ին Կոմիտաս Վարդապետի՝ Բաքվում կայանալիք համերգի վերաբերյալ⁴³:

Կոմիտասագիտության մեջ հսկայական ավանդ ունեցող երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթայանը նամակագրական կապի մեջ է եղել Լազարյան ճեմարանի շրջանավարտ, ռուս արևելագետ, դիվանագետ Վլադիմիր Մինորսկու (1877-1966) հետ: XX դարի սկզբին Մինորսկին պաշտոնավարել է Իրանի և Թուրքիայի ռուսական դեսպանություններում: Ուսումնասիրել է Պարսկաստանի և Անդրկովկասի պատմաաշխարհագրությունն ու մշակույթը: Նա Հայ Դատը պաշտպանող ռուս այն դիվանագետն էր, որը հանդես էր գալիս հայանպաստ քաղաքական հայտարարություններով: Մասնավորապես, դատապարտում էր Մեծ Բրիտանիայի Արտաքին գործոց նախարար Էռնեստ Բեհնին՝ Թուրքիայի առաջին նախարար Սարաջոլուի հայատյաց քաղաքականության շուրջ համագործակցելու համար: Հիշեցնելով Հիտլերի հայտնի խոսքերը⁴⁴ և երիտթուրքերի վայրագությունները, ռուս մտավորականը հակադարձում էր անգլիացի պաշտոնյայի այն հայտարարությանը, թե Ղարսում և Ադանայում

⁴² *Русская музыкальная газета*, 1908, N 17, с. 414. Պետերբուրգյան հեղինակավոր ամսագիր է, որը հրատարակվել է 1894-1918 թթ., լուսաբանել է ռուսական և համաշխարհային մշակույթի արժեքավոր իրադարձությունները: **Ս. Դեմուրյան**, Կոմիտաս Գևորգյան, *Կոմիտաս ժողովածու*, Երևան, 1930, էջ 93-95:

⁴³ *Русская музыкальная газета*, с. 422.

⁴⁴ «Ո՛վ է այսօր խոսում հայերի բնաջնջման մասին», - ասել է Հիտլերը 1939 թ.-ին, Լեհաստանի վրա հարձակվելուց մեկ շաբաթ առաջ: Տե՛ս **Գ. Բարդակյան**, *Հիտլերը և Հայոց ցեղասպանությունը*, Ջորջյան ինստիտուտ, Մասաչուսեթս, 1986:

հայեր չեն եղել: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Վ. Մինորսկին ապրել է Փարիզում, 30-ականներից՝ Անգլիայում: Նա եվրոպական մի շարք հեղինակավոր համալսարանների պատվավոր անդամ էր, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր: Տիրապետում էր մի քանի լեզուների, այդ թվում՝ քրդերենի: Ի դեպ, նրան հիացրել էին Կոմիտաս Վարդապետի քրդական երգերի կատարումները:

1912 թ.-ից Մինորսկին աշխատել է Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանությունում, մտերիմ է եղել Կոմիտասի հետ: Գրեթե միշտ նա ներկա է եղել Վարդապետի՝ Կ. Պոլսում կայացած համերգներին, իր հուշագրություններում անդրադարձել է այդ նվագահանդեսներին: Հակիրճ ու բովանդակալից նամակներում ռուս գիտնականն առանձնակի ջերմությամբ ու անմիջականությամբ, նկարագրել է «Մեծ արտիստին»՝ ներկայացնելով նաև այն մթնոլորտը, որով պարուրված էին կոմիտասյան համերգները: Կարևոր է, որ իսկական մտավորականի խորաթափանցությամբ նա արժևորել է Կոմիտաս Վարդապետի գործունեության նշանակությունը համաշխարհային երաժշտական մշակույթի համատեքստում: Վ. Մինորսկու հուշերից Ռ. Աթայանը պատահիկներ է հրապարակել “Литературная Армения”⁴⁵ ամսագրում: Կոմիտասի կատարումն ունկնդրելուց հետո ռուս դիվանագետը գրել է. “*После концерта я пошел приветствовать Комитаса и пригласил его к себе в посольство. Тут он, увидя мое искреннее внимание, сам пел, аккомпанируя себе на рояле, и был еще сердечнее и ближе. Я понял всю важность человека, прокладывающего новые пути в области народной музыки*”⁴⁶.

Կոմիտաս Վարդապետի գործի ճշմարտացի գնահատության մեջ անուրանալի է նաև ռուս կոմպոզիտոր Թոմաս Հարտմանի դերը: Նա Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաների շրջանավարտ էր, Ա. Արենսկու և Ս. Տանենի աշակերտը: 1919-1921 թթ. նա Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում վարել է կոմպոզիցիայի դասարանը, համագործակցել փիլիսոփա Գ. Գյուրջիևի հետ: 1920-ականներից ապրել է Բեռլինում, Փարիզում, այնուհետև՝ ԱՄՆ-ում: Դասավանդել է Փարիզի Սերգեյ Ռախմանինովի անվան ռուսական կոնսերվատորիայում, որի հիմնադիր-ռեկտորն էր Նիկոլայ Չերեպինինը (1873-1945): Վերջինս նույնպես Կոմիտաս Վարդապետի փարիզյան համերգների երկրպագուներից էր: Ռուս կոմպոզիտոր, դիրիժոր և մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիայում Ռիմսկի-Կորսակովի դասարանի լավագույն

⁴⁵ В. Минорский, Константинопольские встречи, Литературная Армения, N 10, 1969, с. 81.

⁴⁶ Նշված հոդվածը, էջ 82:

շրջանավարտ Ն. Չերեպինը հսկայական ներդրում ունի ռուսական երաժշտական մշակույթի տարածման մեջ: Հայտնի է նրա համագործակցությունը ռուս առաջադեմ մտավորականության հետ⁴⁷: Նրան է պատկանում Կոմիտասի երաժշտությանը տրված հայտնի գնահատականը «*Ինչպէ՛ս պիտի ուրախանար Մորիս Բավելը՝ լսելով այս երկերը*»⁴⁸: Չերեպինի այս գնահատականը գետեղված է Թոմաս Հարտմանի՝ 1919 թ.-ին Թիֆլիսում կարդացած հայտնի դասախոսության մեջ (որին անդրադարձել է Գ. Գյոդակյանը):

Իր գիտական արժեքով Հարտմանի այս հոդվածը կարևոր ձեռքբերում է կոմիտասագիտության մեջ: Հարտմանն առաջիններից էր, որ կարևորեց Կոմիտաս կոմպոզիտորի դերն ու նշանակությունը ազգային երաժշտության համար. մի իրողություն, որը ցավոք, առ այսօր մեզանում լիովին գիտակցված չէ: Հարտմանն իր հոդված-դասախոսության մեջ ներկայացրել է Կոմիտաս Վարդապետի կենսագրական փաստերն ու բազմաբեղուն գործունեության ոլորտները: Ըստ նրա՝ Կոմիտասը ժողովրդական երգի հիմքով հյուսում էր իր բազմաձայն երաժշտական կտավները: Վարդապետի պոլիֆոնիկ վարպետությունը, մտածողության յուրօրինակությունը նա համեմատում է Վերածնության դարաշրջանի խմբերգային պոլիֆոնիայի հսկաների հետ: Հղելով իր ուսուցիչ Ս. Տանեկին՝ Հարտմանը գրում է. «*Նշանաւոր ռուս տեսաբան Տանեկը անձամբ ինձ ասում էր, թէ այն եզրակացութեան է եկած, որ ռուս ժողովրդական երգերը պէտք է ձայն առ ձայն ոճով մշակել: Հանճարեղ Կոմիտասը, նախազգայնութեան ոյժով գործադրեց այդ ոճը եւ այնպիսի կատարելութեամբ, որ հազիւ իր արեւմտեան արուեստակիցներից մինը կարողանար իրագործել: Նրա «մշակումների» (դիտմամբ չակերտների մէջ եմ դնում), աւելի ճիշտ կը լինէր ասել, նրա քանքարաւոր խմբական երկերի մէջ ժողովրդական եղանակը պահուած է անձեռնմխելի՝ թէ չափի, թէ եղանակի տեսակէտից: Նա ֆանատիկոս էր այդ հարցում: Ո՞վ նրանից լաւ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին*»⁴⁹:

⁴⁷ Չերեպինը 1890-ականներին Ռուսաստանում ձևավորված “Мир искусства” գեղարվեստական միության գործուն անդամներից էր, 1909 թ.-ից Ս. Դյագիլևի Ռուսական բալետային թատերախմբի համար երաժշտություն գրող կոմպոզիտորներից: 1917-18 թթ. Ն. Չերեպինը ղեկավարել է Թիֆլիսի երաժշտանոցը, գործուն մասնակցություն ունեցել Թիֆլիսի մշակութային կյանքին:

⁴⁸ **Թոմաս Հարտման**, Դասախոսութիւն Կոմիտասի մասին՝ կարդացուած Թիֆլիզում 1919 թուին, *Անահիտ*, 1935, էջ 75-80: Այս հոդվածն առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսի “Кавказское слово” օրաթերթում, 1919 թ. փետրվարի 28-ի և մարտի 1-ի համարներում: Այնուհետև Մ. Բաբայանի թարգմանությամբ այն հրատարակվել է Փարիզի «Անահիտ» հանդեսում (1935, 1936 թթ.): Տե՛ս նաև *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 54-62:

⁴⁹ **Թ. Հարտման**, *Դասախոսութիւն Կոմիտասի մասին*, էջ 77:

Որպես XX դարասկզբի նորարար ռեալիստ՝ Հարտմանն առնչություններ է տեսել Մ. Մուտորգսկու և Կոմիտասի միջև. «Կոմիտասը համանմանություն ունէր Մուտորգսկու հեղ-դրական (րեալ) կերպով երևակայում էր երաժշտական պատկերը»⁵⁰: Նրա այս հոդվածն առաջին լուրջ մասնագիտական ուսումնասիրություններից էր, որը հիմնավորում էր Կոմիտաս Վարդապետի մեծ կոմպոզիտոր լինելը: Հարտմանն առաջինն էր, որ Վարդապետի ստեղծագործությունների մեջ արժևորեց գեղջուկ երգը բազմաձայնորեն ներդաշնակելու ինքնատիպ սկզբունքները. «Գերազանցորեն նա (Կոմիտասը – Լ.Ս.) գործի՛չ է, ազգագրագե՛տ, գիտնական՝, թե՛ կոմպոզիտոր: Չնայած, որ Կոմիտասը երևան է եկել իբրև հեղինակ հայկական երգերի մշակումների, ես պնդում եմ, որ նախ և առաջ նա կոմպոզիտոր է: Նրա ճանապարհը միակ ճիշտ ուղին է, որ պեղք է ընկերը այդ մարդը, որ հսկայական նպատակ ուներ – գտնել այն ներդաշնակային և բազմաձայն (պոլիֆոնիկ) ոճը, որ իրենց էությանը իսկական հայ ժողովրդական երգին համապատասխան են»⁵¹: Հարտմանը կարևորում է նաև Վարդապետի բանահավաքչական գրառումներն ու դրանց գիտական հիմնավորումները:

Կոմիտասի անձն ու գործը խորապես ուսումնասիրած և ըստ արժանվույն գնահատած Հարտմանն իր համոզիչ եզրահանգումներով հակադարձում է քննադատներին, այդ թվում և Կորգանովին, պնդելով, որ Կոմիտասի ազգագրական գրառումները կոմպոզիտորի գործունեության կարևորագույն հատվածն են: Նա առաջին երաժշտագետներից էր, որ կարևորեց Կոմիտասի գործի մնայուն նշանակությունը ոչ միայն հայ, այլև համաշխարհային երաժշտության համար:

Հարտմանի գործունեությունը Թիֆլիսում կապված էր երաժշտահասարակական, մշակութային կյանքին: Նա ստեղծագործական կապեր էր հաստատել Թիֆլիսի հայ մտավորականության երևելի դեմքերի՝ Հովհաննես Թումանյանի (1869-1923), Եղիշե Թադևոսյանի (1870-1936), Սպիրիդոն Մելիքյանի (1880-1933) հետ (բոլորն էլ Վարդապետի մտերիմ բարեկամներն էին): 1919 թ. ռուս կոմպոզիտորը դարձել էր Թիֆլիսում կազմակերպված «Կոմիտաս» ընկերության (գործել է երկու տարի) գործուն անդամներից: Ընկերությունը ծրագրել էր համերգներ կազմակերպել, հրապարակել և պահպանել կոմպոզիտորի ժառանգությունը: Այն նպատակ ուներ

⁵⁰ Թ. Հարտման ժողովրդական երգը եւ նրա հաւաքողները, *Անահիտ*, Փարիզ, 1936, էջ 30:

⁵¹ Թ. Հարտման, *Դասախօսութիւն Կոմիտասի մասին*, էջ 76: Տե՛ս նաև *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, էջ 55:

անդամավճարներ հավաքելու միջոցով տարեկան որոշակի գումար հատկացնել Վարդապետին⁵²:

Մեր կարծիքով Կոմիտասն, իրավամբ, մշակեց ժողովրդական երգերի ծայնագրման և դաշնավորման սեփական սկզբունքները: Նրա ազգագրական բարձրարժեք գրառումները հիմնանյութ հանդիսացան Վարդապետի գիտական հետազոտությունների և ստեղծագործությունների համար: Այդ գրառումները դարձան հայ ազգային երաժշտամտաճողության ինքնատիպության ապացույցներ: Հայտնի է, որ հայոց մշակույթը այն հին քաղաքակրթություններից է, որը ձևավորել է երաժշտական համակարգ: Կոմիտաս Վարդապետն այդ համակարգը գիտականորեն ուսումնասիրողներից մեկն էր: Նրա խազաբանական ուսումնասիրությունները⁵³ հետաքրքրել են նաև օտարազգի մասնագետներին. նրանց թվում էր և Միխայիլ Գնեսինը:

Ռուսական մշակույթի ականավոր ներկայացուցիչ, կոմպոզիտոր, մանկավարժ երաժշտա-հասարակական գործիչ Մ. Գնեսինը նշանակալի դեր ունի նաև հայ երաժշտական մշակույթում: Հայտնի են նրա հուշագրությունները Կոմիտաս Վարդապետի մասին⁵⁴: Մ. Գնեսինի մոտ են ուսանել հայազգի անվանի կոմպոզիտորներ Հարո Ստեփանյանը (1897-1966), Անուշավան Տեր-Ղևոնդյանը (1887-1961), հայ կոմպոզիտորական նոր դպրոցի հիմնադիր Արամ Խաչատրյանը (1903-1978):

Մ. Գնեսինը սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում՝ Ն. Ռիմսկի-Կորսակովի և Ա. Լյադովի դասարաններում: Ստեղծագործական և մանկավարժական գործունեությանը զուգընթաց հետաքրքրվել է Արևելքի ֆոլկլորով, 1910-20-ականներին ճամփորդել է Պաղեստինով և արևելյան մի շարք երկրներով: Հրեական երաժշտության գիտակներից էր, հսկայական աշխատանք է կատարել հրեական երաժշտության ուսումնասիրման և տարածման ասպարեզում: Ուսումնասիրել է նաև հայկական ժողովրդական երգը: Նշելով Գնեսինի գործունեության լայն ընդգրկումը՝ երաժշտագետ Բորիս Շեստոպալը իր «Հրեական երաժշտության Գլինկան» հոդվածում, որպես հրեա կոմպոզիտորի կենսագրության կարևոր դրվագ, կանգ է առել Գնեսինի՝ ժողովրդական երգի հանդեպ ունեցած վերաբերմունքի, մասնավորապես՝ նաև 1914 թ.

⁵² Ընկերության անդամներից էին Ե. Թադևոսյանը, Գ. Լևոնյանը, Ս. Մելիքյանը: Տե՛ս նաև Թ. Հովհաննիսյան, «Կոմիտաս» ընկերություն, «Գանձասար», Հալեպ, 1994, էջ 79-83: Գ. Լևոնյան, Մեր Կոմիտասը, «Կոմիտաս» ժողովածու, Երևան, 1930, էջ 75-88:

⁵³ Հայտնի է, որ 1899-ին Կոմիտաս Վարդապետը վերձանել էր Առողջանության խազերի համակարգը և ձեռնամուխ եղել մյուս (տևողության, տրոհության) համակարգերի վերձանությանը:

⁵⁴ «Կոմիտասի հետ հանդիպումներից» խորագրով Մ. Գնեսինի հուշ-նամակը առաջին անգամ լույս է տեսել «Коммунист» թերթում (Երևան, 1946, 5 ապրիլ):

Կոնստանդնուպոլսում Կոմիտասին այցելելու փաստի վրա. “*Погружение в еврейскую народную музыку помогло мне понять язык народного искусства вообще, и я стал “демократичнее” как художник*”. В 1914 г. по пути в Палестину, в Константинополе Михаил Фабианович встречается с замечательным армянским музыкантом Комитасом, который занимался в основном армянскими “хазами”, но хорошо был знаком и с еврейским «*peginot*», и со всей областью “библейской кантилляции”. Комитас считал систему еврейских «*peginot*» более древней, чем армянские “хазы”, которые по своим невмам гораздо мелодичнее, тогда как еврейские попевки чисто речевого происхождения. А вот напевы к псалмам Давидовым у армян, как и у евреев, по мнению Комитаса, являются наиболее поздними образцами музыкального творчества и в большей степени несут след индивидуальной обработки, а самые древние напевы утеряны”⁵⁵.

1914 թ. Մ. Գնեսինը Պոլսի իր համերգներից հետո հյուրընկալվել է Կոմիտասի համեստ բնակարանում, խանդավառությամբ ծանոթացել նրա արվեստին: «Հիշողությանս մեջ, – գրում է Ա. Մեսրոպյանը, – թարմ է ռուս հայրնի դաշնակահար Գնեսինը, որը եկել էր Պոլիս շարք մը համերգներ փալու նպատակով: Նշանակալից է, որ երբ Պոլսո ռուսական դեսպանը Գնեսինին առաջարկեր էր իջևանել իրեն հարկացված Բերա-Պալաս արքայական հյուրանոցը, ան նախընտրեր էր Կոմիտասի համեստ բնակարանը: Գնեսինը երկար ժամանակ Կոմիտասի սիրելի հյուրը եղավ: Մեծ էր Կոմիտասի խանդավառությունը, նա այդ օրերուն իր փունը վերածեր էր ռուսական ժողովրդական երգի բույնի»⁵⁶:

Կոմիտասագիտական գրեթե բոլոր մենագրություններում, հոդվածներում և հուշագրություններում նշվում է այս կարևոր հանդիպման մասին:

Մեզ հաջողվեց Մ. Գնեսինի արխիվային փաստաթղթերից ձեռք բերել ֆոլիորագետ, էթնոերաժշտագետ Իզալի Զեմցովսկու (ծնվ. 1936 թ.) նամակը⁵⁷: Զեմցովսկին էթնոերաժշտագիտական ուսումնասիրությունների նպատակով աշխատելով Ռուսաստանի Գրականության և արվեստի պետական արխիվի Մ. Գնեսինի հարուստ ֆոնդում՝ հայտնաբերել է մի քանի փաստաթուղթ: Հենվելով մեր կողմից ձեռք բերված այդ նյութերի վրա, կարող ենք ասել, որ 1914

⁵⁵ *Мигдаль*, Times, N 36-37, июль-август, 2003, с. 25.

⁵⁶ Գլինկան և Կոմիտասը, *Սովետական արվեստ*, N 2, 1957, էջ 39:

⁵⁷ Այս արժեքավոր տեղեկությունը մեզ տրամադրեց Զեմցովսկու հետ մասնագիտական երկարատև առնչություններ ունեցող երաժշտագետ, պրոֆեսոր Ժ. Զուրաբյանը: Զեմցովսկին 1980-ականներին եղել է Երևանում, ստեղծագործական սերտ փոխառնչություններ ունեցել հայ երաժշտագետների և այլ արվեստագետների հետ: 1994 թ.-ից ապրում է Լոս Անջելեսում:

թ. հունվարին Միխայիլ Գնեսինը Կոմիտաս Վարդապետի մոտ էր եկել նշանավոր գիտնական-հետազոտողին անձամբ ճանաչելու համար, ինչպես նաև ուներ հանձնարարական– նամակ, հրեական հին ծայնանիշերի՝ neginoth-երի (նամերի) համբավավոր հետազոտող, պատմաբան, արվեստաբան Դավիթ Մազգիդի (1862-1942) կողմից: Վերջինս Կոմիտաս Վարդապետից խնդրում էր որևէ աշխատություն կամ լուսաբանություն հայկական խազերի, հրեական եղանակների և նմային համակարգերի հնարավոր փոխառնչությունների մասին:

Փաստաթղթերից մեկում Գնեսինի տպավորություններն էին Կոնստանդնուպոլից, որտեղ Դ. Մազգիդի խնդրանքով նա հանդիպել է Կոմիտաս Վարդապետին: Գնեսինին հետաքրքրել էին Վարդապետի խազաբանական աշխատանքները, որոնց բացահայտումները նոր լույս կարող էին սփռել հրեական նամերի ուսումնասիրության վրա: Կոմիտասը զբաղվել է հրեական նամերով, քանզի, ըստ նրա, հրեական նշաններն ավելի հին են, քան հայկականը: Գնեսինին նա ցույց է տվել Նապոլեոն I-ի ժամանակ Ֆրանսիայում հրատարակված՝ Եգիպտոսը նկարագրող գիրք, որտեղ մի գլուխ նվիրված է Եգիպտոսի հրեաների կողմից գրառած նամերին⁵⁸: Կոմիտաս Վարդապետին հայտնի էին նաև գերմանացի փիլիսոփա, եբրայագետ Յոհան Ռոյխլինի (1455-1522) ուսումնասիրությունները:

Հաջորդ փաստաթուղթը Մ. Գնեսինի նամակն է՝ ուղղված Մազգիդին, որտեղ նա հայտնում է Վարդապետից ստացած իր տպավորությունները. *“Я был у Комитаса. Беседовал очень интересно. Он милейший человек. Вардапет Комитас – человек чарующей внешности и полный всяческого обаяния”*⁵⁹: Այնուհետև նա անդրադարձել է խազերի և նամերի ընդհանրություններին ու տարբերություններին, սաղմոսների երգեցողությանը՝ մանրամասների մասին խոստանալով խոսել հաջորդիվ:

Ի. Զեմցովսկու ուղարկած երրորդ փաստաթղթում զետեղված է Դ. Մազգիդի՝ Վարդապետին հղած նամակը⁶⁰, որտեղ նա ներկայացնում էր հրեական սաղմոսերգությանը նվիրված երաժշտագիտական իր դիտարկումները: Վերծանելով Աստվածաշնչի երգվող որոշ հատվածների մետրական շեշտերի առանձնահատկությունները՝ Դ. Մազգիդը, Կոմիտաս

⁵⁸ РГАЛИ, ф. 2954, оп. 1, ед. хр. 111.

⁵⁹ АИВ РАН, ф. 85, оп. 2, ед. хр. 161.

⁶⁰ АИВ РАН, ф. 85, оп. 1, ед. хр. 47 (1), тетрадь МС132/2, лист 3. Его Священству Архимандриту Армян, Комитасу в Константинополь.

Վարդապետին՝ որպես Եվրոպայում⁶¹ խազաբանության ոլորտի «միակ մասնագետի», խնդրում է իրեն փոխանցել հայկական խազանիչ որևէ սաղմոսի վերծանություն, որը կօգներ իր հետագա աշխատանքներին. *“Часть схемы так называемых метрических акцентов Библии, книг Psalms, Proverbi u Hiob, мне удалось разрешить на основании традиционных молитвенных напевов, следующую же часть я надеюсь найти в псалмодии армян, которые мне так напоминают наши синагогальные”*⁶².

Մագգիդը Վարդապետից խնդրում էր նաև հրապարակված խազաբանական աշխատություն կամ որևէ անտիպ ուսումնասիրություն այդ բնագավառից: Իր հերթին հրեա հետազոտողը Կոմիտասին խոստանում է ուղարկել հրեական սաղմոսերգությանը նվիրված ուսումնասիրություն: Նամակագիրը ցավում էր, որ հայերենին չտիրապետելով՝ չի կարողանա արտահայտել իր ողջ հիացմունքը Կոմիտաս Վարդապետի անձի ու գործի նկատմամբ:

Դ. Մագգիդի նամակն ինչ-ինչ պատճառներով Վարդապետին չի հասել: Բայց պատմության մեջ մնացել են հրեական և ռուսական մշակույթի համար հսկայական գործունեություն ծավալած գործիչներ Թ. Հարտմանի, Մ. Գնեսինի և Դ. Մագգիդի գիտական բարձր կարծիքները, մարդկային ջերմ վերաբերմունքը հայ դասականի հանդեպ:

Կոմիտասի խազաբանական աշխատանքները «հայտնություն» էր համարում և բարձր էր գնահատում նաև Հարտմանը. *«...ի՛նչպիսի վարպետ էր (Կոմիտասը – Լ.Ս.) խազական գրերի... Ամէն մի ռուս երաժիշտ, որ կ'ուզէր թափանցել այդ խորհրդաւոր եկեղեցական նշանները, որ կան եւ Ռուսաց սլաւոնական ժամասացութեան մէջ, կարող է հասկանալ, թէ՛ ի՛նչ մեծ հեղաքրքրութիւն են ներկայացնում Կոմիտասի տեսական աշխատութիւնները»*⁶³:

*«Ավելի ուշ ես ծանոթացա Կոմիտասի գրվածքներին, – գրում է Մ. Գնեսինը, – համոզվելով, թե ինչպիսի խոշոր կոմպոզիտոր և տաղանդ էր նա, որպիսի յուրահարուկ և հեղաքրքրական վարպետ էր կոմպոզիցիայում և որչափ խոշոր է նրա դերը XX դարի հայ երաժշտության զարգացման ասպարեզում»*⁶⁴:

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո, պարտադրված գաղափարախոսության պայմաններում, շեշտվեց Կոմիտասի «այլախոհությունը», նրա գործի լուսաբանությունն ընթացավ այլ ճանապարհով:

⁶¹ Ճիշտ կլիներ ասել՝ Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում:

⁶² АИВ РАН, ф. 85, оп. 1, ед. хр. 47 (1), тетрадь МС132/2, лист 3. Его Священству Архимандриту Армян, Комитасу в Константинополь.

⁶³ Թ. Հարտման, Ժողովրդական երգը եւ նրա հաւաքողները, էջ 32:

⁶⁴ Տե՛ս Գնեսինի խոսքը Կոմիտասի մասին, *Երեկոյան երևան*, 1969, նոյեմբեր 21:

ժամանակի ընթացքում, սակայն, եղան Կոմիտասի առաքելության իրական և ճշմարտացի գնահատողներ ևս: Կոմիտասյան երգերի ունկնդրումից ոգեշնչված՝ ռուս բանաստեղծ, գրող, ռուսական սիմվոլիզմի հիմնադիրներից և հայ մշակույթի գիտակ Վալերի Բրյուսովը (1873-1924) գրել է. «*Իր ողջ կրքոտությամբ հանդերձ հայկական երգը ողջախոհ է, իր ողջ կրակոտությամբ հանդերձ՝ զուսպ է արտահայտությունների մեջ: Դա մի պոեզիա է՝ արևելյանի պես գունեղ, արևմտյանի պես իմաստուն, պոեզիա, որ գիտի վիշտն՝ առանց հուսահատության, կիրքը՝ առանց մոլեգնության, հիացմունքը, որին, սակայն, խորթ է անգստությունը*»⁶⁵:

Կոմիտաս Վարդապետի ոչ ավանդական կոմպոզիցիոն միջոցների կիրառումը, մոդալ կառուցողական մտածողությունը մեր օրերում ևս քննարկումների առատ նյութ է:

Նրա ստեղծագործության վերլուծական ուրույն մոտեցում է ներկայացրել պետերբուրգցի կոմպոզիտոր, երաժշտագետ, երաժշտական էթնոգրաֆ, Մ. Գնեսինի աշակերտ Աբրամ Յուսֆինը (1926-2011)՝ իր «Անկայուն կոմպոզիցիայի ամբողջականության պրոբլեմը» հոդվածում⁶⁶: Կոմիտասի ձայնագրած «*Ժողովրդական վեհ աշխատանքային պոեմի*»՝ «Լուվա գուպաներգ»-ի նյութերի վերլուծությամբ Յուսֆինը մասնագիտական նոր մեթոդով քննել է ժողովրդական երաժշտական ստեղծագործության գոյատևման ձևերը և այն հարցերը, որոնք առաջ են գալիս այդ ձևերի փոփոխությունից:

Ռուս երաժշտագետ, պրոֆեսոր Ալեքսանդր Դեմչենկոյի (ծնվ.1943 թ.) «20-րդ դարի հայրենական երաժշտությունը» ծավալուն ուսումնասիրության երկու գլուխները նվիրված են Կոմիտասին և նրա ստեղծագործության մեջ ֆոլկլորիզմի ու խրոնոտոպի հիմնահարցերին: Վարդապետի ստեղծագործությունը դիտարկելով XX դարի համաշխարհային երաժշտության զարգացման տեսանկյունից՝ Ա. Դեմչենկոն գրում է. «*20-րդ դարի ամենահինքնարիպ երաժիշտներից մեկը՝ Կոմիտասը, իր ստեղծագործություններում կենսագործեց իր դարաշրջանին բնորոշ մի շարք գեղարվեստական գաղափարներ: Դրանցից հատկանշական են նրանք, որոնք կապվում էին մեր հարյուրամյակի երաժշտական ֆոլկլորիզմի և խրոնոտոպի պրոբլեմի հետ*»⁶⁷: Հետագա շարադրանքում հոդվածագիրը զուգահեռներ է տեսնում Կոմիտասի և XX դարի

⁶⁵ *Поэзия Армении*, под ред. В. Брюсова, М., 1916, с. 38.

⁶⁶ **Ա. Յուսֆին**, Անկայուն կոմպոզիցիայի ամբողջականության պրոբլեմը (Կոմիտասի ձայնագրած «Լուվա հորովեթ»-ի վերլուծության նյութերի հիման վրա), *Կոմիտասական* 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 153-171):

⁶⁷ **Ա. Դեմչենկո**, Ֆոլկլորիզմը և խրոնոտոպի պրոբլեմը Կոմիտասի ստեղծագործություններում, *Արվեստ*, 1991, N 7, էջ 23:

մյուս մեծերի՝ Բ. Բարտոկի, Կ. Շիմանովսկու, Մ. դե Ֆալյայի և Ի. Ստրավինսկու միջև: Այս դիտարկմամբ ևս մեկ անգամ ռուս երաժշտագետի կողմից ամրագրվում է Վարդապետի՝ համաշխարհային երաժշտական մեծություն լինելու իրողությունը: Իսկ Դմիտրի Շոստակովիչը (1906-1975) գրում է. «Հսկայական են նրա ծառայությունները հայ երաժշտության մեջ: Նրա գեղեցիկ գործերը դուրս եկան հարազատ Հայաստանի սահմաններից, դարձան համաշխարհային երաժշտական մշակույթի հպարտությունը: Կոմիտասը միայն մեծ կոմպոզիտոր չէ: Նա նաև անվանի երաժշտագետ է, հիանալի ազգագրագետ, այս բնագավառում շատ մեծ են նրա ծառայությունները:... Հայ կոմպոզիտորները իրենց ստեղծագործությունների մեջ հեղուկ են և կհեղուկեն կոմիտասյան հիանալի ավանդույթներին»⁶⁸:

Բազմաթիվ ռուս կոմպոզիտորներ, երաժշտագետներ և այլ մտավորականներ անդրադարձել ու լուսաբանել են Կոմիտաս Վարդապետի գործունեությունը: Հետազոտական աշխատանքների ընթացքում մեզ չի հաջողվել հայտնաբերել և քննության առնել ռումինացի երաժշտագետ-քննադատ, Բուխարեստի և Լայպցիգի կոնսերվատորիաների պրոֆեսոր Էմանուիլ Չոմակի (1890-1962) «Ընդհանուր ակնարկ հայ երաժշտության վրա» արժեքավոր ուսումնասիրությունը, որից մի հատված գետեղված է «Գլխկան և Կոմիտասը» հոդվածում⁶⁹: Ռումինացի երաժշտագետը պատշաճ գնահատական տալով Կոմիտասի անձին ու գործին՝ գրում է. «Ես առանձնապես գտնում եմ, որ որոշակի ընդհանրական կապ գոյություն ունի ռուսական «Հզոր հնգյակի» և Կոմիտասի միջև, հատկապես Ռիմսկի-Կորսակովի, Բորոդինի և Բալակիրևի հետ»⁷⁰:

Կոմիտաս Վարդապետի ժամանակակիցներից քչերը ի զորու եղան ըստ արժանվույն գնահատել Մեծ կոմպոզիտորի՝ ազգայինի վրա խարսխված մտածողության ինքնատիպությունը, նորարարական գրելաոճը, ստեղծագործական բազմաբեղուն գործունեությունը: Մեզ համար շատ կարևոր են ռուս մշակույթի հեղինակավոր գործիչների՝ Կոմիտաս Վարդապետի ստեղծագործությանը տված գնահատականները: Այդ մտավորականները առաջիններից էին (ֆրանսիացիների հետ), ովքեր Վարդապետի գիտական ուսումնասիրություններում, բանահավաքչական գրառումներում ընդգծեցին հայ ֆոլկլորագիտության և երաժշտագիտության հիմքերն ու զարգացման հետագա ուղիները: Առաջիններից էին, ովքեր ըստ արժանվույն գնահատեցին Կոմիտաս-

⁶⁸ Տե՛ս Դ. Շոստակովիչի խոսքը Կոմիտասի մասին, *Երեկոյան Երևան*, 1969, 17 նոյեմբեր:

⁶⁹ «Սովետական արվեստ», Երևան, 1957, N 2, էջ 38:

⁷⁰ Նույն տեղում, էջ 39:

կոմպոզիտոր երևույթը, նրա գրելաոճի առանձնահատկությունները, որոնք բխում էին գեղջկական երգից, միջնադարյան հոգևոր մոնոդիայից, բայց միևնույն ժամանակ անքակտելիորեն կապված էին ժամանակակից երաժշտության արմատական բարեփոխումներին: Կոմիտաս Վարդապետի երաժշտարվեստը ազգայինի ու արդիականի այն ներդաշնակ միաձուլումն էր, որը բնորոշ և հոգեհարազատ էր ռուսական երաժշտության առաջադեմ ներկայացուցիչներին: Նրա արվեստի պատմական նշանակությունը արձանագրվեց Հարտմանի, Գնեսինի, Բրյուսովի, Շոստակովիչի հողվածներում և հիացական կարծիքներում: Տիրապետելով ռուսերենին, կարճ ժամանակ սովորելով Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ Մ. Եկմայանի մոտ՝ Կոմիտասը ծրագրել էր ուսումը շարունակել հենց այդ կոնսերվատորիայում: Ճակատագրի դիպվածով (ինչը հաճախ որոշիչ էր Վարդապետի կենսագրության մեջ) նա ուսումը շարունակել է Գերմանիայում: Սակայն ազգայինի վրա խարսխված ռուսական առաջադեմ երաժշտական մշակույթը մշտապես եղել է Վարդապետի գիտական և ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակում: Ռուս ֆոլկլորի հարուստ շերտերը, դրա հիմքով կառուցված ռուսական ազգային կոմպոզիտորական դպրոցի ներկայացուցիչների նորամուծությունները համահունչ էին Վարդապետի ստեղծագործական սկզբունքներին, երաժշտական արվեստի արմատական այն փոփոխություններին, որոնց նա առնչվեց իր հետագա գործունեության ընթացքում, և որի անբաժանելի մասն են կազմում սեփական ստեղծագործությունները:

Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության յուրաքանչյուր շրջափուլ երաժշտական արվեստի նոր բացահայտումների լայն ասպարեզ է: Ժամանակի ընթացքում հաստատվում է Կոմիտասի առաքելության դերն ու նշանակությունը ազգային և համաշխարհային մշակույթի համատեքստում: Ինչպես ճշմարտացիորեն գրում է Մ. Գնեսինը՝ «Կոմիտասի անունը ոսկե փառերով կարձանագրվի հայ երաժշտության ապագային, որովհետև մի ազգ, որ ստեղծել է հայ երգը, մի ժողովուրդ, որ երաժշտական անցյալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայի մի շարք մեծ անուններ: Այդ անունների մեջ առաջինը կլինի, անշուշտ, Կոմիտասի անունը: Խոնարհվենք Կոմիտասի, նրա կյանքի, նրա մեծ գործի առաջ»⁷¹:

Ռուսական արվեստի գործիչները Կոմիտասի մասին:

⁷¹ Տե՛ս Գնեսինի խոսքը Կոմիտասի մասին, *Երեկոյան Երևան*, 1969, 20 նոյեմբերի:

1. Брюсов В., Поэзия Армении, Москва, 1916, с.38. “Поэзия Армении”, Редакция, вступительный очерк и примечания В. Брюсова, “Айастан”, Ереван, 1940, 22 октября, N 297, с. 3.
2. Гартман Ф., Из цикла “Народная песня и ее собиратели”; Комитас, “Закавказское слово”, Тифлис, 1919, 28 февраля, N 33, с. 2-3; N 34, с. 2-3.
3. Гасслер И., Замечательный армянский музыкант, “Советское искусство”, Ереван, 1939, N71, с. 3.
4. Кабалеvский Д., Величие его гения, “Коммунист”, 1969, 21 ноября, с. 3.
5. Корганов В., Взгляд и нечто. Армянские народные танцы, сопровождаемые песнями Комитаса Кеворкяна, “Кавказский вестник”, Тифлис, 1902, N 6, с. 32-38.
6. Корганов В., Еще о кавказской музыке, “Тифлисский листок”, Тифлис, 1907, N 242, с. 3.
7. Корганов В., Комитас Кеворкян, “Кавказская музыка”, Тифлис, 1908, с. 47-50.
8. Корганов В., Он совершил более великое, “Коммунист”, Ереван, 1969, 31 января.
9. Кочевский В., “Эчмиадзин”, стихи, 1974.
10. Звягинцева В., “Моя Армения”, стихи, 1964.
11. Майборода Г., Интервью в газете “Коммунист”, 1969, 21 ноября.
12. Полякова Н., Комитас, “Литературная Армения”, Ереван, 1980, N 3.
13. Прянишков Д., Выдающийся армянский композитор, “Советская Молдовия”, Кишинев, 1969, 8 октября.
14. Свешников А., Славный сын своего народа, “Коммунист”, 1969, 21 ноября.
15. Свиридов Г., Настоящая радость, “Коммунист”, 1969, 21 ноября.
16. Тарковский А., Комитас

*Ничего душа не хочет
И, не открывая глаз,
В небо смотрит и бормочет,
Как безумный Комитас.*

*Медленно идут светила
По спирали в вышине,
Будто их заговорила
Сила, спящая во мне.*

*Вся в крови моя рубаха,
Потому что и меня
Обдувает ветром страха
Стародавняя резня.*

*И опять Айя-Софии
Камень ходит подо мной,
И земля ступни босые
Обжигает мне золой.*

*Лазарь вышел из гробницы,
А ему и дела нет,
Что летит в его глазницы
Белый яблоневый цвет.*
1959

17. Хренников Т., Великий певец, “Коммунист”, 1969, 21 ноября.
18. Шостакович Д., О Комитасе, “Коммунист”, 1969, 21 ноября.
19. Ярустовский Б., Негаснувший пример “Коммунист”, 1969, 21 ноября.

20. Սրտի խոսքեր (կարծիքներ Կոմիտասի մասին), «Երեկոյան Երևան», 1969, 21 նոյեմբերի:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտաս Վարդապետի՝ ռուսական մշակույթի հետ ունեցած առնչություններին: Ներկայացվում են հայ-ռուսական դարավոր պատմամշակութային կապերը, ռուսական երաժշտական արվեստի նշանակությունը XIX դարավերջի և XX դարասկզբի արևելահայ կոմպոզիտորների գործունեության համար: Առաջին անգամ ժամանակաշրջանի պատմաքաղաքական համատեքստում հնարավոր ամբողջությամբ քննվում են Կոմիտաս Վարդապետի գիտական կենսագրության՝ ռուսական մշակույթի հետ առնչվող փաստերը, նրա արվեստին տրված ռուս ականավոր երաժշտագետների մասնագիտական գնահատականներն ու կարծիքները:

Վարդապետն Էջմիածնում, Անդրկովկասում և Եվրոպայում ծավալել է ստեղծագործական և երաժշտագիտական գործունեություն, որին անդրադարձել են ռուսական մշակույթի հեղինակավոր ներկայացուցիչներ Թ. Հարտմանը, Ն. Չերեպինը, Մ. Գնեսինը, Դ. Մագգիդը, Վ. Կորգանովը, Դ. Շոստակովիչը: Անդրկովկասի ռուսալեզու մամուլը բարձր է գնահատել Կոմիտասի երաժշտալուսավորական առաքելությունը, հրապարակումներին արձագանքել է պետերբուրգյան մամուլը: Վարդապետի համերգ-դասախոսությունները Թիֆլիսում, Բաքվում ընթացել են աննախադեպ հաջողություններով: Այս փաստերի համակողմանի ու նորովի դիտարկմամբ ամբողջանում է Կոմիտաս Վարդապետի կատարած գործի դերն ու նշանակությունը ազգային մշակույթի համար:

Բանալի բառեր՝ Կոմիտաս Վարդապետ, երաժշտական մշակույթ, ռուսական երաժշտություն, երաժշտագետ, կոմպոզիտոր:

КОМИТАС ВАРДАПЕТ (АРХИМАНДРИТ) И РУССКАЯ КУЛЬТУРА

Резюме

*Лусине Саакян (Армения), кандидат искусствоведения, доцент
Ереванская государственная консерватория имени Комитаса*

Данная статья посвящена взаимоотношениям основоположника армянской национальной композиторской школы Комитаса с русской культурой. Прослеживаются вековые русско-армянские культурно-исторические связи, рассматриваются роль и значение русской музыкальной культуры в творческой деятельности восточно-армянских композиторов конца XIX и начала XX веков. Впервые в контексте историко-политических событий эпохи наиболее целостно изучаются факты, подтверждающие причастность творческой биографии Комитаса к русской культуре, излагаются профессиональные оценки и мнения крупнейших русских музыкантов о творчестве Комитаса.

Активная творческая и научная деятельность, которую Комитас развернул в Эчмиадзине, Закавказье и Европе, была достаточно широко освещена авторитетными деятелями русской культуры Ф. Гартманом, Н. Черепниным, М. Гнесиным, Д. Маггидом, В. Коргановым, позже и Д. Шостаковичем. Русскоязычная пресса Закавказья высоко оценила музыкально-просветительскую миссию Комитаса, его публикации находили отклик в петербургской прессе. Лекции-концерты Комитаса в Тифлисе, Баку проходили с беспрецедентным успехом. Благодаря

разностороннему изучению и новаторскому освещению этих фактов, роль Комитаса Вардапета и его значение в национальной культуре высвечивается наиболее полно и целостно.

Ключевые слова: Комитас, музыкальная культура, русская музыка, музыковед, композитор.

KOMITAS VARDAPET AND THE RUSSIAN CULTURE

Abstract

Lusine Sahakyan (Armenia)

PhD in Art, Assistant Professor

Komitas State Conservatory in Yerevan

This article presents the interactions of Komitas Vardapet with the Russian culture. The centuries-old Armenian-Russian historical and cultural relations are discussed in the article with a specific focus on the role Russian art music played in the creative activity of the Eastern Armenian composers of the late XIX and early XX centuries. This article seeks to inquire, within the context of the historical and political realities of the period, into the relations of Komitas's creative activity with the Russian culture, with a reference to the professional accounts and reminiscences of a number of outstanding Russian musicologists about his work.

Outstanding figures of the Russian culture, such as T. Hartmann, N. Cherepnin, M. Gnessin, D. Shostakovich, D. Maggid, V. Korganov, V. Minorski and A. Tarkovski have reflected upon Vardapet's professional activity in Etchmiatsin, the Transcaucasia region and Europe. The Russian language press of Transcaucasia highly appreciated the musicological and educational activities undertaken by Komitas. Those reflections were also covered by the printed press in St. Petersburg. Komitas's lectures accompanied by concerts organized in Tiflis (Tbilisi) and Baku had noticeable success. Comprehensive, as well as modern-day observations of these facts conclude my studies on the role Komitas Vardapet played in the formation of national cultural tradition.

Keywords: Komitas Vardapet, musical art, Russian music, musicologist, composer.

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ. ԿՈՄԻՏԱՍ ԵՎ ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՂՅԱՆ

*Մերի Կիրակոսյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ*

*«Կոմիտասի մահով հայ երաժշտությունը
կորցրեց իր մոլորակներից մեկին: Նա հայ ժողովրդինն է,
նրա երգի հանճարեղ զարգացնողը...»¹:
Փանոս Թերլեմեզյան*

Փանոս Թերլեմեզյանն իր ստեղծագործական բեղուն կյանքի ընթացքում կապեր է հաստատել հայ մշակույթի ականավոր գործիչներից շատերի հետ, որոնց թվում հատկապես առանձնանում է Կոմիտասի հետ նրա ջերմ մտերմությունը: 1910 թ., Օսմանյան Սահմանադրության հոշակումից հետո, Կոմիտասը Թերլեմեզյանին գրում է. «Ե՛կ, Ե՛կ, չգիտեմ վաղը ինչ կբերի, բայց այսօր աշխատելու լայն դաշտ կայ...»²:

Թերլեմեզյանը պատմում է, որ իրենք բարեկամացան և ավելի մտերմացան Կոմիտասի հետ, երբ նա փոխադրվեց Պոլսո Բանկալտի թաղամաս, և վերջինիս հետ բնակվեցին մի տան մեջ, որն ամբողջովին նրանց երկուսին էր պատկանում: Կոմիտասի աշխատասենյակը գտնվում էր տան վերին հարկում. այդտեղ էին տեղավորված նրա դաշնամուրը և ֆիսհարմոնը³:

Կոմիտասին և Թերլեմեզյանին կապում էր բազմամյա ընկերությունը: Նրանք միասին եղել էին կաթողիկոսների ամառանոց Բյուրականում և եզդիների ցեղապետանիստ Ասլանլու գյուղում⁴: Ցեղապետը Կոմիտասի ճեմարանական ընկերն էր: Հարմար առիթը բաց չթողնելով՝ բնության գրկում, աղբյուրի մոտ Թերլեմեզյանը նկարում է Կոմիտասին և ցեղապետին միասին: Արվեստագետի հավաստմամբ՝ այդ աշխատանքը վաճառվել է նկարչի Պոլսի ցուցահանդեսում: Ներկա փաստերը համադրելով թույլ ենք տալիս ենթադրել, որ խոսքը

¹ Կոմիտասի թաղումը, *Սովետական արվեստ*, Երևան, 1936, օգոստոսի 1, էջ 182:

² Տե՛ս **Գ. Մահարի**, Ճանապարհորդություն դեպի անցյալ. Փանոս Թերլեմեզյանի հետքերով, *Սովետական արվեստ*, Երևան, 1974, N 7, էջ 48:

³ **Փ. Թերլեմեզյան**, Կյանքիս հուշերը, *ՀԱՊ հուշածնագրային բաժին*, Ֆ-60, թպ. 3:

⁴ Տե՛ս **Փ. Թերլեմեզյան**, Կոմիտասի մասին, *Ժամանակակիցները Կոմիտասի մասին*, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 186-187: Հոդվածը վերահրատարակվել է, տե՛ս **Փ. Թերլեմեզյան**, Մի այցելություն հիվանդ Կոմիտասին, *Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում*, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո», 2009, էջ 260-261: Նաև՝ *Կոմիտաս (ժողովածու)*, Երևան, Հայպետհրատ, 1930, էջ 91-92:

վերաբերում է 1920 թ. Բերայում կայացած Փ. Թերլեմեզյանի և Լ. Քյուրքչյանի համատեղ ցուցահանդեսին⁵, քանի որ տվյալ ստեղծագործության տվյալները տեսնում ենք միայն այս պատկերահանդեսի կատալոգում: Աշխատանքը կրում էր «Կոմիտաս վարդապետը և իր դասընկեր եզդիների ցեղապետը» անվանումը:

Տարիներ անց սուլթանների մայրաքաղաքում Թերլեմեզյանը և Վարդապետը նորից ընկերացան՝ ապրելով մի տան մեջ, սնվելով միևնույն սեղանից: Այդ տունը շուտով զանազան ազգության անհատների համար մշակույթի օջախ դարձավ: Հույն գիտնականներ կային, ովքեր գալիս էին Կոմիտասի հետ խորհրդակցելու եկեղեցական երգերի ծագման շուրջ: Թուրքեր կային, ովքեր գալիս էին խոսելու, զրուցելու Պոլսում երաժշտանոց և օպերա ստեղծելու մասին: Նրանց հյուրընկալ հարկի տակ էին հավաքվում նաև հայ մշակույթի այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Երվանդ Օտյանը, Ռուբեն Սևակը, Ավետիք Իսահակյանը և շատ ուրիշներ:

Նույն ժամանակաշրջանում՝ 1912 թ., Թերլեմեզյանը և Կոմիտասը մասնակցում են մշակութային մի ձեռնարկի՝ Վարուժանի և Հակոբ Սիրունու նախաձեռնությամբ «Աստեղատան» հիմնադրմանը: Վերջինս 12 անձից բաղկացած մտավորականների խմբակ էր, որի լիիրավ անդամներն էին Կոմիտասը, Փանոս Թերլեմեզյանը, Վարուժանը, Սիամանթոն, Ջապել Եսայանը, Կոստան Ջարյանը, Լևոն (Սերովբե) Քյուրքչյանը, Հրանտ Նազարյանցը, Գեղամ Բարսեղյանը և Հակոբ Սիրունին⁶: Մեկ տարի անց՝ 1913 թ., հայ մտավորականները միավորվեցին մեկ այլ գործակցության շուրջ: Կ. Պոլսի Բերայի Էսայան վարժարանի սրահում առաջին անգամ կազմակերպվեց «Գրական դատ», որի քննարկման նյութն էր Լևոն Շանթի «Հին Աստվածներ» ստեղծագործությունը⁷: Ժյուրիի անդամների շարքերը, Փանոս Թերլեմեզյանից բացի, համալրում էին Կոմիտաս Վարդապետը, Գրիգոր Զոհրապը, Ռուբեն Ջարդարյանը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Սարգիս Մինայանը և Թեոդիկը: Հանձնաժողովի անդամների խորհրդակցությունից հետո ներկաներից ոչ ոք չի համարձակվում դատել նշված գրական աշխատանքը: Բոլոր ներկաները համակարծիք էին Գ. Զոհրապի այն մտքին, որ «*նժարով չի կարելի դատել գրական երկը*», ուստի մասնակիցները տեղի ունեցածը վերանվանեցին գրական

⁵ Փ. Թերլեմեզյան և Լ. Քյուրքչյան (նկարների կատալոգ), ՀԱՊ հուշածեռագրային բաժին, Ֆ-30, Ի-372, N 72: Թերլեմեզյան-Քիրքճեան. Նկարներու ցուցահանդեսին առթիւ (անթվակիր), ՀԱՊ հուշածեռագրային բաժին, Ֆ- 30, Ի-3259, N 98:

⁶ Տե՛ս Յ. Սիրունի, *Ինքնակենսագրական նոթեր*, Երևան, «Սարգիս Խաչեց»», 2006, էջ 194:

⁷ Տե՛ս Վաչէ [Հակոբ Սիրունի, Ճողովյան], Փարիզի մեր եղբայրակիցներէ ոմանք, *Նավասարդ*, Բովսարեստ, 1924, Ա հատոր, Ը պրակ, էջ 254:

վիճաբանություն: Արդյունքում հանձնախումբը մերժեց Շանթի «Հին Աստվածներ» ստեղծագործության վերաբերյալ դատական վճիռ կայացնելու որոշումը:

Թերլեմեզյանը մեծ հպարտությամբ է պատմում, որ Կոմիտասը կազմեց երեք հարյուր մարդուց բաղկացած երկսեռ երգեցիկ խումբ⁸: Կոմիտասն իր զվարթ բնավորությամբ աշակերտների մեջ սեր արթնացրեց դեպի հուզական երաժշտությունը և նրանց հոգիները համակեց ազնվացնող արվեստով: Նկարիչը հավաստում է, որ համարձակորեն կարելի է ասել, որ մինչ այդ երգված գոեիկ և անարվեստ երգերը գործածությունից դուրս եկան: Անշուշտ, դա վիթխարի հաջողություն էր հայ մշակույթի զարգացման տեսակետից:

Թերլեմեզյանը հպարտությամբ է հիշում, որ օսմանյան հանրային գործոց նախարարի տեղակալ, ազգությամբ ֆրանսիացի Պ. Հյումբերը, ով հաճախ էր այցի գալիս իրենց, «Քելեր, ցուլերը» երգելով էր աստիճանները բարձրանում⁹: Կոմիտասի սենյակում հաճախ կարելի էր հանդիպել նույնիսկ իտալացի հմուտ դաշնակահարների, ովքեր գալիս էին ունկնդրելու փորձերը:

Մեծ նկարիչն առանձնակի ջերմությամբ է պատմում Կոմիտաս-անհատի մասին: Կոմիտասը չափազանց ուրախ և աշխատասեր մարդ էր: Նրա բնավորությունը միալար չէր, նա խիստ դյուրագրգիռ էր, երբեմն էլ՝ բարկացող: Սակայն նրա բարկությունը նման էր քամիներից քշվող ամպի ծվենների, բայց այդ ծվենների արագորեն անցնելուց հետո նորից արև, նորից զվարթություն և նորից ծիծաղ էր տիրում:

Թերլեմեզյանն անհրաժեշտ է համարում հիշատակել իր և Կոմիտասի հետ կապված մի դեպք: Մի անգամ իրենց այցելության է գալիս կայսեր արարողապետը՝ Իսմայել Ջենանի բեյը, ով նկարչի աշխատանքները դիտելուց հետո ցանկություն է հայտնում ծանոթանալ Կոմիտասի հետ¹⁰: Ներս մտնելուն պես նրանք ծանոթանում են, և արարողապետի խնդրանքով Կոմիտասը մոտենում է դաշնամուրին և, ինքն իրեն նվագակցելով, երգում Ֆրանց Շուբերտի ստեղծագործություններից՝ գերմաներեն լեզվով, այնքան խորունկ զգացումով, որ սենյակում գտնվողները քարանում են: Նույնիսկ երգը վերջացնելուց հետո բավական ժամանակ սենյակում լռություն է տիրում: Թուրք դիվանագետը,

⁸ Խոսքը «Գուսան» երգչախմբի մասին է, որի անդրանիկ համերգը տեղի ունեցավ 1910 թ. նոյեմբերի 21-ին Կ. Պոլսի Պոլի Շանի ձմեռային թատրոնում (տե՛ս Ռ. Մազմանյան, *Հայ երաժշտական կյանքի պարեգրություն. 1901-1910*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, էջ 187: *Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչեն*, Մոնթրեալ, 1994, էջ 25):

⁹ Տե՛ս Ե. Մարտիկյան, *Փնտու Թերլեմեզյան*, Երևան, Հայպետհրատ, 1964, էջ 39:

¹⁰ Այս պատմության համառոտ շարադրանքը տե՛ս Ե. Մարտիկյան, նշվ. աշխ., էջ 40:

չկարողանալով զսպել իրեն, ձեռքը սեղանին է խփում և ասում. «Ութ հարյուր տարվա պեպոթյուն ենք և այսպիսի մի արվեստագետ չունեցանք»:

Կոմիտասի աննման համերգները և բովանդակալից դասախոսությունները ոչ միայն ուրախացնում, այլև ոգևորում էին Պոլսի առաջադեմ հասարակությանը: Այդ օտար գաղթավայրում եղած մտավորականության ազնիվ, հայրենասեր մասը սկսեց փառավորվել և պարծենալ, որ ինքը հայ է: Սկսեց գիտակցել, որ մեր դարավոր մշակույթից մի սաղմնային ժառանգություն ունի իր մեջ, որ իր ստեղծագործական միտքն ու զգայունությունն են կերտել նման նուրբ և հուզիչ երաժշտություն: Ինչքան գիտակցությունը խորանում էր, այնքան ավելանում էր զարմանքն այն փաստի հանդեպ, որ այդ սքանչելի երաժշտությունը ստեղծել են հասարակ գեղջուկները: Իսկ Կոմիտասն իր գիտակցության և խոր զգայունության շնորհիվ այդ տաղերը նրբորեն ներդաշնակում և մատչելի էր դարձնում հասարակությանը:

1912 թ. ամռանը Թերլեմեզյանը և Կոմիտասը ուղևորվում են կոմպոզիտորի ծննդավայր՝ Քյոթահիա: Թերլեմեզյանը հիշում է, որ Կոմիտասի հետ իրենք էլ վրան են խփում բլրի եզրին գտնվող անտառում և մեկուկես ամիս ապրում այնտեղ: Հրաշագեղ բնության գրկում նկարիչը ստեղծում է իր լավագույն աշխատանքներից մեկը՝ «Կոմիտաս Վարդապետ» (1913) կտավը: Այս ստեղծագործությունը Նյու Յորքի Հայ կրթական հիմնարկության նվիրաբերության շնորհիվ Հայաստանի պետական պատկերասրահում (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) գտնվող՝ նկարչի ստեղծագործական հարուստ ժառանգության շարքերն է համալրել միայն 1925-ին¹¹:

Աշխատանքը մեզ առինքնում է իր կատարողական վարպետությամբ: Ինչպես իր մյուս բոլոր գործերում, այստեղ ևս Թերլեմեզյանը հավատարիմ է մնացել ռեալիստական գեղանկարչության ավանդներին: Կոմիտասի կերպարն աչքի է ընկնում իր պարզությամբ, ինչն աշխատանքին լրացուցիչ գրավչություն է հաղորդում: Ստեղծագործությունը զուտ դիմանկարչական չէ, Թերլեմեզյանն այստեղ ներմուծել է և՛ կենցաղային, և՛ ազգային էլեմենտներ, և՛ առարկաներ՝ ետին պլանում գտնվող վրանը, նրբագեղ սափորը, քամանչան և գունային առումով կերպարին յուրահատուկ ակտիվություն հաղորդող հայկական ազգային գորգը: Վերջիններս կարծես լրացնում և արտահայտիչ են դարձնում մեծ երաժշտագետի հեզ՝ հանդարտությամբ ու հանգստությամբ լի կերպարը: Ինչպես նշում է Արարատ Աղասյանը, «սա թեմայիկ դիմանկար է, որի մեջ մեծ տեղ է

¹¹ Հայ կրթական հիմնարկություն, Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ-122, ցուցակ-2ա, գործ-4, Վաչէ [Հակոբ Սիրունի, Ճոլոյան], Նուերներ Հայաստանի թանգարանին, Մավասարը, Բովարեստ, 1925, Բ հատոր, Ա պրակ, էջ 96:

հարկացված հանճարեղ երգահանի ու բանահավաքի սևազգեստ ֆիգուրն ընդգծող գունազեղ շրջապատին»¹²:

Աշխատանքի գլխավոր արտահայտչամիջոցներից է ստեղծագործության անբաժանելի և կարևոր մասը կազմող լուսաստվերը: Նկարում բավական ցայտուն և արտահայտիչ է լուսաստվերային խաղը՝ իր անցումներով և հակադրություններով: Վերջինս ավելի է կարևորվում, քան գունային նկարագիրը և համադրումները: Փ. Թերլեմեզյանի գեղանկարչական վարպետությունը զգացվում է նաև արևի լույսի և ստվերի հիանալի պատկերման մեջ: Ստեղծագործության յուրահատկություններից է նաև աշխատանքում տիրող առանձնահատուկ անդորրը: Կարծես ինչ-որ հոգի շոյող, յուրօրինակ հանգստություն կա թե՛ կոմպոզիտորի կերպարի և թե՛ գեղատեսիլ բնության մեջ: Հանգստություն և լռություն է տիրում...

Թերլեմեզյանի վրձնին պատկանող՝ Կոմիտասի այս հանրաձանոթ աշխատանքի անվանման հետ կապված ներկայացնենք մի դիտարկում: Ուսումնասիրելով նկարչի ցուցահանդեսների կատալոգները, ալբոմները և հուշերը՝ նկատում ենք, որ արվեստագետի կենդանության օրոք ստեղծված կատալոգներում, նկարացանկերում ստեղծագործությունը կրում է «Կոմիտաս Վարդապետի դիմանկարը» անվանումը, իսկ հետմահու այլ ալբոմներում, աղբյուրներում, բացառությամբ նկարչի ծննդյան 100-ամյա հոբելյանի կատալոգի, շրջանառվում են «Կոմիտասի դիմանկարը» և «Կոմիտաս» անունները: Մեր օրերում դիմանկարը կրում է «Երաժշտագետ Կոմիտասը» անվանումը:

Վերադառնալով Կոմիտասի կերպարին՝ նշենք, որ այս շրջանում Թերլեմեզյանը ստեղծել է Վարդապետին նվիրված այլ աշխատանքներ ևս, որոնց թվում են ինչպես գծանկարչական գործեր («Կոմիտասը գրելիս» (1910-1912), «Կոմիտասը քնած» (1910-1912)), այնպես էլ յուղաներկ կտավներ: Կոմիտասի՝ վերը նշված հայտնի դիմապատկերից ավելի վաղ՝ 1911 թ., Թերլեմեզյանը Պոլսում վրձնել է «Կոմիտասը գետափին» անչափ գրավիչ աշխատանքը: Կոմիտասը կրկին նստած է գետինին՝ ծառին հենված դիրքով, սակայն այստեղ բացակայում է նախորդ աշխատանքում նկատվող կերպարի մանրագնին, ռեալիստական բնութագրման ճշգրտությունը: Վրձնումների անմշակ բնույթն էտյուդային յուրօրինակ թարմություն է հաղորդում աշխատանքին: Հագեցած կանաչ և մուգ երանգները ներդաշնակվում են գետի

¹² Ա. Աղայան, *Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում*, Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, էջ 41:

ջրերի դիթմի հետ, վերջինիս մեջ առկա արտացոլումների և թափանցիկության պատկերները կատարված են ճշգրիտ և ազատ:

Եթե 1913 թ. ստեղծված «Կոմիտաս Վարդապետը» կրում է և՛ դիմանկարչական, և՛ սյուժետային գեղանկարչության առանձնահատկությունները, դրանով իսկ համադրելով երկու ժանրերը, ապա 1911 թ. կերտված Կոմիտասի նկարը զուտ թեմատիկ բնույթ ունի: Կարծում ենք՝ չենք սխալվի, եթե այնդենք, որ 1913 թ. երփնագրած Կոմիտասի դիմանկարը նկարչի արվեստի, մեր բնորոշմամբ՝ վաղ շրջանի, այս ժանրի լավագույն գործերից է, եթե չասենք իր ժամանակաշրջանի կոմիտասյան կերպանկարի լավագույն օրինակ:

1914 թ. Փարիզում տեղի է ունենում երաժշտական կոնգրեսը: Կոմիտասի՝ կոնգրեսում կարդացած երկու դասախոսությունները և տված մի համերգը մեծ հետաքրքրություն էին առաջացրել: Այդ օրերին հայ սքանչելի երաժշտությունն ունկնդրելու էին գալիս գրեթե բոլոր դեսպանները, հավաքված երաժշտության կորիֆեյները հոտնկայս էին ողջունում Կոմիտասին և պահանջում, որ նրա բոլոր գործերը հրատարակվեն: Այդ ժամանակ Թերլեմեզյանը գտնվում էր Պոլսում, երբ Կոմիտասից ստանում է 18 էջից բաղկացած նամակ, որում նկարագրվում էր դասախոսության նյութը և թողած տպավորությունը: Ցավոք՝ այդ նամակը մնացել է Պոլսում գտնվող Թերլեմեզյանի տանը¹³:

Կոմիտասյան անգուգական համերգներից տպավորված՝ պոլսահայ անվանի գեղանկարիչ Լևոն (Սերովբե) Քյուրքչյանը Փարիզի ժան Գուժնի Սուրբ Հովհաննես եկեղեցու համար պատկերում է Կոմիտասին սրբի կերպարով՝ ոսկեղեղին լուսապսակով: Սակայն նկարչին չի հաջողվում ավարտել աշխատանքը: Կոմիտասին շատ է զայրացնում տիպարի՝ իր համար անընդունելի տարբերակը, ուստի Լ. Քյուրքչյանին ստիպում է ոչնչացնել այն: Թերլեմեզյանը լսել էր այդ պատմությունը, և «Սուրբ Կոմիտաս» հղացումը իր տրամաբանական շարունակությունն է ունենում այս անգամ Թերլեմեզյանի մոտ: Գիշերները, երբ Կոմիտասը քնած էր լինում, անշուշտ մտնում էր սենյակ և նկարում: Սակայն աշխատանքին ևս վիճակված չէր «ապրել»: Կոմիտասի զայրույթը մեղմելով՝ նկարիչը մի քանի վրձնահարվածով փակում է լուսապսակը¹⁴:

Սրանով եզրափակվում է Թերլեմեզյանի հուշագրության «Կոմիտասի հետ» գլուխը: Սակայն Թերլեմեզյանի և Կոմիտասի բարեկամությունն այսքանով չի

¹³ Փ. Թերլեմեզյան, Կոմիտասի մասին, Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, էջ 251-260:

¹⁴ Տե՛ս Գ. Մահարի, Այրոտղ այգեստաններ, Երևան, «Ապոլոն», 2004, էջ 738:

ավարտվել:

1921 թ. Կոմիտասին տեղափոխել են Վիլ-ժյուլիֆի հիվանդանոց: Մարտին Թերլեմեզյանն այցելում է հիվանդ Կոմիտասին.

«...Խօսեցի իր աշակերտներու մասին, ուրախացաւ, որ եկել են Փարիզ սովորելու:

- Հարցրի՜ հա՞յ երաժշտութիւնն է լաւ թէ երոպականը:

- Եղբայր (բարկացած), դու ուզում ես ծիրանից դեղձի հա՞մ առնել, նա իր քեղն ունի, միւսը՝ իր:

- Հարցրի. կերգե՞ս:

-Այո, ասաց:

-Դէ՛, Կոմիտաս ջան, մի բան երգիր ինձ համար:

-Չէ, հիմա ես ինձ համար եմ երգում եւ այն էլ շափ կամաց:

Մի կէս ժամ էլ դէսից-դենից խօսելուց յետոյ յանկարծ խռովեց, դուռը բաց արաւ եւ գնաց երեսը կպցրեց պատուհանի ապակուն ու էլ չխօսեց»¹⁵:

Փանոս Թերլեմեզյանի և Կոմիտասի վերջին հանդիպումը տեղի է ունեցել 1928 թ.՝ նկարչի՝ Ամերիկայից Հայաստան վերադառնալու ժամանակ: Արվեստագետը պատմում է, որ սիրելի ընկերոջ առողջությամբ մտահոգ, չափազանց հուզված շտապել է հիվանդանոց. «Երբ հիվանդանոց մտա նրան գրաւ այգում պառկած, հանգստանալիս, մտքերի մեջ խորասուզված, անտարբեր դեպի շրջապարտ: Մագերը լիովին սպիտակել էին, գունաւոր էր, վրդի, ձեռքերը ոսկրացած էին, թվում էր խիստ անօգնական, չկարողանալով հաղթահարել իր ներսում բուն դրած ահավոր հիվանդությունը: Գերագոյն ճիգ գործ դրի, զսպելու հուզմունքս, որը պատրաստ էր փոխվելու հեկեկանքի: Մտքեցա, գրկեցի, համբուրեցի, նստեցի կողքին և մտք կես ժամվա չափ զանազան հարցեր տվի, սակայն ոչ մի հարցիս չպատասխանեց:

Վաղեմի մտերիմիցս բաժանվեցի հուսաբեկ սրտով՝ զգալով, որ մի հանճարեղ միտք հանդարտ ու անդառնալի կերպով մարում է»¹⁶:

Կոմիտասի և Թերլեմեզյանի բարեկամության մասին շատ է խոսվել, ժամանակին գրված հոդվածներում հեղինակները անդրադարձել են հայ մշակույթի ականավոր գործիչների ընկերությանը: Գեղանկարչի և երաժշտի ջերմ փոխհարաբերությունները, բազմամյա ընկերությունը ոգեշնչման աղբյուր հանդիսացան արձակագիր, գրականագետ Գուրգեն Մահարու համար:

¹⁵ Գրական նշխարք Կոմիտաս վարդապետի բեղուն գրչէն, աշխատասիրությամբ Ա. Օղլուգեանի, Մոնթրէալ, 1994, էջ 33: Տե՛ս Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, «Միտք», 1967, էջ 212:

¹⁶ Ե. Մարտիկյան, Վաղեմի մտերիմներ, Հայրենիքի ծայն, Երևան, 1969, 12 նոյեմբերի:

Արդյունքում ծնվեց «Երգ մահու և անմահության» վերտառությամբ գրական ստեղծագործությունը: Գրողն անդրադարձել է, մասնավորապես, Կոմիտասի՝ Փարիզի Վիլ-ժյուիֆի հոգեբուժարանում գտնվելու և վերջինիս նկարչի այցելությանը: Սա գրական փոքր, մեկ գործողությամբ՝ թեպետ դրամատիկ, սակայն կամերային ստեղծագործություն է¹⁷:

Ճիշտ է՝ «Երգ մահու և անմահության»-ը գեղարվեստական, գրական ստեղծագործություն է, սակայն նրա հիմքում ընկած են վավերագրական, փաստացի տեղեկություններ, որով այն արժեքավոր է դառնում:

Ուսումնասիրելով Թերլեմեզյանի արվեստի խնդրո առարկա շրջանը՝ հանդիպեցինք մի ուշագրավ փաստի. արձակագիր Վահրամ Ալազանն իր հուշագրության «Փանոս Թերլեմեզյան» հատվածում գրում է, որ Թերլեմեզյանի բազմաթիվ նկարների մեջ կար մի ուշագրավ էտյուդ, որում պատկերված էին ինքը՝ նկարիչը, Կոմիտասը, Սիամանթոն և Մաննիկ Պերպերյանը՝ նավի վրա, Բոսֆորում զբոսնելիս¹⁸: Ալազանը նշում է, որ Եղիշե Չարենցը հրապուրված էր այդ նկարով և ցանկանում էր ձեռք բերել այն: Թերլեմեզյանը չէր ուզում բաժանվել այդ էտյուդից, սակայն Չարենցի թախանձագին խնդրանքից և համառությունից դրդված՝ արվեստագետը նկարը նվիրեց բանաստեղծին: Ալազանի հավաստմամբ՝ Չարենցն այն փակցրել էր իր գրասենյակի պատին: Երբ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում ուսումնասիրում էինք Ալազանի հուշերը, փորձեցինք մեզ հետաքրքրող գործի որոնման հետքերով գնալ, ցուցահանդեսի կատալոգներում տվյալ աշխատանքի բացակայության հիմնավորմամբ, հենվեցինք Ալազանի գրած տեղեկության վրա: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Թերլեմեզյանի ֆոնդում տվյալ գործը չկար: Որոնումները մեզ տարան Ե. Չարենցի տուն-թանգարան, որտեղ մեր փնտրտուքները բաղձալի արդյունքի չհանգեցին. ստեղծագործությունն այստեղ էլ չկար: Բայց թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանի հետ մեր ունեցած զրույցից պարզեցինք, որ Թերլեմեզյանի այդ էտյուդն իսկապես եղել է Չարենցի մոտ, սակայն 1937 թ. բանաստեղծի բռնադատման արդյունքում բռնագրավվել է Չարենցի գույքը, որի մեջ էր նաև մեզ

¹⁷ Տե՛ս **Գ. Մահարի**, *Երկերի ժողովածու*, հատ. 5, Երևան, «Խորհրդային գրող», 1989, էջ 427-428:

¹⁸ Տե՛ս **Վ. Ալազան**, Փանոս Թերլեմեզյան (Իմ հիշողություններից), *Սովետական արվեստ*, Երևան, 1956, N 3, էջ 44: **Վ. Ալազան**, Ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և պրոֆեսոր Հրայրյան Անտոյանը, *ԳԱԹ*, *Վ. Ալազանի ֆոնդ*, N 72:

հետաքրքրող կտավը: Լիահույս ենք, որ գուցե մի օր այս աշխատանքի գտնվելու վայրի վերաբերյալ նոր տեղեկություններ կհայտնաբերենք:

Թերլեմեզյան և Կոմիտաս առնչությունների հարթակում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Թերլեմեզյանի կերտած մի կանացի դիմանկարի ստեղծման պատմություն ևս: Խոսքը «Հայուհի» կոչվող նկարի մասին է: Մեր ուսումնասիրությունների ընթացքում գտանք երաժշտագետ Ռոբերտ Աթայանի «Նամակները պատմում են...» հոդվածը, որից տեղեկացանք, որ նշված աշխատանքում պատկերված է պոլսաբնակ օրիորդ, Կոմիտասի և Թերլեմեզյանի աշակերտուհի Արմինե Մելիքյանը¹⁹: Աթայանի հոդվածում հրապարակված նյութերը տրամադրել էր Ա. Կալենդերը, ով ծագումով վանեցի Ստեփան Մելիքյանի դուստրն էր, Թերլեմեզյանի և Կոմիտասի աշակերտուհին: Սույն հոդվածում ներկայացված են միևնույն կնոջը պատկերող նկարչի երկու դիմանկարները: Առաջինը, որը անձանոթ է մասնագետներին և բացակայում է նկարչի աշխատանքների կատալոգներում, թվագրված է 1912-ով և կրում է «Արմինե Մելիքյանի դիմանկարը» անվանումը: Նկարիչն իր այդ գործը նվիրել է Ա. Մելիքյանին: Երկրորդ դիմապատկերը Թերլեմեզյանն անվանել է «Հայուհի», որը կրկին Մելիքյանին է պատկերում և առաջինից մի փոքր ուշ է կատարված: Արվեստաբան Ե. Մարտիկյանն այս կտավը սխալմամբ վերագրում է նկարչի խորհրդային շրջանին՝ 1930-ին, մինչդեռ այն ստեղծվել է 1913 թ., Պոլսում: Այս առնչությամբ Ա. Կալենդերը գրում է. «Նկարիչ Թերլեմեզյանը, որ Կոմիտասի հետ կրնակեր և որու ևս աշակերտած եմ, շատ կսիրեր զիս... նույնիսկ նկարած է զիս «Հայուհին» անունով: Ըստ իրեն՝ ուղիղ հայուհիի տիպը ունեի...»²⁰:

Նամակից նաև տեղեկանում ենք նկարի ճակատագրի մասին, ըստ որի, ոմն Բաբաջանյան, շատ հավանելով աշխատանքը, գնել է այն և նվիրել Երևանի թանգարանին: Նշենք, որ Թերլեմեզյանը ժամանակին Արմինե Մելիքյանին նվիրել է իր գործի միայն լուսանկարչական պատճենը:

Արդեն մեր օրերում Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուում գտանք նկարչի կողմից «Հայուհի» անվանված աշխատանքը, որն այսօր ստացել է «Երիտասարդ կնոջ դիմանկար» անունը: Ստեղծագործությունն անթվակիր է, սակայն կրում է Թերլեմեզյանի ստորագրությունը: 2015 թ. Հայաստանի ազգային պատկերասրահում կազմակերպված՝ նկարչի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված անհատական ցուցահանդեսում իր արժանի տեղը գտավ և ցուցադրվեց

¹⁹ Տե՛ս Ռ. Աթայան, Նամակները պատմում են, *Սովետական արվեստ*, Երևան, 1967, N 2, էջ 41:

²⁰ Նույն տեղում:

Թերլեմեզյանի այս դիմանկարը, որը մեր ուսումնասիրության և դիմանկարի ստեղծման պատմության բացահայտման շնորհիվ վերանվանվեց «Հայուհի»:

Փանոս Թերլեմեզյանի կյանքում կարևոր տեղ են զբաղեցրել իր գեղագիտական հայացքների համախոհ, հոգևոր ընկերոջ, հանճարեղ երաժշտագետի հետ մտերմությունը և ապրած տարիները: Հայ մշակույթի երախտավորներ՝ Կոմիտասի և Փանոս Թերլեմեզյանի բարեկամությունից անցել են տարիներ: Մեզ համար, թերևս պատահական չէ, որ Վարդապետի թանգարան-ինստիտուտը հիմնվեց Փանոս Թերլեմեզյանի անունը կրող գեղարվեստի ուսումնարանի հարևանությամբ՝ նախախնամությամբ վերստին միավորելով, կապելով հայ արվեստի երկու նվիրյալներին:

Ամփոփում

Փանոս Թերլեմեզյանը XIX-XX դարերի հայ կերպարվեստի պատմության էջերում իր ուրույն տեղն է զբաղեցնում որպես ռեալիստական գեղանկարչության անվանի նկարիչ, մշակութային-հասարակական գործիչ և հայ ազատագրական պայքարի նվիրյալ: Արվեստագետն իր ստեղծագործական արգասալից կյանքի ընթացքում կապեր է հաստատել հայ մշակույթի ականավոր գործիչներից շատերի հետ, որոնց թվում հատկապես առանձնանում է Կոմիտասի հետ նրա ջերմ մտերմությունը: Տաղանդավոր երաժշտագետին և նշանավոր նկարչին կապում էր բազմամյա ընկերությունը: Նրանք բարեկամացան և ավելի մտերմացան, երբ Թերլեմեզյանը փոխադրվեց Պոլսո Բանկալտի թաղամաս, և Կոմիտասի հետ բնակվեցին մի տան մեջ: Սույն հոդվածի համար հիմք են ծառայել նկարչի հուշերը, արխիվային, անտիպ նյութերը և ժամանակակիցների վկայությունները: Ներկայացվում է Թերլեմեզյանի վրձինն պատկանող, նկարչի ստեղծագործական վաղ շրջանին առնչվող լավագույն դիմանկարի՝ «Կոմիտաս Վարդապետի» (1913) ստեղծման պատմությունը՝ մատնանշելով ստեղծագործության անվանման հետ կապված ճշգրտումներ: Անդրադարձ է արվում Թերլեմեզյանի կոմիտասյան պատկերների թե՛ գծանկարչական և թե՛ երփնագիր գործերին: Շոշափվում են 1912-1913 թթ. Կոմիտասի և Թերլեմեզյանի մշակութային գործակցության հետ կապված տվյալները, նաև հայ գրականության մեջ առկա անդրադարձները նկարչի և երաժշտի մտերմությանը: Գիտական շրջանառության մեջ են դրվում Թերլեմեզյանի անհայտ աշխատանքներից «Կոմիտաս վարդապետը և իր դասընկեր եզդիների ցեղապետը» (1910), ինչպես նաև կորսված «Թերլեմեզյան, Կոմիտաս, Սիամանթո և Մաննիկ Պերպերյան» խմբակային էտյուդը: Արձարծվում են Կոմիտասի և Թերլեմեզյանի աշակերտուհի Արմինե Մելիքյանի դիմանկարի ստեղծման պատմությունը և վերջինիս հետագա ճակատագրին վերաբերող մեր ուսումնասիրության արդյունքները:

Բանալի բառեր՝ Փանոս Թերլեմեզյան, Կոմիտաս, ռեալիստական գեղանկարչություն, հայ գրականություն, «Արմենուհի Մելիքյանի դիմանկարը», Կոստանդնուպոլիս:

ВЫДАЮЩИЕСЯ ДЕЯТЕЛИ АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ: КОМИТАС И ПАНОС ТЕРЛЕМЕЗЯН

Резюме

*Мери Киракосян (Армения), кандидат искусствоведения
Институт искусств НАН РА*

Фанос Терлеmezян занимает особое место в истории армянского изобразительного искусства XIX-XX вв. как знаменитый художник реалистической живописи, культурно-общественный деятель и участник освободительного движения. Художник в своей богатой творческой жизни дружил со многими выдающимися деятелями армянской культуры, в том числе с Комитасом. Талантливого музыковеда и известного художника связывала многолетняя дружба. Они сблизились, когда Терлеmezян переселился в Константинополь и они стали проживать в одном доме с Комитасом.

Статья основана на мемуарах художника, неизданном архивном материале и свидетельствах современников. Представлена история создания лучшего портрета раннего творческого периода Терлеmezяна “Комитас Вардапет” (1913). Обсуждаются графические и живописные работы Терлеmezяна посвященные образу Комитаса. Рассматривается культурная деятельность Комитаса и Терлеmezяна в 1912-1913 гг., представлены свидетельства дружбы художника и музыковеда, упомянутые в армянской литературе. В научный оборот введена неизвестная работа Терлеmezяна “Комитас Вардапет и его друг — предводитель езидов” (1910), а также потерянный групповой этюд Терлеmezян, “Комитас, Сиаманто и Маник Перперян”. Обсуждается история создания и дальнейшая судьба портрета Арменуи Меликян, которая была ученицей Терлеmezяна и Комитаса.

Father Komitas's mental disorders are evidenced by many doctors (the complete list of doctors is now available), who had taken care of him or who had examined him punctually and by his relatives. None of his relatives seem to have questioned the grounds for his detention. Father Komitas himself does not appear to have asked for his release. The treatments, rather limited at that time, had little effect on his disorders and the prolonged detention probably made them even worse. However, Father Komitas wasn't treated like the other mental patients, due to the continued presence of the Armenian community at his side, and the frequent visits of his friends and admirers, which maintained the connection with the outer world.

The intervention by the *Father Komitas's Friends Committee* and the administration influenced and galvanized his medical care and improved his daily life. This *Committee* paid the price of his stay, particularly high in Ville-Evrard, and prevented the transfer of Father Komitas to a provincial asylum. However, they did not manage to transfer him to a more appropriate facility in Switzerland, Austria, in Constantinople or "in his country". In Ville-Evrard, as well as in Villejuif, Father Komitas received various benefits such as a single room overlooking a garden and the permission to wear his cassock. In 1932 he was admitted to a new house, where he received special care necessitated by somatic disorders that the treatments of that time could not cure.

Key words: Komitas, psychiatry, internment, disease, Komitas's Friends Committee, death.

Գլուխ Բ. «Կոմիտասը և երաժշտական ֆոլկլորը»

Chapter II: Komitas and Folk Music

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ալինա Փահլևանյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր
ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Խոսելով հայ երաժշտական մշակույթի մասին՝ մենք միշտ տալիս ենք Կոմիտասի անունը, իբրև ամեն բանի նախասկիզբ: Եվ դա իսկապես այդպես է. *Կոմիտասը հայ դասական մասնագիտացված երաժշտության հիմնադիրն է*: Նա իր մտքի հանճարեղ փայլատակումով գտավ մոնոդիկ մտածողությունից բազմաձայնությանն անցնելու հայ երաժշտության ճիշտ ճանապարհը. դա պոլիֆոնիկ բազմաձայնությունն էր՝ իր հարստագույն միջոցներով, որոնք ոչ միայն չէին խաթարում հայեցի երգամտածողության հիմքերը և օրենքները, այլ, ընդհակառակը, օգնում էին ընդգծել մեղեդային դարձվածքների ազգային երանգը և գեղեցկությունը:

Բայց խնդիրը միայն բազմաձայնության ուղիները գտնելը չէր, հարկավոր էր հայ մարդու ականջը դրան ընտելացնել: Եվ Կոմիտասը հետևողականորեն կատարեց նաև այդ աշխատանքն իբրև խմբավար, երգչախմբի կազմակերպիչ, ուսուցանող, իր բազմաձայն մշակումներն ունկնդիրների լայն շրջաններում հնչեցնող և երաժշտական ազնիվ ճաշակ դաստիարակող մասնագետ: Հասկանալի է, որ առանց ունկնդիրների պատրաստված լսարանի առկայության հնարավոր չէր լինի ազգային երաժշտական մշակույթի զարգացումը:

Կոմիտասը քաջ գիտակցում էր, որ «մի ծիծեռնակով գարուն չի գա», անհրաժեշտ էր աշակերտներ, հետևորդներ դաստիարակել: Հայտնի է, որ նա երազել է երաժշտանոց ունենալ՝ կրթված մասնագետներ պատրաստելու համար: Սակայն նույնիսկ այն ժամանակների իրականության պայմաններում Կոմիտասը թե՛ Էջմիածնում և թե՛ Պոլսում եղած ժամանակ իր շուրջն է համախմբել օժտված, ազգասեր երիտասարդների և զինել նրանց անհրաժեշտ գիտելիքներով, ոգևորել, ուղղություն տվել նրանց գործունեությանը: Բավական է հիշել կոմպոզիտոր, մանկավարժ, խմբավար, բանահավաք, երաժշտագետ, երաժշտական-հասարակական խոշոր գործիչ Սպիրիդոն Մելիքյանի անունը,

հիշել նաև Պոլսի հինգ աշակերտներին, որոնցից Միհրան Թումանյանը իր մեծն ուսուցչի հորդորով ամբողջովին նվիրվեց հավաքչական աշխատանքին՝ աշխարհի տարբեր վայրերում տարեց հայ գաղթականներից գրառելով և գիտությանը հանձնելով երկու հազարից ավելի ֆոլկլորային նմուշ: Դրանց մի զգալի մասն արդեն հրատարակված է «Հայրենի երգ ու բան» խորագիրը կրող քառահատոր հավաքածուի տեսքով:

Եվ, վերջապես, Կոմիտասը գիտնական էր, *հայ երաժշտական ֆոլկլորագիտության հիմնադիրը*: Չկա ֆոլկլորագիտության որևէ հիմնախնդիր, որին իր ժամանակ այս կամ այն կերպ անդրադարձած չլինի Կոմիտասը՝ սկսած ֆոլկլորագիտության հիմքերի հիմքը կազմող հավաքչական աշխատանքից, որով նա զբաղվել է իր գիտակցական ողջ կյանքի ընթացքում՝ գրի առնելով երեքից չորս հազար նմուշ (ժամանակակիցների հավաստմամբ): Ստույգ թիվը հիմա անհնար է պարզել, այժմ արդեն գիտական շրջանառության մեջ է 1800 նմուշ: Պրոֆ. Ռ. Աթայանը գրում է. «Հայ ժողովրդական երաժշտությունը հավաքել-գրի առնելու ուղղությամբ Կոմիտասից փոքր-ինչ վաղ արդեն սկսել էին աշխատել Սահակ Ամպրունին, Քրիստափոր Կարա-Մուրզան, Նիկողայոս Տիգրանյանը, Մակար Եկմայանը... Ակնառու գործիչներ էին նրանք և ազգային երաժշտական արվեստի զարգացման համար, նաև ժողովրդական երգերի հավաքումը ձեռնարկելով, արժեքավոր շարք բան արեցին: Չնայած դրան, հայ երաժշտական ազգագրության բնագավառը երբ էր մնում բանահյուսականից: Դա արտահայտվում էր հավաքվող նյութերի ոչ միայն քանակական չափանիշների համեստությամբ, այլ նաև ինչ-որ չափով մակերեսայնությամբ և ժանրային ու ոճական առումով որոշ սահմանափակությամբ: Ուստի երիտասարդ Կոմիտասի օրոք ժողովրդական եղանակների հավաքումն ու գրառումը, բանահյուսական ստեղծագործությունների մակարդակով դրանց ամբողջական, ամփոփ հայրնաբերումը «օրակարգի» առաջնահերթ խնդիր էր»¹:

Կոմիտասն, անշուշտ, հաշվի առավ իր ավագ ժամանակակիցների կուտակած փորձը և շարունակեց իր հավաքչական գործն ամենայն լրջությամբ, գիտակցելով, որ փնտրելով և գտնելով ազգային բնորոշության կնիք ունեցող ժողովրդական երգեր, կկարողանա բացահայտել ազգային ավանդական երգամտածողության առանձնահատկությունները, ժողովրդի ստեղծագործական ձիրքի և կարողությունների ուժը, նրա երաժշտական լեզվի ինքնատիպությունը:

¹ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 9, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 9:

Զարմանալի է, որ այս հասուն գիտակցությանը Կոմիտասը եկավ տակավին պատանեկան հասակից՝ 16-18 տարեկանից, և հետևողականորեն մինչև գիտակցական կյանքի վերջը հետամուտ եղավ իր առջև դրված խնդրին: Նա փաստորեն առաջինն էր, որ հավաքչական գործը դրեց գիտական հիմքերի վրա: Ընդ որում, իր հավաքչական աշխատանքը գիտակցաբար ծավալեց հայկական գյուղերում: Ռ. Աթայանը գրում է. «Որպես ազգային ժողովրդա-երաժշտական ոճի իսկական կրող՝ Կոմիտասը տեսնում էր միայն գյուղացիությունը՝ այն ժամանակ հայ ժողովրդի քանակապես առավել մեծ հատվածը, որը նաև իր համեմատաբար փակ կյանքի բերումով չէր ենթարկվել փարազգային ճնշումների:... Կոմիտասի անելիքն էր դառնում անսխալ ընտրել գեղջկական երգարվեստի առավել տիպական նմուշները և ճիշտ հաստատագրել դրանք իրենց էությանը բնորոշ բոլոր տարրերով հանդերձ»²:

Փայլուն կերպով տիրապետելով հայկական նոտագրությանը՝ նա հմտորեն, կատարմանը զուգընթաց, նոտագրում էր երգասացի ձայնից ամենատարբեր բարդության նմուշներ: Նույն երգատեսակի բազմակի գրառումներով նա աշխատում էր չկորցնել իրեն հանդիպած և ոչ մի հետաքրքրական տարբերակ՝ գիտակցելով, որ ֆոլկլորը հարափոփոխ, տարբերակային, հանկարծաբանական երևույթ է, և նոտաների միջոցով ամրագրված մեկ տարբերակը երբեք չի կարող լիարժեք պատկերացում տալ տվյալ երգատեսակի մասին: Պրոֆ. Ռ. Աթայանը չափազանց կարևոր էր համարում Կոմիտասի կողմից բազմապիսի «տարբերակների փնտրումն ու հավաքումը, այն տարբերակների, որոնց առկայությունը ժողովրդական ստեղծագործության գրեթե պարտադիր հատկանիշ է: Հիրավի, ոճի սահմաններում պահպանվող ելևէջային ու կշռության քիչ թե շատ էական տարբերակումները, որ երևան են եկել տարբեր վայրերում կամ նույն վայրում տարբեր ժամանակ միևնույն երգը կատարելիս, Կոմիտասը խնամքով նկատի առել և արձանագրել է: Միևնույն երգի կոմիտասյան տարբերակները (երբեմն մինչև 10-12) ներկայումս մեծ արժեք ունեն ուսումնասիրելու համար և՛ հայ գեղջկական երգամրածողության առանձնահատկությունները, և՛ ժողովրդական մելոսի գոյափոխման ընթացքն ու զարգացման ուղիները»³: Հատկանշական է, որ Կոմիտասը դեռ այն ժամանակ առաջ էր քաշում տարածքային և ժամանակային տարբերակների խնդիրը, ինչն արդիական է ժամանակակից ֆոլկլորագիտության մեջ: Խոսքը միևնույն երգատեսակի՝ տարբեր վայրերում տեղական կնիք ստացած և նույն երգասացից տարբեր ժամանակ գրառված՝ պահի ազդեցությունը կրող

² Նույն տեղում, էջ 9:

³ Նույն տեղում, էջ 10:

տարբերակների մասին է, որոնք արժեքավոր նյութ կարող են տալ բազմապիսի ուսումնասիրությունների համար:

Իսկապես, ավանդական երգարվեստում և՛ բառերը, և՛ երգի մեղեդին որոշ չափով վերափոխվում են ոչ միայն յուրաքանչյուր կատարման ժամանակ, այլև տնից տուն մեղեդու կրկնման ընթացքում՝ նոր տեքստի հետ: Այսպիսով, յուրաքանչյուր ֆոլկլորային նմուշ կարող է ստանալ այնքան տարբերակ, որքան կատարում լինի: Տարբերակների այդ քանակից առանձնացնել որևէ առաջնային, հիմնական, «կանոնիկ» նմուշ անհնարին է, որովհետև այդպիսին չի կարող գոյություն ունենալ: Ֆոլկլորում բոլոր տարբերակներն առաջնային են, համազոր: Այս գիտակցությունից է գալիս Կոմիտասի հատուկ ուշադրությունը բոլոր տարբերակների նկատմամբ:

Հայաստանի տարբեր գավառներում հավաքելով և գրառելով բազմաթիվ երգատեսակներ իրենց տարբերակներով՝ Կոմիտասն իր առջև տարբեր գիտական խնդիրներ է դրել և դրանց լուծման ճանապարհներ նշմարել: Դրանցից են հայ երաժշտական ֆոլկլորի *ժանրային ստորաբաժանման, երաժշտական բարբառների* առկայության, *ժողովրդական երգի հեղինակ* լինել-չլինելու հարցերը: Կոմիտասի ուշադրության կենտրոնում էին նաև ժողովրդական երգերի բարդության և ստեղծման պայմանների հետ կապված՝ դրանց *մեղեդիների կյանքի տևողության* խնդիրը, նաև հայեցի երգամտածողության մեջ պարզորոշ կերպով նշմարվող *մեղեդային փիպական դարձվածքների* զարգացման և փոփոխության տրամաբանությունը: Այս բոլոր խնդիրները, որոնց անդրադարձել է Կոմիտասը, այսօր էլ խիստ արդիական են մեր երաժշտական ֆոլկլորագիտության համար:

Կոմիտասն իր հավաքչական աշխատանքներում ղեկավարվել է *ստացիոնար ուսումնասիրության* մեթոդով: Տեսականորեն գտնվելով գյուղում, ապրելով ժողովրդի մեջ, մասնակցելով համայնքի կյանքի անցուղարձին՝ նա ոչ միայն անզնահատելի նմուշներ է լսել և գրառել, այլ կարողացել է խորքից հասկանալ ժողովրդի երգաստեղծության ընթացքը, հիմքերը, էությունը: Այդպիսի պայմաններում նրա գրառած նյութը, այսինքն՝ «իր տեղում, իր ժամանակին», ներկայացնում է իր ֆունկցիային համապատասխան, հավաստի, իսկական ֆոլկլորային նմուշ, օրինակ՝ հոռովելը՝ գրառված գութանավարի ժամանակ, օրորը՝ երեխա քնեցնելիս, թագվորագովքը՝ հարսանիքի պահին, «Ջանգյուլումի» խաղերը՝ Համբարձման տոնին և այլն: Այսպես է գրառվել հայտնի «Լոռվա գութաներգը»՝ աշխատանքի պահին, որի ականատեսն ու ունկնդիրն է եղել Կոմիտասը և տեղնուտեղը գրի առել այդ հոռովելի բոլոր տարաբնույթ հատվածներն այնպես, ինչպես երգվել է: Հետաքրքրական է, որ

Կոմիտասն անդրադարձել է ամենանուրբ, առաջին հայացքից անէական թվացող հարցերի: Նա նկատել է, որ կլիմայական խիստ պայմաններ ունեցող վայրերում, ինչպիսին Ապարանն է, ուր բերքի հասունացումը հաճախ վտանգվել է, հոռովելը տխուր երանգներ է ստացել, իսկ Լոռվա պես բարենպաստ պայմաններ ունեցող վայրերում հոռովելը կայտառ և ուրախ բնույթ ունի:

Դժբախտաբար, այսօր ֆոլկլորագիտության պահանջին համապատասխան գրառում անելն անհնարին է, որովհետև գութանավարը կիրառությունից դուրս է եկել, և հոռովելը, կորցնելով իր գործառույթը, դադարել է գոյություն ունենալ: Այսօր երաժիշտ-ֆոլկլորագետները, ջանալով գտնել անհայտացած ժանրի երգերը, ստիպված են դիմել տարեց տղամարդկանց և խնդրել վերհիշել, թե ինչպես էին ժամանակին վար անելիս երգել: Նման յուրատեսակ «համերգային» բնույթ ունեցող գրառումներն անշուշտ չեն կարող ֆոլկլորային նմուշ համարվել, սակայն որոշ պատկերացում տալիս են տվյալ վայրում ժամանակին գոյություն ունեցող աշխատանքային երգեցողության կերպի մասին:

Կոմիտասը գրում է. *«Ժողովուրդն արվեստական յերգեցողություն ասած բանը չգիտե. յուրաքանչյուր յերգ իր տեղում, իր ժամանակին է ստեղծում կամ սովորում՝ գործի ժամին՝ գործի յերգ, տանը՝ տանու յերգ միայն կասեն: Վեչ մի գյուղացի, տանը նստած, կալի յերգ չի ասի, վորովհետև կալերգն ըստեղծելու և ասելու տեղն է կալը, ուստի շատ ուրարտի յե յերևում, թե ինչու յեն հետաքրքիր լինում մի յերգով, յերբ անտեղի և անհարմար ժամանակ է: Յուրաքանչյուր յերգ կապված է գյուղական կյանքի մեկ թուպեյի հետ և տալիս է միայն այդ թուպեյի հաշիվը: Ժողովուրդը ժամանակից և տեղից բաժան յերգ չի կասկանում, չի ստեղծում և չի էլ գործածում»⁴:*

Կոմիտասը հայ գեղջուկի կյանքին, կենցաղին և ստեղծագործության առանձնահատկություններին քաջատեղյակ լինելով՝ առանձնակի կարևորություն էր տալիս այն հանգամանքին, որ ժողովրդական երգերվեստն ստեղծվում և գոյատևում է միայն և միայն *բանավոր* ձևով: Այստեղից էլ նրա մեծ հետաքրքրությունը ժողովրդի հանկարծաբանական կարողությունների նկատմամբ: Նպատակաուղղված պրպտումներ կատարելու միջոցով նա կարողանում է ականատես լինել, թե ինչպես է հանպատրաստից ծնվում գեղջկական երգաստեղծության ժանրերից ամենատարածվածն ու հանրամատչելին՝ պարերգը: Մեծ հետաքրքրություն է առաջացնում մեր ֆոլկլորագիտության մեջ Կոմիտասի այն բացառիկ դիտարկումը, թե ինչպես է Համբարձման տոնի օրերին Հառիճի վանքի մոտակայքում ծնունդ առնում ու զարգանում «Աման, Թելլո» կրկնակով պարերգը: Կոմիտասը քայլ առ քայլ գրի է

⁴ Կոմիտաս, *Հողվածներ և ուսումնասիրություններ* Երևան, Պետական հրատ., 1941, էջ 30:

առնում պարի ընթացքում առաջացած բոլոր տարբերակային փոփոխությունները մեղեդու, ռիթմի, մետրի, ձայնածավալի, ձայնակարգի ոլորտներում և հետևում, թե ինչպես է պարերգն ստանում իր ավարտուն, վերջնական ձևը:

Կոմիտասն իր ուսումնասիրություններում բացատրում է, թե ինչ հիմքերի վրա է զարգանում ժողովրդի հանկարծաբանական կարողությունը, ցույց է տալիս ավանդականի և հանկարծաբանականի ներքին տրամաբանական կապը: Կոմիտասը գրում է. «Յերգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնագործ պարզ և ամենքն էլ, լավ կամ վատ, խաղ կապել և յերգել գիպեն»⁵: Եվ շարունակում է. «Ժողովրդի յերգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, յերբ կարիք են զգում: Գեղջուկի դպրոցը, ուսուցիչը և առարկան՝ բնությունն է: Նա ձեռք է բերել ամեն տեսակ փորձառություն, հմտություն և բազմակողմանի ու կենդանի յերգերով իր և բովանդակ բնության զվարթ ու մոայլ սրտի հուզումները պայծառ նկարելու կարողություն: Յուրաքանչյուր գյուղացի քաջ գիպե տեղական յեղանակներն ու յերգերն այնպես, որպես բարբառը: Շատ զարգացած է բնազդաբար հարմարելու յերգական կարողությունը, որ ձեռք է բերել կամաց-կամաց, դարերի ընթացքում, մշակական փորձերով և սուր հիշողությունով, վրոնց առաջնորդն է զգույշ լսողությունը»⁶:

Սրանք չափազանց կարևոր դիտարկումներ են, որոնք օգնում են ճիշտ հասկանալ երևույթը, զգալ տարբերությունը հնչող բազմադեմ, հարափոփոխ երգատեսակի և նրա՝ նոտագրման միջոցով ամրագրված անփոփոխ տեսք ստացած մեկ տարբերակի միջև: Նորից հիշեցնենք, որ նոտագրությունը տալիս է ժողովրդական երգի միայն մեկ հնարավոր տարբերակի պատկերը և ստանում ավարտուն ստեղծագործության տեսք, ինչը բոլորովին հատուկ չէ ֆոլկլորին: Տեքստի սովոր պրոֆեսիոնալ երաժիշտը շատ կգարմանա, եթե ասեն նրան, որ այսինչ՝ իրեն ծանոթ և սիրված ժողովրդական երգը հանկարծաբանության արդյունք է, քանի որ նա տեսնում է նոտաներով գրված «ավարտուն ստեղծագործություն» և չի կարող պատկերացնել, որ այդ «կատարյալ երկը» կարող էր ուրիշ տեսք ունենալ:

Մյուս խոշոր հիմնախնդիրը, որը զբաղեցրել է Կոմիտասին, ժողովրդական երգերի նոտագրման հարցն է և դրա հետ սերտորեն առնչվող ռիթմական և մետրական ձևակերպման խնդիրը: Դեռ հավաքչական գործունեության վաղ տարիներից եվրոպական նոտաներով կատարած որոշ գրառումներում և

⁵ Նույն տեղում, էջ 17:

⁶ Նույն տեղում, էջ 29:

մշակումներում Կոմիտասին չափազանց մտահոգել է մեղեդիների մետրական դիրքը, այսինքն, այն հարցը, թե ինչպես նոտագրել և տակտավորել մեղեդին, որ բառի շեշտվող վանկը համընկնի տակտի ուժեղ մասի հետ: Տարիների փորձը համոզել է Կոմիտասին, որ նման օրենք սահմանելն ու առավել ևս կիրառելը գրեթե անհնար է: Տարիների ընթացքում մշակելով ժողովրդական երգերի նոտագրման իր սկզբունքները, ձգտելով բացահայտել հայ ֆոլկլորի ռիթմական կազմակերպման յուրահատկությունը՝ գիտնականը քննադատական վերաբերմունք է դրսևորել XVIII-XIX դարերի ռիթմի եվրոպական տեսության նկատմամբ, տեսություն, որը հիմնվում էր շեշտա-տակտային սկզբունքի վրա: Կոմիտասի դիրքորոշումը հասկանալու համար պետք է հիմնվել նրա այն մտքի վրա, թե *«հայ ժողովրդական երաժշտության մեջ շեշտն ու ամանակն իրարուց անկախ են, ուստի այդ երգերն ասելու է հետևելով բառերին և խազերի վրա դրված նիշերին և ոչ թե արևմտյան երաժշտության շեշտական օրենքներին»*: Եվ ավելացնում է. *«Տրոհակները ցույց են տալիս միայն տրադաչափական միություն և ուրբ»*⁷:

Ամանակ ասելով պիտի հասկանալ ժամանակի միավորը, որն ընկած է ռիթմական կազմակերպման հիմքում, իսկ տրոհակները, այսինքն՝ տակտի գծերը, ըստ Կոմիտասի, ունեն լոկ բաժանարար նշանակություն և չեն ենթադրում առաջին տակտաբաժնի պարտադիր շեշտվածություն: Ռ. Աթայանը գրում է. *«Համարելով դա «արևմտյան երաժշտությանը» բնորոշ երևույթ. Կոմիտասը մտահոգված էր՝ չլինի թե այդ երաժշտության «օրենքներով» տակտերի սկիզբը ուժեղ շեշտելուց «ժողովրդական տրամաբանական շեշտադրությունը» կորչի, երաժշտական ֆրազը աղավաղվի և, ըստ այնմ, աղավաղվի նաև ժողովրդական, գեղջկական խոսքի բնական առոգանությունն ու իմաստը»*⁸:

Հետաքրքրական է, որ գրառումներում և մշակումներում Կոմիտասը կիրառում է երկու տեսակի տակտի գծեր՝ երկար և կարճ: Նա մշակել է այդ սկզբունքը հատուկ նպատակով, որպեսզի կարողանա երկար տրոհակների միջոցով իրարից առանձնացնել երաժշտական նախադասությունները և ֆրազները, իսկ նրանց ներսում կարճ տրոհակների միջոցով ցույց տա ռիթմական որոշակի միավորումներ, այսինքն՝ ուրբեր:

Սա XX դարասկզբին Կոմիտասի կատարած գյուտերից մեկն էր, որով նա հստակորեն սահմանազատեց ռիթմիկայի նկատմամբ երկու հակադիր մոտեցում՝ կվալիտատիվ (շեշտային) և կվանտիտատիվ (ժամանակաչափական):

⁷ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 1, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, Հայպետհրատ, 1960, էջ 159:

⁸ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ 9, էջ 18:

Ռ. Աթայանն այդ առիթով գրում է. «Տաղաչափական միություն և ուրք» ցույց փվող կոմիտայան կարճ և երկար տրոհակները գիտարտեսական որոշակի հետաքրքրականություն ունեն, որքան մեզ հայտնի է, ժամանակի ֆոլկլորագիտության մեջ նորություն են եղել և այժմ էլ պահպանում են իրենց նշանակությունը»⁹:

Հատկանշական է նաև, որ երկար պրպտումների հետևանքով ստեղծագործական հասուն շրջանում գալով հայ ֆոլկլորի ռիթմիկայի առանձնահատկությունների հստակ ըմբռնմանը, Կոմիտասն իր նոտային գրառումներում հրաժարվում է չափի «կոտորակը» նշելուց: Այդ սկզբունքով են գրառված ֆրանսիական “Le Mercure Musical” հանդեսում տպագրված՝ Կոմիտասի հոդվածի ժողովրդական երգերի նոտային օրինակները: Հավանաբար, ազատ կերպով զարգացող ծորուն մեղեդիների գրառումներում չափի «կոտորակ» դնելը Կոմիտասն ավելորդ է համարել: Այլ է պարային բնույթի մեղեդիների պարագայում, որտեղ հստակ զգացվում է մետրական «զարկերակը» որոշակի պարբերականությամբ՝ կապված պարատոքի հետ: Այդ դեպքերում չափի նշումը բնական է և չի հակասում ժողովրդական մեղեդու բնույթին:

Ծանոթանալով ռիթմի և մետրի նկատմամբ Կոմիտասի պատկերացումներին և մշակած նոտագրման սկզբունքներին՝ կրկին համոզվում ես, որ գիտնականն իր հանճարեղ մտքի փայլատակումով այս հարցում ևս գերազանցել է իր ժամանակը և ճշմարիտ ուղիներ ցույց տվել երաժշտագետ-ֆոլկլորագետների նոր սերունդներին: Իրոք, ռիթմի և մետրի խնդիրներն այսօր մեր երաժշտագիտության և, մասնավորապես, ֆոլկլորագիտության ուշադրության կենտրոնում են:

Հայ երաժշտական ֆոլկլորը, լինելով հնագույն ժամանակներից ձևավորված ժողովրդական արվեստ, հասել է մինչև մեր օրերը՝ իր մեջ ներառելով անցած ժամանակների բոլոր շերտավորումները: Այդ իմաստով հայ ֆոլկլորը բարեբեր նյութ է դառնում այն փուլերի հետազոտման համար, որոնք անցել է ռիթմը իր զարգացման ընթացքում՝ նախնադարյան ֆոլկլորի ինտոնացիոն ռիթմիկայից դեպի միջնադարյան ժամանակաչափական ռիթմիկա և, այնուհետև, մինչև նոր ժամանակների շեշտային մետրիկա: Այդ բոլոր փուլերն այս կամ այն չափով անխուսափելիորեն ազդել են հայ ֆոլկլորի և գենետիկաբար նրա հետ սերտորեն կապված՝ բանավոր ավանդույթի ժողովրդապրոֆեսիոնալ արվեստի վրա: Խոսքը գուսանական և աշուղական արվեստի մասին է:

⁹ Նույն տեղում, էջ 19:

Նոր ժամանակների շեշտային մետրիկայի հետ անքակտելիորեն կապված է տակտավորման խնդիրը, որն առաջացավ այն պահերից, երբ սկսեց զարգանալ բազմաձայնությունը: Իսկ միամեղեդայնության¹⁰ պայմաններում վաղ միջնադարից ռիթմիկան կարգավորվում էր միայն երկար և կարճ վանկերի և հնչյունների դասավորմամբ: Կարճ վանկի տևողությունը ծառայում էր որպես բոլոր ռիթմական մեծությունների և դադարների (պաուզաների) չափման միավոր: Հունարեն այն կոչվում էր *χρόνος πρώτος* (խրոնոս պրոտոս, առաջին կամ հիմնական ժամանակ), իսկ լատիներեն՝ *mora* (մորա): Այս *մորան* է, որ Կոմիտասն անվանում է «ամանակ»: Կարճ և երկար տևողությունների այս կամ այլ կերպ դասավորվածությունը ստեղծում էր որոշակի ոտք, ինչը չափավորվածություն էր հաղորդում երաժշտության ծավալման ընթացքին:

Այսպիսով, հայ ժողովրդական երգի ռիթմիկան բնութագրվում է կվանտիտատիվության, ազատ ժամանակաչափության և շեշտայնության յուրատիպ զուգորդմամբ: Ընդ որում, տակտի գիծը ճնշող մեծամասնությամբ ստանում է լրկ բաժանարար, սինտակսիկ նշանակություն և բնավ չի մատնանշում ուժեղ, շեշտված մասի երևան գալը: Տակտային գծի (տրոհակի, ինչպես Կոմիտասն է ասում) նման մեկնաբանումը վերաբերում է ինչպես ազատ ժամանակաչափությանը ենթարկվող նմուշներին, այնպես էլ այն նմուշներին, որոնց ռիթմիկան՝ նույնպես հիմնված խոսքի և երաժշտության երկմիության վրա, իր բնույթով կվանտիտատիվ է, այսինքն՝ ունի որոշակի բանաձևային պարբերականություն և ազատ է տակտային շեշտադրումից:

Իսկ այն երգերում, որոնց ռիթմիկան հիմնված է խոսքի, երաժշտության և շարժման եռմիության վրա, այսինքն՝ պարային երգերում, տակտի գիծը ցույց է տալիս շեշտված մասի երևան գալը, քանի որ նման երգերի հավասարաչափ շեշտվածությունը ծնունդ է առնում շարժման մոտորիկայից: Սակայն այս դեպքում մետրիկայի շեշտվածությունը չի հակասում կվանտիտատիվ էությանը, տակտի սահմանները համընկնում են պարային ռիթմական բանաձևերի հետ, որոնք ներկայացնում են որոշակի ոտք: Ավելի հաճախ դրանք բարդ ոտքեր են՝ դիպոդիա, տրիպոդիա, այսինքն՝ բաղկացած մեկից ավելի պարզ ոտքերից: Պատահական չէ, որ հայ ժողովրդական պարերգերում ամենատարածված եռամաս չափերն են՝ 6/8 և 9/8, այլ ոչ թե 3/8-ը:

Բառերի շեշտադրությունը կարող է համընկնել, բայց առավել հաճախ չի համընկնում տակտի շեշտակի մասերի հետ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հայ երգային ֆոլկլորի նմուշների տակտավորման մեջ բառերի շեշտավորումը դեր չի խաղում, չի դառնում որոշիչ գործոն, իսկ տակտավորումը բնավ

¹⁰ Մոնոդիային համարժեք «միամեղեդայնություն» եզրը առաջարկել է Մհեր Նավոյանը:

պարտադիր չէ այն դեպքերում, երբ այն էական նշանակություն չունի և դառնում է պայմանական, ինչպես և գտնում էր մեծն Կոմիտասը:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Կոմիտասը, դառնալով հայ երաժշտական ֆոլկլորագիտության հիմնադիր, ծառայեցրել է իր գիտական ձեռքբերումները հայ պրոֆեսիոնալ երաժշտական արվեստի զարգացման վսեմ նպատակներին: Ինչպես գրում է Գ. Գյողակյանը. «Կոմիտասին իրավամբ պատկանում է հայ ժողովրդական երաժշտության մեծածավալ և արժեքավորագույն բնագավառի՝ գեղջկական ֆոլկլորի հայտնագործությունը: <...> Այդ փաստն ինքնին արդեն բավական էր, որպեսզի Կոմիտասին ամենապատվավոր տեղն ապահովեր ազգային մշակույթի խոշորագույն գործիչների շարքում: Սակայն Կոմիտասը շատ ավելին արեց: Ազգագրության և տեսական հարցերով նրա զբաղմունքը նեղ ակադեմիական բնույթ չէր կրում: Դրանք հեղաքրքրում էին նրան առաջին հերթին իբրև արվեստագետի, որը ձգտում էր վերականգնել անցած դարերի ազգային արվեստի՝ հայ երաժշտության մեջ մոռացված ավանդույթները. վերականգնել՝ մասնագիտացված երաժշտական մշակույթի ժամանակակից պատկերացումներին համապատասխան մակարդակով: Կոմիտասին հաջողվեց փայլուն կերպով լուծել այդ դժվարին խնդիրը»¹¹:

Ամփոփում

Կոմիտասի հետազոտությունը երաժշտական ֆոլկլորագիտության մեջ կարևոր է ոչ միայն հայկական, այլև այլ ազգերի ֆոլկլորային երաժշտության ուսումնասիրության համար: Կոմիտասը համարվում է հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր: Հավաքելով հազարավոր ժողովրդական երգեր և մեղեդիներ, նա դրանք ուսումնասիրել է և դասակարգել ըստ ժանրերի: Հաջորդ քայլը եղել է հայ երաժշտության կառուցվածքին համապատասխան բազմաձայնության որոնումը: Սույն հոդվածը փորձ է բացատրելու, թե ինչու էր Կոմիտասը հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը, ինչպես ընդունված է համարել հայ երաժշտագիտության մեջ: Քննվում են Կոմիտասի առաջադրած հետևյալ խնդիրները.

✓ Ո՞րն է հայ ավանդական երաժշտության բանավոր էությունը: Ո՞րն է իմպրովիզացիայի դերը բանավոր ավանդույթի ներսում:

✓ Ի՞նչ դեր ունի նոտագրությունը երաժշտության մեջ: Ի՞նչ կրուսատներ են լինում նոտագրության դեպքում: Ինչպե՞ս են փոխհարաբերվում գրավոր և բանավոր ավանդույթները:

✓ Յուրաքանչյուր տարածաշրջանին բնորոշ երաժշտական բարբառների բացահայտումը:

✓ Ժողովրդական երաժշտական ստեղծագործության մեջ հեղինակի գոյության կամ բացակայության խնդիրը:

¹¹ Գ. Գյողակյան, Հայ երաժշտության հանճարը, Կոմիտաս պրեմ, նվիրված կոմպոզիտորի ծննդյան 145-ամյակին, Երևան, 2014, էջ 4:

✓ Երգերի կենսունակությունը, նրանց կյանքի տևողությունը: Ո՞ր երգերն են ապրում ավելի երկար, և որո՞նք կարճ կյանք ունեն:

✓ Երգերին հատուկ երաժշտական ֆրագների բնորոշումը և բանաձևային արտահայտությունների դուրս բերումը: Ի՞նչ չափով կարող է իմպրովիզացիան գոյություն ունենալ բանաձևային մտածողության մեջ:

✓ Բանահավաքության մեջ երգի ստացիոնար գրառման մոտեցումը:

✓ Ռիթմը հայ ժողովրդական երգի մեջ:

Ակնհայտորեն, Կոմիտասը գերազանցել է իր ժամանակը և կանխորոշել է ֆոլկլորագիտության մի շարք հիմնախնդիրներ: Փաստորեն, նա ուղիներ է առաջադրել ֆոլկլորագիտության հետագա զարգացման համար:

Բանալի բառեր՝ հայ երաժշտական ֆոլկլորագիտություն, ռիթմ, մետր, բանահավաքչական աշխատանք, գրառում:

КОМИТАС И ВОПРОСЫ АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНОЙ ФОЛЬКЛОРИСТИКИ

Резюме

Алина Пахлеванян (Армения)

кандидат искусствоведения, профессор

Заслуженный деятель искусств РА

Ереванская государственная консерватория имени Комитаса

Исследование Комитаса в области музыкальной фольклористики представляет важность с точки зрения изучения музыкального фольклора не только армян, но и других народов. Комитас считается основоположником армянской национальной композиторской школы. Собирая многочисленные народные песни и мелодии, он изучил их и классифицировал по жанрам. Следующим шагом стал поиск многоголосия, соответствующего структуре армянской музыки. В данной статье мы попытались разяснить – почему же Комитас является основоположником армянской национальной композиторской школы, как принято считать в армянском музыковедении. В статье освещаются следующие проблемы, выдвинутые Комитасом:

✓ Какова устная сущность армянской традиционной музыки? Какова роль импровизации в рамках устного творчества?

✓ Какую роль играет нотация в музыке? Какие утраты происходят в процессе нотирования? Каким образом сочетаются устная и письменная традиции?

✓ Выявление характерных музыкальных диалектов каждого региона.

✓ Присутствие или отсутствие автора в народном музыкальном песнетворчестве.

✓ Жизнеспособность песен. Какие песни живут дольше, у каких – более краткая жизнь.

✓ Характеристика типичных музыкальных фраз и выявление мелодических формул. В какой степени импровизация может присутствовать в формульном мышлении?

✓ Подход к стационарной записи песни в собирательской деятельности.

✓ Ритм в армянской народной песне.

Очевидно, Комитас опередил свое время и предвосхитил целый ряд проблем музыкальной фольклористики. Таким образом, он наметил пути для дальнейшего развития фольклористики.

Ключевые слова: армянская музыкальная фольклористика, ритм, метр, собирательская деятельность, нотирование.

KOMITAS AND THE PROBLEMS OF ARMENIAN MUSIC FOLKLORISTICS

Abstract

Prof. Alina Pahlevanyan (Armenia)
PhD in Art, Honored Worker of Arts of RA
Komitas State Conservatory

Komitas's research in ethnomusicology is of great importance not only for the study of Armenian folk music, but that of other nations. Komitas is considered to be the founder of Armenian Ethnic Music Studies. Collecting several thousands of folk songs and tunes, he studied and classified them into genres. The next step was searching for the polyphony convenient for the Armenian music structure. This article attempts to explain why Komitas was the founder of the national school of music composition, as commonly accepted in Armenian musicology. The following problems propounded by Komitas are addressed to:

- ✓ What is the oral tradition in Armenian folk music? What role does permanent improvisation have inside in oral tradition?
 - ✓ What is the advantage of music notation? What losses can be registered in the case of notation? How do written and oral traditions relate to each other?
 - ✓ Revealing the “music dialects” typical for each region.
 - ✓ The problem of the existence or the absence of an author in folk song creation.
 - ✓ The viability of the songs, their lifespan. Which songs live longer and which do not?
 - ✓ Identifying the musical phrases typical for the songs and finding the formulaic expressions.
- To what extent may improvisation exist within formulaic constructions?
- ✓ The stationary approach in song collection work.
 - ✓ The rhythm in Armenian folk songs.

Obviously, Komitas surpassed his time-period preordaining several problems of folkloristics. Komitas actually proposed pathways for further development of ethnomusicology.

Key words: Armenian music folkloristics, rhythm, meter, music collection, transcription.

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լիլիթ Երնջակյան (Հայաստան)
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Ժամանակակից էթնոերաժշտագիտական աշխատանքներում հաճախ են քննարկվում երաժշտության և ազգային ինքնության, յուրայինի և օտարի, տեղայինի և ընդհանուրի հարաբերության հարցերը: Դրանց լուսաբանումը ներառում է նաև Սփյուռք հասկացության և տերմինի սեմանտիկ շրջանակների ընդլայնված մեկնությունները՝ զանազան էթնիկ փոքրամասնությունների, ազգային գաղթօջախների, տարագիր խմբերի մշակութային պատկերացումների ու կողմնորոշումների վերաբերյալ: Վերջին տարիներին լույս տեսած՝ սփյուռքահայ հեղինակների աշխատություններում տեղ են գտել հիշյալ մշակութաբանական դիսկուրսին արձագանքող դրոյթներ, որոնց առնչումը հայկական սփյուռքում ձևավորված երաժշտամշակութային իրողություններին հստակեցնում է ազգային երաժշտական ինքնության սահմանների ընկալումները, ասպարեզ հարթում ընդհանուր երաժշտական տարածքում էթնիկ ավանդույթների բազմազանությունն ու գեղարվեստական մտածողության կանոնական հատկանիշները կարևորելու համար: Նման մոտեցումը նոր կովաններ է տրամադրում արևմտահայության մշակութային կենտրոնի՝ «հայկական Պոլիսի» երաժշտական արվեստի ու կենցաղի առանձնահատկությունների և, մասնավորապես, Անատոլիայի երկրամասում ստեղծված բազմազգ գեղարվեստական ավանդույթների ուսումնասիրության համար, որոնցում հայկական տարրն ու հայ երաժշտական ավանդույթի պատմական դերը դեռևս միջազգային ճանաչում չեն ստացել:

Հայտնի է, որ Կոմիտասը չի ընդունել քաղաքային, ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտությունն իբրև ազգային-ժողովրդական դիմագիծ ունեցող արվեստ: Իր աշխատությունը գիտակցաբար «Հայ գեղջուկ երաժշտություն» անվանելով՝ նա բացառել է քաղաքային ֆոլկլորի գոյությունը. «*Քաղաքացիք ոչ մի ժողովրդական երգ չեն ստեղծել*», - գրել է Ա. Չոպանյանին ուղղված իր նամակում¹: Քաղաքային, հատկապես աշուղական երգարվեստի նկատմամբ ունեցած նրա հակասական վերաբերմունքն առիթ է տվել տարածայնությունների, ձևավորել

¹ Տե՛ս Ռ. Աթայան, Դիտողություններ հայ քաղաքային ֆոլկլորի մասին, *Տեղեկագիր հասարակական գիտությունների*, 1959, 1, էջ 67:

միմյանց հակադրվող «արևելյան» և «հայկական» ըմբռնումները, սկզբնավորել «օտար» ժանրերի և մեղեդիների բնութագրերի քննարկումները հայ երաժշտագիտության էջերում:

Շոշափված խնդրի հետազոտական ելակետը բնավ չի ենթադրում Կոմիտասի արտահայտած մտքերի կամ տարարժեք գնահատականների քննադատությունը: Հայ երաժշտության մեծ երախտավորի կողմնորոշումը՝ ուղղված ազգային երաժշտական ինքնության ապացուցմանը, չի բացառում այլ տեսակետների առկայությունն ու մեկնաբանման անհրաժեշտությունը:

Որո՞նք են, այնուամենայնիվ, աշուղական երգարվեստի և կամ ընդհանրապես ժողովրդապրոֆեսիոնալ ստեղծագործության ցանկացած ոլորտի՝ մուղամաթի, սազանդարական երաժշտության, քաղաքային-ժողովրդական երգի անընդունելի կողմերը, որոնց հիմամբ այդ ժանրերը գիտակցականի կամ ենթագիտակցականի մակարդակում դուրս են մղվում հայ երաժշտական ինքնության հարացույցից:

Բազմադարյան հոգևոր մոնոդիայի, երաժշտական բանահյուսության զտարյուն ժանրերի համեմատ՝ հիշյալ բնագավառը բնութագրվում է մի շարք հիմնորոշ հատկություններով, որոնք այն կամրջում են «մերձավորարևելյան» գեղարվեստական ավանդույթին: Սկզբունքային ընդհանրությունները նկատելի են թե՛ ձևակառուցվածքային առանձնահատկություններում, թե՛ տաղաչափության մեջ, թե՛ ձայնակարգային համակարգում, թեև եզրաբանությունը օտարածին է՝ պարսկա-արաբա-թուրքական: Ընդհանրությունները բնավ չեն ենթադրում միակողմանի ազդեցություն, առավել ևս՝ ազգային ավանդույթում խոր հիմքեր ունեցող ժանրերի թերագնահատում: Երաժշտաբանաստեղծական կամ պատմողական ավանդույթը հնարավոր չէ փոխառել կամ ընդօրինակել մեխանիկորեն, եթե չկա խորքային մշակութաբանական հենք:

Ըստ ամենայնի, Կոմիտասի քննադատական խոսքն առավելապես ուղղված է եղել ոչ թե ավանդական ժողովրդապրոֆեսիոնալ երգարվեստի, այլ դրա կատարողական ոճի անհանդուրժելի, ազգային պատկերացումների դիրքերից մերժելի կողմերին՝ ավելորդ գեղգեղանքներին, քիմքային կամ ռնգային ձայնարտարբերումներին և անհարկի ձգձգված վանկարկումներին՝ իբրև անճաշակ և ազգային ոճին անհարիր երևույթների:

Կոմիտասի գիտաստեղծագործական գործունեության տարիներին ազգային աշուղական դպրոցը զարթոնք էր ապրում և մեծ ժողովրդականություն վայելում: Սակայն նա նպատակ չի ունեցել զբաղվելու տվյալ ճյուղի

ուսումնասիրությամբ²: Հայտնի է նաև, որ նա ոչ միայն սիրել ու գնահատել է իր ժամանակակից հայ աշուղների՝ Շիրինի, Զիվանու, Շերամի արվեստը, այլ նաև ինքն է վարպետորեն կատարել աշուղական երգեր: Ավելին, Կոմիտասի երաժշտաբեմական մտահղացումներին վերաբերող անտիպ նյութերից երևում է, որ հայրենի Քյոթահիա քաղաքում գրառած արևելյան-թուրքական կոչվող երկու երգ մտադիր է եղել օգտագործել իբրև աղոթք՝ իր երազած «Վարդանանց հերոսամարտի» երաժշտականացման համար: Այսուհանդերձ, իր հարազատներից ու ազգականներից գրառած թուրքերեն երգերը նա չի անվանել հայ-թուրքական, այլ, ամենայն հավանականությամբ, լեզվական խնդիրներից ելնելով, կոչել է «արևելյան-թրքական եղանակներ»: Նման հակասություն կա նաև քաղաքային երգարվեստի՝ լեզվաոճական և մեղեդային ակունքների բազմազանությամբ բնութագրվող ստեղծագործության վերաբերյալ Կոմիտասի արտահայտած մտքերի և նրա գիտահավաքական ու կատարողական գործունեության միջև:

Նրա ստեղծագործական ժառանգության մեջ տեղ են գտել թե՛ քաղաքային, ազգային-հայրենասիրական երգեր, թե՛ դրանց ոճով մշակված հանրահայտ նմուշներ՝ «Արաքսի արտասուքը», «Հայ ապրինք», «Հայ մեռնինք» և այլն, որոնք նա կատարել է իր ժամանակի ազգային-ազատագրական տրամադրություններին համահունչ:

Քաղաքական հանգամանքներով և ազգի ինքնաճանաչման խնդիրներով պայմանավորված նրա զգուշավոր մոտեցումը նպաստել է տվյալ բնագավառի անտեսմանը հայ երաժշտագիտության որոշակի փուլում: Տարբեր առիթներով Կոմիտասի արտահայտած մտքերն ու տարարժեք գնահատականները բավարար հիմք չեն տալիս հստակեցնելու նրա վերաբերմունքն աշուղական երգարվեստի, մասնավորապես՝ «պարսկա-տաճկական» ավանդական եղանակների վերաբերյալ: Առաջնային խնդիր էր հայ երաժշտարվեստի, հատկապես եկեղեցական երգարվեստի ինքնատիպության պահպանումն ու հետագա զարգացումը ազգային գեղագիտական ընկալումներին հարազատ հունով: Այստեղից էլ՝ արևելյան գեղագիտական գործոնի և ճշմարիտ հայկականի առանձնացումը և հակադրումը: Ինչ վերաբերում է քաղաքային հայրենասիրական երգերին, ապա Կոմիտասը, տուրք տալով ժամանակի ազգային-ազատագրական տրամադրություններին, կատարել և պրոպագանդել է այդ երգերը, թեև ազգային պրոֆեսիոնալ արվեստի զարգացման պրոցեսում

² Այս մասին տե՛ս **Մ. Մանուկյան**, Կոմիտասը և հայ աշուղական-գուսանական երգարվեստի հարազատության հարցը, *Կոմիտասական* 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 227-244:

դրանք չի կարևորել³, նշելով, որ դրանցով «չենք կարող գաղափար փայ մեր ժողովրդական եղանակների մասին առհասարակ օտարներին և մանավանդ եվրոպացի երաժիշկներին»⁴:

Երկու գլխավոր՝ եկեղեցական և ժողովրդական ճյուղերի ուսումնասիրությանը, նախանձախնդիր մոտեցումով նա ըստ էության լուծում էր հայ երաժշտության ինքնատիպ նկարագիրը հիմնավորելու և ինքնուրույնությունն ապացուցելու սկզբունքային խնդիրը: Եվ պատահական չէ, որ նրա տեսադաշտից դուրս էր, ինչպես նշեցինք, հայ քաղաքային, գուսանա-աշուղական երգ-երաժշտությունը՝ իբրև գեղագիտական սկզբունքների այլ համակարգով բնութագրվող և օտար արևելյան գեղարվեստական ավանդույթին հարող ճյուղ, որ միանգամայն հասկանալի է իր ժամանակի համատեքստում:

Հայ երաժշտարվեստի ինքնատիպության և եզակիության հավաստումով կնքված Կոմիտասի գործը և նման ընկալումով պայմանավորված ազգային երաժշտական կուռք դառնալու փաստը առիթ են տվել Արևմուտքի որոշ հայ հետազոտողների Կոմիտասի համոզմունքներում տեսնել նաև ընդհանրապես հայ ժողովրդի եզակիության հավաստումը: Օրինակ է բերվում Կոմիտասի արտահայտած բուռն վրդովմունքը 1900 թ. Լևոն Եղիազարյանի հրատարակած «հայ ժողովրդական երգերի հավաքածուի» կապակցությամբ, որով, ըստ Կոմիտասի, «օտարները սխալ կարծիք կարող են կազմել հայ ժողովրդի բարոյականի և մտավորի, անցյալի և ներկայի մասին»: Մի կողմ թողնելով Կոմիտասի զայրույթի և մտահոգության հիմքերը՝ պայմանավորված ժողովածուններում տեղ գտած մեղեդիների զգալի մասի ոչ հայկական ծագումով, նշենք, որ դրանց շարքում են նաև «Կիլիկիան», «Օրորոցի երգը» («Արի իմ սոխակ») և Տիգրան Զուխաջյանի «Լեբլեբիջի» օպերայից «Մենք քաջ տոհմի զավակներն ենք» երգը, որոնք ազգային հուզական վերելք են առաջացնում: Նույն երգերը եվրոպացի գիտնականների և արվեստագետների կարծիքով (Պիեռ Օբրի, Վենսան դ'Էնդի) խոսում են հնդեվրոպական ժողովուրդների ազգակցության լայն սահմանների ու գեղարվեստական մտածողության ընդհանուր հատկանիշների մասին⁵:

Սկիռուքահայ համայնքներում ստեղծագործող արվեստագետների համար Կոմիտասի անձն ու գործը ձեռք են բերել Հայրենիքը մարմնավորող խորհրդի, Հայրենիքը երաժշտական լեզվով մտապատկերելու և վերապրելու, յուրայինին և

³ Տե՛ս Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 68:

⁴ *Գրական նշխարք Կոմիտաս Վարդապետի բեղուն գրչեն*, աշխատափորոթին դր. Աբել Վրդ. Օղյուզեանի, Մոնթրեալ, «Քրիստոնեական Ուսման եւ Աստուածաբանության Կեդրոն», 1994, էջ 231:

⁵ Տե՛ս *Recueil de Chants Populaires Armeniens* (Հավաքածոյ հայոց ժողովրդական երգերի), Paris, 1900, Avant-Propos (նախաբան):

օտարին տարազատող ուղեցույցի նշանակություն: Սակայն ազգային ու մշակութային ինքնապահպանության դիսկուրսը բացարձակ նույնը չէ Հայրենիքում և Սփյուռքում: Ընդհատված պատմության ու մշակույթի կրողների համար մշակույթը վեր է ածվում պատմության, և այդ պատմական մշակույթի՝ նախնիներից ժառանգած գիտելիքի շարունակելիությունը ապահովվում է գիտակցական մակարդակում՝ տարբեր գաղթօջախներում ձևավորված երաժշտական կենցաղի համատեքստում:

Հայ մշակույթի բացառիկ ինքնատիպության կոմիտասյան «նարրատիվը» սփյուռքահայ որոշ էթնոերաժշտագետների (Սիլվիա Ալաջաջի⁶, Մելիսա Բիլալ⁷ և այլք) թույլ է տվել այն հարաբերել XIX-XX դարերում տարածված ազգայնական տեսությունների ու դրույթների հետ, վերլուծել գաղթօջախներում ձևավորված երաժշտական կենցաղի և ավանդույթների ողջ բարդույթը՝ համադրելով կամ հակադրելով այն այսօրվա Հայաստանի երաժշտական իրողություններին: Ազգային երաժշտական ինքնության խնդիրների քննությունը Եղեռնին նախորդող և հաջորդող սոցիալ-քաղաքական և մշակութային համատեքստերում թույլ է տալիս պարզաբանել նաև Կոմիտասի երաժշտատեսական դատողություններում ամփոփված իրարամերժ մտքերի պատճառները: Կոմիտասի անձն ու գործը կարևորագույն, սակայն ազգային-մշակութային միակ չափանիշը չէ բազմաշերտ ավանդույթների ժառանգորդ սփյուռքահայերի երաժշտական մտածողության, ճաշակի ու նախապատվությունների հիմքերը մեկնելիս:

Գիտակցելով և կարևորելով Կոմիտասի լուսավոր գործունեությունը, որ նրան մշակութային հերոս է դարձրել թե՛ արևելահայերի, թե՛ արևմտահայերի գեղագիտական ու հայրենասիրական ընկալումներում, հարկ է ըմբռնել նաև արևմտահայերի «հայկականության» չափանիշները՝ իբրև Անատոլիայի բազմազգ երաժշտական մշակույթի հավասարազոր անդամի և կրողի: Սփյուռքի ամենատարբեր խավերի ներկայացուցիչները նոստալգիկ զգացողություններով են հիշում արևելյան գործիքային նվագներն ու ավանդական մեղեդիները՝ մականները, փեշրաֆները, սեմայիները, թուրքի և շարքի կոչվող քաղաքային ժանրերը, որոնցից շատերի հեղինակները հայ երաժիշտներն են եղել, ափսոսանք են հայտնում հարյուրավոր թուրքալեզու հայ աշուղների ու

⁶ **Melissa Bilal**, *The Oud: Armenian Music as a Means of Identity Preservation, Construction and Formation in Armenian American Diaspora Communities of the Eastern United States*, 2010, Columbia University.

⁷ **Sylvia Angelique Alajaji**, *Music and the Armenian Diaspora: searching for home in exile*, 2015, Indiana University Press, Bloomington and Indianapolis.

գործիքահարների չթարգմանված ու չուսումնասիրված ժառանգության համար, որ թուրքական սուլթանների հիացմունքն է առաջացրել⁸:

Միով բանիվ, օսմանյան մշակութային իրողությունից և դրա ժառանգորդի գիտակցությունից հրաժարվելը և բացառապես կոմիտասյան ազգային երաժշտական ինքնությունն ընդունելը տարակուսանք է հարուցում արևմտահայության որոշակի խմբերի մոտ, և նրանց իդենտիֆիկացիան Հայաստանի՝ հայրենիքի երաժշտական մշակույթի կրողի հետ հաճախ սիմվոլիկ բնույթ է կրում:

Ինքնության խնդրի քննարկումը գաղթօջախներում ձևավորված մշակութային ավանդույթների հոլովույթներում Սփյուռքի երաժշտագետներին մղում է նաև փոփոխվող կամ բազմաբաղադրյալ ինքնության գաղափարի դիտարկմանը, որով և մեկնաբանվում է հայ երաժշտական մշակույթի առանձնահատուկ դիրքը Արևելք-Արևմուտք կամ քրիստոնյա և մահմեդական Արևելքների խաչուղիներում: Տեղին է մեջբերել Խաչիկ Թոլոյանի հարցադրումը հայկական Սփյուռքի՝ իր ողջ քաղաքական, գաղափարական, կենցաղային ու մշակութային տարբերություններով ու բազմաշերտությամբ, միասնական ու ամբողջական իրողության վերաբերյալ, որի հիմնական կռվանը համայն հայության համար գործող և հարատևող արժեքներն են՝ կրոնը, երաժշտությունը և եղենի ընկալումը⁹:

Հայոց Մեծ եղենը հայկական ինքնության հարացույցին նոր նշույթներ է հավելել, որոնցով սահմանագատվում են ժողովրդի տարբեր հատվածները. արևմտահայի, սփյուռքահայի պատմական հիշողության մեջ ողբերգության և նախկին տան հիշողությունը խորհրդանշող տարրերը՝ արևելյան գործիքներ (մասնավորապես՝ ուղը), Արևելքի դասական-ավանդական երաժշտական ժանրերը՝ ստեղծված Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ազգերի, այդ թվում՝ հայերի գործունեության շնորհիվ, չեն տեղավորվում կոմիտասյան դրույթներում բյուրեղացած հայ երաժշտության «հնչյունային կառուցում»:

Անկասկած, ժողովրդապրոֆեսիոնալ երգարվեստի ազգային և ընդհանուր արևելյան թեքումները հնարավոր են դարձնում այդ արվեստի դիտարկումը միջմշակութային փոխազդեցությունների ոլորտում՝ չսահմանափակվելով զուտ ազգային խնդիրների քննությամբ և ինքնատիպության հավաստումներով. մեկուսացած մշակույթը չի բարձրանում իր ինքնարժեքից և գտնվում է իրեն պատկանող երևույթների ու փաստերի մշտական փնտրտույցի մեջ:

⁸ Տե՛ս **Lucina Agbabian Hubbard**, *The Musical World of Armenians in Constantinople, Armenian Constantinople*, edited by Richard G. Hovhannisian and Simon Payaslian, 2010, pp. 287-308:

⁹ Տե՛ս **Khachig Tölölyan**, *The Armenian Diaspora and the Karabagh Conflict since 1988, Diasporas in Conflict: Peace-makers or Peace-wreckers?* Edited by Hazel Smith and Paul Staris, Tokyo. New York. Paris, 2007, p. 111.

Նոր հազարամյակն իր հետ բերում է նոր ընկալումներ և նոր չափանիշներ: Անատոլիայի բազմազգ մշակութային ավանդույթների՝ արևմտահայերի «նոստալգիկ» զգացողությունների և ազգային ինքնության ցուցանիշները լուսաբանող խնդիրները սկսել են վերանայվել և գնահատվել նաև տվյալ տարածքում ապրող ժողովուրդների երաժշտական ավանդույթների դիրքերից: Էլիոտ Բեյթսի «Երաժշտությունը Թուրքիայում» աշխատությունը նոր փուլ է նշանավորում երաժշտական թուրքագիտության մեջ՝ առաջադրելով «Անատոլիայի երաժշտական ավանդույթ» հասկացությունը վերարժևորող և մեկնաբանող դրույթներ, որոնք կարևոր փաստարկներ են մերձավորարևելյան երաժշտական խառնարանում հայ արվեստի նշանակությունը գիտակցելու առումով¹⁰: Հետազոտական աշխատանքները հավաստում են, որ բազմաթիվ երգեր, որոնք կատարվել են հայերեն, քրդերեն և այլ լեզուներով, թարգմանվել են թուրքերենի, հետո միայն ձայնագրվել, տարածվել թուրքերենով, սակայն տվյալ ժողովրդի երաժշտական կենցաղում շարունակել են հնչել նաև իրենց մայրենի լեզվով:

Նման վկայություններն ու փաստերը, գիտակցված և մասամբ արձարժված հայ երաժշտագիտության մեջ¹¹, հիմք են տալիս քննության առնել «Թուրքական երգեր» խորագրի ներքո XIX-XX դարերում ձայնագրված ու հրատարակված ժողովածուներում ներկայացված նմուշների ազգային պատկանելության հարցը՝ հայ երաժշտության հետ ունեցած առնչությունների կամ երաժշտական «հայկականության» համատեքստում:

Հպանցիկ ներկայացվող ժողովածուներից ամեն մեկը յուրովի արձագանքում է հայ Սփյուռքի մասնագետների հետազոտություններում հնչող ազգային ինքնության խնդիրներին, որպես երաժշտական վկայություն: Դրանք են՝ Օտտո Աբրահամի և Էրիկ Ֆոն Հորնբոստելի «Թուրքական մեղեդիներ», Կոմիտասի «Արևելյան թրքական եղանակներ» և Բելա Բարտոկի Թուրքական ժողովրդական երաժշտություն Փոքր Ասիայից» հավաքածուները: Երեք էթնոերաժշտագետների գրառած թուրքերեն լեզվով կատարվող երգերի ժողովածուներն իրենց տեսակի մեջ եզակի նյութ են հայ-թուրքական երաժշտական փոխառնչությունների առանձնահատուկ բնույթը պատկերացնելու առումով: Թե՛ Կոմիտասի, թե՛ Հորնբոստելի բանասացները հայեր են եղել (մեկ-երկուսի բացառությամբ): Ժողովածուների հանգամանալից

¹⁰ Elliot Bates, *Music in Turkey*, New York, Oxford, 2011.

¹¹ Տե՛ս **Լ Երնջալյան**, *Աշուղական սիրավեսը մերձավորարևելյան երաժշտական փոխառնչությունների համարեքստում*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009; Հայ-թուրքական երաժշտական կապերի օրինակներից, *Հայ արվեստի հարցեր* 3, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 61-70:

ուսումնասիրության ու համեմատական քննության խնդիրները չեն տեղավորվում տվյալ հոդվածի շրջանակներում: Սակայն նույնիսկ ընդհանուր ծանոթացումը երգերի հիմքում ընկած ձայնակարգերի, տիպական ուրվագծերի դարձվածքների, սկզբնական ինտերվալային թռիչքների և մեղեդային գծերի վարընթաց ելևէջումների հետ բավարար է դրանց զգալի մասը հարաբերելու նաև հայկական ժողովրդական, աշուղական և քաղաքային երգարվեստի համապատասխան նմուշներում դիտելի հատկանիշներին:

Կոմիտասն իր հայրենի քաղաք Քյոթահիայում գրառած երգերը վերնագրել է «Արևելյան-թրքական եղանակներ» և ինքնակենսագրականում նշել է, որ իր «ազգայրոհմն ի բնե ձայնեղ է» եղել, և իր ծնողների՝ թուրքերեն լեզվով ու եղանակներով հորինած երգերը քաղաքի ծերերը մեծ հիացմունքով են երգել¹²:

Հարազատների ու ազգականների երգածից նոր հայկական ձայնագրության՝ Համբարձում Լիմոնջյանի ստեղծած նոտագրության համակարգով գրառած 69 երգ պարունակող այս ժողովածուն Կոմիտասի երաժշտական ժառանգության լավագույն գիտակ Ռոբերտ Աթայանի ճշգրիտ բնութագրմամբ՝ «Թուրքիայի հայաբնակ թրքախոս գավառական քաղաքի երաժշտական կենցաղում առկա փոխադարձ ներթափանցումների արտացոլումն է»¹³: Այն արևելյան երաժշտությանը բնորոշ ձայնակարգային մտածողությամբ ծավալվող մեղեդիների հարուստ հավաքածու է՝ իրենց համապատասխան մակամների անվանումներով, ուր տեղ են գտել և՛ թուրքական, և՛ հայկական, և թե՛ եվրոպական երաժշտությունից ներթափանցած զանազան երևույթներ՝ բնորոշ քաղաքային երգարվեստին¹⁴:

Հասկանալի է, որ Օսմանյան կայսրության մշակութային-քաղաքական պայմաններում հարկադրաբար գործածվող թուրքերենով երգվող արևելյան ավանդական երգարվեստի այս նմուշները Կոմիտասը չէր կարող այլ կերպ անվանել, քան «թուրքական», թեկուզ ելնելով քաղաքային երգարվեստին տրված իր բնութագրերից: Հետամուտ իր գիտական ու ստեղծագործական խնդիրներին, հավատարիմ ազգային մաքուր ոճի անաղարտ պահպանման նպատակին, գործնականում նա առաջնորդվում էր իր մշակած համեմատական երաժշտագիտական սկզբունքներով՝ գրառելով ու կարևորելով թե՛ աշուղական,

¹² Տե՛ս Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 14, խմբ.՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, նախաբան, էջ 19:

¹³ Նույն տեղում, էջ 22:

¹⁴ Նշելի է նաև, որ Կոմիտասի երկերի 14-րդ հատորում զետեղված են երկու այլ թուրքալեզու, «սակայն բացառապես հայ երգարվեստը» ներկայացնող «Բինգյուլ» և «Քյոռոլի» երգերը: «Քյոռոլի» հերոսական ասքի ծագումնաբանության և հայկական պատումների մասին տե՛ս Լ Երնջակյան, Քյոռոլին և հայ-թուրքական երաժշտական աղերսները, *Հայ արվեստի հարցեր 1*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, էջ 116-127:

թե՛ քաղաքային, թե՛ մերձավորարևելյան երաժշտարվեստում կայունացած ու լայնորեն կենցաղավարող հեղինակային ու անհեղինակ մոնոդիկ նմուշները: Պատահական չէ, որ Կոմիտասի լայնախոհ և իրավացի հարցադրումները մշակույթների փոխազդեցության և ընդհանուր հատկանիշների մասին հաճախ միակողմանի մեկնաբանությամբ են մեջբերվում հայ երաժշտության հարցերը շոշափող օտարալեզու որոշ հետազոտություններում¹⁵:

Օտտո Աբրահամի և Էրիկ Ֆոն Հորնբոստելի 1904 թ. հրատարակած «Թուրքական մեղեդիներ» ժողովածուն մեզ հետաքրքրող խնդրի ամենաբնութագրական երաժշտական իլյուստրացիաներից է¹⁶: Դրանում ընդգրկված 20 մեղեդիներից 19-ի կատարողը 12 տարեկան հայ տղա է Այնթափից՝ Ավետիս օղլու Ավետիսը: Մնացած մեկ երգը ձայնագրվել է 21-ամյա մարաշցի մահմեդական Ալիի երգածից: Ընդ որում, այդ մեկ երգի տարբերակն առկա է նաև Ավետիսի կատարումներում: Գերմանական դպրոցի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում են ինտերվալային հարաբերությունները, տարբեր երգերում դրանց կրկնության դիրքերը, տարբերակված ինտերվալների դեպքում՝ ցենտային ցուցիչների, տոների, կիսատոների ու քառորդ տոների հաշվարկներն ու դրանց համապատասխան աղյուսակները կազմելու մեթոդական սկզբունքները: Առավել ուշագրավ են երաժշտատեսական բնույթի դիտարկումները՝ մեղեդիների ինտերվալային հիմքի համընկնումը հին արաբա-պարսկական երաժշտական համակարգի հետ, եռատոների, սեպտիմային և օկտավային թռիչքների բացակայությունը, սահուն մեղեդիական դարձվածքների ու սկզբնական կվարտային թռիչքների գերակշիռ ներկայությունը:

Կարևոր նկատառումներից է այդ երգերում կիրառված զուսպ մելիզմատիկան՝ տեքստի եղանակավորման ելևէջային դարձվածքների տարբերակված կրկնություններում և փոփոխական չափի պայմաններում, որով դրանք տարբերվում են հեղինակներին ծանոթ այլ արևելյան մեղեդիներից: Ասերգային, հանկարծաբանական ոճի մեղեդիներն առանձնանում են իրենց մեկամաղձոտ բնույթով: Առանձնապես աչքի է զարնում երգերի տաղաչափական կառուցվածքի անկատարությունը, երաժշտական ու խոսքային տեքստերի գրեթե բացարձակ անհամապատասխանությունը: Հավելենք նաև, որ Ավետիսի կատարած երգերի ձայնակարգերի (միքսոլիդիական, փոյուզիական, էոլական) և դրանցում ծավալվող տիպական դիթամեղեդային դարձվածքների

¹⁵ **Լ. Երնջակյան**, Հայ երաժշտարվեստի մեկնությունները օտար աղբյուրներում, *Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարդասիրավերները*, հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի գեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 385-388:

¹⁶ Phonographierte Türkische Melodien von O. Abraham und E. von Hornbostel, *Zeitschrift für Ethnologie*, 36, 1904.

ուրվագծերն ու տարբերակման սկզբունքներն իրենց անմիջական զուգահեռներն ունեն Միհրան Թումանյանի «Հայրենի երգ ու բան» հատորներում և սերտորեն աղերսվում են Արևմտյան Հայաստանի երաժշտական բանահյուսության ու քաղաքային ֆոլկլորի երաժշտահուլական ու լեզվաճական ոլորտներին¹⁷:

Նեղինակների մոտ որոշակի տարակուսանք առաջացնող հարցերը՝ երաժշտաբանաստեղծական կառույցի բաղադրիչների անկախության կամ շեշտադրական անհամապատասխանությունների, երաժշտական ելևէջի անսովոր երանգների վերաբերյալ, առավել մեծ վերապահումներով շարադրված են Բելա Բարտոկի «Թուրքական ժողովրդական երաժշտություն Փոքր Ասիայից» ժողովածուի առաջաբանում, որ անվանի կոմպոզիտորի վերջին էթներաժշտագիտական աշխատությունն է¹⁸: Թուրքական կառավարության որոշումով 1936 թ. Բարտոկը Թուրքիա էր հրավիրվել ժողովրդական երաժշտության հավաքչական աշխատանքներն իրականացնելու և բնագավառի ուսումնասիրությունները խթանելու առաքելությամբ: Կոմպոզիտորին ուղեկցողների և գիտարշավային աշխատանքների մասնակիցների թվում է եղել ժողովրդական կուսակցության անդամ, կոմպոզիտոր Ադնան Սայգունը, որի հետ հետագայում Բարտոկի հարաբերություններն անհայտ պատճառներով խզվել են: Ձայնագրությունները կատարվել են Ադանայի վիլայեթի տարբեր գյուղերում, Սեբաստիայի Վարթան գյուղում, Անկարայում, Ուրֆայում:

Այս արժեքավոր ժողովածուի ընդհանուր բնութագրին և առաջաբան հոդվածում տեղ գտած թուրքամետ գաղափարներին, վիճելի փաստարկներին ու եզրահանգումներին, ինչպես նաև Բարտոկի բնորոշմամբ «կասկածելի ծագում ունեցող» երգերի քննությանն անդրադարձել ենք մեր մի շարք հրապարակումներում¹⁹:

Ասենք միայն, որ Բարտոկի համար տարօրինակ, ընդհուպ հանելուկային թվացող մի շարք երևույթներ բացատրելի են այդ երգերից շատերի ազգային-ժողովրդական հիմքերի այլ՝ Բարտոկի կողմից երբևէ չհիշատակված, հայկական ակունքներով: Փորձառու ֆոլկլորագետի զարմանքն են հարուցել իրենց ծննդավայրն ու ծագումը չհիշող անզրագետ բանասացներից շատերի կատարած երգերի բանաստեղծական ու երաժշտաարտահայտչական հատկանիշների ինքնատիպությունն ու ավարտվածությունը, գրական արտահայտություններն ու աղավաղված, անհասկանալի «թուրքերեն» բառերը,

¹⁷ Մ. Թումանյան, *Հայրենի երգ ու բան* 4, խմբ.՝ Զ. Թագակչյան, Երևան, «Ձանգակ-97», 2005:

¹⁸ Bela Bartók, *Turkish Folk Music from Asia Minor*, Princeton University Press, 1976.

¹⁹ Տիգրան Լ. Երնջակյան, Նորահայտ էջեր հայ-թուրքական երաժշտական աղերսների պատմությունից, *Հայ արվեստի հարցեր* 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 56-67:

գործիքային հանկարծաբանության սկզբունքները, խոսքերի ու մեղեդիների շեշտադրական անհամապատասխանությունը, լրացուցիչ վանկերով դրանք կանոնավորելու միտումը, տեքստերի ալեգորիկ շերտի և ինտերպոլյացիաների անբնական առատությունը և այլն: Եթե բոլոր տարակուսանքներով և չբացահայտված խնդիրներով հանդերձ Բարտոկը «Թուրքական ժողովրդական մեղեդիները» համեմատել է հունգարականի հետ՝ դրանց միջև եղած ընդհանրությունների դիտակետից, ապա անհամեմատ արդյունավետ է այդ երգերի լուսաբանումը հայկական մոնոդիայի տարբեր ժանրային դրսևորումների համատեքստում: Ժողովածուի մեղեդիների որոշակի խմբի ուսումնասիրությունն ի հայտ է բերում դրանց ծագումնաբանական ընդհանրությունները հայ ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստի ձայնակարգային-ելևէջային ու կառուցվածքային հատկանիշների հետ:

Թուրքական երաժշտությանը վերաբերող նոտային կամ գիտական հին ու նոր հրապարակումները հետազոտելիս մշտապես առնչվում ենք հայ ավանդական երաժշտարվեստի միտումնավոր կամ ակամա անտեսման իրողությանը: Պատմաքաղաքական հանգամանքներով թելադրված հայ-թուրքական հարաբերությունները երբևէ բարենպաստ պայմաններ չեն ստեղծել մշակութային կապերի իրական պատկերը ներկայացնելու և, առանձնապես, թուրքական երաժշտության ձևավորման ընթացքում նաև հայ երաժշտական ավանդույթն ու հայ երաժիշտ-երգահանների դերն ըստ հարկի կարևորելու համար:

«Թուրքական երգեր» խորագիրը կրող ժողովածուներում զետեղված նյութն ու դրա մեկնությունները տարաբնույթ նպատակներ ու հիմնավորումներ ունեն: XIX դարի վերջի և XX դարասկզբի «ազգային երաժշտական մոդելը»՝ ստեղծված ազգերի ինքնաճանաչման տրամաբանությամբ, խարսխված էր ժողովրդական երգի կանոնացման ու ներկայացման խնդիրներին և հնարավորություն էր տալիս մեծ ու փոքր, քաղաքական անկախություն ունեցող կամ չունեցող ազգերին հնչեցնելու իրենց ձայնը, և այդ ձայնը պետք է հնչեր ազգային լեզվով: Այդ մոդելով է առաջնորդվել Կոմիտասն իր գիտահավաքական գործունեության առաջնային հարցերում: Արևելյան-թրքական ժողովածուն իր ընդհանուր արևելյան ընդգրկումով ազգային-լեզվական և հոգևոր շունչ չէր հավելում նրա գործին: Հորնթոստելի պարագայում հասկանալի է Արևմուտքի էթնոերաժշտագիտության հիմնադիրներից մեկի մասնագիտական հետաքրքրությունը ոչարևմտյան՝ ի շարս աֆրիկյան և ասիական այլ մշակույթների, նաև թուրքականի նկատմամբ:

Պետական պատվերով կատարած Բարտոկի աշխատությունը միտված էր թուրքական նոր ինքնության ներկայացմանը: Ցավոք, այն իր ապակողմնորոշող դրոյթներով դարձել է հայ ավանդական և կոմպոզիտորական արվեստին առնչվող ուսումնասիրությունների պատմատեսական ուղեցույցը:

Անատոլիայի երաժշտական ավանդույթների մասնատեր արևմտահայերի կամ սփյուռքահայերի պատմական հիշողության մեջ պահպանված և խնամքով սերունդներին փոխանցված մեղեդիների ու պարեղանակների հարուստ գանձարանի նմուշները՝ թեկուզ օտարալեզու, փոխակերպված կամ աղճատված, ազգային մշակութային ժառանգության պատմական բաղադրիչներից են: Դրանց հայտնաբերումն ու լուսաբանումը նոր հորիզոններ են բացահայտում էթնոերաժշտագիտության ոլորտում վերաարդիականացած մշակութային ինքնության և միջմշակութային իրողությունների քննության համար:

Ազգային երաժշտական ինքնության հարատևող և մշտական արժեքների կոմիտասյան հարացույցը չի ընդգրկում, սակայն չի բացառում սեմանտիկ խորհրդանշական լիցքեր պարունակող համաարևելյան գեղագիտական արժեքների կարևորումը հայ ավանդական երգարվեստի ընդհանուր համատեքստում:

Ամփոփում

Հոգվածը շոշափում է ազգային երաժշտական ինքնության կոմիտասյան պատկերացումների հիմքերն իր ժամանակի համատեքստում: Պատմաքաղաքական հանգամանքներով և ազգային մշակույթի ինքնաճանաչման խնդիրներով պայմանավորված՝ Կոմիտասի հակասական դիրքորոշումը աշուղական երգարվեստի, արևելյան ավանդական եղանակների, ինչպես նաև թուրքալեզու երգերի վերաբերյալ, ձևավորել է միմյանց հակադրվող՝ «արևելյան» և «հայկական» ըմբռնումներն ու «օտար» ժանրերին տրվող բնութագրերը: Խնդրի քննությունը և հետազոտական ելակետը չեն ենթադրում Կոմիտասի արտահայտած մտքերի կամ տարարժեք գնահատականների քննադատությունը: Հայ երաժշտության մեծ երախտավորի կողմնորոշումը՝ ուղղված ազգային երաժշտական ինքնության եզակիության ապացուցմանը, չի բացառում այլ գիտական տեսակետների կարևորումը: «Թուրքական երգեր» կամ «Թուրքական մեղեդիներ» խորագրի ներքո XIX-XX դարերում ձայնագրված և հրատարակված մի շարք երաժշտական հավաքածուների ուսումնասիրությունն առաջադրում է մշակութաբանական կարգի հարցերի հստակեցման և երաժշտական «հայկականության» սահմանների ճշգրտման անհրաժեշտությունը:

Բանալի բառեր՝ ազգային ինքնություն, սփյուռք, ֆոլկլոր, արևելյան եղանակներ

КОМИТАС И НАЦИОНАЛЬНАЯ МУЗЫКАЛЬНАЯ ИДЕНТИЧНОСТЬ

Резюме

*Лилит Ернджакян (Армения) доктор
искусствоведения, профессор
заслуженный деятель искусств РА
Институт искусств НАН РА*

В данной статье рассматриваются основы комитасовских представлений о национальной музыкальной идентичности в контексте его времени. В связи с историко-политическими обстоятельствами и проблемами самопознания национальной культуры, неоднозначная позиция Комитаса по отношению к ашугской музыке, традиционным восточным мелодиям, а также туркоязычным песням сформировала противоположные понятия “восточного” и “армянского”, а также привела к возникновению ряда характеристик, определяющих “чужеродные” жанры. Исходная точка нашего исследования и рассматриваемая нами проблема не предполагают критику комитасовской точки зрения или различных оценок. Позиция выдающегося деятеля армянской музыки, направленная к установлению уникальности армянской музыкальной идентичности, не исключает существование иных научных аспектов.

Изучение целого ряда сборников, записанных и опубликованных в XIX-XX вв. под заглавием “Турецкие песни” или “Турецкие мелодии” выдвигает необходимость разъяснения ряда культурологических проблем и конкретизации в пределах музыкальной “армянскости”.

Ключевые слова: национальная идентичность, диаспора, фольклор, восточные мелодии.

KOMITAS AND NATIONAL MUSICAL IDENTITY

Abstract

*Dr. Prof. Lilit Yernjakyan (Armenia)
Honored Worker of Art of RA
Institute of Arts of NAS RA*

This paper addresses the criteria according to which the outstanding Armenian musician Komitas defined national musical identity and sheds light on the contradictory statements more often than not drawn from historical-political circumstances and the cultural setting. Komitas's views on *ashugh* art, oriental melodies and the songs sung in Turkish, generated the contradictory concepts of “Oriental” and “Armenian” music and even led to the identification of the distinguishing features of “foreign” genres.

Komitas's evaluations and statements about the unique features of Armenian national music claimed to be free of any “foreign” element, have revealed that those statements were not meant to undermine the importance of other approaches. The examination of various musical recordings produced in the XIX-XX centuries under the title “Turkish Songs” or “Turkish Melodies” makes it necessary to offer new criteria for the definition of culturological issues in general and the identification of the musical “Armenianness”, in particular.

Key words: national identity, diaspora, folk music, oriental melodies.

ՀՈՌՈՎԵԼԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒՄԸ. ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հռիփսիմե Պիկիչյան (Հայաստան)
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Բազմավաստակ երաժշտագետ Ռ. Աթայանն իրավացիորեն շեշտում է, որ «*հայ գեղջկական երկրագործական երգերի եղանակների հայտնաբերման պատիվն անվերապահորեն պատկանում է Կոմիտասին*»: Նրա հավաստմամբ՝ «*հայտնաբերումն այս դեպքում «բնական» պայմաններում հնչող արքայասանություն-երգեցողությունը որպես «երգ» լսել-նկատելն է, դրա գեղարվեստական արժեքը զգալ-հասկանալը, ապա նաև երգերը հավաքել, գրի առնելը*»¹: Ռ. Աթայանը նկատում է, որ, ամենայն հավանականությամբ, Կոմիտասն այս գութաներգը պիտի գրառած լիներ 1899 թ. աշնանից մինչև 1901 թ., քանի որ 1902 թ. մարտին Գևորգյան ճեմարանում կազմակերպված համերգի ժամանակ հնչեցրել է գութաներգի խմբերգային մշակումը²: Եվ ահա, գրեթե մեկ դար անց, 1991 թ. Լոռվա մարզում կազմակերպված գիտարշավների ընթացքում մենք՝ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի աշխատակիցներս, փորձում էինք ճշտել, թե որքանով է ժողովրդի հիշողության մեջ պահպանվել Կոմիտասի գրանցած գութաներգի տարբերակը: Հետաքրքիր էր, թե երկրագործական մշակույթում տեղի ունեցող զարգացումներն ու ժամանակն ինչ խմբագրումներ էին կատարել հոռովելի գործառույթի ու կատարման կերպի մեջ:

¹ **Կոմիտաս, Երկերի ժողովածու**, հատ. 10, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռոբերտ Աթայանը, Երևան, «Գիտություն» հրատ., 2000, էջ 13:

² 1914 թ. Կոմիտասը Միջազգային երաժշտական ընկերության համաժողովին ներկայացրել է զեկուցում Լոռվա գութաներգի մասին: Ուսումնասիրությունն առաջին անգամ հրատարակվել է «Նաասարդ» ամսագրում՝ 1914 թ.: ԳԱԹ-ում պահպանվում է հոդվածի ֆրանսերեն տարբերակը: **Կոմիտասի ֆոնդ 681: Կոմիտաս վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ**, գիրք Բ, աշխատասիրութեամբ Գուրգեն Գասպարեանի եւ Մարինե Մուշեղեանի, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2007, էջ 474: Տե՛ս հոդվածը: **Կոմիտաս վարդապետ**, Լոռու գութաներգը Վարդաբլուր գիղի ոճով, *նույն տեղում*, էջ 92-131:

Հայտնի է, որ գիտարշավների ժամանակ հաճախ դժվարություններ են հանդիպում մեր օրերում կենցաղից դուրս մղված տարբեր աշխատանքային երգեր գրանցելիս: Պատճառն այն է, որ գյուղական ավանդական աշխատանքների որոշ տեսակների փոփոխմանը հետևում է համապատասխան երաժշտախոսքային շերտի մոռացումը: Կարևոր է նաև այն, որ գյուղացին երբեք երկրագործական գործընթացում ստեղծվող երաժշտապոետիկ տեքստը չի ընկալում իբրև առանձին երգ և հրաժարվում է կատարելուց, քանի դեռ ապահովված չեն անհրաժեշտ պայմանները՝ նպատակը, վայրը, ժամանակը, գործողությունը և մասնակիցները: Այդ խնդրին անդրադարձել է նաև Ռ. Աթայանը և, հղելով Կոմիտասին, իրավացիորեն նկատել, որ գութաներգը կամ այլ կերպ՝ հոռովելը, իսկապես ամբողջացած երգ չէ այդ անվան բուն երաժշտաձևային հասկացությամբ, այլ՝ վարի ընթացքում աշխատանքի բոլոր պահերի փոխգործակցությունից գոյացող խոսքային-մեղեդիական մի հանպատրաստից ստեղծաբանություն³: Ըստ այդմ էլ՝ ոչ բնական միջավայրում դաշտային նյութեր գրանցելիս բանասացը կարող է ամբողջությամբ չներկայացնել վարի գործընթացում հնչող երաժշտախոսքային տեքստը, այլ միայն հիշել դրա առանձին դրվագները, որի պատճառով խաթարվում է երևույթի ամբողջականությունը՝ տարակարծությունների առիթ դառնալով: Հաճախ բանասացի հիշողությամբ վերականգնված երգային տարբեր հատվածները թյուրիմացաբար գրանցվում և հրատարակվում են իբրև առանձին նմուշներ, կամ խախտվում է հատվածների հերթականությունը: Բացի այս, մասնագիտական վերլուծության ընթացքում ուշադրությունը չշեղելու միտումով, հաճախ երաժշտական ստեղծագործությունը պայմանականորեն մասնատվում է, առանձնացվում կենցաղավարման բուն միջավայրից:

Մեր գիտարշավի ընթացքում գրանցված բազմաթիվ տեղեկություններից և ձայնագրյալ նմուշներից կարելի է փաստել, որ գութանավարի արարողակարգը նկարագրելիս տարեց բանասացները ձգտում էին ճշգրիտ ներկայացնել մասնակիցներից յուրաքանչյուրի վարքը, գործունեությունը, հընթացս ասվող խոսքային ու երաժշտական տեքստերն ու մեկնաբանում դրանք: Ալավերդի քաղաքի, Սանահին, Հազվի, Աքրի, Ակներ, Մղարթ գյուղերի բանասացների հիշողությամբ վերականգնված գութանավարի գործընթացի

³ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 10, նույն տեղում:

նկարագրություններն ու հոռովելի հատվածային կատարումները հավաստում էին Երաժշտապետի գրանցումներն⁴ ու փաստում մշակույթի ժառանգական կապի կենսունակությունը: Ուշագրավ է, որ գրառված տեղեկությունների ճշման նպատակով անցկացվող խմբային հարցումների ժամանակ բանասացները, միմյանց լրացնելով, փորձում էին վերհիշել գութանավարի ամբողջական գործընթացը՝ ներառելով մասնակիցներին, աշխատանքային, վարքագծային, խոսքային ու երաժշտական տեքստերը:

Կանոնակարգելով և ի մի բերելով գիտարշավների ընթացքում գրանցված ազգաբանական նյութերն ու բանասացների վկայությունները ձայնագրյալ հոռովելների հետ և համեմատելով մասնագիտական գրականության տվյալների և Արվեստի ինստիտուտի ձայնադարանային ֆոնդի շուրջ 70 երաժշտական օրինակների հետ, կարող ենք եզրահանգել, որ՝

✓ Ըստ ավանդույթի՝ հողը վարելու ընթացքում հոռովել կանչելը պարտադիր էր՝ անկախ կատարողի ձայնային-երաժշտական տվյալներից: Հիշենք, որ այս երաժշտական կառույցը ոչ մի գյուղում չի կոչվել երգ, այլ՝ կանչ կամ խոսք: Այստեղից էլ՝ հոռովելը ոչ թե երգում են, այլ կանչում, ընդ որում՝ «ասում են ձենով»:

✓ Երաժշտախոսքային տեքստով ձևակերպված հոռովելը որոշարկված գործառույթ ուներ և համընթաց էր վարի գործընթացին: Այն պայմանականորեն կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայով՝ նախապատրաստում, սկիզբ, աղոթք, օրհնություն, փառաբանություն, աշխատանքային գործընթաց, հանգիստ, աշխատանքի շարունակություն, ավարտ, գոհաբանություն, փառաբանություն: Ըստ այդմ՝ գութանավարի գործընթացից բխող երաժշտախոսքային տեքստի՝ Կոմիտասի ձևակերպմամբ՝ «բուն

⁴ Կոմիտասի երկերի ժողովածուի հատորներում տեղ է գտել տարբեր բնակավայրերից գրանցված հոռովելի 26 օրինակ, որոնցից Լոռվա գութաներգն առանձնանում է իբրև ամբողջական ու կատարյալ կառույց: Ըստ Ռ. Աթայանի՝ նախկին ճեմարանական Սիմակ Սահակյանի հավաստմամբ, երգի խոսքային տեքստի լրացման հարցում Կոմիտասին օգնել են Վարդաբլուր գյուղից ճեմարանի նախկին ուսուցիչ Ավետիք Պողոսյանն ու ինքը: Ըստ երևույթին, Կոմիտասը բանաստեղծական տեքստն ամբողջացնելիս նկատի է ունեցել նաև հրատարակված ժողովածուներում եղած համապատասխան հատվածները: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատարակած «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 4-րդ գիրքը նվիրված է հայ երկրագործի աշխատանքային երգերին, որտեղ ներառված է տարբեր հրատարակություններում և Արվեստի ինստիտուտի ձայնադարանում պահվող հոռովելների 120 օրինակ (կազմող՝ Զ. Թագակչյան):

բանաստեղծության նյութն է՝ աղոթք, գոհություն, հավաքալիք, սովորույթ, աշխատանք, հրաման, խրախույս, գուրգուրանք, զայրույթ, գոհունակություն, հացն ու բնություն»⁵:

✓ Թե՛ երաժշտախոսքային տեքստում, թե՛ աշխատանքային ողջ գործընթացում հիշյալ փուլերը համաչափ չեն և կարող են տարբեր կերպ դրսևորվել: Հատկապես սկզբի և վերջնամասի հատվածները կարող են արտահայտվել անգամ մեկ երաժշտական դարձվածով՝ եթե չեն գրանցվում աշխատանքային գործընթացի պայմաններում:

✓ Գութանավարի ընթացքում հոռովել կանչելը դիտարկվում էր իբրև ամբողջական արարողություն, որը կանոնակարգված էր ժամանակի, տարածության, դերակատարների ու նրանց վարքագծի, համապատասխանաբար՝ նաև երաժշտախոսքային տեքստերի մակարդակներում:

✓ Բանասացներից գրանցված նյութի վերականգնմամբ՝ կատարման ողջ ընթացքն ուներ ավանդաբար հաստատված և խիստ որոշարկված դերաբաշխում: Հոռովել կանչողը գութանավարի ղեկավարն էր՝ մաճկալը: Նա էր ուղղություն տալիս խոփին, և նրա ղեկավարության ու հսկողության տակ էին շարժվում գութանի կամ արորի լծերն իրենց վարիչ հոտաղներով⁶: Ավանդույթի համաձայն՝ նա միջին տարիքի, առողջ, ամուսնացած և սերունդ ունեցող տղամարդ էր: Հենց նրան էր տրված հոռովել կանչելու պատիվը: Վարին մասնակցող չամուսնացած երիտասարդ հոտաղներին իրավունք էր վերապահված սուկ ձայնակցել լծկաններին ուղղված կանչ-հորդորների, բացականչությունների, երգվող տեքստի կրկնակային հատվածների ու կրկներգերի ժամանակ (հմտ. մենակատար-խումբ կատարման կերպի հետ):

✓ Յուրաքանչյուր անգամ հոռովելն անհրաժեշտ էր սկսել Արարչին ու արևին ծոնված ասերգային աղոթք-փառաբանությամբ, ապա պիտի հնչեր հողը հաջողությամբ վարելուն նպատակամղված բուն տեքստը, նաև բարի ցանք ու հունձք ակնկալող հմայական խոսքերը՝ մաճկալի մենակատարմամբ: Հիշյալը կատարվում էր պարբերական-շարունակական սկզբունքով:

✓ Քանի որ հոռովելը վարի գործողությամբ էր պայմանավորվում, նրա կատարման ժամանակը չէր կարող սահմանափակվել բուն երգ-կառույցի

⁵ **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 10, էջ 168:

⁶ Հայ շինականի աշխատանքային երգերը, կազմեց և խմբագրեց **Ա. Ղանալանյան**, Երևան, Հայպետհրատ, 1937, էջ 27-28:

շրջանակներում, այլ արտաձվում էր ընթացիկ գործողությունից: Ուստի, բնական էր օրական վարի ընթացքում քանիցս հոռովել կանչելը, ավելի ստույգ՝ հոռովել երևույթի տարբեր մասերը հաջորդաբար ասելը: Պայմանավորված լինելով մեկը մյուսով՝ ընդհանուր շղթայի մեջ մասերից յուրաքանչյուրը կարող էր ընկալվել իբրև ավարտուն միավոր: Դրանք կարող էին բնորոշվել յուրովի մեղեդային, բանաստեղծական հենքով ու ծավալով, որը թելադրվում էր աշխատանքային կոնկրետ գործողությամբ, մաճկալի ֆիզիկական ու հոգևոր վիճակներով և երաժշտապոետիկ օժտվածությամբ:

✓ Նյութի քննությունից կարելի է ասել, որ հոռովելի թե՛ բանաստեղծական, թե՛ մեղեդային տեքստերն ազատ-հանկարծաբանական կառույց ունեն և բնույթով հիմնականում ասերգային են: Այդուհանդերձ, դրանցից յուրաքանչյուրն ավանդույթով ժառանգված որոշակի բանաձևային միջուկ ունի, որի շուրջն էլ կազմակերպվում, զարգանում է հանկարծաբանությունը: Հոռովելների խոսքային կառույցներն ունեն ինչպես ազատ, այնպես էլ չափաժող կերտվածք:

✓ Հոռովելի առաջին իսկ ձայնարկությունները, որ մեծավ մասամբ հնչյունային բարձր ոլորտում են ծնվում, սոսկ պայմանական սկիզբն են: Դրանք վարի նախապատրաստական փուլի արդեն սկսված, բայց տակավին չփաստագրված՝ չլսվող հնչողությունից լսելի դարձած տեքստի կիզակետում միայն երգի վերաճած հատվածներն են: Նման մտածողությամբ կարող են մեկնաբանվել նաև հաճախակի հանդիպող բարձր ձայնոլորտում անսպասելի ավարտվող զուտ խոսքային ձայնարկությունները: Այսպիսի անսպասելի, ոչ տոնիկային հիմքով ավարտը բնորոշ է ծիսական երաժշտական բանահյուսական ժանրերին, քանզի ներքին տրամաբանությամբ, այդ ստեղծագործությունները շարունակելի են, անվերջանալի՝ հավաստելով հավերժության խորհուրդը: Այսօրինակ «սկիզբն» ու «ավարտը» պարբերաբար կրկնվող փուլի առանձին մասերն են, քանի որ գրի առնողն «անվերջությունից» սոսկ մի հատված է փաստագրում: Հայսմ՝ գրանցված հոռովելների աշխատանքային երգ անվանումը պայմանական է, քանզի դրանք վարի արարողակարգի բաղկացուցիչ տարրն են, մասնագետի կողմից առանձնացված ու ժանրային շրջանակներում գետեղված:

✓ Պատահական չէ, որ դաշտային պայմաններում գրանցված գութանավարի գործընթացի տարբեր հատվածներն արտացոլող

երաժշտախոսքային բանահյուսական նյութերը կարող են խիստ տարբերվել միմյանցից թե՛ մեղեդային, թե՛ բանաստեղծական հենքով, մտածողությամբ, թեև միևնույն հարացուցային կմախքն ունեն. խոսքը տվյալ ազգագրական գոտուն բնորոշ երաժշտական լեզվի մասին չէ: Ավելացնենք, որ գրանցողը միշտ չէ, որ ամբողջական շրջափուլի ականատեսն է դառնում, այլ ավելի հաճախ՝ փաստագրում է ամբողջի առանձին հատվածները՝ սկիզբը, ընթացքը, ավարտը, կամ կենդանիների ուղղված կանչերն ու հորդորները: Այս առումով՝ Կոմիտասի գրանցած տարբերակը երևույթի խտանյութի վերածված ամբողջականությունն է:

✓ Երբեմն գութանավարի գործընթացից հեռացած և հիշողությամբ վերականգնելու փորձ անելիս բանասացը հոռովելի ընդհանուր տեքստից առանձնացնում է իր մտաբերած տողերը, դրանից մի քանիսը վերածում հիմնատողի, մյուսները՝ կրկնակի և երգում է՝ նմանեցնելով ավանդական երգերի դարձվածներին, այդ կերպ հոռովելի որևէ հատված փոխակերպելով երգի:

✓ Լոռվա հոռովելների ռիթմամեղեդային կերտվածքն ու արտահայտչականությունն, ըստ Ռ. Աթայանի և Զ. Թագակչյանի ուսումնասիրությունների, հատկապես համեմատելի են արցախյան տարբերակների հետ, որ հավանաբար ձևավորվել են Արցախից Լոռի բնակչության հոսքերի հետ:

Հոռովելի ծիսաառասպելաբանական սյուժեներից⁷ քննարկենք միայն հողի արգասավորմանն ուղղված արարողակարգը⁸:

Ժողովածուներում հրատարակված հոռովելների բանաստեղծական տեքստերը դիտարկելիս տարբեր հատվածներում կախման կետեր են նկատվում, որոնք հաճախ չեն կապվում նախորդ կամ հաջորդ նախադասությունների հետ: Պատահում են նաև աշխատանքային գործընթացի հետ ուղղակի առնչություն չունեցող՝ սեռական վարքագիծ ակնկալող

⁷ Գութանով հողը վարելն իբրև առասպելական վիշապամարտ. տե՛ս Ա. Թադևոսյան, Դարբինը հայոց ծիակարգում (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն, Երևան, «Գիտություն» հրատ., 2007: Aghasi Tadevosyan and Hamlet Petrosyan, The Blackmith. Armenian Folk Arts, Culture and Identity. Eds. L. Abrahamian, N. Sweezy. Bloomington and Indianapolis, 2001, pp. 207-217.

⁸ Տեքստի մանրամասն քննությանը և հոռովելի նկարագրությանը չենք անդրադառնա, քանի որ դրանք հրաշալի ներկայացված են և՛ Կոմիտասի, և՛ Վարդ Բրդյանի (Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972) աշխատանքներում: Կփորձենք դիտարկել միայն որոշ մանրամասներ, որոնք տարբեր պատճառներով առանձին ուշադրության չեն արժանացել:

արտահայտություններ, կնոջ մարմնի նկարագրություններ, երբեմն նաև անպարկեշտ՝ «հայհոյական» խոսքեր: Քննությունը ցույց է տալիս, որ հաճախ կցկտուր կամ հատուկենտ պահպանված այսօրինակ բառերն ու արտահայտությունները պատահական չեն, քանզի որոշակի նպատակ, հասցե, գործողության վարքագիծ, կատարման վայր ու ժամանակ ունեն: Դրանցից ամենատարածվածը երիտասարդ կնոջը համբուրելու, մոտակա բլուրները կամ ակոսները տանելու, հետը պառկելու, «միտքը ծնելու», «ճիժ վաստը կելու» մոտիվներն են, որոնք ակնառու են և՛ ուղղակի տողերից, և՛ ընկալվում են ենթատեքստից:

*Կույթան ինկեր արփի խոզան,
Առնեմ սիրողս, էլնեմ զօզան⁹... (Վան)*

*Գույթան թալե նախշուն բիար,
Գոհան էկավ մաճկըլի յար,
Մաճկալ, քու մաճը թող:
Կընա քու պագն առ¹⁰: (Վան)*

*Մաճկալ փեսավ հաց պիրողին,
Կանչեց իր խօրիկվարին,
Ձեռք պոնեմ, փամ գրողին,
Կերթամ խասնիմ իմ սիրողին¹¹: (Վան)*

Ակնարկներ կան գույթանավարի մասնակիցներին «հաց բերող» կանանց հայհոյելու (հըվհովել, քըրվել, ուշունց տալ) վերաբերյալ. «Քեֆ սիրող սև հարսները քանի քըրվես՝ հազ կենեն...»: Նկատենք, որ այսօրինակ արտահայտություններից հետո հաճախ կրկնվում են՝ «Ձորանաս, հոփաղ, զորանաս...», «Քեֆ էրո, հոփաղ, հո՛...արա հո՛...» տողերը: Առաջին հայացքից անհավանական է, որ հոռովելի ընթացքում կնոջ ու տղամարդու միջև սիրային հարաբերությունների ակնարկները կամ ուղղակի նկարագրություններն ուղղված են ոչ թե ընդհանուր առմամբ իգական սեռի կամ որևէ անորոշ ներկայացուցչի հասցեին, այլ վարին մասնակցող տղամարդկանց հետ

⁹ *Էմինեան ազգագրական ժողովածու* (այսուհետ՝ ԷԱԺ), հատ. 2, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 145:

¹⁰ *Հայ շինականի աշխատանքային երգերը*, էջ 70:

¹¹ ԷԱԺ, հատ. Ա, *Փշրանք Շիրակի ամբարներից*, հավաքեց Ա. Մխիթարեանց, Մոսկուա-Ալեքսանդրապոլ 1901, էջ 145:

արյունակցական կամ խնամհական կապեր ունեցող կանանց ու աղջիկներին: Դրանք առավելապես ներառում են մաճկալի կնոջ, վարող տղամարդկանցից որևէ մեկի *քենու, բաջու, խանբաջու, նախշուն հարսի, կարմրաթուշ աղջկա* կերպարները: Օրինակ՝ «*Մաճկալի սիրած հարսը համկալի խանբաջին ա*»¹²: Տեքստերում որոշարկվում է նաև, որ հարսը մաճկալի խարջն է, աղջիկը՝ հոտաղի կամ հորիկվորի: Այսու՝ տարբերակվում են ամուսնացած և չամուսնացած կանայք ու տղամարդիկ, և համապատասխանաբար տարբերակվում է նաև նրանց սիրային վարքագիծը:

Ականատեսների ու հոռովել կանչողների հավաստմամբ՝ ավանդույթի համաձայն, երգի բուն տեքստից զատ, ընդունված էր նաև մաճկալին և երկրագործներին կերակուր՝ հաց բերող հարս ու աղջիկների միջև փոխանակվող երկխոսությունը: Ըստ էության, այս ծիսական երկխոսությունը սեռական գործողության խոսքային փոխակերպում է, որ ընթանում է հարց ու պատասխանային եղանակով: Այն ասվում է և՛ ուղղակի, և՛ անուղղակի, թեև մեկմեկու խոսքը լսելը պարտադիր չէ: Այսպես, գիտարշավների ընթացքում քանիցս աշխատել ենք տարբեր սեռի բանասացների կարծիքն ու վերաբերմունքը ճշտել երևույթի նկատմամբ: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք չեն թաքցնում նման երկխոսության փաստը: Ըստ նրանց, երբ հաց բերող կինը կամ աղջիկը բավականաչափ հեռանում էր, սակայն դեռևս հողագործների տեսադաշտից չէր անհետացել, մաճկալը նայում էր նրա հետևից ու «դարով էր տալիս» (հայիոյել): Ու թեև տուն վերադարձող կինը չէր լսում ասվող փաստացի տեքստը, սակայն ընկալում էր խոսքի ընդհանուր հնչյունային արտահայտությունը: Ի տարբերություն նրա՝ մաճկալի կողմից իբրև անուղղակի հայիոյանք ձևակերպվող սեռական ցանկությունը պարզորոշ լսում էին վարի բոլոր մասնակիցները, որոնք էլ ձայնակցում էին՝ միանալով վերջին ձայնարկություններին (հմմտ. մենակատար-խումբ կատարման կերպի հետ): Նկատենք, որ հայոց կենցաղում ընդունված վարվելակարգի համաձայն՝ ազգակից կնոջ հանդեպ նման որևէ անհարգալից վերաբերմունք պատիժ, առնվազն ծեծկոտուք կամ արյունահեղություն պիտի ենթադրեր: Սակայն, բանասացների նկարագրած դեպքերի խաղաղ ընթացքից և հատկապես մաճկալին ձայնակցող տղամարդկանց վարքից պարզորոշ է, որ խոսքը ոչ թե

¹² Ե. Լալայան, Գողթան գավառ, *Ազգագրական հանդես*, գիրք 12, Թիֆլիս, 1904, էջ 69-70:

կենցաղային միջադեպի, այլ կարգաբերված *ծիսական հայիոյանքի* իրողության մասին է, որը կարելի է համադրել հայտնի ծիսական հայիոյանքի (էսխրոլոգիա) հետ: Ասվածը հավաստում է նաև դրան «արժանացած» կնոջ պահվածք-պատասխանը, որն, ըստ բանասացներից գրանցած մեր վավերագրումների՝ դրսևորման երկու տարբերակ ուներ: Հայիոյանքը «լած» կնոջ վարքը համահունչ է ժամանակին բնորոշ վարքագծային կանոններին. մի պահ կանգ է առնում, կարմրում է, ապա քթի տակ փնթփնթալով ու կիսաձայն «Տե՛ր Աստված, մեղա՛...» կանչելով հեռանում է՝ աստիճանաբար արագացնելով քայլերը: Երկրորդ տարբերակում հայիոյանքի «չարժանացած» կնոջ պատասխանը, զայրացկոտ ու վիրավորական է, որը Հայաստանի տարբեր շրջաններում ուղեկցվում է նույնակերպ բանաձևային առանցք ունեցող տեքստով.

Ալ գութան՛ն, ալ գութան՛ն, հոտաղ, մաճկալ՛ լա՛լ գութան՛¹³... (Լոռի)

*Գութան, գութան, ա՛լ գութան
Խոփո՛ք քարե-քար, գութան,
Եկան քովեղ անց կացան,
Հոտաղ, մաճկալ, լա՛լ կեցան՛¹⁴... (Ղարս)*

*Ալ գութան, հա՛, ա՛լ գութան,
Եզն ու գոմեշ, չա՛լ գութան,
Եկա, կըշտովդ անցկացա,
Հոտաղ, մաճկալ, լա՛լ գութան՛¹⁵... (Բորչալու)*

Բանասացների մեկնաբանությամբ՝ «լալ» բառը, բացի խոլ ու համր իմաստից, այստեղ ձեռք է բերում նաև առնականությունից զուրկ լինելու նշանակություն, այսինքն, թե «Ըղտեղ տղամարդ չկա» (հմտ. խոսք-գործ փոխակերպման հետ): Բոլոր տարբերակներում էլ երկխոսությունը համապատասխանում է հոռովելի ընդհանուր բանաստեղծական կառույցին, հաճախ հանգավորվում է: Բանասացները ձեռնպահ են մնում տղամարդու՝ մաճկալի խոսքը վերարտադրելուց և միայն պատմում են դրա մասին: Այն ընկալվում է իբրև. ա) աշխատանքից հոգնած երկրագործներին զվաճացնելու նպատակով արված կատակ՝ «շուլուխ», բ) կին տեսած տղամարդու բնական արձագանք ու վարքագիծ՝ «Դե տղամարդ ա, սե՛ր ա», գ) հացն ուշացնողների

¹³ Հ. Պիկիչյան, *Դաշտային ազգագրական նյութեր* (այսուհետ՝ ԴԱՆ), Լոռի, 1991թ., ձեռագիր:

¹⁴ Հայ շինականի աշխատանքային երգերը, էջ 94:

¹⁵ Նույն տեղում, էջ 63:

հանդեպ քաղցած մարդուն բնորոշ զայրացկոտ վարքագիծ (բայց չէ՞ որ ճաշ բերողները միշտ չեն ուշանում), դ) «Օրենք է, աղաթ է. ջուրը փանողին, հացը բերողին պըրփի դարով փան, որ լավ ընի: Որն էլ ռավել փըրփուց, դարով չի՛ փեր, ասեին՝ լավ չի անում...»¹⁶: Բուրբ տարբերակներում ընդգծվում է այդ «ուշունց փայլ», «հըրփովելու», «կեղփոփ խոսքի», «ամոթ խոսքի» անհրաժեշտությունը, քանի որ «պապական աղաթ ա, պըրփի ասվի»: Բանասացները նշում են բանաձևային խոսքի առաջին տողը. «Ա՛յ գնացող, քեզ եմ ասում, լավ իմացի՛...», խոսքը չեն շարունակում, քանզի՝ «ամոթ է...»: Ահա մի քանի օրինակ մեր գրանցած նյութերից՝

Հո՛, հոռովել, հո՛... էն հաց բերողին եմ ասում, հո՛... (դարով են փայլիս...)

Հո՛, հո՛... էն ջուր բերողին եմ ասում, հո՛... կուժը վեր գցեմ... (հայիոյում է...)

Հո՛... այ գնացող, ճիպոփս պըրփըրե՛մ, քամակդ խըրփըրե՛մ, հո՛... կամ՝ ճիպոփս պըրփըրե՛մ, աղլուխըդ թըռցընե՛մ...,- «շար բաներ են ասում»¹⁷:

Կոմիտասն այս արտահայտությունները կապում է հոռովել կանչող մաճկալի՝ իր շուրջը կատարվող ամեն ինչ տեսնելու և երգի մեջ անդրադարձնելու երևույթի հետ: Օրինակ, երբ երեկոյան հեռվից տեսնում է, որ մի տան մեջ հարսը ճրագ է վառում. «Ա՛յ, ճրագ վառող հարսին եմ ասում, հա՛...» կամ «Ա՛յ, աղբուրը գնացող հարսին եմ ասում, հա՛...» (հմմտ. ծենով ասելիս դիպվածային իրադրությունները երգի տեքստում ներառելու սովորության հետ): Իսկ մաճկալին ու հոտաղներին համր կոչող կնոջ պատասխանը Կոմիտասը վերագրում է իրեն չձայնակցող հոտաղներին դիմող մաճկալին. «Հորիքն ելավ, ա՛յ լալիկ հոփաղ, ա՛յ համր հոփաղ...»¹⁸: Հետաքրքիր է, որ մանրամասն նկարագրելով և քննարկելով Հոռովելի հետ կապված երաժշտական ու բանահյուսական շերտերը, Կոմիտասը չի անդրադարձել այս երկխոսության ծիսական ենթատեքստին: Իսկ գուցե այդ հատվածը ժամանակին բնորոշ գրաքննության ձեռքո՞վ է կրճատվել...

¹⁶ Հ. Պիկիջյան, ԴԱՆ, Լոռի, 1990:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Կոմիտաս, Լոռու գութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով, Հոդվածներ և ուսումնասիրություններ, հավաքեց Ռ. Թերլեմեզյան, Երևան, Հայպետհրատ, 1941, էջ 74:

Այսուհանդերձ, գիտարշավային հարցումների և ազգաբանական նյութի համադրմամբ՝ հոռովելներում բացահայտվում է մաճկալի և հողագործներին հաց բերող իգական սեռի ներկայացուցիչների միջև ընթացող ծիսական երկխոսությունը, որն, ըստ ամենայնի, կանոնակարգված է խոսքային, վարքագծային ու նշանային մակարդակներում և պտղաբերությանը միտված սեռական-հմայական գործողությունների խոսքային փոխակերպումն է: Եթե հիշենք, որ հողագործներին հացը հերթով տանում էին վարին մասնակցող բոլոր ընտանիքների կանայք ու աղջիկները, ապա հիշյալ երկխոսությունն ընթանում է բոլորի միջև: Այսինքն, «հայհոյանքի» միջոցով՝ խոսքային մակարդակում, սեռական կապ է հաստատվում բոլոր երկրագործների երիտասարդ կանանց ու աղջիկների և մաճկալի միջև: Սրանով կարծեք վերականգնվում է երկրագործական ծիսակարգում ընդունված մի հնագույն իրողություն՝ նոր հերկած ակոսներում համայնքի մասնակցությունը խառնամուսնական ծեսերին, որի բազմաթիվ օրինակներ գրանցված են տարբեր երկրագործ ժողովուրդների տոնածիսական կյանքում¹⁹:

Հիշյալ «անպարկեշտ» խոսքերը, ինչպես և հողագործներին հաց բերող կանանց երկխոսությունները հրատարակված տեքստերում բազմակետերի վերածվելուց զատ, երկու փոխակերպում են ստացել.

ա) գերակշիռ մասը խմբագրվելով և ձևափոխվելով՝ վերածվել է բանաստեղծական տեքստի հերթական տան (որն ընդհանուր իմաստից սպրդելով՝ տարանջատվում է նախադասության կառուցից),

բ) նմանատիպ արտահայտությունների մի այլ խումբ վերածում է կրկնակների: Վերջիններս հասցեագրվում են հոռովել չկանչողներին՝ չձայնակցողներին: Հավանաբար, հենց այդպիսի տարբերակ է գրանցել նաև Կոմիտասը:

*Գութանը քաշեց խամին,
Կոպրեց էրկըթե սամին.
Վե՛վ որ հոռովել չըսե՛
...անոր հարսն ու խընամին²⁰...*

Եթե հիշենք, որ միտք-խոսք-գործ հասկացություններն ավանդական պատկերացումներում նույնացվում են, ապա ասել և անելը հավասարաթեք են:

¹⁹ Б. Успенский, Мифологический аспект русской экспрессивной фразеологии. *Studia Slavica Hung.* XXIX, 1983, с. 33-69 (ст. 1); 33/1- 4, 1987, с. 61 (ст. 2).

²⁰ Հայ շինականի աշխարանքային երգերը, էջ 68:

Ինչպես մորն ուղղված ռուսական հայիոյանքի (матерщина) արմատների ուսումնասիրությանը նվիրված աշխատանքում նշում է Բ. Ուսպենսկին, հայիոյանքն ունի առասպելաբանական ծագում և բնույթով ծիսական է: Այն հեթանոսական երևույթ է և տարբեր ժամանակներում յուրովի է իմաստավորվել՝ ներառելով այլևայլ առասպելաբանական ծածկագրեր, սակայն բոլորի հիմքում ընկած է Հողի և Երկնքի սրբազան ամուսնությունը, որից արարվում, պտղաբերվում է կյանքը: Այսու, հայիոյոլը դիտվում է իբրև Արարիչ կամ Ամպրոպածին, իսկ օբյեկտը՝ Մայր հող, որը հաճախ փոխակերպվում է, դառնալով Աստվածամայր կամ ուղղակի մայր: Սա է պատճառը, որ հայիոյանքը ծիսական բնույթ ունի և պարտադիր տեղ է գրավել պտղաբերություն ու ծնունդ ակնկալող բոլոր ծեսերում՝ հարսանեկան, Ամանորի, երկրագործական և այլն: Երկրագործական ծիսակարգում հայիոյոլը կերպավորվում է իբրև աստվածային վարող ու ցանող հերոս և զուգավորվում հողի հետ: Սրանով էլ հաճախ բացատրվում են ծիսական հայիոյանքի մյուս գործառույթները՝ ընկալվելով իբրև չարխափան ուժ, աղոթք, հմայանք²¹:

Խոսքային մակարդակից բացի՝ ծիսական հայիոյանքին զուգահեռ չէին բացառվում նաև գործողությունները: Աշխատանքի ընթացքում դրանք վարին մասնակցող և երկրագործներին հաց բերող սիրահարների միջև զուտ նշանային բնույթ էին ստանում՝ դառնալով ոչ վերբալ երկխոսություն (հայացք, դիմախաղ), երբեմն էլ վերածվում խնձորի կամ թաշկինակի փոխանակության: Այս սովորության զանազան նկարագրություններ և ակնարկներ կան թե՛ բանաստեղծական տեքստերում, թե՛ պարերգերում ու խաղիկներում: Մինչդեռ, ըստ բանասացների վկայությունների՝ մուֆն ընկնելուց հետո, աշխատանքից դուրս, նոր հերկած ակոսները²² կարող էին դառնալ նաև սիրային ժամադրությունների և սեռական գործողությունների վայրեր: Եվ եթե դրանք հասարակության կողմից ընդունելի՝ «թույլատրված» վայրեր էին նոր ամուսնացած զույգերի կամ տակավին զավակ չունեցող ամուսինների համար, որից որդեծնություն էր ակնկալվում, ապա չամուսնացածների համար դրանք գաղտնի՝ «չթույլատրված հանդիպման վայրեր էին»:

²¹ Б. Успенский, նույն տեղում:

²² Բանասացների հավաստմամբ՝ հիմնականում սահմանային տարածքներն էին դառնում հանդիպման վայրեր:

*Հարս եմ ու հարս,
Կարմիր ու ճերմակ հարս,
Առնեմ, պառկեմ ակոսիդ,
Եղ է թագա հավասը*²³:

Դաշտերում սիրային հանդիպումների ընդունված ժամկետը մինչև առաջին ծիլի դուրս գալն էր, որից հետո, մինչև բերքահավաք, խստորեն արգելվում էր:

Մեր հավաքած նյութի համեմատական քննությունը փաստում է, որ գիտարշավի ընթացքում ձայնագրված գութաներգի 9 և կալի երգի 7 նմուշները ներդաշնակորեն համեմատելի են Կոմիտասի Լոռվա գութաներգի ու կալի երգերի երաժշտամտաձողությանը: Իսկ գործընթացի նկարագրությունն ու տեքստաբանական վերլուծությունը մեկ անգամ ևս վկայում են Կոմիտաս-ազգագրագետի դիտողականության, ինչպես նաև նյութը գրանցելու և ներկայացնելու (նոտագրված և երգային տարբերակներ) բացառիկ հմտությունների մասին:

Հոռովելների հրապարակված տեքստերի գիտական ուսումնասիրությունը, ինչպես և երկրագործական մշակույթի ընդհանուր համատեքստում դրանց կատարման համար պահանջվող պայմանների քննությունը հնարավորություն է ընձեռում վերականգնել երկրագործական ծիսակարգի գլխավոր ծեսը: Ակնհայտ է, որ այն արտահայտված խրախճանքային երանգ ունի և միտված է հողի արգասաբերությանը (հմմտ. ծեսում վառ արտահայտված ֆալլիկ խորհրդանիշները. գութանի խոփը, եզների պոզերը, մաճկալի առնականությունը): Պատահական չէ, որ ավանդության պայմանների ապահովմամբ ընտրված ու կանոնակարգված վարքով հաստատագրված մաճկալի կերպարը, բազմաթիվ տեքստերի հավաստմամբ, սովորական երկրագործներից առանձնանում է նաև նշանային խորհրդանիշով՝ ականջին ոսկե գնդով: Այս համատեքստում հոռովելը ոչ թե ընդունված կարծիքի համաձայն սոսկ աշխատանքային երգ է (որի շնորհիվ ապահովվում է վարի ոլիթմիկ ընթացքն ու կանոնավորվում հողագործների ու լծկանների աշխատունակությունն ու տրամադրությունը), այլև տիեզերաստեղծ առասպելի²⁴ և նրա գլխավոր ծեսի երաժշտապոետիկ ծածկագիրը:

²³ Հայ շինականի աշխատանքային երգերը, էջ 94:

²⁴ Հմմտ. օրինակ, դրզոնների (Արևմտյան Աֆրիկա) ծագումնաբանական առասպելը. Արարիչ-Աստվածը կենակցում է Թկրի Թետ, որին խքն իր սրարել վրոջ կրպարով: Նույն համատեքստում է նաև «Վահագնի Ձունդ»-ում Երկիր-Երկինք-երկունք կապը: Այս մասին տե՛ս **В. Топоров**, Об отражении индоевропейского мифа в древнеармянской традиции. Պատմաբանասիրական հանդես, 1977, թիվ 3, էջ 88-106.

Ամփոփում

Հոդվածը նվիրված է մեր ժամանակներում Կոմիտասի հրատարակած հանրահայտ Լոռվա գույթաներգի կենցաղավարմանը: 1991 թ. Լոռվա մարզում կազմակերպված գիտարշավի ընթացքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի աշխատակիցները փորձում էին ճշտել, թե որքանով է ժողովրդի հիշողության մեջ պահպանվել Կոմիտասի գրանցած Գույթաներգի (հոռովել) տարբերակը: Հետաքրքիր էր, թե երկրագործական մշակույթում տեղի ունեցող զարգացումներն ու ժամանակն ինչ խմբագրումներ էին կատարել հոռովելի գործառույթի ու կատարման կերպի մեջ: Գույթանավարի արարողակարգը նկարագրելիս տարեց բանասացները ձգտում էին ճշգրիտ ներկայացնել մասնակիցներից յուրաքանչյուրի վարքը, գործունեությունը, հընթացս ասվող խոսքային ու երաժշտական տեքստերն ու մեկնաբանում դրանք: Այս վերոհի քաղաքի, Սանահին, Հազվի, Աքորի, Ակներ, Մղարթ գյուղերի բանասացների հիշողությամբ վերականգնված գույթանավարի գործընթացի նկարագրություններն ու հոռովելի հատվածային կատարումները հավաստում էին երաժշտապետի գրանցումներն ու փաստում մշակույթի ժառանգական կապի կենսունակությունը: Նյութի համեմատական քննությունը փաստում է, որ գիտարշավի ընթացքում ձայնագրված գույթաներգի 9 և կալի երգի 7 նմուշները ներդաշնակորեն համեմատելի են Կոմիտասի հրատարակած Լոռվա գույթաներգի ու կալի երգերի երաժշտամտածողությանը: Գործընթացի նկարագրությունն ու տեքստաբանական վերլուծությունը մեկ անգամ ևս վկայում են Կոմիտաս-ազգագրագետի դիտողականության, և նյութը գրանցելու և ներկայացնելու (նոտագրված և երգային տարբերակներ) բացառիկ հմտությունների մասին:

Բանալի բառեր՝ գույթաներգ, հոռովել, Կոմիտաս, երկրագործական ծես, գիտարշավ, Լոռի:

СОВРЕМЕННОЕ БЫТОВАНИЕ “ОРОВЕЛА”: ПО СЛЕДАМ КОМИТАСА

Резюме

*Рипсиме Пикичян, кандидат исторических наук, доцент
Ереванский государственный университет
Институт искусств НАН РА*

Статья посвящена бытованию известной лорийской плужной песни (оровел) опубликованной Комитасом. Спустя почти век после издания оровела в 1991г., участники экспедиции Института искусств НАН РА в Лорийской области стремились выяснить насколько народная память сохранила эти песни и записать бытующие варианты комитасовских оровелов. Была поставлена цель рассмотреть, как развитие земледельческой культуры и инновации сельскохозяйственных работ отразились на бытовании и тексты традиционных плужных песен. Во время бесед в городе Алаверди, селах Санаин, Агви, Акори, Акнер, Мгарт пожилые респонденты старались подробнее описать поведение и роль пахарей. Они пели и комментировали музыкально-поэтические тексты Оровела. С помощью собранных полевых-этнографических материалов и записей песен, можно реконструировать весь процесс традиционных земледельческих работ, а также подтвердить наследственность традиционной культуры. Сравнительный анализ экспедиционных записей 1991 г. с исследованиями Комитаса показывает гармоничную связь музыкального мышления и жизнеспособность традиционной культуры.

Собранные нами материалы подтверждают чуткую наблюдательность этнографа Комитаса, а также его музыковедческий профессионализм, уникальные навыки в области нотирования и записей сложных импровизационных жанров народной музыкальной культуры. Анализ опубликованных текстов плужных песен и собранные этнографические материалы, в контексте земледельческой культуры, дают возможность восстановить главный земледельческий обряд. Он имеет оргический характер и направлен на плодородие земли. В этом контексте, оровел не только трудовая песня, с помощью которой регулировался ритм и настроение земледельцев, но и музыкально-поэтический код главного ритуала космогонического мифа.

Ключевые слова: плужные песни, оровел, Комитас, земледельческий обряд, экспедиция, Лори.

MODERN LIFE OF THE “*HOROVEL*”: FOLLOWING KOMITAS'S PATH

Abstract

Hripsime Pikichian (Armenia)
PhD in History, Assistant Professor
Yerevan State University
Institute of Arts of NAS RA

This paper concerns the modern life of the *Horovel* or *Plough Song* first studied by Komitas. Though the ploughing process associated with singing the *horovel* is considered to be a past culture, nowadays its reminiscences can still be traced in Armenia.

In 1991, during a study field trip to the region of Lori, the specialists of the Folk Music Department of the Institute of Arts of the National Academy of Sciences of RA sought to clarify to what extent the variations of the *Plough Song* recorded by Komitas had survived in the memory of people. The question was to find out what alterations the time and the developments in cultivation techniques had made in the function and form of the *horovel*. When describing the working process of the farmer, the elder tellers were tending to accurately represent the behavior and activity of each participant of the labor process and to interpret the verbal and musical texts performed during latter. The descriptions of the farmer's work and the fragmentary performances of the plough song, recovered according to the memory of folk singers, which were recorded in the town of Alaverdi and the villages of Sanahin, Hagvi, Akori, Akner and Mghart coincided with Komitas's transcriptions and confirmed the viability of the heredity of culture. The comparative study of the material confirms that the nine samples of the plough songs and the seven samples of the threshing songs recorded during the expedition are logically comparable with the musical structure of the *Lori Plough Song* and threshing songs transcribed, studied and published by Komitas. The description of the working process and the analysis of the texts once again evidence Komitas - the ethnographer's subtle ability and unique skills in collecting and transcribing folk music and texts.

Key words: ploughing song, horovel, Komitas, farming ritual, expedition, Lori.

«ԼՈՐԻԿ» ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՄՆԱԳՈՎՔԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԶԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Մարիաննա Տիգրանյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա*

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ եզակի չեն այն օրինակները, որոնք ժամանակի ընթացքում կորցնելով իրենց գործնական դերն ու նշանակությունը, կամ էլ հակառակը՝ ձեռք բերելով նորը, մի ժանրից մյուսին են անցել և տեղայնացել¹: Նման դեպքերում հարց է ծագում՝ տվյալ երգային կամ պարային օրինակի ժանրային դասակարգումը կատարելիս ի՞նչ սգբունքներով առաջնորդվել (տաղաչափություն, մեղեդային կառուցվածք և այլն): Ժանրային երկակիությունը բնորոշ է որոշ քնարական-սիրային երգերին, որոնք կարելի է դասել նաև հարսի գովքերգերի շարքին, և այս դեպքում մեկ ժանրի ելևէջային տիպական դարձվածքների թափանցումը դեպի մյուսը ավելի քան բնական է²: Խոսքը, բնավ, այն ավանդական ծիսական երգերի մասին չէ, որոնք աչքի են ընկնում իրենց բանաձևային մտածողությամբ, ինչպիսիք են թագվորագովքերը, հարսի լացերգերը, կամ հարսանեկան պարերգերը: **Ավանդական հարսանեկան երգեր** նշելով՝ նկատի ունենք միայն հարսանեկան ծեսին կատարվող երգերը, և ո՛չ ծեսից դուրս³:

Այս առումով հայկական գեղջկական երգաստեղծության մեջ մեծ

¹ Այդպես, օրինակ, օժիտի երգերի հետ կապված Ռ. Աթայանը նշում է. «...*հետաքրքրական է, որ «ծալ էրա» արտահայտությունը հարսանեկան երգերից անցել է սովորական սիրային-քնարական խաղիկներին...*» (Կոմիտաս, Երկերի ժողովածու (ԵԺ), հատ. 10, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Գիտություն» հրատ., 2000, էջ 176):

² Ընդհանրացնող «լարերից» կարող է լինել տառապանքը, վիշտը, կարոտը, պանդխտությունը, ծնողից հեռանալը, ցավը, բաժանումը, ինչը բնորոշ է բոլոր լացերգերին, անտունիներին, նաև հարսի հրաժեշտի երգերին: Այս երևույթն է բացատրում այդ տարբեր ժանրերի երաժշտական լեզվի նմանությունը, ինչպես նաև այն, որ «**ալազյոզլու**» անվան տակ միանում են ինչպես անտունիները, այնպես էլ մանիներն ու ջանգլուկումները (տե՛ս Կոմիտաս, ԵԺ, հատ 9, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Գիտություն» հրատ., 1999, էջ 178, նաև՝ Մ. Թումանյան, Հայրենի երգ ու բան, հատ. 1, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 198):

³ Այսպես, մի շարք պարերգեր, որոնք կատարվում են հարսանիքին, բուն ծիսական չեն համարվում, քանի որ ընդհանուր սիրային բովանդակությամբ կարող են կատարվել ցանկացած այլ ծեսի կամ խնջույքի ժամանակ, ինչպիսին է «Անեն մ էրթամ էն սարը» (Կոմիտաս, ԵԺ, հատ. 10, N 79, էջ 77; պարային կերտվածքով երգ է, որը կատարում են երիտասարդ հարսանքավորները՝ թագվորի ընկերները, հարսանիքի թեժ պահին), բայց ոչ «Թագվորի մեր, դուրս արի» պարերգը, որը քացառապես հարսանեկան է:

հետաքրքրություն են ներկայացնում «Լորիկ»-ները⁴ «Գացի արտեր, բռնի լոր», «Առավոտուն բարի լուս», «Առավոտ լոր մտավ արտ» երգերը: Կոմիտասն իր դասախոսություններից մեկում (Փարիզ, 1906 թ.) նշել է, որ այդ եղանակները մեկից մյուսի զարգացումը ցույց տվող օրինակներ են, ապա դասակարգել է տարբեր ժանրերում՝ հարսանեկան և քնարական⁵:

Մեր կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև ազգագրական այլ աղբյուրներում գետեղված նույնատիպ երգային օրինակների հետ համեմատական աշխատանքների մանրակրկիտ վերլուծություններն ապացույց են այն իրողության, որ նշված երգերի եղանակները ոչ թե «մեկից մյուսի զարգացումը ցույց տվող օրինակներ են», այլ **մեկ ամբողջական ավանդական ծիսական հարսնագովք**⁶: Ժամանակի քայքայիչ ազդեցության հետևանքով այդ հարսնագովքի ամբողջականությունը խախտվել է: «Լորիկ»-ը, բաժանվելով եռատող տների, շարունակել է կենցաղավարել, և Կոմիտասին ժամանակ առ ժամանակ հաջողվել է գրառել հենց այդ առանձին երգվող տները⁷: Սակայն նույնիսկ մասնատվելով՝ «Լորիկ»-ը պահպանել է իր **մեղեդային ինքնությունը**, քանզի միայն ծիսական երգերի ավանդականությամբ կարելի է բացատրել «Լորիկ»-ների տիպական մտածողությունը (մեղեդային, մետրադիոմական, տաղաչափական), որը բխում է հարսանեկան երգերի բանաձևային կառուցողական սկզբունքից:

«Լորիկ» վերնագիրը պայմանական է, և Կոմիտասն ինքը իր գրառած տարբերակներից և ոչ մի օրինակ «Լորիկ» չի անվանել, մինչդեռ Ա. Բրուտյանի, Ս. Դեմուրյանի, Ս. Ամատունու, Մ. Թումաճանի ձայնագրությունները վերնագրված են «Լորիկ»: Հայ գեղջկական երգաստեղծության մեջ երգը կամ պարերգը հաճախ անվանել և ճանաչել են **հիմնատող-կրկնակով**⁸, որից էլ բխել է վերնագիրը: Տրամաբանական է, որ երգի բովանդակությունը, ինչպես և

⁴ «Լորիկ» վերնագիրը պայմանական է, քանզի գրառված ոչ բոլոր օրինակներն են այդպես վերնագրված, սակայն նրանցից յուրաքանչյուրն ավարտվում է «Լորիկ, լորիկ, լորիկ...» կրկնակով:

⁵ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ եւ յօրոածներ*, գիրք Ա, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, Երևան, «Սարգիս Խաչեցեց» հրատ., 2005, էջ 330-339 (սկզբնաղբյուր՝ *Le mercure musical* հանդես, Փարիզ, 1907, էջ 472-490):

⁶ Ավագ սերնդի բանահավաք-երաժիշտներին (Ա. Բրուտյան, Ք. Կարա-Մուրզա, Ս. Դեմուրյան, Ս. Ամատունի) «Լորիկ»-ի ծավալուն օրինակներ դեռևս հաջողվել է գրառել՝ բանաստեղծական տեքստի հնարավորինս ամբողջական տարբերակով, որն էլ հենց ապացուցում է «Լորիկ»-ի հարսանեկան ծեսին պատկանելը:

⁷ Կոմիտասը 1894-1908 թթ. ժամանակահատվածում ձայնագրել է «Լորիկ»-ի 9 տարբերակ (տե՛ս աղյուսակը): Հետևողականորեն փնտրելով և ձայնագրելով «Լորիկ»-ի յուրաքանչյուր օրինակ, նրան այդպես էլ չհաջողվեց հանդիպել մի երգասացի, որն ամբողջական «Լորիկ» կկատարեր:

⁸ Հիմնատող-կրկնակը, երգի (պարերգի) առավել կայուն մասը հանդիսանալով, քիչ է ենթարկվել փոփոխությունների ու աղավաղումների, ուստի և հնարավորինս ամբողջական է պահպանել իր նախնական երաժշտական կորիզը:

հիմնական իմաստը, պետք է ամփոփվեր **երկտող-կրկնական** կամ **վերնագրում**: Մեր դեպքում դա մեկ բառ է՝ «Լորիկ»:

Քաջ հայտնի է, թե ինչպիսի կարևոր դեր ու նշանակություն են ունեցել հայոց հին կրոնական պատկերացումներում և հավատալիքներում պաշտամունքի արժանացած **սրբազան թռչունները**, որոնք ծիսական արարողությունների անբաժան մասն են կազմել: Այդ են վկայում ժողովրդական երաժշտության մեջ, մասնավորապես՝ պարերգերում՝ «թռչնային» վերնագրերով բազմաթիվ ծայնագրություններ՝ «Ղազ-ղազ» (Ալաշկերտ), «Կոնգավէն» (Շատախ), «Թավովսպար» (Կարին-Էրզրում), «Խավկու» (Վան), «Կաքավներ» (Վասպուրական), «Լաչին» (Թալին) ևն⁹: «Թռչնային» պարերգերից էր նաև հայոց ավանդական շուրջպար «Լորկե»-ն¹⁰: «Լորիկ»-ի ներկա ուսումնասիրությունը կրկին հաստատում է այն իրողությունը, որ «լոր» թռչունի պաշտամունքի կրոնա-ծիսական խոր արմատներն ունեն **տեղային** ծագում:

«Լորիկ»-ի կոմիտասյան ամենավաղ գրառումը, հավանաբար, պետք է կատարված լիներ 1894 թ.: Այն պահպանվել էր Մակար Եկմայանի գրությամբ¹¹:

Ռ. Աթայանը նշում է. «Պարային ռիթմական կերտվածքով սիրո քնարական այս երգը համեմատաբար զարգացած «ռոմանսատիկ» նմուշ է... Ընդարձակ երկմաս կառուցվածք ունի, առաջին պարբերությունը՝ նախադասությունների բաժանումով, երկրորդը՝ առանց բաժանման, միջանցիկ»¹²:

⁹ Տե՛ս **С. Лисициан**, *Старинные пляски и театральные представления армянского народа*, том 1, Ереван, изд. АН АССР, 1958; том 2, 1972; том 3, 1983. **ժ. Խաչատրյան**, Պարը հայոց մեջ, *Հողվածների ժողովածու*, Երևան, «Էդիթ Պրինտ», 2013:

¹⁰ Դրա ծիսական արմատների ծագման վերաբերյալ զեկուցում առիթ ունեցել ենք ներկայացնելու: Տե՛ս **Մ. Տիգրանյան**, «Լորկե»-ն որպես հայոց ավանդական հարսանեկան ծիսական շուրջպար, *Կանթեղ*, N 4 (65), Երևան, «Ասողիկ» հրատ., 2015, էջ 249-267:

¹¹ Արդի երաժշտագիտության մեջ այս խնդիրն ունի հաստատուն ձևակերպում Կոմիտասի **հավաքած** և Մ. Եկմայանի **ծայնագրած** երգեր: Եկմայանի մոտ պարապելու նպատակով վարդապետը մի կարճ ժամանակով բնակվեց Թիֆլիսում (1895 թ.-ի աշուն): Կոմիտասն իր այդ հավաքածուն Եկմայանին կարող էր տրամադրած լինել գրավոր կամ բանավոր, նույնիսկ՝ անձամբ երգելով: Այս հարցի վերաբերյալ դեռևս 1934 թ.-ին Ռոմանոս Մելիքյանը Մ. Եկմայանի երգերի ցուցակն ուսումնասիրելիս նշել է. «Ինձ թվում է, *Եկմայանինը չեն, այլ Կոմիտասինը*» (տե՛ս «Կոմիտասի երաժշտական ժառանգությունը» հոդվածը, *Կոմիտասական Ա.*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 26): Եկմայանի գրով պահպանված թվով 23 երգերից 16-ը կարող ենք նույնպես գտնել Կոմիտասի 1907 թ. կատարած հին ու նոր գրառումներից կազմված ժողովածուում:

¹² Նույն տեղում, էջ 202:

Գացի արտեր, բռնի լոր¹³

Աշխույժ

Գա - ցի ար - տեր բռն - նի լոր, աղ - ջիկ տե - սա
 յայ - լի ծոր, նը - ման էր կար - միր խըն - ծոր, լո -
 ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ: Նը - ման էր կար -
 միր խըն - ծոր, լո - ռիկ, բարխ եմ լո - ռիկ, լալ եմ, լո -
 ռիկ, կար եմ, լո - ռիկ, մալ եմ:

Գացի արտեր, բռնի լոր,
 Աղջիկ տեսա յայլի ծոր,
 Նման էր կարմիր խնծոր,
 Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ,
 Նման էր կարմիր խնծոր,
 Լորիկ, լորիկ, բարխ եմ, լորիկ,
 Լալ եմ, լորիկ, կար եմ, լորիկ, մալ եմ¹⁴:

Ինչպես գիտենք, Կոմիտասի ուշադրության առարկա են եղել մեղեդիների տարբերակային փոխհարաբերությունը և հենց ժողովրդի մեջ ապրող այլ տարբերակներ՝ մեկից մյուսը տեղի ունեցող զարգացումը ցույց տվող այլևայլ օրինակներ: Կոմիտասը փնտրում և գրառում էր նույն երգերի՝ տարբեր վայրերում և շրջաններում կենցաղավարած նմուշները, և այս առումով «Գացի արտեր, բռնի լոր» սկզբնատողով «Լորիկ»-ը բացառություն չէր¹⁵:

¹³ Կոմիտաս, Եժ, հատ. 9, N 121, էջ 124:

¹⁴ Խոսքային կրկնակում **քրդերեն** բառերի մոտ, վերևից Կոմիտասի ձեռքով գրված է դրանց թարգմանությունը՝ **բարխ** (զառ, գառնուկ) և **կար** (ուկ, ուլիկ): Մնացած հայերեն բառերի բացատրությունները հետևյալն են՝ լալ (թանկ. քար՝ ուրփն, շափյուղա, սուտակ), մալ (ինչք, կայք, արժեք, ունեցվածք, մասնավորապես՝ լծկան անասուն): Այլուր հանդիպում է նաև «բարխ եմ»-ի միացյալ «բարխեմ» գրությունը, որն անչլվում է քրդերեն «գառնուկս» ձևի հետ:

¹⁵ Բացի վերը նշված եկմայանական արտագրությամբ օրինակից, Կոմիտասը ձայնագրել է ևս 4 նմուշ (տե՛ս Կոմիտաս, Եժ, հատ. 11, խմբ.՝ Ռ. Աթայան, Երևան, «Գիտություն» հրատ., 2000, էջ 132).

ա) 325/42, «Գացի արտեր, բռնի լոր», դարձյալ հին ձայնագրություն է, հայրենիքը նշված է՝ Մուշ, բավական նման է նախորդ տարբերակին (կոմիտասյան հատորներում զետեղված չէ):

բ) 302 / 44ա, «Գացի արտեր, բռնի լոր», գրառված է Օշականում կամ Օշականցուց (Կոմիտաս, Եժ, հատ. 11, N 50/44, էջ 39):

գ) 302/112, «Գացի արտեր, բռնի լոր», Ախալցխա-Ախալքալաքի երգ (Կոմիտաս, Եժ, հատ. 11, N 299, էջ 119):

դ) 325/42, «Գացի արտեր, բռնի լոր», Շիրակ (Կոմիտաս, Եժ, հատ. 13, խմբ.՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2004, N 72, էջ 76):

«Գացի արտեր...» «Լորիկ»-ի ավելի վաղ գրառումներ կարելի է հանդիպել Կարա-Մուրզայի¹⁶ և Սահակ Ամատունու¹⁷ ձայնագրություններում, որտեղ «լորիկ»-ի փոխարեն «լուրիկ» է (Ամատունու տարբերակն անվանված է «Մշեցու լուրիկ»): «Լուրիկ» բառը, որը քրդերեն «լուրի»-ի (օրոր) ձայնանմանությամբ է գոյացել, մեր «Օրոր»-ի հետ ոչ մի կապ չունի, սակայն ժանրային որոշ «խառնաշփոթ», այնուամենայնիվ, տեղի է ունեցել¹⁸:

Կոմիտասը հետևողականորեն ձայնագրում էր «Լորիկ»-ի տարբերակներ և ինքնին պարզ է, որ այդ գրառումները պատահական զուգադիպությունների հետևանք չէին, այլ համառ փնտրտուքների արդյունք, և ինչպես իրավացիորեն նշել է Ռ. Աթայանը. «... միևնույն կամ նման երգերի զանազան վայրերում արմավացած և տեղական ծագում սրացած տարբերակների միջոցով էր Կոմիտասն ուսումնասիրում մեղեդիակերպման մասնավոր, տեղային ոճերը, կերպերը, նախասիրությունները»¹⁹:

«Լորիկ»-ի կոմիտասյան ձայնագրությունների՝ «Առավոտուն բարի լուս» սկզբնատողով²⁰ ամենածավալուն օրինակն ընդգրկված է վարդապետի 1904 թ. մինչև 1905 թ. աշունն ընկած ժամանակահատվածի գրառումներում՝ «Ազգագրական ժողովածու»-ում²¹:

¹⁶ Տե՛ս Ք. Կարա-Մուրզա, *Հայ ժողովրդական յերգեր*, Յերեան, Պետհրատ, 1935, N 2, էջ 16-18; մշակել է 1892 թ.-ին:

¹⁷ **Սահակ Ամատունի**, *Ժողովրդական երգերի ձայնագրեալ ժողովածու*, 1884, N 16; Վերահրատարակված՝ *Հայ ժողովրդական երգեր և նվագներ*, հատ. 11, Երևան, 2014, «Ամրոց Գրուպ», N 16, էջ 28:

¹⁸ Արշակ Բրուտյանի «Առավոտուն թունդի մուխ» սկզբնատողով սկսվող ձայնագրությունը «Լորիկ»-ի մի ծավալուն օրինակ է (13 եռատող տներից բաղկացած), որը վերնագրված է «Լուրիկ»՝ Օրորոցային (**Ա. Բրուտյան**, *Ռամկական մրմունջներ*, հ. 1, Երևան, «Սովետական գրող», 1985, N 17 (12), էջ 36-37):

¹⁹ **Կոմիտաս**, Եժ, հատ. 11, էջ 10:

²⁰ Նշենք, որ «Առավոտուն բարի լուս»-ը Կոմիտասի խմբերգային բազմաձայնության փայլուն մշակումներից է (**Կոմիտաս**, Եժ, հատ. 2, Երևան, խմբ.՝ Ռ. Աթայան, «Հայաստան» հրատ., 1965, N 9, էջ 34):

²¹ *Ազգագրական ժողովածու*, հատ. 1, Յերեան, Հայպետհրատ, 1931, N 112, էջ 34; հայերեն նոտագրությունից փոխադրեց Ս. Մելիքյանը:

Առավոտուն բարի լուս (Ալաշկերտ)²²

Սիրազեղ

Ա - տա - վո - տուն քա - թի լուս, Աստ-ված պա - ին աս - ձե - նուս, Թող դուս գա թըշ - նա - մուս լուս լո - թիկ, լո - թիկ, լո - թիկ, լո - թիկ: Թող դուս գա թըշ - նա - մուս լուս, լո - թիկ, քախ-րամ լո - թիկ, ջա-նքմ լո - թիկ, յա-րքմ լո - թիկ, մա-նքմ լո - թիկ, վա-րքմ լո - թիկ:

Արազ, ամբողջ պես Սիջակ
Հա-զար էր-նեկ էն ա - վուր գուտ-նա դա-յիր չա - լե - ցու - ցին
կա-նաչ կա - պա հա - զե - ցու - ցին, տա-րան ժա - մը կայ - նե - ցու - ցին,
ա - վե - տա-րան կար - դա - ցու - ցին, ձե - ղը ձե - ղին սըղ - վե - ցու - ցին,
տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ,
քախ-րամ լո - թիկ, ջա - նքմ լո - թիկ,
յա - րքմ լո - թիկ, մա - նքմ լո - թիկ, վա - րքմ լո - թիկ:

«Առավոտուն բարի լուս» սկզբնատողով «Լորիկ»-ի այլևայլ տարբերակներ հանդիպում ենք ինչպես Կոմիտասի մյուս գրառումներում²³, այնպես էլ Ս. Դեմուրյանի²⁴, Ս. Մելիքյանի²⁵, Մ. Թումանյանի²⁶ ձայնագրություններում:

Կոմիտասի «Առավոտուն բարի լուս» ներկայացված օրինակն իսկապես բացառիկ նմուշ է և իր ամբողջականությամբ՝ եզակի տարբերակ.

*Առավոտուն բարի լուս,
Աստված պահե ամենուս,
Թող դուս գա թընամուս լուս,
Լորիկ, լորիկ...*

²² Նոյն տեղում՝ N 124/112, էջ 64-65:
²³ **Կոմիտաս**, ԵԺ, հատ. 14, խմբ.՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան, Երևան, «Գիտություն» հրատ., 2006, N 11, էջ 45 («Առվտո խետ բարի լուսուն», 1909-1914 թթ., Վան):
²⁴ **Ս. Դեմուրյան**, *Հայ ժողովրդական երգեր և նվագներ*, հատ. 9, կազմող Ն. Աթանեսյան, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2013, N 98, էջ 56-57 («Առավոտուն բարի լուս» (Լորիկ), 1890-1910 թթ.):
²⁵ **Ս. Մելիքյան**, *Հայ ժողովրդական երգեր և պարեր*, հատ. 1, Երևան, Հայպետհրատ, 1949, N 77, էջ 75 («Առավտտուն բարի լուսուն», 1926 թ., Բիթլիս-Խնուս):
²⁶ **Մ. Թումանյան**, Հայրենի երգ ու բան, հատ. 4, խմբ.՝ Զ. Թազակյան, Երևան, «Ջանգակ-97» հրատ., 2005, N 115, էջ 133 («Առավտո բարի լուսուն», 1935 թ., Վան): Նույն տեղում՝ N 116 («Առավտո խետ բարի լուսուն», 1922 թ., Վան), նույն տեղում՝ N 1, էջ 17 («Առավտտուն բարի լուս», 1935 թ., Խլաթ):

Այստեղ կարևոր նշանակություն ունի երգի երկրորդ՝ «ասերգի պես» հատվածը՝ որպես ապացույց այն իրողության, որ երգը հարսանեկան ծեսին է պատկանում.

*Հազար էրնեկ էն ավուր,
Չուռնա դայիր չալեցուցին²⁷,
Կանաչ կապա հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Ալեխարան կարդացուցին,
Ձեռը ձեռին փվեցուցին,
Տոյ, փոյ, փոյ, փոյ...*

«Հազար էրնակ» սկզբնատողով մեկ այլ գրառում ևս ունի Կոմիտասը²⁸, «Խազար էրնակ» («Մշեցու օրհորդի երանությունը») վերնագրով էլ մեկ ուրիշ տարբերակ՝ Ս. Ամատունին²⁹ (Կոմիտասն իր օրինակը ձայնագրել է 1908 թ.՝ Ամատունու օրինակից շուրջ քառորդ դար անց): Այն, որ «Հազար էրնակ»-ը առանձին երգ չէ, այլ մեկ ամբողջական երգից աղճատված հատված՝ կտոր, դրանում ոչ մի կասկած չկա, և դրա ապացույցն է մեր ձեռքի տակ եղած՝ «Լորիկ»-ի ամենավաղ գրառված տարբերակը (1877 թ.), որը զետեղված է Կարապետ Սահակյան-Գրիգորյանցի ժողովածուում՝ «Վանեցու երգը» վերնագրով³⁰.

*Առավուր բարի լուսուն,
Ես մայիլ եմ քո փեսույն,
Քո խալամ³¹, լորիկ, խարիր հիսուն³²,
Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ,
Պախրամ լորիկ:
Խազար էրնեկ այն ավուր,
Սրինգ, քնար չալեցուցին,
Մեր հարսանիք վայեցուցին, փո՛ւյ, փո՛ւյ, փո՛ւյ,
Պախրամ լորիկ...
Առավուրուն թունփրի վառ,
Սպիտակ յաշմաղ խառն ու մառ,*

²⁷ Ազգագրական ժողովածուի տարբերակում՝ «Տավու, զուռնա չալեցուցին»:

²⁸ **Կոմիտաս**, Եժ, հատ. 13, N 123, էջ 119 (Մուշ):

²⁹ **Ս. Ամատունի**, Ժողովողական յերգերի ձայնագրեալ ժողովածու, N 4:

³⁰ Տե՛ս **Ա. Բրուտյան**, *Ռամկական մրմունջներ*, հատ. 1, N 17 երգի ծանոթագրությունը, էջ 204-205:

³¹ «Խալամ», «խալան» (թաթար. qalan)՝ գին, վճար (դրամով կամ իրերով), որ փեսացուն վճարում էր աղջկա հորը՝ աղջկան գնելու համար: Այն կոչվում էր նաև **գլխագին** կամ **վարձանք**, որը լայն կենցաղավարում ուներ հայկական գեղջկական միջավայրում:

³² «Ազգագրական Հանդէս»-ներում (խմբ.՝ Ե. Լալայան) խալանի վճարման վերաբերյալ բազմաթիվ նկարագրություններ կան. հայրական ունեցվածքը, օժիտի «պարունակությունը», ինչպես նաև նորահարսի արժանիքները հաշվի առնելով, սակարկվում էր նաև **կալանի** արժեքը, որը սովորաբար չէր գերազանցում 70-80 ոտբլին (մանեթ): Պետք է ենթադրել, որ «հարյուր խալան»-ը արդեն բարձր գլխագին էր, իսկ «Լորիկ»-ում հիշատակվող «հարյուր հիսունը»՝ աննախադեպ:

Նման էր զոգանի գառ,
 Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ,
 Պախրամ լորիկ:
 Խազար էրնեկ այն ավուր,
 Ջուռնա դայիր չալեցուցին,
 Ինձ՝ թագվորիս պար խաղցուցին, փո՛ւյ, փո՛ւյ, փո՛ւյ,
 Պախրամ լորիկ...
 Գացի արտը, բռնի լոր,
 Աղջիկ փեսա լայն (?)³³ ի ձոր,
 Նման էր կարմիր խնձոր, լորիկ, լորիկ,
 Լորիկ, լորիկ, լորիկ, լորիկ,
 Պախրամ լորիկ:
 Խազար էրնեկ այն ավուր,
 Հորիս մորիս փան բուրիս,
 Աջքի լուսի թաս խմցուցի, փո՛ւյ, փո՛ւյ, փո՛ւյ, փո՛ւյ,
 Պախրամ լորիկ...

Կոմիտասի «Լորիկ»-ի վերջին ձայնագրությունը թվագրվում է 1913 թ. և կրում է «Առավուտ լոր մտավ արտ» վերնագիրը:

Առավուտ լոր մտավ արտ (Մասպարա)³⁴

Չախավոր

Ա - տա վուտ լոր մը - տավ արտ, վա՛խ, աչ - քըս
 ա - տավ, ե - դավ դարդ, վա՛խ, կը - նը - մա - ներ
 քա - ֆուր վարդ, վա՛խ, լո - ռիկ, լոր, լո - ռիկ, լոր,
 լո - ռիկ, լոր, լո - ռիկ, կա - - - նաչ լո - ռիկ,
 ա - - - մուշ լո - ռիկ,
 վառ - - - վառ լո - ռիկ,
 կար - միր լո-րիկ, սի - ռուն լո-րիկ, լո - ռիկ,
 լոր, լոր իմ, լոր, լոր իմ, լոր, լոր իմ լո-րիկ:

Առավուտ լոր մտավ արտ,
 Աջքս առավ, եղավ դարդ,
 Կու նման էր քաֆուր³⁵ վարդ,
 Լորիկ, լորիկ...

³³ Երգասացը «յայի ձոր»-ի փոխարեն երգել է «լայն ի ձոր»: Ձայնագրողին դա կասկածելի է թվացել, և բնագրում այդպես էլ նշվել է:

³⁴ Կոմիտաս, Եժ, հատ. 12, N 1 / 256, էջ 19:

³⁵ Քաֆուր, քափուր՝ ալ կարմիր, թավջա: «Քափուր վարդ» դարձվածքը, որպես ծաղկային սիմվոլ, բացառիկ դեր ու արժեք ունի ավանդական հարսանեկան գովքերում, հատկապես Թագվորագովքերում:

Ներկայացված «Լորիկ»-ի փոքր-ինչ այլ տարբերակ ենք հանդիպում Ա. Բրուտյանի վերը նշված «Մշեցու լուրիկ» օրինակում³⁶.

*Առավուր էրկու մարդ,
Աչքս առավ՝ էղավ դարդ,
Դու կու մանիր քաֆուր վարդ,
Լորիկ, լորիկ...*

Դժվար չէ նկատել, որ ներկայացված բոլոր «Լորիկ»-ները պարտադիր **եռատող տներով են**: Կոմիտասի «Ակնա շար»-ի հարսանեկան՝ «Առավուտուն կելնես, երեսդ վա» երգի վերաբերյալ Ռ. Աթայանը գրում է. «... *եռապող փներով և երկպող կրկնակով ժողովրդական երգեր քացառիկ են հանդիպում, որից մեկը՝ «Գացի արտեր, բռնի լոր» երգն է...*», ապա համեմատում այն նշված հարսանեկան երգի հետ³⁷.

*Առավուրուն կելլես, երեսդ վըլա (վվա),
Էպիրշում (մեպաքս) մազերդ դրեր ես հինա,
Ար աղվոր երեսեդ պագ մի փուր հըլա*³⁸:

Ժողովրդական խաղիկները վերլուծելիս և անդրադառնալով եռատող տներին³⁹ Մանուկ Աբեղյանը նույնպես նշում է նրանց սակավությունը և օրինակ բերում դարձյալ «Գացի արտեր, բռնի լոր»-ը⁴⁰:

Բազմիցս առիթ ունեցել ենք նշելու հարսանեկան երգերի ավանդականությունը և բանաձևային մտածողությունը: Այդ բանաձևության անհրաժեշտ տարրերից մեկը **տաղաչափությունն է**, իսկ «Լորիկ»-ների դեպքում դա **յոթվանկանի ոտանավորն է**: Աբեղյանը հետևյալ ձևակերպումն է տալիս. «*յամբական երկանդամ 7-վանկանի մեկ անապեստրով ուրանավորը մեր ժողովրդական խաղիկների մեծագույն մասն է կազմում*»⁴¹: Նշենք, որ «Լորիկ»-ների կառուցվածքը 7-վանկանի տաղաչափության առաջին ձևին է պատկանում՝ $4 + 3 = (2+2)+3$ ⁴², ուր գլխավոր կամ հիմնական շեշտը դրվում է 4-րդ և 7-րդ վանկերի վրա⁴³.

³⁶ Ա. Բրուտյան, *Ռամկական մրմունջներ*, N 17, էջ 36-37:

³⁷ Կոմիտաս, Եժ, հատ. 9, էջ 168 (N 48 երգի ծանոթագրություն):

³⁸ Յ. Ճանիկեան, *Հնությունք Ակնայ*, Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1895, էջ 414:

³⁹ Աբեղյանն այն անվանում է «յեռյակներ»:

⁴⁰ Տե՛ս Մ. Աբեղյան, *Ժողովրդական խաղիկներ*, Երևան, Հայպետհրատ, 1940, էջ 62:

⁴¹ Տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր*, հատ. 5, Երևան, «Գիտություն», 1971, էջ 180:

⁴² Յոթվանկանի երկրորդ ձևը 3+4 բաժանումն է, համապատասխան շեշտադրումով:

⁴³ Այս չափը առաջին անգամ գործածել է Գրիգոր Նարեկացին (խառը ոտանավորների մեջ), այնուհետև՝ Ներսես Շնորհալիկ: Չփոթենք համաշեշտ 7-վանկանի ոտանավորների հետ, որի տաղաչափությունն ու շեշտադրումը այլ սկզբունքով է կառուցվում (*Մանուկ Աբեղյան, Երկեր*, հատ. 5, էջ 234-240):

Գացի արտե՛ր || բռնի լո՛ր, [4+3]
 Աղջիկ տեսա՛մ || յայի ծո՛ր, [4+3]
 Նման էր կարմիր խնձոր:

Կոմիտասի գրառումներից բացի՝ հավաքել և ուսումնասիրել ենք «Լորիկ»-ների մի ստվար զանգված՝ զետեղված տարբեր ժամանակներում հրատարակված ազգագրական ժողովածուներում, ինչպես նաև անտիպ՝ արխիվային նմուշներ⁴⁴ (տե՛ս աղյուսակը):

Համեմատելով և վերլուծելով մեր կողմից դիտարկված «Լորիկ»-ները, մենք վստահորեն կարող ենք նշել, որ դրանք կառուցվածքային «տիպային մոդել» ունեցող երգեր են՝ **ծիսական ավանդական** երգերին հատուկ **բանաձևային** մտածողությամբ: Բոլոր «Լորիկ»-ները, անկախ գրառման տարեթվից և վայրից (Ալաշկերտ, Ախալցխա, Խլաթ, Մուշ, Վան ևն), կառուցողական նույն սկզբունքով են շարադրված.

ա. մեղեդին սկսվում է նախատակտով (կամ էլ թերի տակտ է), վերընթաց կվարտային թռիչքով⁴⁵.

կամ⁴⁶

Ա - եա - վո - տուն բա - ռի լուս.
 Գա-ցի ար-տեր բըռ - մի լոր.

հազվադեպ՝ կվինտային թռիչքով⁴⁷.

կամ⁴⁸

Առ - վոտ խետ բա - ռի լու-սուն.
 Առ - վոտ խետ բա - ռի լու-սուն.

հանդիպում են նաև թռիչքը լրացրած սահուն քայլով տարբերակներ⁴⁹.

Ա եա - վոտ բա - ռի լուս. Աստ-ված պա - ին ա - մե - նուս.

⁴⁴ Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի ֆոլկլորային ամբիոնի ծայնադարանի արխիվ:

⁴⁵ «Առավոտն բարի լուս» (Ալաշկերտ), Կոմիտաս, ԵԺ, հատ. 11, N 124, էջ 64-65:

⁴⁶ «Գացի արտեր, բռնի լոր» (Շիրակ), Կոմիտաս, ԵԺ, հատ. 13, N 72, էջ 76:

⁴⁷ «Առավոտ բարի լուսն» (Վան), Մ. Թումաճան, Հայրենի երգ ու բան, հատ. 4, N 116, էջ 134:

⁴⁸ «Առվոտ խետ բարի լուսուն» (Վան), Կոմիտաս, ԵԺ, հատ. 14, N 11, էջ 45:

⁴⁹ «Վանեցու երգը» («Առավոտ բարի լուս»), ծայն.՝ Կ. Սահակյան-Գրիգորյանցի, 1877 թ. (տե՛ս Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, հատ. 1, էջ 204-205):

⁵⁰ «Լորիկ» («Առվոտն բարի լուս»), Ս. Դեմուրյան, ՀԺԵՈՆ, հատ. 9, N 98, էջ 56-57:


կամ⁵⁰



բ. մեղեդին հիմնականում զարգանում է կվարտային հենքով էոլական ձայնակարգում (հիպոդորիական-էոլական), ուր գործուն դեր ունի հիմնաձայնից (T) ներքև դոմինանտային հնչյունը.



գ. «Լորիկ»-ներին բնորոշ են սինկոպային զանազանումներով հարուստ ռիթմական պատկերները.



դ. «Լորիկ»-ներում գերիշխում է եռամաս մետրը՝ 6/8, 6/4, 3/4, 3/8, 12/14՝ հազվադեպ բացառություններով⁵¹:

«Լորիկ»-ներում, անշուշտ, առկա է պարային տարրը, սակայն բնորոշել այն որպես պարերգ մենք չենք կարող, քանզի համապատասխան աղբյուրներում ոչ մի վկայություն չկա այն մասին, որ «Լորիկ»-ները կատարվել են որոշակի պարային շարժումների ուղեկցությամբ: Այսպիսով, մանրագնին վերլուծական աշխատանք կատարելով և դուրս բերելով ավանդական երգերի բանաձևային կառուցվածքին բնորոշ մի շարք տիպական դարձվածքներ (առավելագույնս կարևորելով հին ձայնագրությունները)՝ «Լորիկ»-ներն իրենց ամբողջությամբ պետք է դիտարկել հարսանեկան ծիսական երգերի շարքում՝ որպես նորահարսի ավանդական գովք:

⁵⁰ «Լորիկ» («Առվտուն բարի լուս»), **Ս. Դեմուրյան**, ՀԺԵՄ, հատ. 9, N 98, էջ 56-57:
⁵¹ ա) «Առավետուն բարի լուս» (2/4), **Ս. Մելիքյան**, Հայ ժողովրդական երգեր և պարեր, հատ. 1, N 77, էջ 75;
 բ) «Վանեցու երգը» (4/4), **Ա. Բրուտյան**, Ռամկական մրմունջներ, հատ. 1, էջ 204-205;
 գ) «Մշեցու լորիկ» (4/4), **Ս. Ամատունի**, Ժողովրդական երգերի ձայնագրելա ժողովածու, N 16:

NN	Երգի անվանումը	Աղբյուրը	Գրի արձան տարեթիվը (թ.)	Ծննդավայր	Ձայնագրող վերձանող	Երգացանի տվյալներ
	2.	3.	4.	5.	6.	7.
1.	Ստալիտուն բարի լուս	Կոմիտաս , եժ. հ. 11, Երևան, 2000, N 124/112, էջ 64-65	1900-1904	Ալաշկերտ	Կոմիտաս	—
2.	Առվուտ խնոտ բարի լուսուն	Կոմիտաս , եժ. հ. 14, Երևան, 2006, N 11, էջ 45	1909-1914	Վան	Կոմիտաս	—
3.	Առավետուն, բարի լուսուն	Մելիքյան Սպ. , Հայ ժողովրդական երգեր և պարեր, հ. 1, Երևան, 1949, N 77, էջ 75	1926-ից	Բիբլիս-Ինտա	Սպ. Մելիքյան	Հովասափ Սինճյան գ. Երիլ (Կարավաթեր), ծնվ. 1900 – ամաններին
4.	Առավտուն թռչողի մուխ (Լորիկ)	Քոտայան Ա. , Ռամկական մրտնջներ, հ. 1, Երևան, 1985, N 17, էջ 36	1895	--	Ա. Բրուտյան	--
5.	Լորիկ (Առավտոտ բարի լուսուն)	Թունճան Մ. , Հայրենի երգ ու լուս, հ. 4, Երևան, 2005, N 115, էջ 133	1935 Քուստոն	Վան	Մ. Թունճան	Լևոն Գազանճյան
6.	Լորիկ (Առվուտ խնոտ բարի լուսուն)	Թունճան Մ. , Հայրենի երգ ու լուս, հ. 4, Երևան, 2005, N 116, էջ 134	1920-1922 Փարիզ	Վան	Մ. Թունճան	Տիգրան Չիթոնի
7.	Լորիկ (Առավտուն բարի լուս)	Թունճան Մ. , Հայրենի երգ ու լուս, հ. 4, Երևան, 2005, N 1, էջ 17	1935	Կլայթ	Մ. Թունճան	Լևոն Սեֆրյան
8.	Լորիկ (Առավտուն բարի լուս)	Դանուրյան Ստ. , Հայ ժողովրդական երգեր և ելակներ, հ. 9, Երևան, 2013, N 96, էջ 56-57	1890-1910	--	Ստ. Դանուրյան	--
9.	Վանեցու երգը (Առավտո բարի լուս)	Քոտայան Ա. , Ռամկական մրտնջներ, հ. 1, Երևան, 1985, էջ 204-205	1877	Վան	Ա. Բրուտյան	--
10.	Մշեցու լորիկ (Գազի արտեր թռի լուս)	Անաստուի Ա. , ժողովրդական երգերի ձայնագրեալ ժողովածու, 1884, N 16	1883	Մուշ	Ա. Անաստուի	--
11.	Գազի արտեր, թռի լուս	Կոմիտաս , եժ. հ. 9, Երևան, 1999, N 121, էջ 124	1895-1896	--	Կոմիտաս	--
12.	Գազի արտեր՝ թռի լուս	Կոմիտաս , եժ. հ. 11, Երևան, 2000, N 50/44, էջ 39	1900-1904	Օջական	Կոմիտաս	Բարխուդարյան

1.	2.	3.	4.	5.	6.	7.
13.	Գացի արտեր, բռնի լոր	Կոմիտաս , եժ. հ. 11, Երևան, 2000, N 299, էջ 119	1900-1904	Արաօցիա - Արաօյակը	Կոմիտաս	---
14.	Գացի արտեր, բռնի լոր	Կոմիտաս , եժ. հ. 13, Երևան, 2004, N 72, էջ 76	1908	Ճիրակ	Կոմիտաս	---
15.	Լուրիկ	Կարա-Մուրզա , Հայ ժողովրդական յուզեր, Ցերեան, «Պետերբուրգ», 1935, N 2, էջ 16-18	1892	---	Կարա-Մուրզա	---
16.	Պաղ աղբյուրին մոտիկ (Գացիքը արտեր, բռնիք լոր)	Թումանյան Մ. , Հայրենիք գ. րան, հ. 4, Երևան, 2005, N 302, էջ 350-351	1935	Վան	Մ. Թումանյան	Շուշանիկ Շահինյան
17.	Սաավալու լոր մտակ արտ	Կոմիտաս , եժ. հ. 12, Երևան, 2003, N 1 (256), էջ 19	1913	Մաստարա	Կոմիտաս	---
18.	Իսազար Էրնակ (Մշեցու օրիորդի երանուջություն)	Անատունի Մ. , ժողովրդական երգերի ձայնագրեալ ժողովածու, 1884, N 44	1883	Մուշ	Ս. Անատունի	---
19.	Հազար Էրնակ էր	Կոմիտաս , եժ. հ. 13, Երևան, 2004, N 123, էջ 119	1908	Մուշ	Կոմիտաս	---
20.	Քլիճ՛րու լուրիկ (Սաավալու լորնեղը մուկ)	Մեղրյան Սպ. , Շիրակի երգեր, հ. 1, Ընդիմա, 1917, N 98, էջ 45	1914	Ասարան	Սպ. Մեղրյան Ամ. Տեր-Ղևոնդյան	Իսանուճ Մամիկոնյան, ձեպ. 1870-ական. Արթիկ
21.	Սաավալու լորնեղը մուկ	ԵՊԿ ՖԱՃ-ի արտիպ՛, Հոկտեմբերյան, 1970, N 72	1970	Հին Քայազքե	Հ. Գրքաշարյան	Արամ Չաքարյան, ձեպ. 1902թ., Ույգնիիսա, գարթեղ եւ Ալաշկերտ
22.	Գացի արտեր բռնի լոր	ԵՊԿ ՖԱՃ-ի արտիպ, Հոկտեմբերյան, 1970, N 47	1970	Քայազքե	Ա. Փարիկանյան Հ. Գրքաշարյան	Չաքարյան Արամ, 1902 թ., Քայազքեի Ույգնիիսա գ.
23.	Հաավալու լորնիլը մուկ	ԵՊԿ ՖԱՃ-ի արտիպ, Կաթինե, 1974, N 3	1974	Հին Քայազքե	Ս. Բրուտյան	Վանուշ Բոցիկյան, Փավստոսի, 1909 Նոր Քայազքե՝ այժմ Փավստ
24.	Քարի լու (Լորիկ)	ԵՊԿ ՖԱՃ-ի արտիպ, Կաթինե, 1974, N 6	1974	Քարեք-Քիլիսի	Ս. Բրուտյան	Միսակ Փարիկյան, ձեպ. 1895 թ. Քարեքում,
25.	Գացի արտեր բռնի լոր	ԵՊԿ ՖԱՃ-ի արտիպ, Երևան, 1990, N 9	1990	Արաօյակը	Ա. Փարիկանյան Ս. Բրուտյան	արավերտեղ Է Կոմիտասի Արարիանուշ Մկրտչյան, ձեպ. 1888 թ., Արաօյակը

¹ ԵՊԿ ՖԱՃ – Երևանի պետական կրտսերկատորիայի ֆոլկլորային ամբիոնի ձայնագրաւան:

Ամփոփում

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ եզակի չեն այն օրինակները, որոնք ժամանակի ընթացքում կորցնելով իրենց ֆունկցիոնալ դերն ու նշանակությունը, կամ էլ հակառակը՝ ձեռք բերելով նորը, մի ժանրից մյուսին են անցել և տեղայնացել: Որքանով է երգային կամ պարային օրինակը պատկանում այս կամ այն ժանրին. ժանրային դասակարգման հարցում երգային օրինակի ո՞ր կառուցողական (մեղեդային, տաղաչափական) սկզբունքով առաջնորդվել:

Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Կոմիտասի «Լորիկ»-ների ձայնագրությունները, որոնք հայկական գեղջկական երգաստեղծության փայլուն օրինակներից են: Մեր կատարած ուսումնասիրությունները, ինչպես նաև ազգագրական այլ աղբյուրներում գետեղված նույնատիպ երգային օրինակների հետ համեմատական աշխատանքների վերլուծություններն ապացույց են այն բանի, որ նշված երգերի եղանակները ոչ թե «մեկից մյուսի զարգացումը ցույց տվող օրինակներն են», այլ **մեկ ամբողջական ավանդական ծիսական հարսնագովք**: Ժամանակի քայքայիչ ազդեցությամբ, աղճատվելով և մասնատվելով, այդ երգերը, այնուամենայնիվ, պահպանել են իրենց **մեղեդային ինքնությունը**: Միայն ծիսական երգերի ավանդականությամբ կարելի է բացատրել «Լորիկ»-ներում առկա մետրառիթմական, տաղաչափական և մեղեդային տիպական մտածողությունը, որը բխում է հարսանեկան երգերի բանաձևային կառուցողական սկզբունքից:

Բանալի բառեր՝ ավանդական երաժշտություն, հարսանեկան գովքեր, ծիսական երգ, բանաձևային մտածողություն, տիպական կառուցվածք, երաժշտական լեզու:

ТРАДИЦИОННЫЕ СВАДЕБНЫЕ ХВАЛЕБНЫЕ ПЕСНИ “ЛОРИК” В ЗАПИСЯХ КОМИТАСА

Резюме

Марианна Тигранян, кандидат искусствоведения

Институт искусств НАН РА

Ереванская государственная консерватория имени Комитаса

В армянском народном песнетворчестве не единичны примеры, когда песня, теряя свою функциональную значимость и принадлежность, или наоборот – приобретая новые – из одного жанра переходит в другой. Жанровая “двойкость” присуща некоторым любовно-лирическим песням, которые можно причислить также к свадебным обрядовым песням (восхваление невесты). В таких случаях проникновение интонационных особенностей одного жанра в другой – более чем естественно. Большой интерес представляют комитасовские записи песни “Лорик” (Перепелка), которые являются прекрасным примером армянского народного песнетворчества. Название “Лорик” условно (в рефрене-запеве доминирует “Лорик, лорик”), так как сам Комитас записанные им песни, как правило, озаглавливал первой строчкой, хотя в записях этнографов-музыкантов более старшего поколения

варианты рассматриваемой нами песни озаглавлены именно “Лорик”. В одной из своих статей, отмечая песни “Пошел я в поле, поймал перепелку”, “Утра добрый свет”, “Поутру перепелка на поле прилетела” и, рассматривая их в разных жанрах, Комитас приводил их как пример мелодического развития и перехода из одного в другой. Наши исследования, сравнительный и детальный анализ собранного нами обширного песенного материала доказывают идентичность строения музыкального языка этих песен, а также их единую жанровую принадлежность к свадебному обряду.

Ключевые слова: свадебный обряд, хвалебные песни, типовое мышление, традиционная музыка, модульное строение, музыкальный язык.

THE *LORIK* TRADITIONAL EPITHALAMIUMS IN KOMITAS'S TRANSCRIPTIONS

Abstract

Marianna Tigranyan (Armenia), PhD in Art
Institute of Arts NAS RA
Komitas State Conservatory

The Armenian tradition of folk song creation has numerous examples, when the songs losing their functional role and significance within the course of time, or, on the contrary, obtaining new functions and applications, have transferred from one genre to the other and localized there. How is a song or a dance classified under a genre? What is the structural (melodic, prosodic) principle to be guided by when defining a genre for a song?

A kind of duality in genres is typical to some lyrical and love songs, which can be classified into a number of bride-epithalamium songs. In this case, the penetration of typical phrases of one genre into the other is natural.

In this regard, *Lorik* songs transcribed by Komitas, being brilliant examples of Armenian peasant songs, are especially interesting. The title *Lorik* is conditional (each song ends with the refrain *Lorik, lorik, lorik*) and includes the songs *Gatsi arter, brni lor* (*I went to the fields, I caught a quail*), *Aravotun bari lus* (*Good morning*), and *Aravot lor mtav art* (*A quail came into the field in the morning*). Komitas mentioned that those songs were examples of transition from one genre to the other. He classified them into two different genres: wedding song and lyrical song. When singing lyrical and love songs, the folk singer manifests his/her inner world and his personal approach using emotion born in a certain situation and typical only to that particular performer. The wedding songs, by contrast, concentrate and save features typical to national traditional songs, which have been accumulated through centuries.

My explorations, as well as the comparative analyses of similar examples in other ethnographic sources demonstrate that the melodies of the above-mentioned songs are not just a transformation from one genre into another, but are rather a complete set of traditional ceremonial epithalamiums to the bride. Despite the distortions and disintegrations over time, these songs have maintained their melodic individuality. The metro-rhythmic, prosodic and melodic features typical to the *Loriks* can be explained only by the “traditionality” of the ceremonial songs, which derive from the formulaic structure pertinent to wedding songs.

Key words: wedding ceremony, traditional ceremonial panegyrics to the bride, structural principle, traditional music, modular structure, musical language.

ԿՈՄԻՏԱՍԻ ՊԱՐԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Գագիկ Գինոյան (Հայաստան)
ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ
«Կարին» ավանդական երգ ու պարի խումբ
Ազգային երգ ու պարի ակադեմիա

«Ցեղը գերազանցապես ուրիշ է:

Եվ երբ պարահում է, պարագաների բերումով, որ ցեղը կամ ժողովուրդը կորցնում է, մոռանում է իր կշռույթային ինքնությունը,- նա դառնում է խառնածին քանակ, բոլոր հոսանքները ընդունող և ոչ մի հոսանքին պարկանող, բոլոր պարերը պարող, բայց հոգեպես մերկ և մշտնջենապես անպար»:

Կոստան Զարյան

Ամենայն Հայոց երգի Վարդապետ Կոմիտասը հայ առաջին պարագետն է, առաջին պարահավաքը, հայոց պարի քուրմը: Նա առաջինն էր, որ փորձեց անդրադառնալ հայ հազարամյա պարարվեստին, ոչ միայն արժևորել, այլ նաև բնութագրել, դասակարգել ըստ շարժումների, մեղեդիների չափի և երաժշտական կշռույթի, նրանց կատարման տեղի և ժամանակի: Պիտի փաստենք, որ Կոմիտասի՝ հայ պարարվեստին նվիրված աշխատությունները, մշակումները, դասախոսություններն ու ընդհանրապես հայ պարարվեստում ունեցած նրա ժառանգությունը, նաև պարարվեստը զարգացնելու, նրա հանդեպ գիտական մոտեցում սկզբնավորելու, հազարամյակների պատմություն ունեցող, բայց երբևէ գիտական անդրադարձ չունեցած մեր կենցաղային մշակույթը գիտական համաշխարհային մակարդակի բարձրացնելու առաջին քայլերն իրականում Կոմիտասի հանճարի ամենաչքացահայտված, չվերլուծված և լայն հասարակությանը հավուր պատշաճի չներկայացված մասն են:

Մեծ է գայթակղությունն ու առավել մեծ՝ պատասխանատվությունը հայ պարարվեստում նրա հայտնագործումներն ու բանաձևումները մեկ ամբողջական նյութով լայն հասարակության դատին ներկայացնելու, փորձելով ապացուցել Կոմիտասի՝ հայոց առաջին և մեծագույն պարագետներից մեկը լինելու փաստը:

Կոմիտասի պարային ժառանգությունը ներկայացնելու և բացահայտելու խնդիրը և միաժամանակ և՛ դյուրամատչելի է, և՛ բարդ: Նախևառաջ, պետք է ներկայացնել, թե Կոմիտասն ինքն ինչ վերաբերմունք է ունեցել հայ պարարվեստի նկատմամբ: Կոմիտասն այն ուսումնասիրել է որպես հայ երաժշտական հանճարի դրսևորման մեկ այլ ասպեկտ՝ նպատակ ունենալով նրանում նույնպես բացահայտելու հայ երաժշտարվեստի այս կամ այն դրսևորումը, բանաձևումը: Կոմիտասը պարը դիտարկում էր որպես հայ

ժողովրդի երաժշտական ժառանգության մի ինքնատիպ դրսևորում, որպես հայ երաժշտարվեստի առանձին մի ճյուղ՝ սերտորեն շաղկապված հայոց երգի և ընդհանրապես հայ ազգային, ծիսական, կենցաղային և այլ տարբեր երևույթներին:

Պիտի փաստեմ իմ համոզմունքը, որ միայն կոմիտասյան հանճարեղ ձևակերպումը պարի մասին՝ «Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը», արդեն իսկ ցուցադրում է պարի կարևորումը հայ երաժշտարվեստի իր ուսումնասիրության համար: Ակնհայտ է Կոմիտասի ավելի քան լուրջ մոտեցումը հայ պարարվեստին, նրա ոչ միայն երաժշտական բաղադրիչին, այլև մարմնի տարբեր մասերի շարժումների բնութագրմանն ու նկարագրությանը, պարերի ծիսական դրսևորումների և նրանցից շատերի հոգևոր ենթատեքստերի մեկնաբանմանը:

Պարարվեստն, ինչպես այլ հին ազգերի, այդպես էլ հայերի մշակույթում, գոյություն է ունեցել դեռևս վաղնջական ժամանակներից. ոչ միայն նախաքրիստոնեական, այլև՝ նախահեթանոսական: Մինչև մեր օրերն էլ պարարվեստն իր մեջ պահպանել է այնպիսի պարեր, որոնք կարելի է դասել թե՛ բնապաշտական ժամանակաշրջանին, թե՛ հեթանոսական, նախաքրիստոնեական դարաշրջանին: Դրանց մեջ, թերևս, ամենահատկանշականն են ազգային-ծիսական, հարսանեկան և կոչունքի (հրավերքի)¹, սուգի ու հուղարկավորության և, հատկապես, մեհենական ու կրոնական պարանմուշները, կամ դրանց վերապրուկներն ու կենցաղավարման փուլ անցած, բայց իրենց ծագումնաբանական հենքն ամբողջովին չկորցրած պարեր:

Պարարվեստը չի թողել, և չէր էլ կարող թողնել ճարտարապետության, քանդակագործության, նկարչության, անգամ երաժշտության պես իրական, նյութեղեն կամ գրավոր հիշատակարաններ, մանավանդ, որ այն չի ունեցել գրառման այբուբեն, նաև նոտագրության՝ հնամենի խազագրության օրինակով չի ունեցել փոխանցման որևէ համակարգ՝ բացի բանավոր և շարժումների ցուցադրողական տարբերակներից: Թերևս Կոմիտասն առաջինն էր, որ XX դարասկզբին գիտակցելով երգարվեստի և պարարվեստի անքակտելի կապն ու պարերգերի հզոր ազդեցությունը հայ երաժշտարվեստի վրա, անդրադարձավ հայ պարարվեստին:

«Հայ գեղջուկ պարը» հողվածի ավարտին Կոմիտասն ասում է. «Շապ

¹ Քաջ հայտնի է Մովսես Խորենացու կողմից մի իշխանական կոչունքի և այնտեղ պարող վարձակ (վարձու պարուհի) Նազինիկի մասին հիշատակությունը: «...տեսեալ Տրդատայ զկին մի, զի յոժ գեղեցիկ էր և երգեր ձեռամբ, որում ատուն էր Նազինիկ»...: **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 236:

հեղաքրքրական է իւրաքանչիւր տեսակ պարի ինքնուրոյն կազմութեան նկարագիր տալ, բայց մեծաքանակ ծախսի պատճառով թողնում ենք անելի պատեհ ժամանակին»²: Կոմիտասն, այնուամենայնիվ, պարբերաբար անդրադարձել է և՛ պարերին, և՛ պարերգերին, և՛ պարեղանակներին: «Խորապէս նվիրված իր ժողովրդի երգարվեստին, նա (Կոմիտասը - Գ. Գ.) նույնքան հեղուղականորեն ուսումնասիրում էր և պարարվեստը: Ավելորդ չի լինի ասել՝ նա յուրացրել ու վարպետորեն ցուցադրում էր ազգային ամենահասարակական պարերի խորեոգրաֆիան ևս: Հայ գեղջկական պարերին նվիրված իր աշխատություններում Կոմիտասն այդ պարերի շարժումները նշում էր «նուրբ և քնքույշ, վեհ և եռանդուն, լուրջ և վայելույշ» մակդիրներով, որոնք, անշուշտ, կհասկացնէր նաև դրանց երաժշտությանը», - մատնանշում է ժողովածուի խմբագիր Ռոբերտ Աթայանը՝ Կոմիտասի Երկերի ժողովածուի 6-րդ հատորի նախաբանում³:

Կոմիտասը հայ պարին անդրադարձել է ոչ միայն «Հայ գեղջուկ պարը» հոդվածում, այլև ուրիշ աշխատություններում, ինչպէս նաև դաշնամուրային ստեղծագործություններում, մշակումներում, պարեղանակների, պարերգերի գրառումներում, նաև իր դասախոսություններում և մասնավոր զրույցներում: Օրինակ, 1928 թ. «Ամենուն տարեցույց»-ում տպագրված «Պարն ու մանուկը» հոդվածն իրականում 1912 թ. Կ. Պոլսի Եսայան դպրոցում Կոմիտասի կարդացած դասախոսության տպագրությունն է⁴:

Կոմիտասի մոտեցումն ինքնատիպ և ուշագրավ է ոչ միայն առանձին պարերի նկարագրությունների մեջ, այլ հատկապէս պար երկույթի, նրա կարևորության, ազգի բնութագրի և նրա քաղաքակրթության աստիճանի արտացոլման, մատաղ սերնդի դաստիարակության մեջ ունեցած դերի կարևորման և այլ տեսանկյուններից: Թերևս այն ձևակերպումները, որ հայտնաբերում ենք կոմիտասյան ընդամենը մի քանի աշխատություններում, դասախոսություններում, հոդվածներում կամ մեկնաբանություններում վստահաբար ոչ միայն երաժշտագիտության, այլ առանց կասկածանքի նաև

² Կոմիտաս Վարդապետ, Հայ գեղջուկ պարը, Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Ա. Մուշեղեանի, Գիրք Ա, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2005, էջ 292: Հոդվածի առաջին տպագրությունը գերմաներեն է, տպագրվել է *Zeitschrift für armenische Philologie* ամսագրում, Մարբուրգ, 1901, N 1, էջ 87-96: Նաև ռուսերեն. **В. Корганов.** *Кавказская музыка*, Сборник статей, издание второе, Тифлис, 1908. Այնուհետև՝ Կոմիտաս, Հայ գեղջուկ պարը, Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, Յերեվան, Պետական հրատ., 1941, էջ 51-62:

³ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան., «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 7:

⁴ Տե՛ս նաև Կոմիտաս, Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, էջ 63-67: Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, Գիրք Բ, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինգ» հրատ., 2007, էջ 75-79:

փիլիսոփայության, մարդաբանության, հայրենագիտության և հոգեբանության թեզեր են, որոնցից շատերը վաղուց թևավոր խոսքեր են դարձել և իրենց առանձին կյանքն են ձեռք բերել Կոմիտասի գիտական հոդվածներից, դասախոսություններից, պարային նկարագրություններից և այլ աշխատություններից դուրս:

Ստորև մեջբերում ենք դրանցից մի քանիսը «Հայ գեղջուկ պարը» հոդվածից.

«Մարդկային կեանքի աչքի զարնող երեսոյթներից մէկն էլ պարն է: Պարն արտայայտում է իրաքանչիւր մի ազգի բնորոշ գծերը, մանաւանդ, բարքն ու քաղաքակրթութեան աստիճանը. որովհետեւ, թէպէտ մարդ պարում է ազապ կամքով, բայց մարմնի տեսակ-տեսակ շարժումներն ակամայ մատնում են ներքինը»⁵:

«Հայոց ազգային պարերը խմբական են: Խմբապարը շապ խորունկ արմատ է ձգել հայ գեղջուկի մէջ, որ հինը պահում է եւ նորը յօրինում: Պարը բոլորում են կամ բռնում այսպէս: Պարողները մէկին ընտրում են պարագլուխ, որ, սովորաբար, իրանց շրջանի անուանի ձայնեղն ու պարողն է լինում: Խումբը կարող է լինել ե՛ւ միասեռ ե՛ւ երկսեռ»⁶:

«Հայ գեղջուկ պարերի ժամանակ, սովորաբար, նուագարաններ չեն մասնակցում. (նուագարանների գործածութիւնը թէեւ մտել է, բայց օտար է. նուագարաններով պարելը տարածուած է քաղաքներում եւ կամ առ առաւելն սորա մերձակայ գիւղերում, որոնք քիչ թէ շապ շփումն ունին օտարներին) հայ ժողովուրդը պարում է երգելով: Մեր հին նախնիքը երգելով պարելուն ասում էին գեղօն»⁷:

«Պարի ներքին բովանդակութիւնն անփոփոխ այս երեք տարրը՝ շեշտ, յանգ եւ եղանակ, բոլոր ազգերն էլ ունին, բայց արտայայտութեան աստիճանը կախումն ունի ազգային խառնուածքից եւ քաղաքակրթութիւնից. իսկ այդ երկուսը՝ ժողովրդի ամբողջ ներքին եւ արտաքին վիճակից: Ուրեմն ազգային պարերի յատկութիւնը սահմանելու համար պէտք է քննել արտաքին պայմանները»⁸:

Կոմիտասի՝ պարին առնչվող մտքերը դիպուկ են ներկայացված նաև «Պարն ու մանուկը» հոդվածում:

«Պարն ամենահիմնական նշանակութիւն ունեցող երեսոյթ մըն է. ամէն գեղարուեստ պարի մէջ կը պարփակուի: Իբրեւ շարժում՝ պարը շապ կարեւոր

⁵ Կոմիտաս Վարդապետ, Հայ գեղջուկ պարը, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Ա, էջ 284:

⁶ Նույն տեղում, էջ 289:

⁷ Նույն տեղում, էջ 290:

⁸ Նույն տեղում, էջ 284-285:

դեր ունի ապագայ դարոցական կեանքի գեղարուեստական շարժումին մէջ, վասն զի պէտք է գիտնալ, թէ ամէն գեղարուեստ, ինչպէս երաժշտութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն եւ այլն շարժում է. ամէն կեանքի մէջ պար կայ. արդէն ամբողջ տիեզերքի կեանքը պար չէ՞»⁹:

«Մտաւոր զարգացումի աստիճանին վրայ կը գրնուի պարին շարժումն ալ: Ուրեմն ազգի մը քաղաքակրթութեանն է կապուած իր պարին շարժումներու զարգացումը: Այն մարդիկ որոնք նստուկ կեանք ունին, թոյլ են՝ ոչի՛նչ կ'ընեն, ո՛չ մէկ կերպով կը շարժին: Միթէ թուամորթ մարդը կրնա՞յ արդէն սուր առնել, թուր առնել»¹⁰:

«Պարերգերը ծագումն են առնում պարի ժամանակ տղայի եւ աղջկայ միջեւ առաջացած զգացմունքներից, եղանակները համապատասխանում են քայլերին եւ թռիչքներին եւ կարճ են առհասարակ պարողներին չը յոգնեցնելու համար: Նրանք սկսում են ինչպէս պարերը, ծանր հանդիսաւոր եւ ապա կամաց կամաց փաքանում եւ արագանում: Պարագլուխը երգում է առանձին նախադասութիւնը մինչեւ վերջին բառը, խումբը առնում է վերջին բառից եւ կրկնում նոյն նախադասութիւնը, որի վերջին բառից դարձեալ սկսում է պարագլուխը եւ շարունակում է երկրորդ նախադասութեան մինչեւ վերջին բառը եւ այսպէս յաջորդաբար»¹¹:

Կոմիտասը բժախնդրորեն կարևորում է նաև պարը ձևավորող միջավայրը: Նա հանգամանորեն նկարագրում է կենցաղը, պարի գոյացման ընթացքը, մասնակիցների սոցիալական տվյալները և այլն:

«Առաջ առաջ, մի չորս հոգի եկաւ: Պարը բոլորեցին: Մի երկու շրջան, լուռ, բայց համաչափ քայլով, դէպի աջ, որպէս սովորոյթ է խաղի սկզբին, պտոյտ արին...

Վերջին 6, 7 եւ 8 ձեւերին փոխուեցաւ փաղաչափութեան կշիռը, որովհետեւ թոնում էին արագ: Ութերորդ ձեւը երգելիս եկաւ մի երկրորդ խումբ, որ պարի մէջ մտնելու հէնց երգի ընթացքում: Նոր պարագլուխ անցաւ խաղի գլխին: Պարագլուխ լինում են յայտնի խաղ ասող եւ ձայնեղ աղջիկներ կամ տղայք. երբ գալիս է մի այդպիսին, նախկինը պարի դեկը փալիս է նորան եւ ինքը կանգնում ձախ կողմից...

⁹ Կոմիտաս Վարդապետ, Պարն ու մանուկը, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Բ, էջ 75:

¹⁰ Նույն տեղում, էջ 77:

¹¹ Կոմիտաս Վարդապետ, Հայ ժողովրդական եւ եկեղեցական երգերը, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Ա, էջ 328-329: Այս հոդվածը Կոմիտասի դասախոսության սղագրութիւնն է, որ լույս է տեսել 1905 թ. «Մշակ»-ում (№, 6566, Թիֆլիս):

Պարը հասաւ ոգետրութեան գագաթին: Պարագլուխն իր սքանչելի ձայնով ոլորեց եղանակը, նոր ոգի ներշնչելով, երգին համ ու գոյն փուսա»¹²:

Կոմիտասի Երկերի ժողովածուի վեցերորդ հատորում գետեղված պիեսների գլխավոր մասը դաշնամուրային պարերն են, որոնց ստեղծման համար ելակետային նյութ են ծառայել ժողովրդական պարեղանակները¹³: Պարերի դաշնամուրային մշակման ինքնատիպ նմուշ է «Մշո շորորը», որն իր հերթին ունի տարբերակներ: Մի տարբերակն ընդգրկում է հետևյալը. 1. Շարան, 2. Շորոր, 3. Նազ, 4. Թոնոց 5. Կոխ, 6. Ճոշ: Վերջից առանց թվահամարի ավելացված է նաև Ճոր, որը նշանակում է ճոճվելով պար և Նազ պարի ժողովրդական մեկ այլ անվանումն է¹⁴: Երկրորդ տարբերակում «Մշո շորորի» բաղկացուցիչները հետևյալն են՝ ա) Շարանի բ) Ծանր Պար գ) Թոնոցի դ) Կոխ ե) (Պարատեսակը նշված չէ)¹⁵, զ) Ճոճ է) Ճոշ: Անվանում չունեցող պարը ելևէջային կառուցվածքով նման է Մուշի-Սասունի նշանավոր «Քոչարիին», որը երբեմն անվանում են նաև «Մշու Խըռ»: Այս հանգամանքը ևս նկատում է Ռ. Աթայանը¹⁶: Պարերի ինքնատիպ մշակումներ են ներկայացնում նաև Յոթ պար վերտառությամբ պիեսները, որոնց մեջ ընդգրկված են 1. Մանուշակի, 2. Երանգի, 3. Ոնաբի, 4. Մարալի, 5. Շուշիկի, 6. Հետ ու առաջ 7. Կարնո շորոր պարերը: Այսպիսով՝ ակնհայտ է բազմազանությունը:

«Պարերի» (1906-1907 թթ.) առաջին կատարումներից հետո ֆրանսիական, շվեյցարական ու քելգիական երաժշտական պարբերականներում դրվատական շատ կարծիքներ են տպագրվել: Տպավորությունն այնքան զորեղ է եղել, որ երաժիշտ-քննադատները լոկ դաշնամուրի նվագը լսելով պատկերացրել են նաև հայ ժողովրդական պարերը. «*Հայկական Պարերը՝ այնքան բնական, այնքան ճկուն և այնքան կենդանի են, որ ներդաշնակ ժեստերով ու կեցվածքներով ունակ են հաղորդելու հոգու դիթմերն ու շարժումները. մի սքանչելի արվեստ, որ չի ճանաչում այն պայմանականությունները, որով ապրում է, կամ ավելի սրույզ ասենք՝ մահանում է եվրոպական պարարվեստը... ժեստերի պարեր և պլաստիկ, ինչպես օրինակ հեռավոր արևելքի պարերը, բայց նաև մեզ շար հարազատ, որ հիշեցնում են երթաշարի կամ շուրջպարի այն փեսարանները, որոնցով գոբլորոված են անփիկ սկահակները»¹⁷:*

¹² Կոմիտաս Վարդապետ, Հայ գեղջուկ երաժշտութիւն, Ուսումնասիրութիւններ եւ յօդածներ, Գիրք Ա, էջ 346-350: Կոմիտաս, Հայ գեղջուկ յերաժշտություն, Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, էջ 15-44:

¹³ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 6, խմբ՝ Ռ. Աթայան, Երևան, «Սովետական գրող» իրատ., 1982:

¹⁴ Տես Ռ. Աթայանի ծանոթագրությունը: Նույն տեղում, էջ 160:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում, էջ 161:

¹⁷ Հենրի դե Բյուսների հոդվածը "Le Mercure musical" հանդեսում, 1907 թ. էջ 502-503:

Երաժշտագետ, Կլոդ Դեբյուսիի նշանավոր կենսագիր Լուի Լալուան նույնպես բարձր է գնահատել «Պարերը»։ «...մերթ ծանր ու կրօնաշունչ, մերթ մեղմիկ՝ ինչպես սիրոյ երգ, կամ թեթեւ, կարծես անմեղ կապակ՝ այդ պարերը միշտ խորապէս արտայայտիչ։ Ճշմարիտ երաժշտութիւն ներդաշնակ ու ազապ գեղեցիկ մարմինների բնական լեզու, որի օգնութեամբ մարդկային էութիւնը դառնում է ուրախութեան կամ կարօտի եւ կամ ըղձանքի կենդանի պատկեր»¹⁸ :

Պարերի նկատմամբ Կոմիտասի վերաբերմունքը թերևս ամենավառն է արտացոլված «Հայ գեղջուկ պարը» հոդվածում, որտեղ հեղինակը մատնանշում է. «Հայ գեղջուկ պարի ինքնուրույնությունը բնորոշելու համար պետք է ամենապրեսակ զգացումներ արտահայտող շարժումներն առանձին-առանձին քննել», և որտեղ մանրակրկիտ նկարագրել է ոչ միայն հայ ավանդական պարն ու նրա տարատեսակները, այլև պարերում ընդհանուր շարժման ձևերը, մարմնի տարբեր մասերի շարժումների տեսակները, ուղղությունները, չափն ու նաև բնավորությունը:

«Ա. Շարժումների **տեսակները**՝ զարնել, խփել, քայլել, սահել, շորորել, ծածանել, ճօճել, շրջանել, կեռանալ և թռնել.

Բ. Շարժումների **ուղղութիւնները**՝ առաջ, յետ, վեր, վար, աջ, ձախ, թեք, փռն ու փռը.

Գ. Շարժումների **չափը**՝ ծանր, չափաւոր, զուարթ, դանդաղելով, շտապելով.

Դ. Շարժումների **բնատրոսութիւնը**՝ վստահ, ազապ, միամիտ, քնքրյշ, նուրբ, վեհ, եռանդուն, լուրջ, համեստ, վայելուչ»¹⁹:

Կոմիտասը մատնանշում է. «Հայ գեղջուկ պարը կիրք զարթնեցնող շարժումներ չունի եւ զգացումներն արտայայտում են մարմնի ոչ թէ մեղկ, մոլի, կապաղի հրապուրիչ և այլն շարժումներով, այլ պարերգերի միջոցաւ: Պարերգերի սովորական բովանդակութիւնն է կարոպ ու գովք, ծաղր ու զաւեշպ՝ սիրոյ շուրջը՝ բնական գողտրիկ համեմատութիւններով համեմուած»²⁰, ապա ըստ մարմնի մասերի՝ պարի շարժումներին տալիս է այսպիսի դասակարգում.

«Ա. **Ազդրի եւ ոտքի** շարժումներ.

Բ. **Բազկի եւ դաստակի** շարժումներ.

Գ. **Իրանի** շարժումներ.

Դ. **Գլխի** շարժումներ»²¹:

Մարմնի մասերից յուրաքանչյուրի շարժումների ձևերն առանձին-առանձին մանրամասն նկարագրելով՝ Կոմիտասը փաստելով է. «Հայոց ազգային

¹⁸ Անահիտ, Փարիզ, 1907 թ. N1-2:

¹⁹ Կոմիտաս Վարդապետ, Հայ գեղջուկ պարը, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, Գիրք Ա, էջ 285:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 285-286:

պարերը խմբական են: Խմբապարը շար խորունկ արմար է ձգել հայ գեղջուկի մէջ, որ հինը պահում է եւ նորը յօրինում: Պարը բոլորում են կամ բռնում այսպէս: Պարողներից մէկին ընտրում են պարագլուխ, որ, սովորաբար, իրանց շրջանի անուանի ծայնեղն ու պարողն է լինում: Խումբը կարող է լինել եւ միասեռ, եւ երկսեռ»²², ապա մանրակրկիտ նկարագրում է նաև պարերում ձեռքերը բռնելու տարատեսակներն ու առանձնահատկությունները.

«ա. Ձեռքերի հորիզոնական, բարձր կամ կախ դիրքով, ձեռք ձեռքից բռնած (հյրաքանչիւրն աջ ձեռքով աջ կողմինի ձախ ձեռքը, իսկ ձախով՝ ձախ կողմինի աջ ձեռքը).

բ. Հորիզոնական, բարձր կամ կախ դիրքով, ճկոյթ մալուներն իրար հիսած.

գ. Կախ դիրքով, ձեռքերը խաչաձեւ հիսած (հյրաքանչիւր կէնք համար իւր աջ եւ ձախ կողմինի թեւերի տակով, իսկ զոյգերը՝ վերայով).

դ. Կախ, բայց ձեռքերն ամենեւին չհիսել, չբռնել, այլ քիփ, թեւ թեւին տալ, կցել եւ իբրեւ մի ամբողջութիւն պարել.

ե. Հորիզոնական՝ հյրաքանչիւրն աջ եւ ձախ ձեռքը աջ եւ ձախ կողմինի ձախ եւ աջ ուսին է դնում. եւ

զ. Հորիզոնական դիրքով, հյրաքանչիւր մէկին գրկում է իւր աջ կողմինը ձախ ձեռքով և ձախ կողմինը՝ աջով»²³:

Իհարկեւ, նկարագրությունները թերի կլինեին, եթէ Կոմիտասը չանդարդառնար պարեղանակների երաժշտական չափին: Նա մանրակրկիտ նկարագրում է. «Պարերգերի նախադասութիւններն ընդհանրապէս բովանդակում են ութն հարած կամ ուրբ. սակայն քիչ չեն եւ պակասն ու ւաւելին: Ընդարձակներն ունին այսպիսի կազմութիւն՝ (8+8), (8+8+8), (8+4), (8+2), (8+8+2), (4+2), (5+3+3+3), (5+3+3+4) և այլն: Կարճերն ունին հետեւեալ ձեւերը՝ 4=(2+2), 6=(3+3) կամ 5=(3+2) կամ (2+3), 7=(4+3) կամ (3+4) եւ այլն»²⁴:

Կոմիտասի արխիվում պահվող պարերի եզակի գրառումները մատնանշում են նրա մեծ հետաքրքրությունն ու ցուցաբերած լուրջ վերաբերմունքը հայ պարարվեստի նկատմամբ և դեռ կասկածներ առաջացնում, որ դրանք կոմիտասյան հանճարի լոկ փշրանքներ են, որ պահպանվել են Հայոց ցեղասպանությունից հետո: Կասկած կա, որ նմանատիպ գրառումներ, աշխատություններ, սևագրեր, բանաձևումներ կոմիտասյան ժառանգության մեջ էլի են եղել, սակայն, ցավոք սրտի, հայ ազգի մի մեծ հատվածի նման ոչնչացվել են թուրք հայասպանների կողմից: Նրանք ոչնչացնում էին ոչ միայն ազգը, այլ

²² Նույն տեղում, էջ 289:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում, էջ 290-291:

նաև նրա մշակույթը, քաջ գիտակցելով, որ առանց իր հազարամյա մշակույթի ազգն ի վերջո պետք է կործանվի:

Կոմիտասի գրառած ութ պարերը ներկայացնող «Պարերի նկարագիր» (Գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, 654), ապա նաև «Ձանազան յայլիների» (Գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի ֆոնդ, 642) գրվածքների հետ իմ առաջին առնչությունն ուղղակի զարմանք և հիացմունք առաջացրեց, բայց և՛ փոքր-ինչ հիասթափություն, որ այդ գրառումները երբևէ կյանքի չեն կոչվել: Մի քանի տարի անց երկրորդ անգամ այդ նյութերին անդրադառնալով սերմանեց մի երազանք. վերականգնել այդ պարանմուշներից գոնե մեկն ու մեկը՝ գործնականորեն լույս աշխարհի բերելով Կոմիտասի պարային ժառանգությունը: Սակայն պիտի խոստովանեմ, որ դա դյուրին չէր այնքան, ինչքան կարող է առաջին հայացքից թվալ, քանզի Կոմիտասը պարերը գրառել էր ձեռագիր, խոսքային նկարագրությամբ, առանց որևէ նշանների կամ գրառման համակարգի օգտագործման: Երկրորդ՝ ավելի մեծ բարդությունն այն էր, որ գրառված ութ պարերից որևէ մեկի նկարագրությունում մատնանշված չէր, թե տվյալ պարին ինչ պարեղանակ է համապատասխանում:

Կոմիտասի գրառած պարերին իմ հաջորդ անդրադարձի առիթներից մեկը եղավ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ջանքերով Կոմիտաս Վարդապետի գիտական աշխատությունների հրատարակումը²⁵: Մյուս կողմից, ինձ օգնեց հայ պարագետ Սրբուհի Լիսիցյանի շարժումների գրառման համակարգը՝ կինետոգրաֆիան²⁶:

Առաջին փուլում, ավելի հստակ պատկերացնելու համար, կինետոգրաֆիայի համակարգով պարզապես գրառեցի Կոմիտասի նկարագրած պարաքայլերը: Այնուհետև, ըստ պարերի նկարագրությունների՝ սկսեցի Կոմիտասի գրառած ազգագրական ժառանգության մեջ փնտրել համապատասխան պարեղանակներ: Սակայն այս փորձերն էլ անցան ապարդյուն՝ բավական բարդ պարաքայլերի և նաև՝ պարագետի և պարեր վերականգնողի՝ իմ ոչ բավարար հմտության պատճառով:

Հաջորդ անդրադարձը երկար սպասել չտվեց, քանի որ տեղեկատվական ոլորտի «Ինստիտյուտ» ուսումնական կենտրոն հիմնադրամի հետ համատեղ երկու տարվա համագործակցությունից ծնվեց Սրբուհի Լիսիցյանի ստեղծած կինետոգրաֆիայի համակարգչային համարժեքը՝ «Կաքավագիրը», որը ոչ միայն պարզեցրեց և ավելի դյուրին դարձրեց աշխատանքը, այլև օգնեց ի վերջո

²⁵ Կոմիտաս Վարդապետ, *Ուսումնասիրություններ եւ յօդաձևեր*, Գիրք Ա, Բ:

²⁶ С. Лисициан, *Запись движения (кинетोगрафия)*, Москва, изд. “Искусство”, 1940.

վերականգնել և բեմ բարձրացնել, այսինքն՝ զուտ գիտական նյութից բեմական և ստեղծագործական նյութի փոխակերպել Կոմիտասի գրառած մի քանի պարանմուշ: Կոմիտասի ութ պարերից երկուսի վերականգնումը եղել է առաջնահերթություն, քանի որ նրանց պարեղանակներ համապատասխանեցնելու հարցում բավարար համոզվածություն ունեի: Խոսքը վերաբերում է N°1 և N°6 պարերգերին, որոնցից առաջինին, ըստ նկարագրության համապատասխանում է Կոմիտասի ազգագրական ժողովածուից «Ճամփի պարին»²⁷, իսկ երկրորդը՝ ազգագրական ժողովածուից «Շորորին»²⁸:

Պարերգ N°1-ի պարաքայլերի վերականգնումը որոշակի դժվարություններ առաջադրեց՝ այսօրվա 5/4 երաժշտական չափով: Ներկայում տարվող աշխատանքները, հուսով եմ, շուտով ավարտին կհասցնեն: Իսկ Պարերգ N°6-ը, որին համապատասխանում է, ըստ իս, «Շորորի» պարեղանակը, արդեն լիարժեքորեն իրագործված է: Մեջբերելով դրա կոմիտասյան ամբողջական նկարագրությունն ու Շորորի նոտային օրինակը, փաստեմ նաև, որ այս պարանմուշն արդեն երկու տարի է, ինչ զարդարում է տարբեր բեմահարթակներ:

«Պարերգ N°6

1) Աջ ոտը մի քայլ առաջ, ձախը մի քայլ առաջ. 2) աջ ոտնաձայրով 2 x զարնել առաջը աջ կողմից դուրս. 3) աջ ոտը յետ բերել եւ բնական դիրքով ձախ քալել. ձախը ձախ տանել, աջը ձախ տանել եւ ձախը, ձախ տանել. 4) կրկնել բոլորն սկզբից. 5) մի-մի անգամ աջ քայլել աջ ոտով. ձախով. աջով եւ ձախը աջ բերելով թեք ուղղությամբ առաջը զարնել ոտնաձայրով աջ ոտի կողմից. 6) 4 անգամ ձախ գնալ (նախ ձախ եւ ապա աջ ոտքը ձախ տանելով) չորրորդ անգամին աջը (որ վերջին քայլն է) թեք բերելով ձախի ուղղությամբ առաջը զարնել ոտնաձայրով ձախ ոտի կողմից. 7) երկու անգամ աջ գնալ (աջ ոտն առաջ տանել) եւ 8) 2 x ձախ գնալ (ձախն առաջ տանել) վերջին 7 եւ 8 համարների ժամանակ էլ վերջին ոտքի շարժողությունը թեք է լինելու, 7-ին, որպէս 5 վերջինը եւ 8-ին որպէս 6-ինը: Մարմինը դէպի փոր է կոտորվում ամէն մի հափածի վերջին: Որքերի քայլերը եւ զարնելը տեղի է ունենում հափածների սկզբին:

*Ձեռներն ունեն սովորաբար բարձր դիրք ճկոյթները իրարու հագցրած»*²⁹:

²⁷ **Կոմիտաս**, *Երկերի ժողովածու*, հատ. 10, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., խմբ.՝ Ռ. Աթայան, N°84: Ըստ ծանոթագրության՝ կատարում են երիտասարդները՝ հարսին եկեղեցի տանելիս և վերադառնալիս:

²⁸ Նույն տեղում, N°87: Ըստ ծանոթագրության՝ գիշեր ժամանակ պարում են հարսանիքներում, երբ հարսին եկեղեցուց արդեն տուն են բերել:

²⁹ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ եւ յօդածներ*, Գիրք Ա, էջ 296-297:

Կոմիտասի ազգագրական ժառանգությունից քաղված «Շորորի» մեղեդին հետևյալն է:

*Նուրային օրինակ*³⁰



Պարերգի կաքավագիր շարվածքը.

1915 թ. ողբերգությունը, Կոմիտասի ինքնամեկուսացումն ու հոգևոր դեգերումները և շուրջ քսանամյա ստեղծագործական և գիտական ակամա պարապուրդն ավելի շատ վնաս բերեցին հայ երաժշտարվեստի՞ն, թե՞ պարարվեստին. դժվար է գնահատել: Զգալի են երաժշտարվեստի ոլորտում աշխատություններն ու ստեղծագործական ներդրումը, ավանդական երաժշտագիտության ճշգրիտ բանաձևումները, մեծածավալ բանահավաքչությունը, ժողովրդական երգերի և մեղեդիների մշակումները: Նկատի ունենալով նաև Կոմիտասի մատնանշումը պարերի ուսումնասիրությունն «ավելի հարմար ժամանակների թողնելու» մասին, հանգում ենք այն համոզմունքին, որ հեռու չէր այն պահը, երբ Կոմիտասն ավելի լուրջ և գիտական մոտեցում էր ցուցաբերելու հայ ավանդական պարարվեստին, նրա կարևոր բանաձևումներին, դասդասումներին, մշակումներին: Կոմիտասյան անդրադարձով հայ ավանդական պարարվեստն արդեն XX դարասկզբին կանգնելու էր նույնքան բարձր մակարդակի վրա, որքան երաժշտությունը, իսկ հայ պարագիտությունը զարգանալու էր նոր թափով:

Պետք է արձանագրենք Կոմիտաս Վարդապետի մեծ ավանդը հայ պարագիտության սկզբնավորման մեջ, փաստելով նաև, որ նա հանդիսացավ հայ ավանդական պարի առաջին բանահավաքն ու առաջին պարագետը: Անհնար է գերազնահատել Կոմիտասի պարային ժառանգությունը, քանզի նրա՝ թելուզ և փոքրաքանակ և ոչ այնքան ծավալուն անդրադարձը հայ պարին

³⁰ Կոմիտաս, *Երկերի ժողովածու*, հատ. 10, էջ 79

դարձավ հայ պարագիտության հիմքը, որի շուրջ էլ ձևավորվեց և ծավալվեց հայ պարագիտության և՛ գիտական, և՛ գաղափարական, և՛ ստեղծագործական կապիտալը:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է Կոմիտասի ժառանգության ոչ այնքան հայտնի հատվածին: Առաջին անգամ Կոմիտասի պարային ժառանգությունն ինձ հետաքրքրեց «Հայ գեղջուկ պարը» և «Պարն ու մանուկը» աշխատությունները ուսումնասիրելուց հետո: Հետաքրքրությունս բազմապատկվեց, երբ տեղեկացա, որ պահպանվել է Կոմիտասի գրառած ութ պար, որոնք հետագայում տպագրվեցին «Կոմիտաս Վարդապետ. Ուսումնասիրություններ և Հոդվածներ» երկհատորյակի առաջին հատորում (2005): Համոզվումք դարձավ, որ գրառված պարերը պետք է վերականգնել և բարձրացնել բեմ, ներկայացնելով լայն հանրությանը: Ինչդիրը բարդ էր նրանով, որ Կոմիտասի կողմից գրառված և նկարագրված պարերի հետ չի մատնանշվում, թե որ պարեղանակն է հանդիսանում տվյալ պարի մեղեդին: Ավելին, տպավորություն ունենք, որ նկարագրություններն ավարտուն չեն:

Վերականգնել ենք ութ պարերից երկուսը՝ համագործակցելով երաժշտագետների հետ, ինչպես նաև «Ինսթիտյուտ» ընկերության ինժեներների հետ: Դիմել ենք նաև Սրբուհի Լիսիցյանի ստեղծած պարի գրառման համակարգին:

Բանալի բառեր՝ հայկական ժողովրդական պար, կինետոգրաֆիա, «Շորոր», «Ճամփի պար»:

ТАНЦЕВАЛЬНОЕ НАСЛЕДИЕ КОМИТАСА

Резюме

Գագիկ Գուոսյան (Արմենյա)

Заслуженный деятель культуры РА

Ансамбль традиционной песни и танца “Карин”

Академия народной песни и танца

Впервые я обратился к наследию Комитаса после изучения работ “Армянский сельский танец” и “Малыш и танец”. Интерес возрос после того, как мне стало известно, что в музее Литературы и искусства им. Е. Чаренца хранятся рукописи записанных Комитасом восьми танцев. Мы были убеждены, что описанные танцы должны быть восстановлены, подняты на сцену и представлены широкой общественности. Задача осложнялась тем, что в описанных и записанных Комитасом танцах не указывается, какая именно мелодия представлена в данной танцевальной музыке. Более того, складывается впечатление, что описание незавершено.

Нами было восстановлено два танца из восьми в сотрудничестве с музыкантами и инженерами компании “Инстигейт”. Обращались и к созданным Србуи Лисициан танцевальным записям. Надеемся, что в ближайшем будущем при поддержке музыковедов и наконец-то выйдет из тени оставшееся неисследованным наследие Комитаса, в том числе, и образцы танцев.

Ключевые слова: армянский народный танец, кинетография, “Шорор”, “Танец дороги”.

KOMITAS'S ARMENIAN FOLK DANCE HERITAGE

Abstract

Gagik Ginosyan (Armenia)
Honored Worker of Culture of RA
Karin Traditional Song and Dance Ensemble
National Song and Dance Academy

This paper refers to the less known part of Komitas's heritage. When starting my explorations on Komitas's dances, I was initially astonished by two of his articles - the *Armenian Peasant Dance* and the *Dance and the Child*, which inform us how deep the author's knowledge of the field was. Later, I found Komitas's handwritings of transcriptions of eight Armenian dances in the Komitas Archive at the *E. Charents* Museum of Literature and Art (published in 2005, Komitas Vardapet, *Studies and Articles*, V. 1). Since then, I started purposefully working on those dances to introduce them also to the public as well as to confirm that discussing Komitas's work in ethnomusicology would be incomplete without considering his work on dances. The next stage of my work led to a number of challenges. First of all, Komitas described the dances without pointing out the exact melody to accompany the dance. Each time referring to this work, I was becoming more and more confident in the dance steps. However, a collaboration with a musicologist in Komitas's studies would be necessary. To my advantage was my previous two-decade experience of fieldwork in national dances and experience in reconstructing other dances transcribed by other dance-ethnomusicologists. Moreover, my experience in working with the system of *Cynetograph* (a system for recording dances, created by Srбуhi Lisitsyan, XX century) and the promotion of the *Instigate* computer programming company were helpful in my work.

We succeeded in reconstructing two of Komitas's eight dances. In the case of Dances N1 and N6, we found the description of the dance in V. 10 of Komitas's Works, entitled *Dance of the Pathway* and *Shoror*. We found the corresponding melodies according to the descriptions of the dances. Those dances are now included in the repertoire of the *Karin Folk Song and Dance Ensemble*. Hopefully, the remaining samples of Komitas's dances will be reconstructed in the future as well.

Key words: Armenian folk dance, cynetography, *Shoror*, *Dance of the Way*.

Գլուխ Գ. «Անդրադարձ Կոմիտասին»

Chapter III: Rethinking Komitas

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Աննա Ասատրյան (Հայաստան)
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Թույլ տվեք ողջունել Երևանում Կոմիտասի թանգարան-ինստիտուտի ստեղծումը: Խոստովանեմ, որ Կոմիտասի թանգարանի (և ոչ թե թանգարան-ինստիտուտի) ստեղծումը եղել է իմ վաղեմի երազանքը, և այդ մասին ես գրել եմ Կոմիտասին նվիրված իմ առաջին հոդվածում, որն աշխարհ եկավ Պատմաբանասիրական հանդեսի խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանի առաջարկությամբ՝ Կոմիտասի ծննդյան 140-ամյակի կապակցությամբ: Պատմաբանասիրական հանդեսի 2010 թ. առաջին համարում լույս տեսած իմ «Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները» հոդվածի եզրափակիչ մասում ցավով արձանագրեցի. «Կոմիտասն այսօր Երևանում չունի թանգարան. նրա իրերը, ձեռագրերը, նաև՝ ողջալն այսօր ծվարած են Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, մինչդեռ վաղուց է հասունացել Կոմիտասի առանձին թանգարան ունենալու անհրաժեշտությունը, թանգարան, որը կդառնա կոմիտասագիտության զարգացման խոշորագույն կենտրոնը և կծավալի կոմիտասյան ավանդույթներին ու պարզամեններին արժանի բազմակողմանի գործունեություն: Չունենք, չկա՛: Երբ կլինի: Մնանք սպասող...»¹:

Եվ ինչպես ասում են, Աստված լսեց իմ ձայնը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ և ջանքերով 2015 թ. հունվարի 29-ին իր դռները բացեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի

¹ Ա. Ասատրյան, Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները, Պատմաբանասիրական հանդես, 2010, 1, էջ 40:

գիտական անձնակազմի, ինչպես նաև գիտական խորհրդի միջուկը դարձան, բնականաբար, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատողները:

Այսօր ես շատ-շատ ուրախ եմ, որ Երևանում հաջողությամբ գործում է թանգարանը, և որ թանգարանը ղեկավարում է Նիկոլայ Կոստանդյանը՝ եռանդուն երիտասարդ, ով, բարեբախտաբար, անմնացորդ նվիրվել է Կոմիտասի ժառանգության պահպանության ու հանրահռչակման գործին և որպես լոկոմոտիվ առաջ է տանում հայ երաժշտական մշակույթի համար մեծ կարևորություն ունեցող այս «գնացքը»:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում, անուրանալի Արվեստի ինստիտուտի գիտական անձնակազմի մի քանի սերունդների ներկայացուցիչների ավանդը կոմիտասագիտության կայացման ու զարգացման գործում: Սակայն, ցավոք սրտի, վերջին տարիներին նպատակաուղղված կերպով անտեսվում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տասնամյակների աշխատանքն այդ ասպարեզում, շրջանցվում ինստիտուտի անունը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի Նախագահությունը 1945 թ. դեկտեմբերի 19-ի N 34 նիստում քննության է առնում Երաժշտության պատմության ու տեսության սեկտորի աշխատանքների վիճակը և հետագա խնդիրները, Սեկտորի աշխատանքների բարելավման ուղղությամբ ընդունվում են մի շարք արմատական առաջարկներ: Մասնավորապես՝ առաջարկվում է 1946-ին ստեղծել Կոմիտասի անվան կաբինետ՝ նրա երաժշտական ժառանգությունը խորը ուսումնասիրելու նպատակով, ուժեղացնել ժողովրդական և գուսանական երգերի, պարերի հավաքման, գրանցման և ուսումնասիրման աշխատանքները, հայկական խազերի ուսումնասիրությունը, արխիվային նյութերի ձեռք բերումն ու նրանց լավագույն պահպանումը (քարտազրում, անոտացիա, ծրարում, արտանկարում և այլն):

Երաժշտության պատմության ու տեսության սեկտորի բազայի վրա ստեղծվում է Արվեստների պատմության ու տեսության սեկտորը, որի գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ դառնալու էր կոմիտասագիտությունը:

1. Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը

1949 թ. սեպտեմբերի 26-ին՝ հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրը, Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհուրդը որոշում է ընդունում Կոմիտասի Երկերի ժողովածուի

ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիային:

Ակադեմիայի Նախագահությունը 1950 թ. հունվարի 25-ի N 4 նիստում որոշում է 1950-ին սկսել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Խմբագրական հանձնախմբում ընդգրկվում են Ռոբերտ Աթայանը, Մուշեղ Աղայանը, Սամսոն Գասպարյանը, Քրիստափոր Քուշնարյանը, Մաթևոս Մուրադյանը, և 1960-ին Մարտիրոս Սարյանի ֆորզացով լույս է տեսնում Կոմիտասի երկերի ժողովածուի անդրանիկ հատորը:

Մինչ այդ՝ Սեկտորը 1950-ին հրատարակում է Կոմիտասի ազգագրական ժողովածուն²:

Ինչպես հայտնի է՝ «իրենց հիմնական մասով Կոմիտասի «թղթերը» (այսպես անվանվել է նրա ողջ գրավոր ժառանգությունը), պահված են եղել Պոլսի Պատրիարքարանում: Այդ մասը հետո հանձնվել է Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովին: Նույն հանձնաժողովը կոմիտասյան մի շարք կարևոր ձեռագրեր ձեռք է բերել նաև առանձին անհատներից և, որոշ գործեր տպագրելուց հետո, իր հավաքածն ուղարկել է Երևանի գրականության և արվեստի թանգարան»³:

Անշուշտ, կոմիտասյան ձեռագրերի Երևան տեղափոխվելու գործում անուրանալի է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի, իսկ դրանից առաջ՝ Արվեստների պատմության և տեսության սեկտորի, հատկապես նրա վարիչ Ռուբեն Զարյանի և գիտքարտուղար Մաթևոս Մուրադյանի դերը:

Ակադեմիայի նախագահության 1953 թ. դեկտեմբերի 23-ի N 23 նիստում Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության սեկտորի վարիչ է հաստատվում Ռուբեն Զարյանը⁴: Շուտով նամակագրական կապ է հաստատվում վերջինիս և Մարգարիտ Բաբայանի միջև, ինչի շնորհիվ, ինչպես հետագայում խոստովանում է Ռուբեն Զարյանը, «ստացվեց Կոմիտասի արխիվի նշանակալի մասը, որ այդ հանձնաժողովի («Կոմիտաս» խնամատար հանձնաժողով – Ա.Ա.) *տրամադրության տակ էր*»⁵:

Մ. Բաբայանի հետ նամակագրությունը հետագայում շարունակում է Ռոբերտ Աթայանը: Այստեղ կանգ չենք առնի այդ մանրամասների վրա, քանի

² **Կոմիտաս, Ազգագրական ժողովածու:** Հայ ժողովրդական երգեր և պարերգեր, հատ. II, կազմող՝ Մ. Աղայան, խմբ.՝ Խ. Քուշնարյան, Երևան, Հայպետհրատ, 1950, 175 էջ, 1թ. նկ.:

³ **Ռ. Աթայան,** Կոմիտասի երաժշտական ժառանգությունը, *Կոմիտասական* 1, Երևան, 1969, էջ 7:

⁴ Տե՛ս **Ա. Ասատրյան,** ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Երևան, 2010, էջ 31:

⁵ **Ռ. Զարյան,** *Մարգարիտ Բաբայան, Մայրամուտից առաջ*, Ինքնապատում, հատ. 3, Երևան, 2012, էջ 335:

որ դրանց մանրակրկիտ ուսումնասիրությունը կատարել է Նիկոլայ Կոստանոյանը⁶:

Հետագա տասնամյակների ընթացքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտագետների մի քանի սերունդների ջանքերով հրատարակվեց Կոմիտասի երկերի ժողովածուն՝ 14 հատորով (1960-2006), որը հրատարակության պատրաստեցին Ռոբերտ Աթայանը և Գևորգ Գյոդակյանը: Առաջին անգամ հրատարակվեց Կոմիտասի ողջ երաժշտական ժառանգությունը, որն ընդգրկում է՝

մեներգերը (հատոր 1, 1960, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 4, 1976, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 5, 1979, խմբագրությամբ Ռ. Աթայանի),

խմբերգերը (հատոր 2, 1965, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 3, 1969, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 4, հատոր 5),

դաշնամուրային ստեղծագործությունները (հատոր 6, 1982, խմբագրությամբ Ռ. Աթայանի),

Պատարագը (հատոր 7, 1997, խմբագրությամբ Ռ. Աթայանի),

հոգևոր ստեղծագործությունները (հատոր 8, 1998, խմբագրությամբ Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Դ. Դերոյանի),

երաժշտական ազգագրական ժառանգությունը՝ գետեղված 9-14 հատորներում.

հատոր 9, Հայ ժողովրդական երգեր, Գիրք Ա, 1999, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը,

հատոր 10, Հայ ժողովրդական երգեր, Գիրք Բ, 2000, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը,

հատոր 11, Հայ ժողովրդական երգեր, Գիրք Գ – «Ազգագրական ժողովածու», մաս առաջին, 2000, կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը,

հատոր 12, Հայ ժողովրդական երգեր, Գիրք Դ – «Ազգագրական ժողովածու», մաս երկրորդ, 2003, կազմեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը, խմբագիրներ՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան,

հատոր 13, Հայ ժողովրդական երգեր, Գիրք Ե, ժողովրդական երգերի ժողովածու («Ձայնակարգային»), ֆաքսիմիլային հրատարակություն, 2004, կազմեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը, խմբագիրներ՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան,

⁶ Տե՛ս **Ն. Կոստանոյան**, Մարգարիտ Բաբայանը և Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, *Կանթեղ*, գիտական հոդվածներ, 2016, N 1, էջ 219-233:

հատոր 14, հայ ժողովրդական և աշուղական երգեր, նվագներ, թուրքական երգեր, քրդական երգեր և նվագներ, 2006, կազմեց և ծանոթագրեց Ռ. Աթայանը, խմբագիրներ՝ Ռ. Աթայան, Գ. Գյոդակյան:

Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, հիրավի, ոչ միայն բացառիկ իրադարձություն է հայ ժողովրդի երաժշտական կյանքում, այլև կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող համազգային մեծ ու նշանակալի երևույթ:

2. Գիտական ուսումնասիրություններ

Կոմիտասագիտության մեջ կարևոր ներդրում են Գևորգ Գյոդակյանի «Կոմիտաս» (2000), “Комитас” (1969) և “Komitas” (2014) ուսումնասիրությունները, Ռուբեն Թերլեմեզյանի «Կոմիտաս» (1992) և Տաթևիկ Շախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891-1899)» (2014) մենագրությունները, ինչպես նաև Մաթևոս Մուրադյանի, Ռոբերտ Աթայանի, Գևորգ Գյոդակյանի, Կարինե Խուրաբաշյանի, Անահիտ Գրիգորյանի, Աննա Արևշատյանի, Անահիտ Բաղդասարյանի, Տաթևիկ Շախկուլյանի և այլոց գիտական հոդվածներն ու զեկուցումները: Ի դեպ՝ երիտասարդ հետազոտող Տ. Շախկուլյանի հոդվածաշարը 2011-ին արժանացավ ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության առաջին մրցանակին՝ «Արվեստ, լեզու և գրականություն» անվանակարգում:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում կոմիտասագիտության զարգացման մեջ ուզում են առանձնացնել երեք սյուներին, ովքեր իրենց գիտական գործունեությամբ մեծապես առաջ մղեցին կոմիտասագիտությունը: Խոսքս Մաթևոս Մուրադյանի, Ռոբերտ Աթայանի և Գևորգ Գյոդակյանի մասին է:

Արվեստագիտության դոկտոր, արվեստի վաստակավոր գործիչ **Մաթևոս Մուրադյանը** ծնվել է 1911 թ.: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Մուրադյանների ընտանիքը տեղահանության ու գաղթի տառապալից ճանապարհներով հասնում է Միջագետք, իսկ 1921-ին՝ տեղափոխվում Հայաստան: Ջրկվելով ծնողներից, Մաթևոս Մուրադյանը մանկության տարիներն անց է կացնում մանկատներում: 1930-ից սկիզբ է առնում Մուրադյանի աշխատանքային գործունեությունը. սկզբում նա աշխատում է որպես գրաշար և միաժամանակ «Ավրորա» գրական անվան տակ բանաստեղծություններ հրատարակում: 1937-ին, ավարտելով երաժշտական ուսումնարանը, նա ընդունվում է Երևանի պետական կոնսերվատորիա: Ուսումն ընդհատում է հայրենական մեծ պատերազմը. գործող բանակի կազմում

Մուրադյանը ծառայում է մինչև հաղթանակի օրը՝ հասնելով Լեհաստան ու Չեխոսլովակիա:

1946-ին, ավարտելով ընդհատված ուսումը կոնսերվատորիայում, նա ընդունվում է աշխատանքի ՀԽՍՀ ԳԱ Արվեստների պատմության ու տեսության սեկտոր (հետագայում՝ Արվեստի ինստիտուտ), նշանակվում սեկտորի գիտքարտուղար: Արվեստի ինստիտուտի հիմնադրման օրվանից Մ. Մուրադյանը նշանակվում է Ինստիտուտի գիտքարտուղար: Նույն թվականի հուլիսի 2-ին նա ընտրվում է Երաժշտության սեկտորի վարիչ և ղեկավարում նորաստեղծ ինստիտուտի գիտական այդ կարևորագույն ստորաբաժանումներից մեկը մինչև 1966 թ. մարտի 10-ը, որից հետո ընտրվում է Ինստիտուտի նորաստեղծ Հայ ժողովրդական երաժշտության սեկտորի վարիչ՝ այդ պաշտոնում պաշտոնավարելով մինչև 1981 թ. հունվարի 16-ը, ապա՝ 1983 թ. հոկտեմբերի 28-ից մինչև 1984 թ. հուլիսի 1-ը:

Կոմիտասագիտության մեջ իր առաջին խոսքը Մ. Մուրադյանն ասաց 1950-ին. ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագրի 1950 թ. 11-րդ համարում հրատարակվում է նրա «Կոմիտասի տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ» հոդվածը⁷, որը նվիրված էր Կոմիտասի մահվան 15-ամյա տարելիցին⁸:

Մ. Մաթևոսյանն է Հայաստանում առաջին անգամ հրատարակել Կոմիտասի՝ Արշակ Չոպանյանին ուղղված նամակները՝ Պատմաբանասիրական հանդեսի 1958 թ. N 1-ում⁹: 1902-1914 թթ. ընդգրկող նամակները նոր լույս են սփռում Կոմիտասի ստեղծագործական և երաժշտական-հասարակական գործունեության վրա, հնարավորություն ընձեռում առավել լիարժեք ծանոթանալու նրա քաղաքական համոզմունքներին, Սուլթանական Թուրքիայի դեմ ուղղված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման վերաբերյալ հայացքներին, ինչպես նաև արտացոլում են Կոմիտասի՝ ռուսական հեղափոխության շնորհիվ հայ ժողովրդի ազատագրման հետ կապված հույսերը: Նամակներին Մ. Մուրադյանը տվել է համապատասխան համառոտ ծանոթագրություններ:

Տարիներ անց՝ 1969-ին, Մ. Մաթևոսյանն ուսումնասիրում է Կոմիտասի Նամականին, Արշակ Չոպանյանին և Մարգարիտ Բաբայանին հասցեագրած

⁷ Մ. Մուրադյան, Կոմիտասի տեղն ու նշանակությունը հայկական երաժշտության պատմության մեջ, *Տեղեկագիր*, 1950, N 11, էջ 31-46:

⁸ Հոդվածում մենք կանդորադառնանք Կոմիտասին նվիրված այն հոդվածներին, որոնք տպագրվել են ակադեմիական հանդեսներում:

⁹ Մ. Մուրադյան, Կոմիտասի անտիպ նամակները, *Պատմաբանասիրական հանդես*, 1958, 1, էջ 245-267:

նամակների հիման վրա առաջ քաշում «մի քանի կարևոր հարցեր՝ կապված Կոմիտասի կյանքի, գործունեության և սրբեղծագործության հետ»¹⁰:

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ էր Մ. Մուրադյանի հաջորդ անդրադարձը Կոմիտասին: 1969-ին, Պատմաբանասիրական հանդեսի 4-րդ համարում լույս է տեսնում նրա «Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան» հոդվածը¹¹: «Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան եղավ շար արդյունավետ: Երկու ամսվա ընթացքում նրան հաջողվեց աշխատել մարենտոարանում, շրջել Հայաստանի փարբեր շրջանների գյուղերը, շփվել հարազատ ժողովրդի հետ, լսել ու ծայնագրել Հայ գեղջուկ երգեր, ծանոթանալ էջմիածնի Մայր փաճարի վիճակին, հանդիպել իր ընկերներից ու բարեկամներից ոմանց և ստանալ իրեն հեղաբերորոշ ամենակարևոր հարցերի պատասխանը. արդյոք փոփոխություններ կատարվե՞ն են դեպի լավը, պայմաններ կա՞ն իր վերադարձի համար և իր վերադարձը ցանկալի՞ է հոգևոր պետերի համար: Ստանալով բացասական պատասխան, Կոմիտասը ճանապարհ ընկավ դեպի Կոստանդնուպոլիս և այլևս չվերադարձավ: Նա Հայաստան բերվեց միայն 23 փարի անց, այն էլ որպես սրբազան մասունք և թանկագին աճյուն ամփոփվելու հանրապետական պանթեոնում ու ծովվելու հարազատ հայրենի հողին»:

Կոմիտասի 100-ամյա հոբելյանական տարում Կոմիտասականի առաջին հատորում տպագրվում են Մաթևոս Մուրադյանի երկու՝ «Եկմայանի Պատարագը Կոմիտասի գնահատությամբ»¹² և «Ազգային երաժշտական ուժերի պատրաստման կոմիտասյան ծրագրերը»¹³ հոդվածները: Իսկ տասը տարի անց՝ 1979-ին և 1980-ին, կրկին Պատմաբանասիրական հանդեսում տպագրվում է Մ. Մուրադյանի «Կոմիտասի գործունեությունը Կոստանդնուպոլսում» հոդվածաշարը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 110-ամյակին¹⁴:

¹⁰ Տե՛ս Մ. Մուրադյան, Կոմիտասի նամակները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1969, N 11, 35-42:

¹¹ Մ. Մուրադյան, Կոմիտասի վերջին այցելությունը Հայաստան, *Պատմա-բանասիրական հանդես*, 1969, № 4, էջ 61-69:

¹² Մ. Մուրադյան, Եկմայանի Պատարագը Կոմիտասի գնահատությամբ, *Կոմիտասական* 1, Երևան, 1969, էջ 218-229:

¹³ Մ. Մուրադյան, Ազգային երաժշտական ուժերի պատրաստման կոմիտասյան ծրագրերը, *Կոմիտասական* 1, Երևան, 1969, էջ 230-239:

¹⁴ Մ. Մուրադյան, Կոմիտասի գործունեությունը Կոստանդնուպոլսում I (Ծննդյան 110-ամյակի առթիվ), *Պատմա-բանասիրական հանդես*, 1979, № 4, էջ 14-24: Մ. Մուրադյան, Կոմիտասի գործունեությունը Կոստանդնուպոլսում II (Ծննդյան 110-ամյակի առթիվ), *Պատմա-բանասիրական հանդես*, 1980, № 1, էջ 115-125:

Եվս տասը տարի անց՝ 1989-ին, ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայում Մ. Մուրադյանի «Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դար և XX դարասկիզբ)» մենագրությունը, որի Երկրորդ՝ «Արևմտահայ երաժշտությունը XX դ. առաջին տասնամյակներում» մասում, Առաջին գլխի երկրորդ պարագրաֆն է «Կոմիտասի գործունեությունը Կ. Պոլսում»¹⁵: Հաջորդ պարագրաֆում հեղինակն անդրադառնում է Կոմիտասի սաների գործունեությանը¹⁶, իսկ Երկրորդ՝ «Ժողովրդական երաժշտություն» գլխի երկրորդ պարագրաֆում՝ Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգության վերլուծությունն է¹⁷:

Իսկ մինչ այդ՝ 1970-ին, «Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում» մենագրության Երկրորդ մասի երկրորդ՝ «Կոմիտասը և հայ դասական երաժշտության ձևավորումը», գլխում հեղինակը ներկայացրել էր Կոմիտասի կյանքի ուղին, քննության առել ստեղծագործությունը, երաժշտական-ազգագրական ժառանգությունը, երաժշտագիտական ուսումնասիրությունները, կատարողական արվեստն ու աշխարհայացքը¹⁸:

1981-ին հրատարակված «Կոմիտասականի» երկրորդ հատորում տպագրվել է Մ. Մուրադյանի «Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում» հոդվածը¹⁹:

Կոմիտասի երաժշտական ոճի որոշ խնդիրների տեսական մշակման անդրանիկ փորձը դարձավ **Ռոբերտ Աթայանի** «Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ» հոդվածը, որը տպագրվեց ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագրի 1949 թ. 9-րդ համարում²⁰:

1969-ին՝ Պատմաբանասիրական հանդեսի 2-րդ համարում տպագրված «Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը» հոդվածում²¹ տրվում է նախկինում հայտնի և վերջին տարիներին բացահայտված՝

¹⁵ Մ. Մուրադյան, *Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության (XIX դար և XX դարասկիզբ)*, Երևան, 1989, էջ 236-267:

¹⁶ Մ. Մուրադյան, *Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության*, էջ 267-277:

¹⁷ Մ. Մուրադյան, *Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության*, էջ 287-291:

¹⁸ Մ. Մուրադյան, *Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում*, Երևան, 1970, էջ 406-510:

¹⁹ Մ. Մուրադյան, Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում, *Կոմիտասական 2*, Երևան, 1981, էջ 15-24:

²⁰ Ռ. Աթայան, Ժողովրդական երգի ներդաշնակության սկզբունքը Կոմիտասի մոտ, *ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր*, 1949, N 9, էջ 87-113:

²¹ Ռ. Աթայան, Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը, *Պատմա-բանասիրական հանդես*, 1969, N 2, էջ 43-62.

Կոմիտասի գրառած ժողովրդական երգերի 8 գլխավոր, ամբողջական ժողովածուների նկարագրությունը, որոնք գտնվում են Կոմիտասի արխիվում:

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի շրջանակներում Ռ. Աթայանը քննության է առնում Կոմիտասի ստեղծագործական ժառանգության մի քանի հարցեր²²: Կարևորելով կոմիտասագիտության արմատական պրոբլեմները՝ Կոմիտասի ստեղծագործությունների բացահայտումը, դրանց ստեղծման ժամանակագրության հստակեցումը և կոմպոզիտորի ոճի զարգացման պրոցեսի ուսումնասիրությունը, հետազոտողն իրավացիորեն նկատում է, որ գեղջկական երգերի նորերս հայտնաբերված և նախկինում հայտնի մշակումների հետազոտությունը բացահայտում է Կոմիտասի ստեղծագործության ոճական գծերի կայացման ու զարգացման առավել լիարժեք պատկերը և այդ տեսակետից առավել կարևորում երգի ներդաշնակման (բազմաձայն մշակման) հարցը: Դրան զուգահեռ՝ Ռ. Աթայանն առանձին ուսումնասիրության առարկա է դարձնում հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ²³:

Ռ. Աթայանն անդրադարձել է նաև Կոմիտասի ուսումնառությանը Բեռլինում, որը դարձավ Կոմիտասի ստեղծագործական կենսագրության կարևոր էջերից մեկը²⁴: Արխիվային վավերագրերի հիման վրա նա ներկայացում է Կոմիտասի անցած դասընթացների մանրամասն քննությունը:

«Կոմիտասականի» առաջին հատորն սկսվում է Ռ. Աթայանի «Կոմիտասի երաժշտական ժառանգությունը» ծավալուն հոդվածով²⁵, որի նպատակն էր հակիրճ ամփոփել Երևանի գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասի ֆոնդում հավաքված նյութերի, մասնավորապես՝ ժողովրդական երգերի ձայնագրությունների և երաժշտական ստեղծագործությունների նկարագրությունն ու արժեքավորումը: Հեղինակը հոդվածում հրապարակում է նաև նոր հայտնաբերված կամ վերծանված մի շարք բնագրեր:

²² Ռ. Աթայան, Կոմիտասի ստեղծագործական ժառանգության մի քանի հարցեր, *Պարմա-բանասիրական հանդես*, 1969, N 4, էջ 15-29:

²³ Ռ. Աթայան, Հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1969, N 11, էջ 27-34:

²⁴ Ռ. Աթայան, Կոմիտասի ուսումնառությունը Բեռլինում, *Պարմաբանասիրական հանդես*, 1980, N 2, էջ 48-59:

²⁵ Տե՛ս Ռ. Աթայան, Կոմիտասի երաժշտական ժառանգությունը, *Կոմիտասական* 1, Երևան, 1969, էջ 7-83:

«Կոմիտասականի» երկրորդ հատորում տպագրվեցին Ռ. Աթայանի երկու՝ «Կոմիտասի «Անուշ» օպերայի ուրվագրերը»²⁶ և «Բազմաձայնության տարրերը հայ ժողովրդական երաժշտության մեջ»²⁷ հոդվածները:

Խոստումնալից էր **Գևորգ Գյոդակյանի** մուտքը կոմիտասագիտություն, որը տեղի ունեցավ Կոմիտասի 100-ամյա հոբելյանի տարում. հրատարակվեց «Комитас» մենագրությունը:

1969 թ. Պատմաբանասիրական հանդեսի 4-րդ համարում տպագրվում է հոդվածաշար՝ նվիրված Կոմիտասին: «Комитас и мировое музыкальное искусство» հոդվածում²⁸ Գ. Գյոդակյանը գրում է. «Կոմիտասը ստեղծագործական ասպարեզ ելավ երաժշտական արվեստի համար դժվարին ժամանակներում ավանդական շար պատկերացումների հեղաբեկման շրջանում, երբ միշտ չէր, որ նորը առաջավորի հոմանիշ էր, իսկ նորի որոնումները հաճախ ձևական-ինքնաբավ բնույթ ունեին: Երաժշտական նյութի կազմակերպման կոմիտասյան նոր սկզբունքները առաջ եկան մի ձգտումից, որ նպատակ ուներ առավել խոր թափանցել ժողովրդական արվեստի, ժողովրդական երաժշտության էության մեջ և առավել լրիվ ու կատարյալ արտահայտել այն: Ինչպես ցույց տվեց պատմությունը, դա մեր ժամանակների երաժշտական արվեստի ճշմարիտ նորացման ամենագործուն ուղիներից մեկն էր»:

Կոմիտասագիտության նվաճումներից էր «Կոմիտասականի» առաջին հատորում տեղ գտած Գ. Գյոդակյանի «Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը» հիմնարար հոդվածը²⁹, որն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Ակնառու են Կոմիտասի նորարարական սկզբունքները, որ բացահայտվում են ոչ միայն հայ ազգային երաժշտության շրջանակներում, այլև առավել լայն պլանով՝ համաշխարհային երաժշտական արվեստի զարգացման հեռանկարում: Կոմիտասը մեծ է, թերևս, ամենից առաջ այն բանով, որ սեփական՝ ազգային մշակույթի առավել հրատարակ խնդիրների լուծումը կարողացավ բարձրացնել 20-րդ դարի ամբողջ երաժշտական արվեստի առջև ծառայած պրոբլեմների լուծման մակարդակին: Ընդ որում, նա ոչ միայն հենվում

²⁶ Տե՛ս Ռ. Աթայան, Կոմիտասի «Անուշ» օպերայի ուրվագրերը, *Կոմիտասական* 2, Երևան, 1981, էջ 42-82:

²⁷ Ռ. Աթայան, Բազմաձայնության տարրերը հայ ժողովրդական երաժշտության մեջ, *Կոմիտասական* 2, էջ 143-157:

²⁸ Գ. Գեոդակյան, Комитас и мировое музыкальное искусство, *Պատմաբանասիրական հանդես*, 1969, N 4, էջ 70-82:

²⁹ Գ. Գյոդակյան, Կոմիտասի ոճը և քսաներորդ դարի երաժշտությունը, *Կոմիտասական* 1, էջ 84-120:

էր իր նախորդների և ժամանակակիցների փորձի ու նվաճումների վրա, այլև նրանց շարքում էր, ովքեր անմիջականորեն երաժշտական մրաժողության որակապես նոր հիմքերն էին դնում»³⁰:

Հետագայում կոմիտասյան ժառանգության ուսումնասիրությունն ուղեկցեց Գ. Գյոդակյանին իր ողջ կյանքում: «Նշանավոր ճեմարանականների» առաջին հատորում տեղավորված՝ Կոմիտասի մասին հոդվածի հեղինակը վերստին Գ. Գյոդակյանն էր³¹: Կոմիտասին էր նվիրված “Пути формирования армянской музыкальной классики” մենագրության ակնարկներից մեկը³²: Եվ Գ. Գյոդակյանի «Կարապի երգը» դարձավ Կոմիտասի մասին անգլերեն ուսումնասիրության հրատարակումը:

3. «Կոմիտասական»

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտն իրականացրել է Կոմիտասի ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրապարակումը «Կոմիտասական» ժողովածուի երկու հատորներում (1969, 1981):

1969 թ.՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում, ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայում Կոմիտասականի առաջին հատորը, որի խմբագիրն էր Ռոբերտ Աթայանը: Խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվել էին Ռոբերտ Աթայանը (գլխավոր խմբագիր), Գևորգ Գյոդակյանը, Նիկողոս Թահմիզյանը, Լևոն Հախվերդյանը և Մաթևոս Մուրադյանը:

«Կոմիտասի բազմաբեղուն ժառանգությունն իր բոլոր հասկանալիությամբ երաժշտական ազգագրություն, սրբազոհություն, գիտական հետազոտություններ, կարարողական արվեստ, նրա կյանքն ու հասարակական-լուսավորչական գործունեությունը, գիտա-պատմական և տեսական հսկայական հետաքրքրականություն ունեն: Հայ մեծ երաժշտագետի երկերի ժողովածուի արդեն սկսված հրատարակության հետ մեկտեղ, ԳԱ արվեստի ինստիտուտը ձեռնարկում և այս հատորով սկիզբ է դնում նրա ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրապարակման: «Կոմիտասականի» Ա հատորը, որ

³⁰ Նույն տեղում, էջ 119-120:

³¹ Գ. Գյոդակյան, Տ. Կոմիտաս վարդապետ, *Նշանավոր ճեմարանականներ*, Պրակ Ա, մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 315-324: Տե՛ս նաև՝ Գ. Գյոդակյան, Հայ երաժշտության հանճարը, *Էջեր հայ երաժշտության պատմությունից*, Երևան, 2009, էջ 73-84:

³² Տե՛ս Գ. Геодакян, Стиль Комитаса и музыка XX века, *Пути формирования армянской музыкальной классики*, Ереван, 2006, с. 96-129.

լույս է տեսնում Կոմիտասի ծննդյան հարյուրամյակի հոբելյանի առթիվ, ընդգրկում է նրա երաժշտական ու գիտական աշխատանքների, ստեղծագործական ոճի և ստեղծագործությունների մեկնաբանության գերազանցապես տեսական ուսումնասիրություններ և հուշեր: Նման հատորներ, նյութերի և հեղինակների ավելի լայն ընդգրկումով, պարբերաբար կհրատարակվեն նաև ապագայում»³³:

1981-ին ՀՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց «Կոմիտասականի» երկրորդ հատորը, որտեղ ընդգրկված հոդվածներն ու ուսումնասիրությունները նվիրված էին Կոմիտասի կյանքի, գործունեության և ստեղծագործական հարցերին, ինչպես նաև Կոմիտասի ձեռագիր ժառանգության հրապարակումներին՝ «Անուշ» օպերայից և 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուից:

«Կոմիտասականների» մանրամասն վերլուծությանը մենք չենք անդրադառնում, քանի որ դա տեղ է գտել կոմիտասագետ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ Լուսինե Սահակյանի «Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ» ուսումնասիրության մեջ³⁴:

2019-ին լրանալու է Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանը: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, բնականաբար, նշելու է այդ հոբելյանը ինչպես գիտական նստաշրջանով³⁵, այնպես էլ «Կոմիտասականի» երրորդ հատորի հրատարակմամբ:

4. Կոմիտասի գիտական կենսագրությունը

Դեռևս 1973-ին «Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագրում» կարևորվել էր Կոմիտասի գիտական կենսագրության ուսումնասիրությունը: Իսախյկ Սամվելյանի կազմած՝ Կոմիտասի գիտական կենսագրությունը հատվածաբար տպագրվել է «Սովետական արվեստ» և «Էջմիածին» հանդեսների մի քանի համարներում, իսկ վերջերս ամբողջական՝ հայերեն և անգլերեն թարգմանությամբ, լույս տեսավ Կոմիտասին նվիրված պատկերագրքում, թեև կազմողները չէին նշել ՀՀ

³³ Ինստիտուտի կողմից, Կոմիտասական 1, Երևան, 1969, էջ 5:

³⁴ Տե՛ս Լ. Սահակյան, Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2010:

³⁵ Ի դեպ՝ 1969-ին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ, Արվեստի ինստիտուտը Կոմագիտորների միության և կոնսերվատորիայի հետ համատեղ գումարել էր ներկայացուցական միջազգային գիտաժողով:

ԳԱԱ Արվեստի ինստիտուտի անունը....

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Կոմիտասագիտության կենտրոնը տասնամյակներ շարունակ եղել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, ինչն այսօր նույնպես շարունակվում է:

Ամփոփում

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության գործում:

1. Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը (1960-2006),

2. Գիտական ուսումնասիրություններ՝ Գևորգ Գյոդակյանի «Կոմիտաս» (2000), «Комитас» (1969) և «Komitas» (2014), Տաթևիկ Շախկույանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891-1899)» (2014) մենագրությունները, ինչպես նաև Մաթևոս Մուրադյանի, Ռոբերտ Աթայանի, Գևորգ Գյոդակյանի, Կարինե Խոտաբաշյանի, Աննա Արևշատյանի, Անահիտ Բաղդասարյանի, Տաթևիկ Շախկույանի և այլոց գիտական հոդվածները,

3. «Կոմիտասականի» երկու հատորները (1969, 1981),

4. Կոմիտասի գիտական կենսագրությունը:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, գիտական ուսումնասիրություններ, «Կոմիտասական», Կոմիտասի գիտական կենսագրությունը:

ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА И ИССЛЕДОВАНИЕ ТВОРЧЕСКОГО НАСЛЕДИЯ КОМИТАСА

Резюме

Анна Асатрян (Армения)
доктор искусствоведения, профессор,
заслуженный деятель искусств РА
Институт искусств НАН РА

Весом вклад Института искусств НАН РА в дело изучения творческого наследия Комитаса.

1. Академическое издание Собрания сочинений Комитаса.

2. Научные исследования: монографии «Կոմիտաս» (2000), «Комитас» (1969) и «Komitas» (2014) Георгия Геодакяна, «Ранний период творчества Комитаса (1891-1899)» (2014) Татевик Шахкулян, а также научные статьи Матевоса Мурадяна, Роберта Атаяна, Геворка Геодакяна, Карине Худабабян, Анны Аревшатян, Анаит Багдасарян, Татевик Шахкулян и других.

3. Два тома «Комитасакана» (1969, 1981).

4. Научная биография Комитаса.

Ключевые слова: Комитас, Институт искусств НАН РА, Академическое издание Собрания сочинений Комитаса, научные исследования, «Комитасакан», научная биография Комитаса.

**THE INSTITUTE OF ARTS OF THE NATIONAL
ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
AND THE STUDY OF KOMITAS’S HERITAGE**

Abstract

**Dr. Prof. Anna Asatryan (Armenia)
Honored Worker of Art of RA
Institute of Arts NAS RA**

The Institute of Arts of the National Academy of Sciences of RA has a solid input in the study of Komitas’s legacy.

1. Academic publication of the Collection of Komitas’s Works (1960-2006).
2. Research.

Monographs: Gevorg Geodakyan, *Komitas*, published in Armenian (2000), Russian (1969) and English (2014); Tatevik Shakhkulyan, *Komitas, His Early Period of Creation* (2014) etc. A number of articles written by Matevos Muradyan, Robert Atayan, Gevorg Geodakyan, Karine Khudabashyan, Anna Arevshatyan, Anahit Baghdasaryan and Tatevik Shakhkulyan.

3. *Komitasakan*. Two volumes entitled *Komitasakan* including articles on Komitas and his works (1969, 1981).

4. Komitas’s scientific biography

Key words: Komitas, Institute of Arts of NAS RA, Academic publication of the Collection of Komitas’s Works, research works, *Komitasakan*, Komitas’s scientific biography.

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

*Մարգարիտա Քամայան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ*

*Ճգնավորի դեմքով ծեր՝
Մարտիրոսի դեմքով սուրբ, -
Օ, ուրվական դու վսեմ,
Թափառական մեր Հիսուս,-
Ճգնավորի ճակատով
Եվ մորմոքով վկայի՝
Նոր ես հառնում ահա դու
Իբրև վկա ներկայի...*

Եղիշե Չարենց
«Կոմիտասի հիշատակին» (հարված)

Անգնահատելի է մեծ գիտնական, ազգանվեր գործիչ, խմբավար, մանկավարժ, երգիչ, կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետի ներդրումը հայ երաժշտական արվեստի և երաժշտագիտական մտքի զարգացման մեջ: Կոմիտասի գործունեության, նրա թողած ժառանգության հրատարակումը և ուսումնասիրությունը մեծ հոգատարությամբ և եռանդով ստանձնել են երաժշտագետները: Միևնույն ժամանակ հայ երաժշտագիտական մտքի տիտանը գրավել է նաև հայ գրողների և կերպարվեստագետների ուշադրությունը, որոնք ծոնել են բանաստեղծություններ¹, գրել պոեմներ, կերտել ոճական և տիպաբանական բազմազանությամբ աչքի ընկնող, հայ հանճարին կերպավորող դիմապատկերներ:

Ինչպես ասում են՝ «գեղեցկությունը դիտողի աչքում է», և յուրաքանչյուր արվեստագետ տեսել և ներկայացրել է Կոմիտասին անհատապես, յուրովի շեշտադրել նրա խառնվածքի կամ գործունեության որևէ ասպեկտը, կապը իր ժողովրդի, հայրենի բնության հետ: Կոմիտասի կերպարին իրենց կյանքի և գործունեության ընթացքում անդրադարձել են հայ կերպարվեստագետներից շատերը, մասնավորապես՝ նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Գրիգոր Խանջյանը, Եղիշե Թադևոսյանը, Փանոս Թերլեմեզյանը, Գևորգ Բաշինջաղյանը, Երվանդ Քոչարը, քանդակագործներ Արա Հարությունյանը, Արտո Չաքմաքչյանը և ուրիշներ:

1969-ի նոյեմբերին Հայաստանի նկարչի տան ցուցասրահներում մեկնարկեց Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսը:

¹ Տես՝ *Գարուն ա...* (կազմ. և խմբ.՝ Գ. Դևրիկյան), Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 119 էջ:

«Դիմանկար, նապոյումորդ, բնանկար, կոմպոզիցիոն աշխատանքներ, կիրառական արվեստի ստեղծագործություններ. կերպարվեստի բոլոր տեսակներում և ժանրերում հանդես է եկել Կոմիտասի կյանքն իր բազմախոս կյանքի ոլորտներում... Կոմիտասականը հիմնավոր մուտք է գործել սովետահայ կերպարվեստ: Նա դուրս է եկել Կոմիտաս կոմպոզիտորի կենսագրության սահմաններից ու դարձել հայ ժողովրդի պատմությանն ու նրա հեքագա ընթացքին առնչվող հոգեհարազատ թեմա», - գրում է արվեստաբան Մանյա Ղազարյանը²: 1970-ին Երևանում լույս տեսավ «Կոմիտասը հայկական կերպարվեստում» պատկերագիրքը, որն ամփոփ պատկերացում էր տալիս ցուցահանդեսի մասին: 2015-ի մարտի 6-ին Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց Կոմիտասի ծննդյան 145-ամյակին նվիրված՝ հայ ժամանակակից արվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդես, որը կազմակերպել էին Հայաստանի ազգային պատկերասրահը և Աշխարհի հայ նկարիչների միությունը: Ցուցադրված գեղանկարչական, գրաֆիկական ստեղծագործությունների և քանդակների մի մասը նվիրաբերվեց Կոմիտասի նորաբաց թանգարան-ինստիտուտին: Նույն՝ 2015 թ., Աշխարհի հայ նկարիչների միավորման ջանքերով հրատարակվեց «Կոմիտաս» պատկերագիրքը, որն աչքի է ընկնում Կոմիտասի դիմանկարների գունավոր բարձրորակ վերատպույթություններով³: Այսօր Կոմիտասին, նրա կյանքին և ստեղծագործությանը նվիրված գեղանկարչական և գրաֆիկական գործերը, քանդակները պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Կոմիտասի թանգարան-ինստիտուտում⁴ և պետական ու մասնավոր այլ հավաքածուներում: Մինևույն ժամանակ, Կոմիտասի բազմաքանակ հուշարձանները զարդարում են Երևանի, Փարիզի, Տորոնտոյի, Դեթրոյթի և աշխարհի այլ քաղաքների փողոցները, պուրակները, հիշարժան վայրերը:

Կոմիտասի դիմանկարները դիտելիս ուսումնասիրողի հայացքը հանդիպում է դիմանկարի գրեթե բոլոր տիպերին՝ կոմպոզիտորի կյանքը, բանահավաքչական, գիտական, կոմպոզիտորական, խմբավարական գործունեությունը պատկերահանող թեմատիկ դիմապատկերներ, Կոմիտասի ներաշխարհի բացահայտմանը միտված, նրա դերն ու նշանակությունը

² Կոմիտասը հայկական կերպարվեստում, ցուցահանդեսի կատալոգ (ներած.՝ Մ. Ղազարյան), Երևան, «Հայաստանի նկարչի տուն», 1970, էջ 6-7:

³ Կոմիտաս, պատկերագիրք (կազմ.՝ Ղ. Միրզոյան, Ա. Մխիթարյան), Երևան, «Աշխարհի հայ նկարիչների միավորում», 2015, 636 էջ:

⁴ Շտրիակալություն ենք հայտնում Կոմիտաս թանգարան-ինստիտուտի ֆոնդային բաժնին՝ հանձնի գլխավոր ֆոնդապահ Անի Մարտիրոսյանի՝ անհրաժեշտ նյութերը սիրահոժար տրամադրելու համար:

հատկորոշող դիմանկարներ և այլն:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Կոմիտասի կերպարը պատկերող գեղանկարչական և գրաֆիկական այն ստեղծագործությունները, որոնցում շեշտադրվում է նրա հոգևոր և մտավոր ներուժը: Քննության առարկա են դարձել հայ անվանի նկարիչներ *Եղիշե Թադևոսյանի*, *Գևորգ Գրիգորյանի*, *Ռուդոլֆ Խաչատրյանի*, *Վալենտին Պողպոմոզովի*, *Էդուարդ Արծրունյանի*, *Սյրեպան Թարյանի*, *Հրահայր Գրիգորյանի*, *Ռուբեն Արուսյանի* և այլոց աշխատանքները:

Դիմանկարների այս խումբն աչքի է ընկնում գեղարվեստական արտահայտչալեզվի, կոմպոզիցիոն և իմաստային որոշակի ընդհանրություններով: Մասնավորապես, դրանցում արտաքին միջավայրի, կերպարը բնութագրող ատրիբուտների ծայրաստիճան աղքատացումը, գեղարվեստական լեզվի լակոնիզմը առաջին պլան են մղում կերպարի հոգևոր կամ մտավոր ոլորտը: «*Արտաքին միջավայրի աղքատացումը միայն շեշտադրում է պարկերվող անհարի ներաշխարհի խորքային մերկացմանն ուղղված գեղարվեստական այլ նկրտումների անհրաժեշտությունը*», գրում է ռուս արվեստաբան Ալեքսեյ Ցիրեսը⁵: Յուրաքանչյուր արվեստագետ առաջարկել է այդպիսի որոնումների իր տարբերակը:

Հրաժարվելով կերպարը բնութագրող մանրամասներից՝ ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (1977), ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ (1984), Ռուսաստանի Գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ (2002), հանրապետական և միջազգային մրցանակների դափնեկիր Ռուդոլֆ Խաչատրյանը կենտրոնացել է Կոմիտասի դեմքի վրա (1969): Նշենք, որ Կոմիտասի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսի համար իրականացված այս աշխատանքը 1970-ին արժանացել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության առաջին մրցանակի: Լույս ու ստվերի կտրուկ կոնտրաստային հակադրումը, Կոմիտասի խորաթափանց, սևեռուն հայացքը արտահայտում են նրա լարված հոգևոր ներաշխարհը: Միևնույն ժամանակ, պատկերի ողջ մակերեսը զբաղեցնող Կոմիտասի դիմահայաց դիրքը, դիտողին ուղղված սևեռուն հայացքը, մանրամասների բացակայությունը, թղթի սպիտակափառությունը կերպարն օժտում են վերժամանակային սրբությամբ, մաքրությամբ և վեհությամբ, և ըստ այդմ՝ մոտեցնում սրբանկարին: «*Մարդու սրբապարկերային ընկալումը, որը պարկերի սահմաններից դուրս է թողնում ժամանակային և փոփոխական ամեն բան, հաստատում է անհարի հոգևոր*

⁵ А. Цирес, Язык портретного изображения, *Искусство портрета*. Сборник статей (под ред. А. Габричевского), Москва, “Книга по требованию”, 1928, с. 88.

բարձունքը», գրում է ռուս արվեստաբան Ի. Նելվերովան⁶:

Իր կոմպոզիցիոն լուծումներով Խաչատրյանի պատկերած Կոմիտասին մոտ է ՀՀ վաստակավոր նկարիչ (2012) Ռուբեն Արուսյանի 2011 թ. ստեղծած Կոմիտաս-Անտունին: Լուսաստվերի կտրուկ հակադրումը, կարմիրի ներմուծումը խտացնում են դրամատիկ լարվածությունը՝ ողբերգական հնչերանգ հաղորդելով պատկերին:

Քանդակագործ, նկարիչ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945) Սրեփան Թարյանի և ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1935) Կոմիտասի ընկեր Եղիշե Թադևոսյանի հեղինակած դիմանկարները նույնպես մոտ են Կոմիտասի կերպարի սրբապատկերային ընկալմանը: Խոշոր պլանով պատկերված, նկարի ողջ մակերեսը զբաղեցնող, սանգինայով կատարված այս ընդհանրացված դիմանկարում Ս. Թարյանը կերտում է իդեալականացված, աննյութական, երկնային կերպար, որն, ասես, անձեռակերտ է (1947): Կոմիտասի թանգարան-ինստիտուտում ցուցադրված Կոմիտասի հայտնի դիմապատկերներից բացի՝ Եղիշե Թադևոսյանը հեղինակել է ևս մեկը. կամերային հնչողությամբ այս մատիտանկարը (անթվակիր, հավանաբար՝ 1906-1907) շատ նման է Ս. Թարյանի ստեղծագործությանը, սակայն այստեղ իրապաշտական կոնկրետ ձևերը, գծային առույգ շարժումների հակադրման միջոցով ստեղծված դիմամիկ ռիթմը, ասես, կենդանացնում են դիմանկարը՝ Կոմիտասին հաղորդելով խստաշունչ և խորհրդավոր տեսք, պրպտող հայացք:

Նախորդ դիմանկարների կոմպոզիցիոն հնարներն առկա են նաև վրացահայ նկարիչ, Եղիշե Թադևոսյանի աշակերտ Հրահատ Գրիգորյանի, ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (1977), կոմիտասյան թեմաներով բազմաթիվ նկարների հեղինակ Հենրիկ Սիրավյանի և գեղանկարիչ, գրաֆիկ Սեյրան Խաթալամաջյանի նկարներում: Այս դիմանկարներում վարդապետի գլխի դիրքը և հեռուն ուղղված հայացքը ռոմանտիկ երազկոտություն և նուրբ քնարականություն են հաղորդում նրա կերպարին: Եթե Սիրավյանի (1991) և Խաթալամաջյանի (1969)՝ էքսպրեսիվ արտահայտչականությամբ օժտված և խիստ ընդհանրացված Կոմիտասը մեկնաբանված է սուբյեկտիվորեն, ապա տոնային նուրբ անցումներով, գրիգորյանական՝ լավ մշակված անթվակիր մատիտանկարը ավելի իրապաշտական է և դասական:

Կատարման ռեալիստական մաներայով են աչքի ընկնում նաև Կոմիտասի մտերիմ ընկեր, հայ անվանի նկարիչ և հասարակական գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1935) Փանոս Թերլեմեզյանի՝ 1914-ին և գեղանկարիչ

⁶ И. Неверова, *Художественный портрет как форма постижения человека в истории культуры*, 2008. <http://www.dissercat.com/content/khudozhestvennyi-portret-kak-forma-postizheniya-cheloveka-v-istorii-kultury>

Սարգիս Կնյազյանի՝ 2011-ին իրականացրած Կոմիտասի դիմանկարները:

Լենինգրադի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, նկարիչների Միության անդամ, նկարիչ Ալբերտ Սալյանի (2002), կանադահայ նկարիչ և քանդակագործ Լուսնակի (անթվակիր) և Սուսաննա Ավանեսյանի (անթվակիր) գեղանկարչական գործերում նորամուծություն և հնչեղ գունային ակորդ է համատարած կարմիր խորքը, որը կերպարին հաղորդում է միաժամանակ հանդիսավոր, ողբերգական և ծիսական բնույթ: 2015-ին Վահագն Բաղդասարյանի հեղինակած «Կոմիտասում» կարմիր ֆոնին փոխարինելու են գալիս կանաչավուն երանգները, որոնց վրա նշմարվում են հին հայկական երաժշտական նշանագրերի՝ խազերի պատկերները, գեղարվեստական կերպարը օժտում խորհրդավոր, սակրալ աուրայով:

Ջուսպ, ժլատ արտահայտչամիջոցներին, լուսաստվերային դինամիկ խաղին զուգահեռ ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (1967) Գևորգ Գրիգորյանը՝ Ջոտտոն, հոգևորի առաջնությունը շեշտադրում է Կոմիտասի անհամաչափորեն ձգած սիլուետով, լոկալ գույնի՝ երկնի կապույտի կիրառմամբ (1965): Ետնախորքում պատկերված փշերը մետաֆորիկ հնչողություն են ձեռք բերում: «Ե. Թադևոսյանի, Փ. Թերլեմեզյանի, Գ. Խանջյանի հանրահայտ կերպարների կողքին, Գ. Գրիգորյանի Կոմիտասը առանձնանում է ողբերգական գծերի խտացումով: Մարդու արտաքին գծերի ձևափոխմամբ նկարիչը հասնում է տիպական շեշտերի խտացման: Կերպարի սպեղծման շարժիչ ուժը հոգևոր լարումի բարձրակետն է: Այն, ինչ ներքին է, խորքային, դառնում է որոշակիորեն կազմակերպված արտաքին պատկեր: Մեծ երաժշտի այս դիմանկարը ցնցող է իր ազդեցությամբ: Ժանրի ավանդական հասկացությունը այսպեղ հարստանում է նոր կարելիություններով», - գրում է արվեստաբան Պողոս Հայթայանը⁷:

Մեր դիտարկած դիմանկարներն աչքի են ընկնում ոչ միայն կոմպոզիցիոն, այլ նաև իմաստային ընդհանրություններով. դրանցում Կոմիտասը ներկայանում է որպես վեհ, խորհրդավոր, հոգևոր-սրբազնական, բյուրեղյա մաքրությամբ օժտված անհատ՝ հար և նման իր սրտի գաղտնարաններում հնչող, իր կողմից մշակած և ցայսօր լայնորեն հայտնի Պատարագի երաժշտությանը⁸:

Կոմիտասի կերպարի նման մեկնաբանությունն իր հետագա զարգացումն է ստացել Էդուարդ Արծրունյանի, Վալենտին Պոդպոմոգովի, Արամ Դավթյանի,

⁷ Գ. Գրիգորյան (Ջոտտո), այբում (կազմ.՝ Պ. Հայթայան), Երևան, «Սովետական գրող», 1983, էջ 11:

⁸ «Պատարագի երաժշտությունը գերում է անկրկնելի գեղեցկությամբ, վեհությամբ, ազգային ոճի բյուրեղյա մաքրությամբ: Հենց սկզբում հնչող «խորհուրդ խորին» զգեստավորման շարականի խորհրդավոր և թովիչ երաժշտությունը կարծես կանխորոշում է պատարագի հիմնական իմաստն ու փրամանդությունը. ոգու թոփշ դեպի անհուն հեռուները, առ Աստված», - գրում է երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը (Գ. Գյոդակյան, Կոմիտաս, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 61):

Կարապետ Գյոկչակյանի սիմվոլիկ պատկերներում: Միջավայրի պարզեցման, ավելորդ մանրամասների բացակայության պարագայում սակավաթիվ ստրիբուտները ձեռք են բերում իմաստային բացառիկ կշիռ:

Կարապետ Գյոկչակյանի Կոմիտասը սրբի, մարգարեի, նախակարապետի կերպար է (1996): Վարդապետի փոքր-ինչ երկարաձգված ֆիգուրը ամփոփված է խորանի մեջ, դեպի վեր պարզած անհամաչափորեն մեծ աջ ձեռքը մտածել է տալիս մշտարթուն աղոթքի մասին: Փակ աչքերը նույնպես խոսում են աներևույթ, հոգևոր չափման մասին: Անիրականության զգացողությունը ուժգնացնում է պատկերի ընդհանուր կոլորիտը:

Ուշագրավ է ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ (1967) Վալենտին Պոդմոպոզովի վրձինի պատկանող մոնումենտալ հնչողությամբ օժտված խորհրդանշական «Կոմիտաս» կտավը (1980): Իսավարից երևան է գալիս Կոմիտասը, որը, նկարչի խոսքերով, մտնում է յուրաքանչյուր հայորդու տուն՝ իր հետ բերելով իր հոգու լույսը⁹: Դիտողը ակնածանքով է համակվում այս դիմանկարի առջև, ինչին նպաստում է լակոնիկ գեղարվեստական լեզուն, վարդապետի խստաշունչ կերպարը և ընտրված դիտակետը: Սիմետրիկ կոմպոզիցիայի կենտրոնում կանգնած, խորանի մեջ ամփոփված դիմահայաց Կոմիտասի ստատիկ պատկերը նմանվում է սրբերի, մարգարեների պատկերներին: Յնցող է հակադրությունը նրա սառած, ընդարմացած կերպարի և իր ձեռքում պահվող անմար կանթեղի ջերմության ու լուսեղենության միջև: Մեր կարծիքով, նկարչի՝ պլաստիկական մարմնավորում ստացած գեղեցիկ մետաֆորան կարելի է ընդարձակել. դա ոչ միայն իր հոգու լույսն է, այլ հավատի, հույսի, սիրո, հայոց հոգևոր և մշակութային գանձերի անմար կանթեղը, որը վարդապետը նվիրաբերում է իր ժողովրդին:

Կապույտի և շագանակագույնի հակադրության վրա է հենվում Արամ Դավթյանի «Առավոտ լուսո. Կոմիտաս» նկարը (1978): Ներքևից դիտված Կոմիտասի կերպարը ասես սերում է կարմրաշագանակագույն ժայռաբեկորներից: Նկարիչը ցույց է տալիս Կոմիտասի՝ երկրածին տիտանի, տաղանդի և անհատականության ողջ մասշտաբը. պատկերը հնչում է որպես ներբող և մեծարանք Կոմիտասին: Այստեղ մարմնավորվել է նաև Կոմիտասի հոգևոր միայնության գաղափարը:

Հայ գեղանկարիչ, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ (1984) Էդուարդ Արծրունյանի «Կոմիտաս. խոհեր» աշխատանքն (1986) իր կոմպոզիցիոն և իմաստային հնչողությամբ փոքր-ինչ նման է անվանի ռուս նկարիչ Իվան

⁹ С. Галстян, Валентин Подпомогов – 90. “Наш Валюшка – соль Армении”, “Иные берега”, N3 (35) 2014, Москва. <http://inieberega.ru/node/589>

Կրամսկոյի «Քրիստոսն անապատում» ստեղծագործությանը (1872): Խավարը ճեղքող լույսի ստվար շիթը լուսավորում է մտախոհ, գլխահակ սքեմավորի կերպարը: Ինչպես և Կրամսկոյի Քրիստոսը, նա, ըստ երևույթին, ընկղմված է կյանքի և մահվան, հոգևոր փշածածկ ուղու ընտրությանն առնչվող բարդագույն խոհերի մեջ: Լույսի և ստվերի սուր հակադրությունը, կոմպոզիցիայի վերին լուսավոր հատվածում ուրվագծվող և փշերի նմանվող ստվերները կանխորոշում են վարդապետի կյանքի հետագա ընթացքը:

Իսպանացի նկարիչ Էլ Գրեկոյի պատկերներն է հիշեցնում Ռուբեն Արուտչյանի «Կոմիտասը՝ խաչը ձեռքին» կտավը (2014): Վարդապետը ներկայացված է որպես «վասն հաւատոյ և վասն հայրենեաց» հալածված մարտիրոս: Այս համատեքստում հետաքրքրական է Կոմիտասի հեղինակած քառյակի վերջին երկտողը՝

...Գլխիդ համար ցամաք երկրում տեղ ու դադար չունեցար

*Հոգու ջահըդ՝ խաչիդ վերա՝ երկնի սիրով պատեցիր*¹⁰:

Հայտնի է Կոմիտասի կյանքից մի դրվագ, որի մասին պատմվում է վարդապետի աշակերտներից մեկի՝ Աղավնի Մեսրոպյանի հուշերում ¹¹: Ֆրանսահայ նկարիչ Սերովբե-Լևոն Քյուրքչյանը «մեծադիր կտավի մը վրա նկարեց Կոմիտասը – վերացած՝ աչքերը դեպի երկինք, ուրկե դեպի Կոմիտասի գլուխը կիջնեին լույսի ճառագայթներ, և գլխուն շուրջ՝ լուսապսակ մը», - գրում է Ա. Մեսրոպյանը¹²: Նկարիչը մտադրվում էր այդ պատկերը տեղադրել Փարիզի Ժան Գուժոնի Ս. Հովհաննես Մկրտիչ նորակառույց եկեղեցու իր հեղինակած մյուս սրբապատկերների կողքին: Լուրը գայրացնում է վարդապետին, ով պահանջում է ջնջել այդ «մեղապարտ»¹³ Կոմիտասին:

Անտեսելով Կոմիտասի հավանական ընդդիմությունը, նկարիչները մեծարել են վարդապետին, ով նրանց ակնալից աչքերում ձեռք է բերել սրբության պսակ, ընդմիշտ դրոշմվել որպես ազգային մշակութային արժեքների ճրագը վառ պահող, հոգեբարոյական բարձր արժանիքներ կրող անհատ, մարտիրոս:

Կոմիտասը ներշնչանքի աղբյուր է դարձել նաև հայ գրողների և դրամատուրգների համար:

Դու ես քարը

Եվ սրբաբաշ մեր պատշարը.

Հացը օրվա

Եվ նեղ ժամի մեր պաշարը.

¹⁰ Կոմիտաս, Պարկերագիրք, էջ 605:

¹¹ Ա. Մեսրոպյան, Քյուրքչյան Եվ Կոմիտասի սրբանկարը, Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրիթինֆո», 2009, էջ 335-338:

¹² Նույն տեղում, էջ 336:

¹³ Նույն տեղում:

Մեր փակ հոգին, բաց աշխարհը,

Սրբագործված մեր նշխարը¹⁴:

Հայ մեծանուն բանաստեղծ Պարույր Սևակի՝ Կոմիտասին նվիրված իր «Անլռելի զանգակատուն» պոեմի այս տողերը պատկերավոր կերպով հանրագումարի են բերում մեր դիտարկած դիմանկարների շարքը:

Ամփոփում

Կոմիտասի անհատականությամբ և գործունեությամբ ներշնչված՝ հայ կերպարվեստագետները կերտում են նրա դիմապատկերները, գրողները ծնունդ են նրան բանաստեղծություններ և պոեմներ: Սույն հոդվածը ներկայացնում է Կոմիտասի կերպարը պատկերող գեղանկարչական և գրաֆիկական այն ստեղծագործությունները, որոնցում շեշտադրվում է նրա հոգևոր և մտավոր ներուժը: Քննվում են Եղիշե Թադևոսյանի, Գևորգ Գրիգորյանի, Ռուդոլֆ Խաչատրյանի, Վալենտին Պոդպոմոգովի, Էդուարդ Արծրունյանի, Ստեփան Թարյանի, Հրահատ Գրիգորյանի, Ռուբեն Արուստյանի և այլոց աշխատանքները: Դրանք աչքի են ընկնում գեղարվեստական արտահայտչալեզվի, կոմպոզիցիոն և իմաստային որոշակի ընդհանրություններով: Արտաքին միջավայրի աղքատացումը, կերպարը բնութագրող ատրիբուտների բացակայությունը կամ խիստ սակավությունը, գեղարվեստական լեզվի լակոնիզմը դիտողին ստիպում են վերացարկվել, մուտք գործել այլ չափում, հոգու և մտքի ասպարեզ: Արվեստագետները ներկայացնում են Կոմիտասին ոչ միայն որպես պատմական անձ, բայց նաև որպես նահապետի, մտածողի և լուսավորչի հավաքական կերպար:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, գեղանկարչական և գրաֆիկական ստեղծագործություններ, դիմանկար, հայ նկարիչներ:

О НЕКОТОРЫХ ПОРТРЕТАХ КОМИТАСА ВАРДАПЕТА

Резюме

Маргарита Камалян (Армения), кандидат искусствоведения
Институт искусств НАН РА

Неоценим вклад великого ученого, композитора, истинного патриота, одаренного дирижера, педагога и певца Комитаса Вардапета в развитие армянской музыки и музыковедения. Изучением и публикацией наследия Комитаса с особым энтузиазмом и тщательностью занимаются музыковеды. Художники и скульпторы, вдохновленные личностью титана армянского музыковедения и его творчеством, пишут его портреты, а писатели посвящают ему поэмы и стихотворения.

Цель данной статьи – представить некоторые портреты Комитаса, которые раскрывают и акцентируют его интеллектуальную мощь и высокодуховную суть. Анализируются работы Егише Тадевосяна, Геворга Григоряна, Рудольфа Хачатряна, Валентина Подпомогова, Эдуарда Арцруняна, Степана Тарьяна, Грагата Григоряна, Рубена Арутчяна и т.д. Эти портреты объединяет художественный язык, общность композиционных приемов и смысловых характеристик. Нейтральный фон, отсутствие характерных атрибутов или их малое количество, общий лаконизм художественного языка вводят зрителя в иное измерение – сферу души. В этих портретах Комитас представлен не только как историческая личность, но и как собирательный образ прародителя, мыслителя и просветителя.

Ключевые слова: Комитас, живописные и графические произведения, портрет, армянские художники.

¹⁴ *Գարուն* Վ., էջ 37:

SOME PORTRAITS OF KOMITAS VARDAPET

Abstract

*Margarita Kamalyan (Armenia), PhD in Art
Institute of Arts of NAS RA*

The input of the great composer, scholar, a true patriot, a gifted conductor, a pedagogue and singer Komitas Vardapet to the development of Armenian music and musicology is invaluable. The study and publication of the work and legacy of Komitas has been undertaken by musicologists with great enthusiasm and care. At the same time the titan of the Armenian musicological thought had captivated the attention of Armenian writers and artists, who dedicated him poems and created stylistically and typologically diverse portraits of this Armenian genius.

The aim of this article is to present those portraits of Komitas, which reveal his mental and spiritual potential. The works by Eghishe Tadevosyan, Gevorg Grigoryan, Roudolf Khachatryan, Khachatur Esayan, Valentin Podpomogov, Eduard Artsrunyan, Robert Elibekyan, Stepan Taryan, Hrahat Grigoryan, Erem Savayan, Karapet Gyokchyan, Aram Davtyan, Rouben Aroutchyan and others are observed. Affinity regarding artistic expression and compositional and ideological commonalities is apparent. The neutral background, the absence of characterizing attributes or their paucity, the overall laconicism of the portraits introduce the viewer to another dimension, the realm of the mind and soul. The tragic and sublime aspects of Komitas Vardapet's character are conveyed. Whereas more intimate portraits by Khachatryan, Esayan, Grigoryan, Tadevosyan reveal the psychological image of Vardapet during periods of contemplation, or emotional instability, the works by Gyokchyan, Davtyan, Podpomogov, Artsrunian have more monumental sounding and incline towards presenting Komitas as a generalized and symbolic image of a thinker, illuminator and progenitor.

Key words: Komitas, graphic works, paintings, portrait, Armenian painters.

PROGRAMMING ARMENIAN MUSIC IN UNITED STATES AND WESTERN EUROPEAN EARLY MUSIC ENSEMBLES

Alyssa Mathias (USA), PhD candidate
UCLA Department of Ethnomusicology

On November 13, 2013, the American all-male vocal ensemble Chanticleer posted an announcement on its website: “*Polishing Our Armenian.*” Beneath this headline were the words: “*It was Greek yesterday, and Armenian today. We’re very serious about trying to sing well in foreign languages.*”¹ Founded in 1978, the Grammy® award-winning professional ensemble is well-regarded for its performances of Gregorian chant, Renaissance polyphony, and Baroque cantatas. *Chanticleer’s* fan base is considerably large for an early music ensemble in the United States, and its success is due in part to an ever-expanding repertoire and a creative approach to programming and community outreach. The group’s mission statement reads: “*We are committed to using our unique brand, flexibility and experience to adapt to the rapidly changing dynamics of the music industry.*”² According to Chanticleer’s online media efforts, rehearsing Komitas’s arrangement of “*Bazmutyunk Hreshtakats*” exemplifies such a commitment to innovation and adaptability while remaining true to the ensemble’s original mission.

The above example points to changing social, political, and economic challenges facing musicians around the world. It also raises questions about the assumptions and expectations that non-Armenian musicians bring to their encounters with Armenian music. In an effort to clarify the position of Armenian music in the repertoire of today’s international music groups, this paper presents preliminary research concerning United States and Western European early music ensembles.³ Within the last decade, the folk and sacred music arrangements of Komitas have come to occupy a small but significant place in the repertoire of such groups. Drawing from ongoing ethnographic research and analysis of concert programs and recordings—as well as my own experience as a non-Armenian early music singer—I address the following questions: Why are non-Armenian musicians interested in the music of Komitas? Why are early music ensembles performing folk songs and works arranged in the XX century? And how do these performances affect global understandings of Armenian history and culture?

My preliminary observations suggest that the performance of Komitas in early music ensembles outside of Armenia can be understood in relation to the history of the western early music movement since the 1960s. Late-twentieth-century debates over musical authenticity in the western world brought early music and folk music scenes together in a way that resonated with Komitas’s research on Armenian folk and medieval music. The perceived closeness of folk music to early music, coupled with twenty-first-century

¹ *Polishing Our Armenian*, **Chanticleer**, posted November 13, 2013.
<http://www.chanticleer.org/blog/polishing-our-armenian>.

² *Mission and History*, **Chanticleer**, accessed October 25, 2016.
<http://www.chanticleer.org/mission-and-history/>.

³ Here, “early music” refers to the music of the medieval, Renaissance, and Baroque periods in Western Europe.

economic and geopolitical anxieties, provided the impetus for some western early music performers to explore Armenian music in a serious way. Furthermore, this history may account for certain conventions in performance style and interpretation. While individual paths to Armenian music may vary, it is my hope that by pointing out general trends, it might be possible to identify opportunities for fruitful, enjoyable collaboration between Armenian and non-Armenian artists in the present day.

This paper proceeds with a detailed example of the US American ensemble Chanticleer's incorporation of an Armenian sacred piece into a nationally-broadcast Christmas concert. Next, I will discuss how this example relates to late-twentieth-century early music and folk music revivals in the United States and Western Europe. Following that, I will highlight two twenty-first-century paths to Armenian music: one stemming from economic concerns, and one associated with geopolitical anxieties. I will conclude with observations about musical style and areas for further research.

A Chanticleer Christmas

In December 2013, about a month after Chanticleer posted "Polishing our Armenian" on its website, US Americans across the country tuned in to a live radio broadcast of "A Chanticleer Christmas" on American Public Media. Some may have listened for only a few minutes—others, the entire broadcast. For those weary of repeated renditions of "Jingle Bells" and "Santa Claus is Coming to Town" on other radio stations, Chanticleer's *a cappella* chanting was a welcome respite. "Corde natus ex parentis," sang the group in perfect unison. "Ante mundi exordium."⁴ The Latin may have been incomprehensible to most listeners, but the words were familiar at Christmastime, when even popular songs made reference to medieval verse.

Chanticleer's next selection was noticeably different: an open fifth, sung in a bright, forward tone; a melody full of augmented seconds; deliberate, rehearsed pronunciation of consonant clusters. After considerable applause, the radio announcer explained:

"Spicy, Middle East harmonies from the early-twentieth-century Armenian monk, Komitas. That was his "Bazmutyunk": "Multitudes of angels, heavenly hosts descended from heaven with the only begotten King, singing and saying, 'This is the Son of God.'" Before that we heard the old, old chant, "Of the Father's Love Begotten, ere the worlds began to be. He is Alpha and the Omega—He the source, the ending, He."

And this is where "A Chanticleer Christmas" has begun, and you are in the pews of Saint Ignatius Loyola in New York City, where Gregory Peebles and eleven fellow singers, Chanticleer, are now standing in front."

The broadcast cut back to the live performance, and Chanticleer returned to Latin, continuing with a seventeenth-century piece by Hans-Leo Hassler.

Chanticleer's performance is remarkable for the way it skirts typical narratives of Armenian music and musicians in the United States. The music of Armenian Diaspora

⁴ From the poem "Corde natus" by Aurelius Prudentius.

The work entitled *Commentary on the Church Orders by Movses Kertoghahayr* in manuscript format has survived in two extant samples. The first one has survived in the codex presenting the Commentary on the Pericopes by Grigor Arsharuni (VII–VIII centuries), copied in the XI century. Today it is kept under no.475 at the Manuscript Repository of the Mekhitarian Congregation of Venice. The second example was recopied in the XVII century; it was belonging to Harutyun Kurdian's private collection. The work discussed here belongs to commentary genre. Despite its small volume, the work provides rich information about early medieval Armenian music. The writing is of significant importance in view of the Biblical concept of the eight-mode system, numerical symbolism, the distinctive use of the psalms in accordance with the eight modes, as well as in view of the interpretation of the certain parts of the early chants and so on. The research on this work in Armenian musicological studies was conducted in the XX century. In 1972, the Armenian musicologist Nikoghos Tahmizyan attributed it to Movses Syunetsi (VII–VIII centuries). However, it is generally accepted in the Armenian studies that Movses Kertoghahayr, mentioned in the title of the work, is considered to be St. Movses Khorenatsi (V century). The piece itself contains enough evidence for resolving this contradiction, as the wording related to the Armenian Liturgy and the history of the collections of Armenian sacred chants, as well as their particular components, along with other key notions allow determining the time period of the creation of this work.

Key words: Armenian Eight-mode, *Zhamagirk* (Book of Hours), *Sharaknots* (Hymnal), Night Office, Morning Office, Psalm, *sharakan*.

ՁԱՅՆԵՂԱՆԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Գայանե Ամիրադյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ**

Հայ հոգևոր երգարվեստի հիմքը կազմող Ութձայն համակարգի ուսումնասիրությունը Կոմիտասի երաժշտագիտական գործունեության կարևորագույն ոլորտներից է: Նշված իրողության մասին վկայող նյութերի զգալի մասը, սակայն, շարունակվում է ամփոփված մնալ Կոմիտասի արխիվում: Վերջին տասնամյակի ընթացքում հրատարակված¹ Ութձայնին վերաբերող կոմիտասյան ձեռագրերի որոշ դրվագներից հայտնի է, որ երաժշտագետը Ութձայն համակարգին նվիրված առանձին ուսումնասիրություն ստեղծելու նպատակ է ունեցել: Այս իմաստով առանձնահատուկ նշանակություն ունի Կոմիտասի արխիվում գտնված և «Ուսումնասիրություններ եւ յօրուածներ» երկհատորյակի Բ հատորում առաջին անգամ հրատարակված անավարտ հոդվածը: Հոդվածի ընդհանուր վերնագիրն է՝ «Հայ եկեղեցական երաժշտություն», որին հաջորդում է հռոմեական II թվագրումով «Հայոց ութձայն համակարգը» գլխագիրը: Վերջինիս հետևում է ևս մեկ՝ այբբենական «Բ» տառային նշումով «Երգեցողություն» ենթավերնագիրը²: Այսպիսով՝ դիտարկվող նյութը Կոմիտասի ծավալուն հոդվածի երկրորդ մասի երկրորդ ենթաբաժնի մի հատվածն է: Ինչպես նշված է ժողովածուի ծանոթագրության մեջ, հոդվածի առաջին մասը («Հայկական կետադրություն») առաջին անգամ տպագրվել է Լայպցիգում՝ 1899 թ., “Sammelbände der internationalen Musik-Gesellschaft” հանդեսում³: Այս տեղեկությունը հնարավորություն է ընձեռում փաստելու, որ քննվող հոդվածի՝ տարեթվի նշում չպարունակող երկրորդ մասը վերաբերում է հետբեռլինյան շրջանին:

¹ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ եւ յօրուածներ*, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, գիրք Բ, Երեւան, «Սարգս Խաչենց-Փրինթինգ», 2007, էջ 44, 465:

² “Die armenische Kirchenmusik von Komitas Wardapet Keworkian, II. Das Achttons-system der Armenier. B. Das Singen”. Նույն տեղում, էջ 7-25: Հոդվածի գերմաներեն բնագրի՝ Արթուր Ավանեսովի իրագործած հայերեն թարգմանությունը տե՛ս նույն տեղում, էջ 26-44: Այսուհետ՝ **Կոմիտաս Վարդապետ Գեորգեան**, *Հայ եկեղեցական երաժշտություն*:

³ “Die armenische Kirchenmusik von Komitas Keworkian, I. Das Interpunktions-system der Armenier. A. Psalmodieren”. *Sammelbände der internationalen Musik-Gesellschaft*, Leipzig, Oktober–Dezember 1899, S. 54-64. Տե՛ս նաև՝ **Կոմիտաս Վարդապետ**, *Ուսումնասիրություններ եւ յօրուածներ*, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, գիրք Ա, Երեւան, «Սարգս Խաչենց», 2005, էջ 107-119: Հոդվածի՝ Հակոբ Հարությունյանի կատարած հայերեն թարգմանությունը՝ նույն տեղում, էջ 120-132:

Շարադրանքի սկզբնական մասում հեղինակը դասակարգում է Ութձայն համակարգը հետևյալ կերպ. «Ա. Ութն բուն ձայն, Բ. Դարձուածք, Գ. Զարտուղի եղանակ, Դ. Ստեղի»⁴: Հետագա ողջ շարադրանքը վերաբերում է նշվածներից բուն Ութձայնին՝ ներառելով Առաջին ձայն, Առաջին կողմ, Երկրորդ ձայն և Երկրորդ կողմ (Ավագ կողմ) ձայնեղանակները, որոնցից վերջինի բնութագիրն ամբողջական չէ: Սույն ուսումնասիրության շրջանակներում նպատակ ունենք ներկայացնելու ձայնեղանակի վերլուծության կոմիտասյան մեթոդաբանության հիմնական սկզբունքներն՝ ըստ քննվող հոդվածի պատահիկի⁵:

Նախքան ձայնեղանակների ուսումնասիրության կոմիտասյան սկզբունքների դիտարկումը հարկ է համառոտ կերպով անդրադառնալ Ութձայնի տեսության՝ XIX դարի երկրորդ կեսին, մասնավորաբար, Եղիա Տնտեսյանի⁶, Նիկողայոս Թաշճյանի⁷ և Արշակ Բրուտյանի⁸ կողմից շրջանառվող հիմնական դրույթներին: Նշված հեղինակների երկերում ձայնեղանակների տեսական բնութագրի (այսուհետ պայմանականորեն կանվանենք ձայնեղանակների ավանդական տեսական բնութագիր) հիմնական առանձնահատկություններն են՝ տվյալ ձայնեղանակին հատուկ ելևէջը կամ էջելը, այսինքն՝ հնչունաշարը, ինչպես նաև ձայնեղանակի գործառնության աստիճանները՝ դիմող, հանգչող, գործածվող, առաջնորդող, վերջավորող և վերջին վերջավորող ձայները⁹: Դիմող ձայնը ձայնեղանակի մեղեդու մեջ առավել հաճախ հանդիպող հնչյունն է: Ա. Բրուտյանը բնորոշում է այն որպես

⁴ **Կոմիտաս Վարդապետ Գեորգեան**, *Հայ եկեղեցական երաժշտություն*, էջ 7, 26:

⁵ Կոմիտասի դիտարկվող հոդվածի արխիվային՝ ձեռագիր տարբերակի ուսումնասիրությամբ զբաղվել է երաժշտագետ Փասմեն Մեհրաբյանը, ով իրագործել է նաև ձեռագրի ամբողջական ռուսերեն թարգմանությունը (անտիպ): Նշված հետազոտական աշխատանքի արդյունքները հեղինակը ներկայացրել է Ռուբեն Զարյանի 100-ամյակին նվիրված գիտաժողովում (2010 թ. Երևան), ինչպես նաև հետևյալ հոդվածում՝ **Ж. Меграбян**, *Анализ рукописи Комитаса “Армянская церковная музыка”* (вторая часть. Система восьмиласовой музыки армян. Б. Пенне), *Հայ արվեստի հարցեր*, 4, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, էջ 233-250:

Կոմիտասի հոդվածում շրջանառվող՝ Ութձայնի ուսումնասիրության դրույթները մենք առաջին անգամ ներկայացրել ենք Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական V նստաշրջանի ընթացքում: Տե՛ս **Գ. Ամիրադյան**, *Ձայնեղանակի ուսումնասիրության մեթոդաբանական սկզբունքներն ըստ Կոմիտասի, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հինգերորդ նստաշրջան (2-3 դեկտեմբերի, 2010), նստաշրջանի նյութեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 211-220: Սույն հոդվածը նշված գեղուցման ընդլայնված տարբերակն է:

⁶ **Ե. Տնտեսյան**, *Տարերք երաժշտության, Իսթանաբուլ*, տպագր. «Յ. Ասատուրեան որդիք», 1933:

⁷ *Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոց*, աշխատասիրեաց Նիկողայոս Ա. Թաշճեանց, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1874: Այսուհետ՝ **Ն. Թաշճեանց**, *Դասագիրք*:

⁸ *Դասագիրք հայկական-եկեղեցական ձայնագրության*, աշխատասիրեց դպ. Արշակ Բրուտեանց, Վաղարշապատ, 1890: Այսուհետ՝ **Ա. Բրուտեանց**, *Դասագիրք*:

⁹ Քանի որ վերոնշյալ ձայնեղանակային գործառնությունների տեսական սահմանումներն առկա են սուսկ Ա. Բրուտյանի դասագրքում, ձայնեղանակի ավանդական տեսական բնութագրի հետագա դիտարկման մեջ մենք զլխավոր հիմք ենք ունենալու այս աղբյուրը:

ձայնեղանակի գլխավոր հնչյուն, քանի որ «գլխավորապես եղանակը յօրինուած է լինում նրա վրա»¹⁰: Հանգչող ձայնը այն հնչյունն է, որի վրա տվյալ ձայնեղանակի մեղեդին ժամանակավոր դադար է առնում¹¹: Գործածվող ձայները ալտերացիոն ձևափոխման ենթակա հնչյուններն են, որոնք տարբեր ձայնեղանակների հնչյունաշարերը զատորոշող կարևոր տարրերի նշանակություն ունեն¹²: Առաջնորդող ձայնը կամ ձայնառությունը մեղեդու հնչելու ընթացքում պահվող ձայնն է: Վերջավորող ձայնն այն հնչյունն է, որով ավարտվում է տվյալ ձայնեղանակում ծավալվող մեղեդին¹³: Էջելը կամ ելևէջը տվյալ ձայնեղանակին բնորոշ բոլոր առանձնահատկությունների ամփոփ արտացոլումն է, որի բաղկացուցիչ տարրերը՝ դիմող, վերջավորող և հատկապես գործածվող ձայները, հանդես են գալիս որպես տվյալ ձայնեղանակը բնութագրող և այն մյուս ձայնեղանակներից առանձնացնող գործոններ¹⁴: Ն. Թաշճյանի և Ա. Բրուտյանի երկերում ձայնեղանակի հիմնական տեսական առանձնահատկությունների բնութագրերին հաջորդում են նույն ձայնեղանակին պատկանող շարականների (Ն. Թաշճյանի դասագրքում՝ նաև սկսվածքների) օրինակներ:

Ութձայնի տեսական դիտարկման՝ վերը նկարագրված հիմնական սկզբունքներն առանձին գործառույթների ձևակերպման որոշակի լրացումներով և հստակեցումներով հանդիպում են նաև XX դարի երկրորդ կեսի հայ երաժշտական միջնադարագիտության ներկայացուցիչներ Ռոբերտ Աթայանի և Նիկողոս Թահմիզյանի ուսումնասիրություններում¹⁵: Մասնավորապես՝ վերջիններս ձևակերպում են վերջին վերջավորող ձայնի գործառույթը, որի տեսական սահմանումը մեր դիտարկած ավանդական բնութագրերում բացակայում էր: Ըստ Ռ. Աթայանի՝ վերջին վերջավորող ձայնը մեծ մասամբ համընկնում է վերջավորող ձայնի հետ, սակայն երբեմն դրսևորվում է որպես այլ հնչյուն՝ վերջավորող ձայնի հանդես գալուց հետո՝ մեղեդիական լրացուցիչ ընթացքով ամփոփվող վերջնական ավարտին¹⁶: Նշվածին մոտ է Ն. Թահմիզյանի ձևակերպումը, համաձայն որի՝ վերջին վերջավորող ձայնը

¹⁰ Ա. Բրուտանց, *Դասագիրք*, էջ 22:

¹¹ Նույն տեղում, էջ 23:

¹² Նույն տեղում, էջ 22:

¹³ Նույն տեղում, էջ 23:

¹⁴ Ն. Թաշճեանց, *Դասագիրք*, էջ 23, Ա. Բրուտանց, *Դասագիրք*, էջ 23:

¹⁵ Ռ. Աթայան, *Հայկական խազային նորագրությունը*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 161-165: Н. Тагмизян, *Теория музыки в Древней Армении*, Ереван, изд. АН АССР, 1977, с. 179-180.

¹⁶ Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 163:

«հաստատվում է որջ ձայնեղանակային մեղեդու լրացուցիչ կադանսային դարձվածքում»¹⁷:

Ութձայն համակարգի ուսումնասիրության կոմիտասյան մեթոդաբանությունն իր առանձին կողմերով մոտ լինելով ավանդական տեսության վերոնշյալ դրույթներին՝ մի շարք էապես նոր մոտեցումներ է ընդգրկում թե՛ ձայնեղանակի բնութագրման տեսական նոր սկզբունքների կիրառման, թե՛ հիմնական գործառույթների ձևակերպման և վերաիմաստավորման տեսանկյունից:

Ձայնեղանակի ձայնակարգային կառուցվածք

Կոմիտասի մեթոդաբանության կարևորագույն սկզբունքներից մեկը դրսևորվում է ձայնեղանակի տեսական կառուցվածքի դիտարկման ոլորտում: Թեև երաժշտագետը չի կիրառում ձայնակարգ (լադ) հասկացությունը, սակայն, ըստ էության, խոսքը վերաբերում է ձայնեղանակի ձայնակարգային կառուցվածքին: Այսպիսով՝ Կոմիտասը դիտարկում է ձայնեղանակների կառուցվածքը դրանց՝ ըստ տետրախորդների կազմության իր հայտնի դրույթի տեսանկյունից: Յուրաքանչյուր դեպքում նշվում են ձայնեղանակի ձայնակարգային հնչյունաշարի հիմքում ընկած տետրախորդների տեսակները, ներկայացվում է տետրախորդների ամբողջական շղթան, որը կազմվում է միասեռ կամ տարասեռ տետրախորդների շղթայակցման սկզբունքով, ճշտվում է ձայնեղանակի մեղեդու ընդհանուր ձայնածավալը՝ երբեմն նրա նվազագույն և առավելագույն սահմանների մասնավորեցմամբ¹⁸: Պետք է ընդգծել, որ Կոմիտասը չի կիրառում տետրախորդների՝ հունական տերմինաբանությամբ բնորոշելու տարածված սկզբունքը, այլ բնութագրում է դրանք ըստ ինտերվալային կազմի: Մեկ դեպքում կիրառում է նաև «մաժոր (բնագրում՝ *dur*) տետրախորդ» ձևակերպումը¹⁹: Յուրաքանչյուր ձայնեղանակի դիտարկման ժամանակ նշվում են նաև մեղեդու կամ նրա բաղկացուցիչ մասերի հիմնական, այսինքն առավել հաճախ կիրառվող տետրախորդը կամ տետրախորդները (գերմաներեն բնագրում՝ *das Haupt-Tetrachord*)²⁰, ընդ որում ճշտվում է նաև դրանց օգտագործման ուղղությունը (վերընթաց կամ վարընթաց)²¹: Որոշ դեպքերում, ելնելով հիմնական տետրախորդների և դրանցով պայմանավորված առանձնահատկությունների տարբերություններից, Կոմիտասն առանձնացնում է

¹⁷ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 179:

¹⁸ Կոմիտաս Վարդապետ Գեորգեան, *Հայ եկեղեցական երաժշտություն*, էջ 27, 33, 37 նն:

¹⁹ Նույն տեղում, էջ 18, 37:

²⁰ Նույն տեղում, էջ 9:

²¹ Նույն տեղում, էջ 28, 37-38 նն:

մինևսյն ձայնեղանակի տարբեր տեսակները²²: Ձայնեղանակային հնչյունաշարի տետրախորդային կառուցվածքի կոմիտասյան դրույթը վերոնշյալ գործառույթներից սկզբունքորեն վերահմաստավորում է գործածվող ձայնի նշանակությունը: Եթե ավանդական տեսական բնութագրերում գործածվող ձայները ձայնեղանակի դիատոնիկ ձայնակարգային հնչյունաշարի որոշակի հնչյունների ալտերացիոն ձևափոխման դրսևորումներն էին, ապա այս դեպքում նույն հնչյունները հանդես են գալիս որպես ձայնեղանակի տարասեռ տետրախորդների հատկանիշներ: Այսպես՝ եթե Առաջին ձայնի ավանդական տեսական բնութագրում *gis*¹ գործածվող ձայնը տվյալ ձայնեղանակի հնչյունաշարի *g*¹ հնչյունի ալտերացված տարբերակն է, ապա կոմիտասյան մեթոդի համատեքստում *g*¹ և *gis*¹ հնչյունները Առաջին ձայնեղանակի հիմքում ընկած երկու տարասեռ տետրախորդների կառուցվածքային հատկանիշներն են²³: Այլ խոսքով՝ Կոմիտասը դիտարկում է նշված իրողությունը ոչ թե դիատոնիզմի և խրոմատիզմի հարաբերության տեսանկյունից, այլ ձայնեղանակի ձայնակարգային կառուցվածքի համատեքստում, ուստի ձայնեղանակային գործառույթների դիտարկման ժամանակ գործածվող ձայներին չի անդրադառնում:

Ձայնեղանակի հիմնական գործառույթային աստիճաններ

Ութձայնի ուսումնասիրության կոմիտասյան մեթոդաբանության նորամուծություններից է ձայնեղանակի տեսական բնութագրի բոլոր առանձնահատկությունների և, նախևառաջ, հիմնական գործառույթների դիտարկումը երաժշտաբանաստեղծական ձևի ամբողջության համատեքստում՝ ձայնեղանակի մեղեդու բաղկացուցիչ մասերի մակարդակով²⁴: Ըստ Կոմիտասի՝ «մեղեդիները բաղկացած են երկու կամ երեք մասից. իւրաքանչիւր մասը կարող է կրկնուել»²⁵: Այս մոտեցումը շատ ավելի հարազատ է միջնադարյան երաժշտական մշակույթի տրամաբանությանը, քան ձայնեղանակի առանձնահատկությունների վերացարկված դիտարկումը: Ձայնեղանակի ձայնակարգային հնչյունաշարի հիմնական գործառույթների՝ վերը բերված ավանդական տեսական սահմանումներին զգալիորեն մոտ են դիմող և հանգչող ձայների կոմիտասյան ձևակերպումները: Ըստ Կոմիտասի՝ դիմող ձայնը (հեղինակային բնագրում՝ *der Richt-Ton*)²⁶ մեղեդու կամ երաժշտական

²² Նույն տեղում, էջ 32-33, 37-38:

²³ Նույն տեղում, էջ 29:

²⁴ Բացառություն է կազմում միայն ընդհանուր ձայնակարգային հիմքի դիտարկումը:

²⁵ Նույն տեղում, էջ 27:

²⁶ Նույն տեղում, էջ 8-9:

նախադասության առավել գործածական հնչյունն է²⁷: Հանգչող ձայնը Կոմիտասի ձևակերպմամբ այն հնչյունն է, որի վրա հանգչում է (գերմ.՝ *“ruht sich, d.h. schliesst sich”*). բառացի թարգմանությամբ՝ «հանգիստ է առնում, այսինքն ավարտվում է») ձայնեղանակի մեղեդու առաջին մասը²⁸: Եթե մեղեդին եռամաս է, հանգչող ձայնը հանդես է գալիս նաև երկրորդ մասի ավարտին²⁹: Կոմիտասը դիտարկում է նաև սկզբնավորող ձայների, այսինքն ձայնեղանակի մեղեդու սկզբնական հնչյունների (գերմ.՝ *die Führtöne; die Anfangstöne*) գործառույթը, որը մեր ձեռքի տակ եղած ավանդական տեսական բնութագրերում չի հանդիպում³⁰: Առանձնահատուկ ուշադրության են արժանի վերջավորող և վերջին վերջավորող ձայների գործառույթների կոմիտասյան ձևակերպումները: Կոմիտասն առանձնացնում է «առաջին վերջավորող ձայն» (գերմ.՝ *der erste Schluss-Ton*) և «վերջին վերջավորող ձայն» (*der letzte Schluss-Ton*) հասկացությունները: Նշվածներից առաջինն, ըստ երաժշտագետի, շարականի յուրաքանչյուր տունը եզրափակող հնչյունն է: Վերջին վերջավորող ձայնն այն հնչյունն է, «որով ասարկում է ամբողջ մեղեդին՝ որոշակի հնչյունային շարժման շնորհիվ հանգելով ընդհանրացնող ասարկի»³¹: Փաստորեն՝ «առաջին վերջավորող ձայն» պայմանական ձևակերպմամբ Կոմիտասը որպես առանձին գործառույթ զատորոշում է երաժշտաբանաստեղծական ձևի բաղկացուցիչ մասերի, այն է՝ շարականի եզրափակիչ տանը նախորդող տների վերջին հնչյունը, որը հաճախ համընկնում է նույն ձայնեղանակի դիմող, հանգչող կամ վերջավորող ձայների հետ, իսկ երաժշտագետի նշած «վերջին վերջավորող ձայն» հասկացության մեջ ըստ էության նույնացվում են ավանդական տեսական բնութագրի վերջավորող և վերջին վերջավորող ձայների գործառույթները³²:

²⁷ Նույն տեղում, էջ 27:

²⁸ Նույն տեղում, էջ 8, 28:

²⁹ Նույն տեղում, էջ 38:

³⁰ Նույն տեղում, էջ 8, 27 ևն:

³¹ Նույն տեղում, էջ 9, 28:

³² Հոդվածի հայերեն թարգմանության մեջ, բացառությամբ մեկ դեպքի, Կոմիտասի նշած «առաջին վերջավորող ձայնը» գերմաներենից թարգմանված է որպես «կիսահանգածն», իսկ «վերջին վերջավորող ձայնը»՝ որպես «վերջավորող» (հմտ.՝ նույն տեղում, էջ 14 և 33, 19 և 38): Թեև նշված տերմինների նման թարգմանությունն ըստ էության արտահայտում է դրանց իմաստային բովանդակությունը, մանավանդ որ Առաջին ձայնի՝ առաջին վերջավորող մեղեդիական բանաձևի մոտ առկա է Կոմիտասի «կիսահանգածն» (գերմ.՝ *das Halbschluss*) պարզաբանումը, այդուհանդերձ առավել ճիշտ ենք համարում կոմիտասյան ձևակերպումների բառացի թարգմանությունը՝ տերմինաբանական շփոթից խուսափելու համար: Նման շփոթի առիթ կարող է հանդիսանալ կոմիտասյան «վերջին վերջավորող ձայն» հասկացության մեջ ավանդական տեսության *վերջավորող* և *վերջին վերջավորող* ձայների նույնացման վերոհիշյալ հանգամանքը: Բացի դրանից՝ XX դարի երկրորդ կեսի երաժշտագիտության մեջ «կիսահանգածն» (կիսակադանսի հնչյուն) տերմինը կիրառվում է հանգչող ձայնի գործառույթը բնորոշելու համար: Տե՛ս Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 44, Ն. Թսամիլյան, նշվ. աշխ., էջ 179: Հավելենք նաև, որ արդի հայ երաժշտական միջնադարագիտության մեջ վերջավորող ձայնը

Ավանդական տեսության մեջ հանդիպող առաջնորդող ձայնի գործառույթին Կոմիտասը չի անդրադարձնում:

Ձայնեղանակային մեղեդու կառույցում դրսևորվող թռիչքները

Ձայնեղանակների ուսումնասիրության կոմիտասյան մեթոդաբանության խիստ արժեքավոր և հիմնաքարային նորամուծություններից է տվյալ ձայնեղանակում հանդիպող թռիչքների և դրանց օգտագործման ձևերի դիտարկումը: Ըստ Կոմիտասի՝ «*հայոց եկեղեցական երաժշտության մեջ թռիչքներն օգտագործում են՝ 1) մեղեդու սկզբում, 2) երկու մասերի կամ դրանք կազմաւորող նախադասութիւնների միջեւ, եւ 3) որպէս սեկվենցիաներ*»³³: Կոմիտասը դիտարկում է թռիչքներն ըստ ինտերվալային կազմի աճման կարգի, դրսևորման ուղղության և ձևերի: Դիտարկվող թռիչքների մեծ մասը, երբեմն նաև դրանք ընդգրկող հաջորդականությունները բերված են նաև լատինատառ նշումներով³⁴: Վերջիններիցս պարզ է դառնում, որ, մասնավորաբար, սեկվենցիոն թռիչքներ ասելով՝ երաժշտագետը նկատի ունի երկու սեկվենցիոն օղակների միջև գոյացող թռիչքները: Օղակներից յուրաքանչյուրն իր հերթին ներկայացնում է իրենից կես կամ մեկ տոն հեռավորության վրա գտնվող հնչյունների միջև իրագործվող վերընթաց կամ վարընթաց շարժում³⁵: Կոմիտասը սեկվենցիոն է բնորոշում նաև այն թռիչքները, որոնք հանդես են գալիս շարժման և՛ համընթաց, և՛ հակադարձ ուղղություն ունեցող օղակների միջև³⁶: Թռիչքների օգտագործման վերոնշյալ ձևերը, ինչպես նաև որոշ թռիչքների դրսևորման եղանակները մասնավորեցնող կոմիտասյան պարզաբանումներն արտացոլում են ձայնեղանակային թռիչքների երեք հիմնական գործառույթները՝ ձայնակարգային, ինտոնացիոն և կառուցվածքաբանական:

Յուրաքանչյուր ձայնեղանակին նվիրված բաժնում բերված են տվյալ ձայնեղանակին պատկանող մեկական սկսվածքի, մեկ կամ երկու շարականի, ինչպես նաև որջ մեղեդու և նրա առաջին ու երկրորդ մասերի վերջավորությունը ներկայացնող բնորոշ բանաձևերի օրինակներ: Որոշ ձայնեղանակների առանձին տեսակներին անդրադարձնալիս Կոմիտասը ներառել է նաև

ասիմանվում է նաև որպես շարականների տների եզրափակիչ հնչյուն (Л. Акопян, Особенности мелодического строения шараканов и их отражение в хазовом (невменном) письме, *Պարմաբանասիրական հանդես*, 1983, N 2-3, էջ 250; Ա. Արևշատյան, *Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 29): Երաժշտագետ-միջնադարագետ Միեր Նավոյանը, առանձին գործառույթ դիտարկելով շարականի վերջին տանը նախորդող տները եզրափակող հնչյունը, ձևակերպում է այն որպես հարաբերական ավարտի հնչյուն:

³³ Կոմիտաս Վարդապետ Գեորգեան, *Հայ եկեղեցական երաժշտություն*, էջ 30:

³⁴ Նույն տեղում, էջ 31-32, 35-36, 40-42:

³⁵ Նույն տեղում, էջ 31:

³⁶ Նույն տեղում, էջ 41:

«Օրինեցէք, գովեցէք» պատարագային հատվածը և «Նայեաց սիրով» ժամագրքի երգը: Բացառությամբ ԱՁ շարականի, որը ներկայացված է քառածայն մշակմամբ, չափի նշումներով և գրառված է *fis*¹ հնչյունից, բոլոր նմուշները բերված են միաձայն տարբերակներով՝ գրառված հայկական «փուշ» ձայնանիշը եվրոպական *d*¹ հնչյունին համապատասխանեցնելու սկզբունքով: Սկսվածքները և շարականները զգալիորեն մոտ են (իսկ առանձին դեպքերում գրեթե նույնական են) թաշճյանական գրառումներին, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ Կոմիտասը կամ կիրառել է թաշճյանական նմուշները՝ դրանք որոշակի խմբագրության ենթարկելով, կամ ձեռքի տակ ունեցել է թաշճյանական գրառումներին շատ մոտ այլ տարբերակներ:

Հարկ է ընդգծել, որ Կոմիտասի քննվող հոդվածում ձայնեղանակների տեսական վերլուծությունը երբեմն ուղեկցվում է խիստ արժեքավոր դիտարկումներով, որոնք լույս են սփռում հայոց Ութձայն համակարգին, մասնավորապես՝ նրա տարբեր ճյուղավորումներին վերաբերող որոշակի իրողությունների վրա: Այսպես՝ նշելով, որ Ութձայն համակարգի հիմքը թե՛ տաճկահայերի (թուրքահպատակ հայերի), թե՛ ռուսահայերի և թե՛ պարսկահայերի միջավայրում միևնույնն է, Կոմիտասն ընդգծում է, որ միայն Առաջին ձայն, Առաջին կողմ և Երկրորդ կողմ (Ավագ կողմ) ձայնեղանակներն են, որ միախառնվում (շփոթվում են) միմյանց հետ³⁷: Թեև այս դրվագից լիովին պարզ չէ, թե արդյո՞ք Կոմիտասի նշած՝ երեք ձայնեղանակների միախառնման երևույթը հավասարապես դրսևորվում է նրա հիշատակած բոլոր տարածաշրջաններում, այդուհանդերձ, տվյալ փաստի արձանագրումն արդեն իսկ չափազանց մեծ կարևորություն է ներկայացնում հայկական Ութձայն համակարգի ուսումնասիրության տեսանկյունից³⁸:

Կոմիտասի կողմից առաջին անգամ ձայնեղանակի վերլուծության մեթոդաբանություն ներմուծվեցին այնպիսի հիմնաքարային սկզբունքներ,

³⁷ Նույն տեղում, էջ 16 (տվյալ դեպքում հղում ենք կատարել հոդվածի գերմաներեն բնագրին՝ քննվող դրվագի հայերեն թարգմանության մեջ առկա իմաստային անճշտության պատճառով):

³⁸ Հավելենք, որ վերոնշյալ երեք ձայնեղանակների փոխատեղման՝ Կոմիտասի մատնանշած երևույթին մենք հանդիպել ենք հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հեղկահայոց ավանդույթում՝ ներկայացված Էմի Աբգարի գրառած շարականներով: Այս մասին՝ տե՛ս **Գ. Ամիրադյան, Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ հեղկահայոց երգվածքում**, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2012, էջ 36-38, 60-62, ՀՀ ԳՀՀ Արվեստի ինստիտուտի գրադարան, **նույնի՛** Հայ հոգևոր երգարվեստի Նոր Ջուղայի կամ Հեղկահայոց ավանդույթի որոշ ձայնեղանակային առանձնահատկությունների շուրջ, *Երկրասարդ հայ արվեստաբանների գիտական փաստերորդ նստաշրջանի նյութեր*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 90-96: Առաջին կողմ և Երկրորդ կողմ ձայնեղանակների փոխառնչության խնդրին Կոմիտասից բացի անդրադարձել է XIX դարի երկրորդ կեսի ականավոր երաժիշտ-տեսաբան Եղիա Տնտեսյանը: Տե՛ս **Ե. Տնտեսյան**, Նկարագիր երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Բ տպագրութիւն, Իսպանալոյ, «Յ. Ասատուրեան որդիք», 1933, էջ 67:

ինչպիսիք են ձայնեղանակի ձայնակարգային կառուցվածքի դիտարկումն ըստ տետրախորդների, ձայնեղանակի հիմնական առանձնահատկությունների բնութագրման որոշարկված մոտեցումը՝ երաժշտական կառուցվածքի համատեքստում, բնորոշ թռիչքների և մեղեդիական բանաձևերի առանձնանցումը որպես ձայնեղանակի ձայնակարգային, ինտոնացիոն և կառուցվածքաբանական նկարագրի համակողմանի ուսումնասիրության համար էական նշանակություն ունեցող գործոններ: XX դարի երկրորդ կեսի միջնադարագիտության ոլորտում մեղեդիական բանաձևերի կառուցվածքաբանական նշանակությունը կարևորվել է Ք. Կուլչնարյանի, Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի կողմից³⁹: Վստահաբար կարելի է փաստել, որ Ութայնի ուսումնասիրության՝ նվագագույնը հարյուր տարի առաջ ստեղծված կոմիտասյան մեթոդն այսօր ևս ոչ միայն չի կորցրել իր գիտական արժեքն ու արդիականությունը, այլ որոշ իմաստով զգալի առաջընթաց է ներկայացնում անգամ XX դարի երկրորդ կեսի և արդի շրջանի՝ նույն ոլորտում արված հետազոտությունների տեսանկյունից: Կոմիտասյան մեթոդաբանության սկզբունքները կարող են ուղենիշային լինել հայ երաժշտական միջնադարագիտության առանցքային ոլորտներից մեկը հանդիսացող Ութայնի համակարգի հետագա ուսումնասիրության համար:

Ամփոփում

Հայ հոգևոր երաժշտության հիմքը կազմող Ութայնի համակարգի ուսումնասիրությունը Կոմիտասի երաժշտագիտական գործունեության կարևորագույն ոլորտներից է: Ութայնի հետազոտության կոմիտասյան մեթոդաբանությունն իր առանձին կողմերով մոտ լինելով XIX դարի հայ երաժշտության տեսության մեջ շրջանառվող հիմնական դրույթներին (Եղիա Տևտեսյան, Նիկողայոս Թաշճյան, Արշակ Բրուտյան), մի շարք էապես նոր մոտեցումներ է բնութագրում, որոնք մինչ օրս չեն կորցրել իրենց գիտական արդիականությունը: Այդ մոտեցումները դրսևորվում են թե՛ ձայնեղանակի տեսական բնութագրման նոր սկզբունքների կիրառման, թե՛ ձայնեղանակի հիմնական գործառույթների տեսական սահմանումների ճշգրտման և վերաիմաստավորման ոլորտներում: Սույն հոդվածը նվիրված է Ութայնի համակարգի ուսումնասիրության կոմիտասյան մեթոդի հիմնական սկզբունքների դիտարկմանը, որոնց կիրառումը հնարավորություն է ընձեռում ձայնեղանակի առավել համակողմանի և որոշարկված տեսական բնութագրման համար:

Բանալի բառեր՝ Կոմիտաս, հայ հոգևոր երաժշտություն, հայոց Ութայնի համակարգ, ձայնեղանակի վերլուծության մեթոդաբանություն:

³⁹ Տե՛ս X. **Кушнарев**, *Вопросы истории и теории армянской монодической музыки*, Ленинград, Госмузиздат, 1958, с. 39-40. Ռ. **Աթայան**, նշվ. աշխ., էջ 159-160, Ն. **Թահմիզյան**, նշվ. աշխ., էջ 164:

КОМИТАСОВСКИЙ МЕТОД АНАЛИЗА ГЛАСОВ

Резюме

Гаяне Амирагян (Армения), кандидат искусствоведения
Институт искусств НАН РА
Музей-институт Комитаса

Изучение системы восьмигласия (арм. «система Утдзайн»), составляющую основу армянской духовной музыки, является одним из важнейших сфер музыковедческой деятельности Комитаса. Комитасовский метод анализа гласов, имея определенные точки соприкосновения с основными положениями армянской музыкальной теории XIX века (Егия Тнтесян, Никогайос Ташчян, Аршак Брутян), содержит ряд принципиально новых подходов, которые до сих пор не утратили своей научной актуальности. Названные подходы относятся к применению новых принципов теоретической характеристики гласов, а также к конкретизации и переосмыслению научных определений основных функций гласового звукоряда. В данной статье рассматриваются основные принципы комитасовского метода изучения восьмигласия, применение которых дает возможность более целостного и детализированного подхода к теоретическому анализу гласов.

Ключевые слова: Комитас, армянская духовная музыка, система армянского восьмигласия, методика анализа гласов.

КОМИТАС'S METHODOLOGY FOR THE ANALYSIS OF THE MODE

Abstract

Gayane Amiraghyan (Armenia), PhD in Art
Institute of Arts of the NAS RA
Komitas Museum Institute

The study of the eight-mode (Arm. *Utdzayn*) system basing the Armenian sacred music is one of the principal fields of the musicological activity of Komitas. The latter's methodology for the investigation of the eight-mode system, certain points of which are close to the main terms applied in the Armenian music theory of the XIX century (Yeghia Tntesyanyan, Nikoghayos Tashchyan, Arshak Brutyan), includes several substantially new approaches that keep their scientific topicality up to date. The mentioned approaches are present both in the application of new principles for the theoretic description of the mode and in the specification and reconsideration of the theoretic definitions of the main functions of the mode. The present article is devoted to the examination of the main principles of Komitas's method for the study of the eight-mode system, the application of which allows a more comprehensive and well-defined theoretical description of the mode.

Key words: Komitas, Armenian sacred music, Armenian eight-mode system, methodology for the analysis of the mode.

ՈՒԹՁԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅ ՇԱՐԱԿԱՆԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԻՆԻԹԱՐՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՍԿՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Լիլիթ Հարությունյան (Հայաստան)
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Հայ հոգևոր երաժշտության Ութձայն համակարգի ուսումնասիրության համար առավել նպատակահարմար է շարականերգության ձայնեղանակային ուսումնասիրությունը: Հոգևոր երգեցողության հենց այս ժանրն է, որ պահպանվել է հստակ, կանոնավոր կերպով և ձայնեղանակային ցուցիչով:

Այս ուսումնասիրության առարկան Վենետիկի Մխիթարյան միաբանությունում կենցաղավարող շարականերգության սկսվածքներն են: Սկսվածքը ձայնեղանակների հակիրճ տարբերակն է, որը երգվում է յուրաքանչյուր շարականից առաջ՝ Աստվածաշնչից քաղված, տվյալ շարականային տիպին հատուկ համապատասխան տեքստով:

Ըստ Ռոբերտ Աթայանի՝ սկսվածքները հիմնականում գործնական կիրառություն են ունեցել պաշտոններգության մեջ և անգամ չեն գրառվել, «*հրենց հեշտության պարճառող*»¹: Սկսվածքների առաջին գրանցված օրինակներ հանդիպում ենք ուշ շրջանի խազագիր ձեռագրերում (XVI-XVII դարեր): Սկսվածքների կարևորագույն գրանցումներն են Եղիա Տնտեսյանի² (հակիրճ) և Նիկողայոս Թաշճյանի³ (ընդլայն, բաժանված ըստ տիպերի և տեմպերի⁴) շնորհիվ պահպանված նմուշները:

Մխիթարյան միաբանության երգվածքում սկսվածքները գրանցված են առանձին տետրակով՝ զուտ ներքին գործածության համար և արտագրությունների միջոցով պահպանվում են ու փոխանցվում սերնդե սերունդ: Ներկա ուսումնասիրության նյութը Վենետիկի Ս. Ղազար կղզում 1957 թ. արտագրված սկսվածքների ձեռագիր տետրակն է⁵:

Ութձայն համակարգն առավել հստակ պատկերացնելու նպատակով վերլուծություններից ստացված արդյունքները համեմատելու ենք էջմիածնական

¹ Ռ. Աթայան, *Հայկական խազային նուրագրություն*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 117:

² Ե. Տնտեսյան, *Բովանդակությունն նուրագց Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ (ըստ ութն ձայնից)*, Կ. Պոլիս, 1864, էջ 32-39:

³ *Ձայնագրեալ շարական հոգևոր երգոց*, Վաղարշապատ, 1875, էջ 9-24:

⁴ Տեմպային նշումն ուղիղ կերպով առնչվում է հոգևոր երգեցողության լեզվաոճային (վանկային, ներվանկային, զարդուղորուն) առանձնահատկությունների հետ:

⁵ Մխիթարյան միաբանության երգվածքը այսուհետ կանվանենք Մխիթարյան կամ Վենետիկյան: Իսկ շարականների տարբերակները կանվանենք տայյանական, քանի որ Մխիթարյան երգվածքի շարականները պահպանվել են հ. Ղևնդ վրդ. Տայյանի գրանցումով:

երգվածքի միևնույն երևույթների հետ: Մինչ այդ, հակիրճ անդրադառնանք սկսվածքների էությանն ու նշանակությանը:

Ըստ Ն. Թահմիզյանի՝ սկսվածքների գործառույթները հետևյալն են.

1. Գիտական: Ներկայացնում է Ութձայն համակարգի հակիրճ մոդելավորումը:

2. Կրթական: Դյուրին կերպով ձևավորում են ապագա երգիչների լսողական հիմքը:

3. Գործնական: Անցում են ապահովում սաղմոսերգությունից կամ այլ երգեցողության ժանրից դեպի շարականը⁶:

Շարականների, հետևաբար նաև սկսվածքների հիմնական տիպերը ութն են.

«**Օրհնութիւն**», որի տեքստը հիմնված է Հին Կտակարանի Ելից գրքի 15-րդ գլխի վրա (Մովսեսի երգը)⁷: Այս տիպի շարականները երգվում են Գիշերային ժամերգության ժամանակ:

«**Հարց**»՝ Դանիել մարգարեի խոսքերից⁸: Այս և հաջորդ չորս շարականային տիպերը կատարվում են Առավոտյան ժամերգությանը:

«**Մեծացուցէ**», որը կոչվում է նաև Աստվածածնի երգ⁹:

«**Ողորմեա**»՝ ապաշխարության երգ, հիմնված 50-րդ սաղմոսի բանաստեղծական տեքստի վրա¹⁰:

«**Տէր յերկնից**»՝ փառաբանական շարական, հիմնված 148-րդ սաղմոսի բանաստեղծական տեքստի վրա¹¹:

«**Մանկունք**»՝ հիմնված 112-րդ սաղմոսի վրա¹²:

«**Ճաշու**»: Այս անունով սկսվածքները թվով երեքն են՝ հիմնված 92, 114 և 116-րդ սաղմոսների վրա և երգվում են ըստ կիրառության¹³: Այս տիպի շարականները կատարվում են Ճաշու ժամերգությունների ժամանակ:

«**Համբարձի**»՝ հիմնված 120-րդ սաղմոսի վրա¹⁴:

Ութձայնի ուսումնասիրությունը սկսվածքների միջոցով հանդիպում ենք Ն. Թահմիզյանի մոտ¹⁵: Նա վերցրել է մի տիպի սկսվածք¹⁶ և դիտարկել դրա

⁶ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, Ереван, изд. АН Армянской ССР, 1977, с. 170.

⁷ *Աստվածաշունչ*, աշխարհարար թարգմանություն, Հին Կտակարան, էջ 81:

⁸ Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 1266:

⁹ Նույն տեղում, *Նոր Կրակարան*, էջ 76:

¹⁰ Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 766:

¹¹ Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 831:

¹² Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 810:

¹³ Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 796, 811, 812:

¹⁴ Նույն տեղում, *Հին Կրակարան*, էջ 819:

¹⁵ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, с. 171.

¹⁶ Մեծացուցէ տիպի սկսվածքը:

շարադրանքը տարբեր ձայնեղանակներում: Սակայն ենթադրում ենք, որ այդպիսի մոտեցումը ձայնեղանակի մեղեդիական զարգացման վերաբերյալ միակողմանի եզրահանգումներ կառաջացնի:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս դեպքում հարկավոր է դիտարկել բոլոր շարականային տիպերի սկսվածքները՝ առավել հանգամանալից եզրակացություններ անելու համար: Մխիթարյան երգվածքի տարբեր շարականային տիպերի սկսվածքները միևնույն ձայնեղանակում առաջին հայացքից ծավալվում են միմյանց նման, սակայն հանդիպում ենք լեզվի դարձվածքաբանական առանձնահատկությունների, մասնավորապես, «Ճաշու» և «Մեծացուցե» սկսվածքների դեպքում: Մխիթարյան «Ողորմեա» սկսվածքն էջմիածնական երգվածքից տարբերվում է տեքստային առումով. բացակայում է բանաստեղծական տեքստի միջին մասը¹⁷:

Ինչպես հայտնի է, Ութձայն համակարգում ձայնակարգի և դրա ֆունկցիոնալ աստիճանների հետ մեկտեղ խիստ կարևոր է նաև տիպական մեղեդիական դարձվածքների համակարգը:

Մեղեդիական դարձվածքները տարբերակելուց առաջ նախընտրում ենք դրանք դիտարկել ոչ միայն զուտ ինտոնացիոն, մեղեդիական, այլ նաև տաղաչափական (բանաստեղծական) տեսանկյունից: Բանն այն է, որ այս կամ այն բառի եղանակավորման համար վերցվում է խիստ տիպական մեղեդիական դարձվածք, և հավելյալ վանկերը լրացվում են որևէ հնչյունի համապատասխան քանակությամբ կրկնություններով: Այդ դեպքերը մեր դիտարկումներում սկզբունքորեն նույնացնում ենք իրար:

Օրինակ՝

Մի - նեա - ցուք ըզ - Տեր Ո՛ր - ողոր - մեա ինձ Աստ - ուած Մե-ծա-ցուս - ցե անն իմ ըզ - Տեր

Սկսող մեղեդիական դարձվածք ընդունված է համարել սկսող հնչյունից մեղեդիական անցումը դեպի դիմող ձայն, սակայն հաճախ ձայնեղանակի դիմող ձայնն իրեն դրսևորում է ավելի ուշ. մեր դեպքում՝ կիսակադանսից (հանգչող դարձվածքից) սկսած¹⁸: Ձայնեղանակի հանգչող դարձվածքին հաջորդում է սկսող դարձվածքին խիստ նման մեկը, ինչն առավել ցայտուն է դարձնում

¹⁷ էջմիածնական սկսվածքի բանաստեղծական տեքստը. «Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում, քաւեա զանօրէնութիւնս իմ»: Մխիթարյան սկսվածքի բանաստեղծական տեքստը. «Ողորմեա ինձ Աստուած, քաւեա զանօրէնութիւնս իմ»:

¹⁸ Հավանաբար, այս երևույթը կարելի է բացատրել սկսվածքների սահմանափակ ծավալով: Այն թույլ չի տալիս մեղեդուն բավարար չափով ծավալվել:

հանգչող դարձվածքի ֆունկցիան:

Սկսվածքներում ներկայացված են նաև Ութայն համակարգի «դարձվածք» ձայնեղանակները¹⁹: Ռ. Աթայանը ներկայացրել է «դարձվածք» ձայնեղանակների՝ բուն ձայնեղանակներից տարբերակման իր տեսակետը²⁰:

Սկսվածքներում «դարձվածք» ձայնեղանակների տարբերությունը ցուցադրվում է միայն վերջավորող հատվածի տիրույթում: Այստեղ յուրաքանչյուր սկսվածքի վերջում ընդամենը բերվում է վերջավորող մեղեդիական մի հատված՝ «դարձվածք» ձայնեղանակային նշումով:

Մեր աշխատության հաջորդ մասում կանդորադաճանք յուրաքանչյուր ձայնեղանակի դրսևորմանը վենետիկյան երգվածքի սկսվածքներում, ինչպես նաև զուգահեռ կերտնք դրանց՝ էջմիածնական տարբերակի հետ համեմատության արդյունքը: Էջմիածնական Շարակնոցում սկսվածքները ներկայացված են հիմնականում երկու տարբերակով՝ Չափավոր (կամ Միջակ, երբեմն՝ Հորդոր) և Ծանր: Ի տարբերություն դրանց, մխիթարյան սկսվածքները ներկայացված են միայն մեկ տեմպային տարբերակով (Andante Moderato²¹), ուստի համեմատության համար ընտրել ենք թաշճյանական Շարակնոցի համապատասխան տեմպով կատարվող սկսվածքը:

Ութայն համակարգի ուսումնասիրությունը ներկայացնելուց առաջ հարկ ենք համարում նշել, որ ձայնեղանակների ձայնակարգային բնութագիրը տալիս ենք ըստ վերջավորող ձայնի և դրա շուրջ կառուցված հնչյունաշարի:

ԱԶ

Ձայնեղանակը ծավալվում է սեկունդային հիմքով ձայնակարգում, որը կազմված է միքսոլիդիական տրիխորդի և փոյուզիական տետրախորդի միակցումից: Հնչյունաշարը յուրահատուկ է իր ներքին միկրոտոնային համակարգով: Ներքևի ձգտող տոնը քառորդ տոնով բարձր է, ինչը որոշ չափով արձագանքում է էջմիածնական ԱԶ-ի հնչյունաշարում երբեմն ավտերացվող (գործածվող) ներքևի ձգտող տոնին: Քառորդ տոնով բարձր է նաև ձայնեղանակի վերևի մեղիանտան (երրորդ աստիճանը): Նման բան չենք հանդիպում էջմիածնական երգվածքի ԱԶ-ում: Ձայնեղանակի երկրորդ

¹⁹ Դրան խիստ կարևորություն ենք տալիս, քանի որ ո՛չ էջմիածնական, ո՛չ Մխիթարյան միաբանության Շարակնոցներում ձայնեղանակային ցուցիչի հետ չի նշվում «դարձվածք» է ձայնեղանակը, թե ոչ:

²⁰ «Դարձվածք» ձայնեղանակներն իրենց բուն ձայների հետ ունեն հետևյալ հարաբերությունները. ա) նոր հնչյունաշար՝ նոր տոնիկայով, բ) նույն տոնիկան՝ նոր հնչյունաշարով, գ) նույն հնչյունաշարը՝ տարբեր տոնիկայով: Տես՝ Ռ. Աթայան, *Հայկական խազային նորագրություն*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1959, էջ 160:

²¹ Տեմպային եզրերի հայկական համարժեքներն են. Andante – Չափավոր, Moderato – Միջակ: Տես՝ Ա. Բաղդասարյան, *Հայկական նորագրության ձեռնարկ*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2010, էջ 46:

աստիճանը կատարում է դիմող և հանգչող ձայնի գործառույթ: Միևնույն երևույթը նկատվում է նաև թաշճյանական շարակնոցի սկսվածքներում:




Մեղեդիական առումով առաջին իսկ հնչյունից զուգահեռներ են դիտարկվում ԱՁ ձայնեղանակում ծավալվող սկսվածքների սկսող մեղեդիական դարձվածքներում: Երկու երգվածքում էլ բացարձակ գերիշխող է սկզբում հանդես եկող վերընթաց կվարտային ինտոնացիան:



Հանգչող (կիսակադանսային) մեղեդիական դարձվածքներն ինտոնացիոն առումով ընդհանուր առմամբ խիստ չեն տարբերվում. մխիթարյան տարբերակում մեղեդին վերընթաց քայլերով հանգում է համապատասխան ֆունկցիոնալ աստիճանին, իսկ էջմիածնական սկսվածքներում վերընթաց շարժումը հարստացվում է նաև հանգչող ձայնի երկկողմանի շրջազարդումով:




Վերջավորող մեղեդիական դարձվածքները շրջազարդում են վերջավորող ձայնը:



Ինչպես վերը նշեցինք, սկսվածքների վերջավորող դարձվածքներն արտահայտված են նաև «դարձվածք» ձայնեղանակներում: ԱՁ «դարձվածքը» նման դրսևորում ունի Դ. Տայյանի և Ն. Թաշճյանի գրառումներում: Համընկնում է վերջավորող ձայնը, ինչպես նաև «դարձվածքի» ձայնակարգային բնութագիրը՝ հիպոդորիական-եռլական: Ձայնակարգի հիմքի մասին ասել դժվարանում ենք,


քանի որ այդ հիմքը բացահայտող բավարար մեղեդիական դարձվածքներ չունենք (սկսող, հանգչող):

Ահա ԱՁ «դարձվածքի» վերջավորող մեղեդիական դարձվածքները:



ԱԿ

Մխիթարյան ավանդույթի շարականերգության մեջ հանդիպում ենք ձայնեղանակներ, որոնց մեղեդին ծավալվում է հիմնականում հնչյունաշարի հիպո-ոլորտում: Հետևաբար՝ դիմող ձայնն էլ, որպես ձայնակարգի օժանդակ հենակետ, հանդես է գալիս վերջավորող ձայնից ներքև: Այսպիսի օրինակ է սկսվածքներում դրսևորվող ԱԿ ձայնեղանակը: Այն կարելի է բնութագրել որպես սեկունդային հիմքով հիպոհոնական ձայնակարգ: Այստեղ դիմող ձայնը վերջնաձայնի ներքևի ձգտող տոնն է: Համընկնում են ձայնեղանակի երկու տարբերակների դիմող ձայները, որոնք նույնական են հանգչող ձայնի հետ, ինչպես նաև մեկ դեպքում (Մխիթարյան երգվածքի «Հարց» սկսվածքում) համընկնում է վերջավորող ձայնը: Չնայած հնչյունաշարի արտաքին նմանությանը, մխիթարյան ԱԿ-ն էապես տարբերվում է էջմիածնական համարժեքից՝ ձայնակարգային առումով:




Նախ հարկ ենք համարում նշել, որ թաշճյանական սկսվածքներում դրսևորված ԱԿ-ը դիմող ձայնի առումով տարբերվում է հայ երաժշտագիտական գրականության մեջ սահմանված ԱԿ ձայնեղանակից: Սկսվածքներում մեղեդու օժանդակ հենակետն ու վերջավորող ձայնը համընկնում են²²: Որոշակի նմանություն կարելի է գտնել սկսող մեղեդիական դարձվածքների մեջ: Ասվածը վերաբերում է գրառված հնչյունների ձայնաբարձրությանն ու սկսող դարձվածքներում առկա տերցիային քայլին: Մխիթարյան տարբերակում դա քայլ է դեպի դիմող ձայնը, իսկ էջմիածնականում՝ դեպի վերջավորող ձայնը:



ԱԿ ձայնեղանակի հանգչող մեղեդիական դարձվածքները կայունություն չեն ցուցաբերում ո՛չ էջմիածնական, ո՛չ մխիթարյան սկսվածքներում:


²² ԱԿ ձայնեղանակի դիմող ձայն է համարվում ձայնակարգի երրորդ աստիճանը (տե՛ս Ռ. Աբայան, նշվ. աշխ., էջ 161): Այստեղ՝ սկսվածքներում, այդ աստիճանը գերակշռում է մեղեդու զարգացման վերջին հատվածին ավելի մոտ:



Ա4 ձայնեղանակի երկու տարբերակների վերջավորող դարձվածքներում ակնհայտ են դառնում դրանց վերոնշյալ ձայնակարգային տարբերությունները:



Ինչ վերաբերում է Ա4 «դարձվածք» ձայնեղանակին, ապա այն միակն է, որ Էջմիածնական սկսվածքներում ներկայացված է ամբողջությամբ, ոչ թե միայն վերջավորող հատվածի տեսքով: Սակայն երկու երգվածքների համեմատությունն, այդուհանդերձ, կարող ենք անել միայն վերջավորող դարձվածքի հիման վրա, քանի որ մեր տրամադրության տակ ունենք մխիթարյան Ա4 «դարձվածք» սկսվածքների լոկ վերջավորող հատվածները:



Բ2

Մխիթարյան ավանդույթի սկսվածքներում արտացոլվող Բ2 ձայնեղանակը գրեթե ամբողջովին կրկնում է Էջմիածնական սկսվածքների Բ2-ն: Այստեղ ևս ունենք կվինտային հիմքով էոլական ձայնակարգ, որը երբեմն դորիական երանգ է ստանում՝ երբեմն հանդիպող ներքևի մեդիանտայի ալտերացիայի արդյունքում: Ձայնեղանակի մխիթարյան տարբերակը գրառված է Էջմիածնականից կվարտա ցած:



Սկսող մեղեդիական դարձվածքները կայուն են գրեթե բոլոր սկսվածքներում: Դրանք երկու երգվածքներում էլ իրենցից ներկայացնում են վերընթաց սեկունդային քայլ դեպի ձայնեղանակի դիմող ձայնը՝ վերջինիս շրջազարդմամբ:




Բ2 ձայնեղանակի երկու տարբերակներն էլ սկսվածքներում ներկայացված են առանց հիպո-հատվածի: Հնչում են փոքրիկ ռիթմական տարբերակմամբ:



ԲԿ

ԲԿ ձայնեղանակը ծավալվում է տերցիային հիմքով հիպոդորիական-էոլական ձայնակարգում: Մխիթարյան շարականների սկսվածքներում ԲԿ ձայնեղանակը թաշճյանական գրառումների հետ համեմատելիս ակնհայտ է ձայնեղանակի ֆունկցիոնալ աստիճանների նմանությունը՝ չնայած նրան, որ հնչյունաշարն ընդհանուր կերպով փոխադրված է կվարտա ներքև:




Մխիթարյան ԲԿ սկսվածքների սկսող դարձվածքները պարտադիր կերպով պարունակում են փոքր սեքստա թռիչք՝ սկսող ձայնից դեպի դիմող ձայնը: Հետաքրքիր է, որ նման թռիչք հանդիպեցինք էջմիածնական սկսվածքներից միայն մեկում՝ «Հարց» տիպի սկսվածքում՝ միևնույն ֆունկցիոնալ նշանակությամբ (թռիչք դեպի ձայնակարգի դիմող ձայնը):



Նշելի է նաև, որ երկու ավանդույթների դեպքում էլ ներկայացված չեն ԲԿ ձայնեղանակի «Համբարձի» սկսվածքները: Սա, իհարկե, չի նշանակում, որ տվյալ ձայնեղանակում շարադրված «Համբարձի» շարականներ չկան²³:

ԳԶ

Էջմիածնական երգվածքի ԳԶ ձայնեղանակը ևս ճանաչելի է իր երկակի ձայնակարգով: Այդպիսին դրսևորվում է նաև մխիթարյան սկսվածքներում հանդես եկող ԳԶ ձայնեղանակում՝ հնչյունների բարձրության տերցիա տարբերությամբ:




²³ Հ. Ղևոնդ վրդ. Տայյանի գրառած Շարակնոցի (*Շարական հայաստանեայց եկեղեցւոյ*, Վենետիկ, Ս. Ղազար) հատորներից Գ (1963, էջ 234), Դ (1954, էջ 49), Ե (1957, էջ 295, 296, 297, 299, 300), Զ (1965, էջ 13), Ը (1966, էջ 377) հատորներում կարելի է գտնել ԲԿ ձայնեղանակային ցուցիչով 10 Համբարձի շարականներ:

Ձայնակարգի երկակիությունն ընդգծված է նրանով, որ դրա հիմքը կազմող երկու հնչյուններն էլ հավասարապես կատարում են դիմող ձայնի դերը: Հիմնական տարբերություն կարելի է համարել վերջնաձայնի ներքևի մեղիանտան, որը, համաձայն բնական հնչյունաշարի, կես տոն բարձր է (գրառված սի բեկար հնչյունով): Մեղեդիական շարժման առումով ձայնեղանակի երկու երգվածքները նման են, սակայն ճշգրիտ համապատասխանություններ չունեն:



ԳԿ

ԳԿ ձայնեղանակի ձայնակարգը կարելի է բնութագրել որպես տերցիային հիմքով հիպոդորիական-էոլական: Առաջին հայացքից երևում է երկու տարբերակների չորրորդ աստիճանների տարբերությունը՝ էջմիածնական ԳԿ-ում ձայնակարգի չորրորդ աստիճանը քառորդ տոնով ցածր է, իսկ մխիթարյան տարբերակում նման դրսևորում չունենք: Այնուամենայնիվ, Մխիթարյան և Էջմիածնական երգվածքներում թե՛ մեղեդիական և թե՛ ձայնակարգի ֆունկցիոնալ աստիճանային առումով ԳԿ ձայնեղանակը շարականների սկսվածքների բոլոր տիպերում կայուն է դրսևորվում:



Նույնը կարելի է և ասել ձայնեղանակի ներսում՝ մեղեդիական դարձվածքների մասին:



Միակ շփոթությունը կամ խնդիրը առաջացնում է միկրոալտերացիայի նշանը՝ բեմոլետտոն, որն ըստ Ղ. Տայյանի նշումների, նշանակում է տրված հնչյունի իջեցում քառորդ տոնով²⁴: Այս դեպքում դա արտահայտված է դիմող ձայնով, որը գրանցված է որպես սի բեմոլ՝ բանալու մոտ հավելյալ դրված բեմոլետտոյով: Միկրոալտերացիայի նշանի՝ բանալու մոտ փակագծերում գտնվելն է առաջացնում այս շփոթությունը, քանի որ պարզ չէ, թե երբ է

²⁴ Այդ նշումը կարելի է գտնել հրատարակված Շարակնցի բոլոր հատորների տիտղոսաթերթից անմիջապես հետո:


ձայնեղանակի դիմող ձայնը հնչում որպես սի բեմոլ, իսկ երբ՝ սի բեմոլետտո: Այս խնդրի հստակեցմանը կարող է նպաստել ԳԿ շարականների հնչող նմուշների ուսումնասիրությունն ու համեմատությունը գրառված տարբերակների հետ: Հիշեցնենք, որ էջմիածնական ԳԿ-ում դիմող ձայնն է փուշ կիսվար հնչյունը²⁵:

ԴՁ

ԴՁ ձայնեղանակը ծավալվում է դեպի ներքև տերցիային հիմքով հիպոփոյուզիական-լրկրիական ձայնակարգում: Առավել զարգացած է վերջինիս հիպո-ոլորտը: Մխիթարյան երգվածքի ԴՁ-ն իր հնչյունաշարով բավականին նման է էջմիածնական տարբերակին՝ ձայնաբարձրության փոքր տերցիա ներքև փոխադրումով: Սակայն այդ հնչյունաշարի ձայնակարգային իմաստավորումը բոլորովին այլ է՝ ձայնակարգային հիմքի այլ լինելու պատճառով: Հայ երաժշտագիտության մեջ ընդունված ցուցակներում էջմիածնական երգվածքի ԴՁ-ում ունենք կվարտային հիմք, իսկ էջմիածնական սկսվածքներում վերջավորող ու դիմող ձայները հանդես են գալիս միևնույն հնչյունի տեսքով: Մխիթարյան ԴՁ-ն սկսվածքներում ունի տերցիային հիմք:



ԴՁ ձայնեղանակը բավականին բազմազան դրսևորումներ է ունենում սկսվածքներում: Այստեղ այս կամ այն տիպական մեղեդիական դարձվածքը կայուն (այսինքն՝ հաճախ հանդիպող) կարելի է համարել զուտ պայմանականորեն: Երկու երգվածքների միջև մեղեդիական նմանություն կարելի է գտնել միայն սկսող դարձվածքներում:



ԴԿ

ԴԿ-ի ձայնակարգը կարելի է բնութագրել որպես տերցիային հիմքով հիպոդորիական-էոլական՝ հիպո հատվածում բաց թողնված («օդային») ներքևի չորրորդ աստիճանով: Ի տարբերություն էջմիածնական ԴԿ-ի՝ մխիթարյան տարբերակը ծավալվում է բավական լայն, ընդարձակ հնչյունաշարում:

²⁵ Այն գրանցվում է պարույկ կիսվեր հնչյունով:



ԴԿ ձայնեղանակը նույնպես կայուն է դրսևորվում և՛ մխիթարյան, և՛ էջմիածնական սկսվածքներում:

Այսպիսով, տեսական քննության արդյունքում սկսվածքները բաժանել ենք երկու խմբի.

1) Մխիթարյան և էջմիածնական երգվածքներում տարբեր ձայնակարգային առանձնահատկություններ դրսևորող ձայնեղանակներ: Մասնավորապես, ասվածը վերաբերվում է ձայնակարգի ինտերվալային հիմքին և ֆունկցիոնալ աստիճաններին: Այդ խմբում ընդգրկված են ԱԿ և ԴՁ ձայնեղանակները:

2) Երկու երգվածքներում նման նկարագիր ունեցող ձայնեղանակներ: Դրանք են ԱՁ, ԲՁ, ԲԿ, ԳՁ, ԳԿ և ԴԿ ձայնեղանակները:

Այս ոչ ծավալուն ուսումնասիրությունը թույլ տվեց եզրակացնել, որ, փաստորեն, էջմիածնական ու մխիթարյան ավանդույթի սկսվածքներում հանդիպում ենք սկզբունքորեն ավելի նման, քան տարբեր մեղեդիական դրսևորումների, ուստի այստեղ խոսքը վերաբերում է սկսվածքների տարբերակային գանազանությանը:

Այս եզրահանգումը մատնանշում է Վենետիկի մխիթարյան ավանդական երգվածքի խորքային կապը հիմնական համարվող էջմիածնական երգվածքի հետ, ինչպես նաև ցույց է տալիս մեղեդիական կայուն մտածողության հարատևումը՝ ավելի քան 200-ամյա մեկուսացման պայմաններում:

Ամփոփում

Հոգվածի ուշադրության կենտրոնում հայ շարականերգության Վենետիկի Մխիթարյան ավանդույթի Ութձայն համակարգն է: Փորձ է կատարվել պարզելու, թե վերջինս ինչպիսի դրսևորումներ ունի շարականների սկսվածքներում, որոնց հիմնական նպատակը, փաստորեն, ձայնեղանակը ցուցադրելն է: Մեր ուսումնասիրության աղբյուր է հանդիսացել 1957 թ. արտագրված ձեռագիր տետրակը, որտեղ զետեղված են Մխիթարյան ավանդույթի սկսվածքները՝ դասակարգված ըստ շարականային տիպերի և Ութձայն համակարգի ձայնեղանակների:

Բանալի բառեր՝ սկսվածք, շարական, Շարակնոց, ձայնեղանակ, մեղեդիական դարձվածք, ակտերացիա:

ВОСЬМИГЛАСИЕ В ПОГЛАСИЦАХ МХИТАРСКОЙ ПЕВЧЕСКОЙ ТРАДИЦИИ АРМЯНСКОГО ДУХОВНОГО ПЕНИЯ

Резюме

Лилит Арутюнян
Музей-институт Комитаса
Ереванская государственная консерватория имени Комитаса

Шаракан – основной жанр армянской духовной музыки. Перед каждым шараканом поется мелодический фрагмент, который называется “погласица”. Погласицы – краткие варианты гласов, которые поются на библейские тексты перед соответствующим шараканом. Погласицы использовались в основном только в устной практике и поэтому не записывались, в том числе и из-за своей простоты. Первые записанные примеры погласиц встречаются в хазовых рукописях позднего средневековья (XVI-XVII века). Записанные в конце XIX в. нотные записи погласиц – запись Егия Тнтесяна в Константинополе и Никогайоса Ташчяна в Эчмиадзине – являются единственным наиболее достоверным музыкальным источником погласиц.

В конце XIX и начале XX вв. армянское духовное песнопение развивалось в крупных культурных центрах армянской диаспоры – Константинополе (Османская империя), Иерусалиме (Израиль), Новой Джульфе (Иран) и Мхитарском аббатстве в Венеции (Италия). Предмет данного труда – выявление основных особенностей восьмигласия в погласицах певческой традиции Мхитарского аббатства в Венеции. Источником исследования стала рукописная тетрадь 1957 года, где размещены погласицы Мхитарского аббатства, систематизированные по гласам и жанровым типам.

Ключевые слова: погласица, шаракан, Шаракноц, глас, мелодическая фраза, альтерация.

THE EIGHT-MODE SYSTEM IN THE INCIPITS OF THE MEKHITARIST TRADITION OF ARMENIAN HYMNODY

Abstract

Lilit Harutyunyan (Armenia)
Komitas Museum-Institute
Komitas State Conservatory

The *sharakan* is one of the principal genres of Armenian sacred music. The performance of each *sharakan* is preceded by a melodic fragment called the *incipit* (Arm. *Sksvatsq*). The incipits are short versions of the modes, which are to be sung with a text extracted from the Bible in accordance with the type of the given *sharakan*.

The incipits were practically mostly used in the rites and even in older times no written recording was made. The first written incipits with the Armenian old *Khaz* notation are found in the manuscripts of a later period (the XVI - XVII centuries). The most important written examples of the incipits were made by Yeghia Tntesyan (short version) in Constantinople and by Nikoghayos Tashchyan (expanded version, grouped according to types and tempos) in Etchmiatsin. Besides the mentioned recordings, Armenian hymnody has developed in three more communities: in Jerusalem, New Julfa and the Mekhitarist Congregation in Venice.

This article explores the eight-mode system practiced at the Mekhitarist Congregation of Venice. I have attempted to reveal how the eight-mode system is displayed in the incipits of the *sharakans*, as their main purpose is demonstrating the mode. This study is based on the copy of a notebook written in 1957. The incipits belonging to the Mekhitarist singing tradition are written in the latter and are classified according to the types of *sharakans* and the modes of the eight-mode system.

Keywords: incipit, sharakan, Sharaknots, mode, melodic phrase.

ՈՒԹՁԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԸՍՏ ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՐՄԱՇԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԶԵՌԱԳՐԵՐԻ

*Նանե Միսակյան (Հայաստան)
Կոմիտասի թանգարան-ինստիտուտ*

XVIII-XIX դարերում ձևավորված հայ հոգևոր երգարվեստի հինգ ավանդական՝ էջմիածնական, Կոստանդնուպոլսի, Վենետիկի, Երուսաղեմի և Նոր Զուղայի կամ Հնդկահայոց¹ երգվածքների² համակողմանի և համեմատական ուսումնասիրությունը հայ երաժշտական միջնադարագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է: Ներկայացվող աշխատանքը մեր կողմից կատարվող ուսումնասիրության մի մասն է՝ նվիրված հայ հոգևոր երգարվեստի արմաշական ավանդույթին, որը պոլսական երգվածքի առանձին և ինքնուրույն ենթաճյուղն է համարվում³: Ավանդույթը ձևավորվել է Արմաշում, որը գտնվում է Փոքր Ասիայի Նիկոմիդիա (Իզմիտ) գավառում և հայտնի է իր Չարխափան Սուրբ Աստվածածին վանքով: Արմաշի վանքը մեծ և կարևոր դեր է ունեցել որպես սեփական երաժշտական ավանդույթների ունեցող կրթօջախ՝ դրանով անգնահատելի ավանդ ներդնելով հայ հոգևոր երգեցողության դպրոցների պատմության մեջ:

Արմաշական երգեցողության ավանդույթի հիմնադիրն է պոլսահայ հայտնի ծայնագրագետ, երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Չերչյանը (1828-1901), ով երկար տարիներ պաշտոնավարել է Արմաշում որպես երաժշտապետ՝ նախ վանքին կից ժառանգավորաց ուսումնարանում, ապա նաև՝ Դպրեվանքում:

Հ. Չերչյանը թողել է բավական պատկառելի ծայնագրագիտական ժառանգություն՝ «Շարակնոց», «Ժամագիրք» և «Տաղարան» երաժշտածիսական մատյանները, «Կանոն Խաչվերաց առնելոյ որպէս կատարի ի Սուրբ Ուխտն

¹ Նոր Զուղայի կամ Հնդկահայոց երգվածքի համեմատական և լիակատար ուսումնասիրություն է կատարել Գ. Ամիրադյանը: Տե՛ս Գ. Ամիրադյան, *Ութձայն համակարգը հայ հոգևոր երգարվեստի Նոր Զուղայի կամ Հնդկահայոց երգվածքում*, արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012:

² Այս մասին տե՛ս Ն. Թահմիզյան, Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, *Բանբեր Մադենադարանի*, 1977, N 12, էջ 102: **Նույնի՝ Մակար Եկմայան**, Երևան, «Սովետական գրող», 1981, էջ 65-66:

³ Տե՛ս Ա. Մուշեղեանի «Արմաշի դպրեվանքի երաժշտական ավանդույթները» ուսումնասիրությունը *Արմաշի դպրեվանքը* գրքում (Մաս Բ), Երեան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1998, էջ 155-258: Ինչպես նաև՝ Ա. Մուշեղյան, *Համբարձում Չերչյանը և Արմաշի դպրեվանքի երաժշտական ավանդույթները*, արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2005:

Արմաշու» ձայնագրատետրը և հատվածներ «Պատարագ»-ից, որոնք իր երաժշտապետության տարիներին դրել է գործնական կիրառության մեջ:

Պահպանվել են ժառանգավորաց ուսումնարանի և Դպրեվանքի աշակերտների ձեռքով հայկական նոտագրությամբ գրի առնված բազմաթիվ ձեռագրեր, որոնց թվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի Նորագույն հավաքածուում պահվող արմաշական տասնհինգ գրչագրերը:

Մեր ուսումնասիրության հիմքն են կազմում Շարակնոցները (ձեռ. N96, N97)⁴ որպես Ութձայն համակարգն արտացոլող կանոնական ժողովածուներ: Դրանք հարստագույն նյութ են պարունակում, որի ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում հայ հոգևոր երաժշտության պատմության դիտանկյունից⁵: N 96 ձեռագիրը հիմնականում Շարակնոց է, թեև այստեղ կան Պատարագի հատվածներ ևս: Ըստ էության, N 96 և N 97 ձեռագրերը որպես Շարակնոց իրար շարունակություն են կազմում, այդ իսկ պատճառով դրանք դիտարկում ենք որպես մեկ ամբողջություն:

Ներկա աշխատանքի նյութն են հանդիսանում Հարության Ավագ օրհնությունները, որոնցում Ութձայն համակարգն իր առավել լիակատար դրսևորումն է գտել: Դրանք զետեղված են N 96 ձեռագրում, որտեղ, սակայն, ԴԿ ձայնեղանակի երգաչարը բացակայում է: N 96⁶ ձեռագիրը բավարար վիճակում է, բաղկացած է 641 թերթից: Կազմելու ընթացքում որոշ տեղերում խախտվել է էջակալումը, ինչի հետևանքով առաջացել է մասերի սխալ դասավորվածություն: Գրված է պարզ, կոկիկ և ընթեռնելի ձեռագրով: Բացառություն են կազմում այն էջերը, որոնք միևնույն գրչին չեն պատկանում և, ըստ երևույթին, հոգևոր մեղեդիներ ընդօրինակելու փորձատետրեր են եղել:

⁴ «Մատենադարան», Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Նորագույն հավաքածու, ձեռ. NN 96, 97:

⁵ Հարցի առնչությամբ հիշատակելի են հայ անվանի միջնադարագետ-երաժշտագետներ Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի տեսակետները, ըստ որոնց՝ նման ուսումնասիրությունը խազագիտության բնագավառում տարվող աշխատանքների հիմքերից մեկն է, տե՛ս Ռ. Աթայան, *Հայկական խազային նոտագրությունը*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 157-158; Ն. Թահմիզյան, *Երաժշտությունը հին և միջնադարյան Հայաստանում*, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 52-53: Նշված խնդրին անդրադարձել է նաև Լ. Հակոբյանը, տե՛ս Լ. Ակոբյան, Особенности мелодического строения шараканов и их отражение в хазовом (невменном) письме, *Պարմարանասիրական հանդես*, 1983, N 2-3, էջ 249: Его же: Мелодические структуры средневекового армянского восьмигласия и хазовое (невменное) письмо, *Պարմարանասիրական հանդես*, 1985, N 2, էջ 190:

⁶ Ըստ Ա. Մուշեղեանի՝ ձեռագրի տիտղոսաթերթի վրա գրված է՝ «Տ. Խորեն քին. Պապայանի ձեռագիրը՝ ընդօրինակուած Արմաշի Դպրեվանքի աշակերտության ընթացքին, 1885, երաժշտության ուսուցիչ՝ Համբարձում Չերչյան», տե՛ս Արմաշի դպրեվանքը, աշխատասիրութեամբ Պարոյր Մուրադեանի եւ Աստիկ Մուշեղեանի, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, Երեւան, 1998, մաս Բ, էջ 162:

Որոշ էջերում էլ նկատվում են ուսուցչի կատարած նշումները, ինչպես նաև մեղեդիական միևնույն հատվածի մի քանի տարբերակներ և այլն:

Հարության Ավագ օրհնությունները կամ ինչպես բացատրում է Գ. Ավետիքյանը՝ մեծագույն օրհնությունները⁷, բաղկացած ԱԶ-ԴԿ երգաշարերից, շարականագիրների միջնադարյան ցուցակների հեղինակները (Վանական Վարդապետ⁸, Սարգիս Երեց⁹, Գրիգոր Տաթևացի¹⁰, Առաքել Սյունեցի¹¹, Ստեփանոս Զիք Ջուղայեցի¹², Հակոբ Սսեցի¹³ և Անանուն¹⁴) ընծայում են Ստեփանոս Սյունեցուն: Այս հեղինակի անձի շուրջ գոյություն ունի երկու տեսակետ: Ուսումնասիրողների մի մասը հանգել է այն կարծիքին, որ Ստեփանոս Սյունեցի անվամբ երկու տարբեր հեղինակներ են ապրել V և VIII դարերում¹⁵: Ըստ հակառակ կարծիքի՝ Ստեփանոս Սյունեցին մեկն է և ապրել ու ստեղծագործել է VIII դարում¹⁶: Վերոնշյալ ցուցակների հեղինակները տեղեկություն են հաղորդում նաև այն մասին, որ «վառ ծայնը» (կամ ԳԿ երգաշարը) հորինել է Ներսես Շնորհալին¹⁷:

⁷ Գ. Ասեղեքեան, *Բացադրույթին շարականաց*, ի վասն Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1814, էջ 671:

⁸ *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հատոր Գ, էջ 485:

⁹ **Հ. Անայան**, *Հայկական մատենագիտություն*, հատոր Ա, Երևան, Հայկ ՍՍՌ ԳԱ հրատ. 1959, էջ LXVI:

¹⁰ Նույն տեղում, էջ LXVII:

¹¹ Նույն տեղում, էջ LXIX:

¹² Նույն տեղում, էջ LXXI:

¹³ Նույն տեղում, էջ LXXIV:

¹⁴ Նույն տեղում, էջ LXVIII:

¹⁵ Տե՛ս վերոնշյալ Անանուն խմբագրության մեջ տեղ գտած տեղեկությունը՝ «Ստեփանոս Սիւնեցի առաջինն, որ յաշակերտաց անտի սրբոց թարգմանչաց», **Հ. Անայան**, նշվ. աշխ., էջ LXVIII: **Մ. Աբեղյան**, *Հայոց հին գրականության պատմություն*, Երկեր, հատ. Գ, գիրք Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 537: **Ն. Թահմիզյան**, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության Ավագ Օրհնությունները, *Էջմիածին*, 1973, N 2, էջ 29-39:

¹⁶ **Ա. Արևշատյան**, Եվս մի անգամ Ստեփանոս Սյունեցու անձի շուրջ, *Պատմաբանասիրական հանդես*, 2003, N3, էջ 153-160: **Նույնի՝** Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), *Հայ արվեստի հարցեր*, հատ. 2, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատ., 2008, էջ 23-34: **Նույնի՝** *Հայ միջնադարյան «ծայնից» մեկնություններ*, Երևան, «Կոմիտաս» հրատ., 2003, էջ 18-20: **Նույնի՝** *Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 22-24:

Ստեփանոս Սյունեցուն և նրա Հարության Ավագ օրհնություններին անդրադարձել է Միեր Նավոյանն իր «Բյուզանդական աղեցեղության վարկածը հայ հիմներգության կարգ (կանոն) ժանրի անչեղությամբ» հոդվածում, *Մանրուսում միջազգային երաժշտագիտական փարեզիդը*, հատ. 2, Երևան, «Ասողիկ» հրատ., 2005, էջ 40-41, 81-89, 95-97 և այլուր:

¹⁷ Այս հարցի առնչությամբ Մ. արք. Օրմանյանը նշում է. «Ավագ օրհնությունները ութն են, ըստ ութ ծայնի, որոնցից յոթը Ստեփանոս Սյունեցու, իսկ մեկը՝ ԳԿ, Ներսես Շնորհալուն է վերագրվում: Չենք կարծում, որ Սյունեցին պակաս թողած լինեք. այլ գուցե Շնորհալին ուզեցել է այդ փեսակերից էլ նոր պատրաստած շարական ունենալ». տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանյան**, *Ծիսական բառարան*, Երևան, «Հայաստան» հրատ., 1992, էջ 161: Ն. Թահմիզյանն այս տեղեկությունը համարում է «թյուրիմացության արդյունք». տե՛ս **Ն. Թահմիզյան**, Սյունեցի համանուն երկու երաժիշտներ և Հարության Ավագ Օրհնությունները, էջ 32: **Նույնի՝** *Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 35: **Նորայր արք. Պողոթյանը** ԳԿ Ավագ Օրհնությունն ընծայում է Ստեփանոս Սյունեցուն. տե՛ս *Ծիսագիրություն*, հրատարակություն Թագուհի Թամարն հիմնադրամի, Նի Երոբ, 1990, էջ 35:

Տասը օրհնությունների գրական բնագրերը կազմված են ըստ Աստվածաշնչի տասը մարգարեական օրհնությունների.

1. **Օրհնեսցուք** զՏէր, զի փառօք է փառաւորեալ (*Երգ Մովսէսի, Ելից ԺԷ. 1 - 19*),
2. **Նայեցարուք** երկինք, եւ խօսեցայց (*Երգ Մովսէսի Բ.ՕՐ ԼԲ. 1 - 21*),
3. **Զի հուր** բորբոքեցաւ (*Երգ Մովսէսի Բ.ՕՐ ԼԲ. 22 - 38*),
4. **Ծաներուք** եւ տեսէք (*Երգ Մովսէսի Բ.ՕՐ ԼԲ. 39 - 43*),
5. **Հաստատեցաւ** սիրտ իմ ի Տէր (*Երգ Աննայի, Ա.Թագ. Բ. 1 - 10*),
6. **Ի գիշերաց** կանխէ հոգի իմ (*Երգ Եսայեայ, Եսայ. ԻԶ. 9 - 20*),
7. **Ես ասացի** ի վերանալ յինէն (*Երգ Եզեկեայ, Եսայ. ԼԸ. 10 - 20*),
8. **Օրհնեցէք** զԱստուած յօրհնութիւն նոր (*Երգ Եսայեայ, Եսայ. ԽԲ. 10 - 13*),
9. **Ի նեղութեան** իմում ես առ Տէր կարդացի (*Երգ Յովնանու, Յովն. Բ. 3 - 10*),
10. **Տէր, զլուր** Քո լուայ եւ երկեայ (*Երգ Ամբակումայ, Ամբկ. Գ. 2 - 19*):

Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ «Տասը օրհնությունները շարականներով փոխանակելու միտքը վերագրվում է Սրբեփանոս Սյունեցուն: Տասը օրհնությունների տեղ տասը պատկեր շարականներ են կազմվել, յուրաքանչյուր օրհնության իմաստներով և բառերով, բայց Քրիստոսի փրկագործության խորհրդին հարմարեցվելով և պատկերների վերջին տունը Տիրամորը պատշաճեցնելով»¹⁸:

N 96 ձեռագրում, ինչպես և Հ. Չերչյանի ձայնագրած Շարակնոցում, Հարության Ավագ օրհնությունների «**Օրհնութիւն**» սկսվածքը համապատասխան ձայնեղանակում դրվում է յուրաքանչյուր երգաշարից անմիջապես առաջ: Վերլուծելով Ավագ օրհնություններն ըստ ձայնեղանակների՝ յուրաքանչյուր երգաշարի բոլոր տասը երգերը դիտարկել ենք իբրև մեկ ամբողջություն՝ հաշվի առնելով այն փաստը, որ ձայնեղանակների ֆունկցիոնալ աստիճաններից մեկը՝ վերջին վերջավորող ձայնը, հանդես է գալիս միայն «**Տէր զլուր**» երգի վերջին տան մեջ, և դրա առկայությունից է կախված նախ հնչյունաշարի, և ապա՝ ձայնակարգի հիմնական պատկերը: Շարականներում, բացի մայր եղանակից, հանդիպում են նաև դարձվածք ձայնեղանակներ, որոնք դիտարկվում ենք առանձին:

Տե՛ս նաև՝ Մ. Նավոյան, Բյուզանդական ազդեցության վարկածը հայ հիմներգության կարգ (կանոն) ժանրի առնչությամբ, էջ 107:

¹⁸ Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, էջ 161:

Մեր խնդիրներից մեկն է այստեղ ամփոփված երաժշտական նյութի համեմատությունը Համբարձում Չերչյանի¹⁹ և Նիկոլայոս Թաշճյանի²⁰ ձայնագրած Շարակնոցների հետ: Մանրամասն վերլուծական աշխատանքի արդյունքում բացահայտվել են դրանց էական նմանություններն ու տարբերությունները, ի ցույց դրվել Ութձայն համակարգին առնչվող՝ ձայնեղանակային և ձայնակարգային առանձնահատկությունները: Առանցքային հարցերից է նաև ձայնեղանակային մեղեդիական բնորոշ դարձվածքների համեմատական ուսումնասիրությունը:

Խնդրո առարկա ձեռագրի և Հ. Չերչյանի ու Ն. Թաշճյանի ձայնագրությամբ Հարության Ավագ օրհնությունների բոլոր միավորները հայկական նոտագրությունից փոխադրել ենք եվրոպականի: Պոլսական երգվածքի ավանդույթի համաձայն՝ Հ. Չերչյանի ձայնագրությունները հայկական նոտագրությունից եվրոպական նոտային համակարգի փոխադրելիս «փուշ»-ը հավասարեցրել ենք «ռե»-ի²¹: Քանի որ Ն. Թաշճյանի ձայնագրությամբ էջմիածնական մայր երգվածքում «փուշ»-ը հավասարվում է «դո»-ի²², և մենք էլ թաշճյանական փոխադրությունները կատարելիս հետևել ենք այդ սկզբունքին, ուստի հնչյունային անհամապատասխանությունից խուսափելու նպատակով երկու ձայնագրությունները համեմատել ենք՝ նկատի ունենալով ձայնակարգերի կառուցվածքային տրամաբանությունը, այլ ոչ տոնայնական բարձրությունը: Այլ խոսքով՝ զուգադրել ենք ձայնակարգերի համապատասխան աստիճանները, և ոչ թե հնչյունները:

Ձայնեղանակն ուսումնասիրելիս դիտարկել ենք ձայնակարգի հնչյունաշարը և ֆունկցիոնալ աստիճանները: Կենտրոնաձիգ ձայնակարգերի դեպքում՝ տվյալ

¹⁹ **Համբարձում Չերչյան**, *Շարական* (ձեռագիր, նոր հայկական նոտագրությամբ), Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Հակոբոս Այվազյանի ֆոնդ, N 7:

²⁰ *Ձայնագրեալ Շարական հոգետոր երգոց* Սուրբ և ուղղափառ եկեղեցոյս Հայաստանեայց յօրինեալ ի Սրբոց Թարգմանչացն մերոց, եւ ի Սրբոց Հայրապետաց եւ ի Վարդապետաց, ի տպարանի Սրբոյ կաթողիկէ էջմիածնի, Վաղարշապատ, 1875:

²¹ **Կոմիտաս Վարդապետ**, Հայոց եկեղեցական երաժշտութիւնը ԺԹ. դարում, *Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ*, երկու գրքով, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, Գիրք Ա, Երևան, «Սարգիս Իսաչենց» հրատ., 2005, էջ 82; **Ե. Տնտեսեան**, *Տարերք երաժշտութեան*, Իսթանպուլ, «Յ. Ասատուրեան որդիք», 1933, էջ 13: Տես նաև՝ վերջինիս կազմած՝ *Քաղղապրական ցուցակ արեւելեան եւ արեւմտեան սրբայաներու* (նույն տեղում); **Ս. Անգեղեայ**, Հայ եկեղեցական երաժշտութիւնը եւ ձայնագրութիւնը, *Ծաղիկ շաբաթաթերթ*, Կ. Պոլիս, 1903, N 7: **Ն. Թահմիզյան**, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, *Կոմիտասական* 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, էջ 173-174:

²² **Եզնիկ քնն. Երզնկեանց**, *Դասագիրք հայկական ձայնագրութեան*, Վաղարշապատ, Ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, 1880, էջ 1; **X. Кущанев**, *Вопросы истории и теории армянской монодической музыки*, Ленинград, Государственное музыкальное изд., 1958, с. 352; **Ն. Թահմիզյան**, Կոմիտասը և հայոց հոգևոր երգարվեստի ուսումնասիրության հարցերը, էջ 174, 176-177; **Ա. Քաղղասարյան**, *Հայկական նոտագրության ձեռնարկ*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2010, էջ 17:

շարականի ծայնակարգային բնութագիրը տալիս ենք վերջավորող ծայնի վերին և հիպո-ոլորտներն արտացոլող ծայնակարգային կառույցների համակցման (շղթայման) տեսքով:

Ձայնեղանակները նկարագրելիս կիրառել ենք հայ երաժշտագիտության մեջ ընդունված տերմինաբանությունը, մասնավորաբար՝

դիմող ձայն՝ ձայնակարգի օժանդակ հենակետը կամ տիրապետող հնչյունը,

վերջավորող ձայն²³՝ ձայնակարգի գլխավոր հնչյունը²⁴,

վերջին վերջավորող ձայն²⁵՝ մեղեդիական լրացուցիչ ընթացքով վերջավորող ձայնից հետո հանդես եկող և շարականի վերջին տունը եզրափակող հնչյունը,

հանգչող ձայն՝ ձայնակարգի կայուն աստիճանը կամ աստիճանները, որոնք կարող են համարժեք համարվել կիսակադանսի հնչյունի հետ,

գործածվող ձայն՝ բնական հնչյունաշարի այլտերացված աստիճանը:

Բացի վերը նշված գործառույթային աստիճաններից՝ կիրառել ենք նաև հարաբերական ավարտի հնչյուն հասկացությունը (ձևակերպումը՝ Մ. Նավոյանի), որը շարականի վերջին տանը նախորդող տների ավարտին հանդես եկող ֆունկցիոնալ աստիճանն է ներկայացնում²⁶:

²³ Վերջավորող ձայն է համարվում ամբողջ շարականը եզրափակող տան ավարտին հանդես եկող հնչյունը. տե՛ս **Ա. Բրտեանց**, *Դասագիրք հայկական-եկեղեցական ձայնագրութեան*, Վաղարշապատ, Սրբոյ կաթողիկէ էջմիածնի, 1890, էջ 23; **Н. Тагмизян**, *Теория музыки в армянской Армении*, Издательство АН Армянской ССР, Ереван, 1977, с. 179.

Ա. Արևշատյանը վերջավորող ձայն է համարում «շարականների տների ավարտական հնչյունը», տե՛ս **Ա. Արևշատյան**, *Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ*, էջ 24; *Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում*, էջ 29:

Կոմիտասը որպես առանձին ֆունկցիոնալ աստիճան նշում է շարականի յուրաքանչյուր տան ավարտին հանդես եկող վերջին հնչյունը՝ այն անվանելով «առաջին վերջավորող ձայն»։ տե՛ս **Կոմիտաս Վարդապետ Գեորգեան**, *Հայ եկեղեցական երաժշտություն*, **Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդածներ**, աշխատասիրութեամբ Գ. Գասպարեանի եւ Մ. Մուշեղեանի, գիրք Բ, Երեւան, «Սարգիս հասէնց-Փրինթինֆո», 2007, էջ 28:

²⁴ Գրիգորյան երգեցողության մեջ վերջավորող ձայնին համապատասխանում է *finalis-ը*՝ ձայնակարգի գլխավոր հնչյունը, իսկ դիմող ձայնին՝ *repercussion-ը*՝ (լատ. արտացոլում) ձայնակարգի տիրապետող հնչյունը: Այս ձայնաստիճանները մեղեդու ձայնակարգի գլխավոր բնորոշիչներն են. տե՛ս *Музыкальная энциклопедия*, том 4, Москва, изд. "Советская энциклопедия", 1978, с. 600; том 5, Москва, 1981, с. 819.

²⁵ Ռ. Աթայանի և Ն. Թահմիզյանի ձևակերպմամբ՝ վերջին վերջավորող ձայնը շարականի ավարտին՝ վերջավորող ձայնից հետո լրացուցիչ մեղեդիական ընթացքով հանդես եկող ձայնն է. տե՛ս **Ռ. Աթայան**, *Հայկական խազային նորագրությունը*, էջ 163; **Н. Тагмизян**, *ук. соч.*, с. 179. Ըստ Ն. Թահմիզյանի՝ վերջին վերջավորող ձայնը մեծ մասամբ համընկնում է վերջավորող ձայնի հետ (տե՛ս նույն տեղում): Նույն տեսակետն ունի նաև Ռ. Աթայանը. տե՛ս **Ռ. Աթայան**, *Ձեռնարկ հայկական ձայնագրության*, Երևան, Հայպետհրատ, 1950, էջ 44: Ըստ Կոմիտասի՝ վերջին վերջավորող ձայնով «աարբուում է ամբողջ մեղեդին՝ որոշակի հեջիւնային շարժման շնորհիւ հանգելով ընդհանրացնող աարբի», տե՛ս **Կոմիտաս Վարդապետ Գեորգեան**, *Հայ եկեղեցական երաժշտություն*, էջ 28:

²⁶ Հարաբերական ավարտի հնչյունը, որպես գործառույթային տերմին, առաջին անգամ շրջանառվել է Գ. Ամիրադյանի նշված աշխատության մեջ, էջ 10 և այլուր:

Ձայնեղանակներն ուսումնասիրելիս առանձնացրել ենք դրանց բնորոշ սկսող և ավարտող մեղեդիական դարձվածքները՝ կարևորելով դրանց դերը ձայնեղանակի ծավալման և եզրափակման գործընթացում: Մեղեդիական դարձվածքների՝ ձայնեղանակում ունեցած կարևոր դերը հաստատվել է Կոմիտասի, Ք. Կուշնարյանի, Ռ. Աթայանի, Ն. Թահմիզյանի աշխատություններում²⁷:

Հ. Չերչյանի և Ն. Թաշճյանի ձայնագրությամբ Հարության Ավագ օրհնությունների ձայնեղանակային համեմատությունը կատարելիս հիմնվել ենք Ութձայն համակարգին վերաբերող XIX-XXI դարերի երաժիշտ-տեսաբանների աշխատությունների վրա (Ն. Թաշճյան, Ե. Տնտեսյան, Ե. Երզնկյանց, Ա. Բրուտյան, Կոմիտաս, Ք. Կուշնարյան, Ռ. Աթայան, Ն. Թահմիզյան, Ա. Արևշատյան):

N 96 ձեռագրի հիման վրա կատարած ուսումնասիրության արդյունքում բացահայտվեցին մի շարք օրինաչափություններ, ինչպես նաև տարբերություններ, որոնք վերաբերում են ձայնեղանակի ձայնակարգի կառուցվածքին, առանձին ձայնաստիճաններին, սկսող և վերջավորող մեղեդիական դարձվածքներին և այլն²⁸:

Առաջին Ձայն եղանակ²⁹

Արմաշական ավանդույթի և էջմիածնական երգվածքի միջև ԱՁ ձայնեղանակում գրանցվում է ձայնաստիճանների գրառման և արտահայտման տարբերություն՝ մեծ տեղցիա ինտերվալով (օրինակ 1, 2):

ԱՁ ցուցիչով Հարության Ավագ օրհնություններում ԱՁ ձայնեղանակն ունի հիպոիոնական-փոյուզիական հեքսախորդի սահմանում ծավալվող օժանդակ հենակետ չպարունակող ձայնակարգի կառուցվածք: Վերջավորող և դիմող ձայներն արտահայտված են հնչյունաշարի երրորդ աստիճանով, հանգչող

²⁷ Տե՛ս Կոմիտաս Վարդապետ Գեորգեան, Հայ եկեղեցական երաժշտություն, էջ 37, 42-43; Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, էջ 159-160, 165-171; X. Кушнарев, ук. соч., сс. 39-40, Н. Тагмизян, ук. соч., с. 164:

²⁸ Նոտային օրինակներում կիրառել ենք հետևյալ պայմանական նշանները.

ա) նոտայի վերևում դրված աստղանիշով նշել ենք հնչյունաշարի բարձր աստիճանները: Աստղանիշի կիրառության մասին տե՛ս Ա. Բաղդասարյան, նշվ. աշխ. էջ 30:

բ) նոտայի ձախ կողմում դրված թեք գծիկով նշել ենք հնչյունաշարի ցածր աստիճանները: Թեք գծիկի կիրառության մասին տե՛ս X. Кушнарев, ук. соч., с. 6; Н. Тагмизян, ук. соч., с. 185:

²⁹ ԱՁ ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոց, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ էջմիածնի, 1874, էջ 24-25; Ա. Բրուտեանց, նշվ. աշխ., էջ 25; X. Кушнарев, ук. соч., сс. 421-422; Ռ. Աթայան, Հայկական խազային նոտագրությունը, էջ 162; Н. Тагмизян, ук. соч., с. 180; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 21; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

ձայնը՝ առաջին և երրորդ աստիճաններով, հարաբերական ավարտի հնչյունը բարձր երկրորդ աստիճանն է, որը հանդիպում է «**Ես սասցի**» երգի բ տան ավարտին:

Օրինակ 1

ԱԶ
 Ձեռ. N96:
 Հ. Չերչյանի ձայնագրություն

3 3, Ա. 4, 7, 3 (7)

Ի տարբերություն երգաշարերի, ԱԶ ցուցիչով «**Օրհնութիւն**» սկսվածքում դիմող ձայնի դերում ֆունկցիոնալ ակտիվություն է դրսևորում հնչյունաշարի չորրորդ աստիճանը, որի արդյունքում ձևավորվում է հիպոփոնական-փոյուզիական պենտախորդի սահմանում ծավալվող սեկունդային հիմքով ձայնակարգ³⁰:

Օրինակ 2

ԱԶ
 Ն. Թաշճյանի ձայնագրություն

3 4, 7, 3 (7)

Սկսող մեղեդիական դարձվածքներում կայուն դրսևում ունեն թռիչքները՝ ձայնակարգի առաջին աստիճանից դեպի երրորդ կամ չորրորդ աստիճաններ: ԱԶ երգաշարերի վերջավորող դարձվածքների մեղեդիական կառույցները հիմնականում հարազատ են իրար՝ որոշակի տարբերակումներով: Դրանք իրենցից ներկայացնում են վերջավորող ձայնի ոլորտում ընթացող շրջազարդումներ՝ դրա հետագա հաստատումով: Ն. Թաշճյանի և Հ. Չերչյանի ձայնագրությամբ «**Օրհնութիւն**» սկսվածքում և Հարության Ավագ օրհնություններում ԱԶ ձայնեղանակի ձայնակարգային նշված նկարագրից և մեղեդային դարձվածքների ծավալման կերպից ակնառու շեղումներ չեն նկատվում: Բերված օրինակներում ներկայացված են ԱԶ «**Օրհնութիւն**» սկսվածքների սկսող մեղեդիական դարձվածքները N96 ձեռագրում և Հ. Չերչյանի ու Ն. Թաշճյանի ձայնագրություններում:

³⁰ ԱԶ ձայնեղանակին ոչ բնորոշ սեկունդային հիմքով ձայնակարգի կառուցվածքը սկսվածքներում հանդիպում է Նոր Ջուղայի երգվածքում, ինչպես նաև թաշճյանական ձայնագրություններում, տե՛ս Գ. Ամիրադյան, նշվ. աշխ., էջ 37-38:

Օրինակ 3

ԱՁ «Օրինութիւն» սկզվածք
Ձեռ. N96,
Հ. Չերչյանի ձայնագրություն:

Օրի-նես-ցուք ըզ - Տէր

Օրինակ 4

ԱՁ «Օրինութիւն» սկզվածք, Չափաւոր
Ն. Թաշճեանի ձայնագրություն:

Օրի-նես-ցուք ըզ-Տէր

Առաջին Կողմ եղանակ³¹

ԱԿ ցուցիչով ձայնեղանակի երգաշարերում այս երեք ձայնագրությունների միջև, թերևս, ամենաշատ տարբերություններ են գրանցվում: Նախ, ԱԿ մայր ձայնեղանակում են ծավալվում տասը երգերից երեքը՝ «Օրինեսցուք», «Ի Գիշերաց», «Տէր զլուր»: Մնացյալ յոթ երգերում առկա են ձայնեղանակային, և ապա ձայնակարգային փոփոխություններ, ի մասնավորի՝ «Ձի հուր» և «Օրինեսցեք» երգերում երևակվում են ԱԿ դարձվածք ձայնեղանակին³² բնորոշ հատկանիշներ³³: Մեկ այլ, ոչ տիպական շեղում է նկատվում «Նայեցարութ», «Ծաներութ», «Հաստատեցավ» և «Տէր զլուր» երգերի վերջին տներում, որոնք, ըստ երևույթին, ավարտվում են՝ զարտուղելով դեպի ԴԿ ձայնեղանակ (տե՛ս օրինակ 8):

ԱԿ մայր ձայնեղանակն ունի հիպոիոնական-փոյուզիական օկտախորդի սահմանում ծավալվող տերցիային հիմքով ձայնակարգի կառուցվածք.

Օրինակ 5

Օրի-նես-ցուք ըզ-Տէր

³¹ ԱԿ ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, նշվ. աշխ., էջ 25-26; Արշակ Բրտեանց, նշվ. աշխ., էջ 31-32; X. C. Кушнарев, укр. соч., сс. 430-432; Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 162; Н. Тагмизян, укр. соч., с. 180; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 21; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

³² ԱԿ դարձվածք ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, նշվ. աշխ., էջ 39-40; Ա. Բրտեանց, նշվ. աշխ., 88 Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 162; Н. Тагмизян, укр. соч., с. 183; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 21; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

³³ Թե՛ս նշյալ շարականների վերջավորող մեղեդիական դարձվածքները բնորոշ են ԱԿ մայր եղանակին:

ԱԿ դարձվածքը՝ հիպոդորիական-փոյուզիական օկտախորդի սահմանում ծավալվող սեկունդային հիմքով ձայնակարգի կառուցվածք.

Օրինակ 6

ԱԿ դարձվածք
Ձեռ. N96:

Թաշճյանական տարբերակի Ավագ օրինություններում ԱԿ դարձվածք ձայնեղանակը հանդես է գալիս «**Ջի հուր**» երգում: Հարաբերական ավարտի հնչյուններ են հանդիպում «**Օրինեսցուք**», «**Նայեցարուք**», «**Հաստատեցաւ**», «**Ես ասացի**» երգերում:

Օրինակ 7

ԱԿ
Ն. Թաշճյանի ձայնագրություն:

Հետևյալ օրինակում ներկայացված է Հարության Ավագ օրինությունների ԱԿ երգաշարի «**Ծաներուք**» երգի գ տան վերջնամասը, որի ավարտն ունի ԴԿ ձայնեղանակին բնորոշ հատկանիշներ.

Օրինակ 8

ԱԿ «Ծաներուք», գ տուն, ԴԿ վերջավորությամբ
Ձեռ. N96:

Հաջորդ երկու օրինակներում՝ նույն հատվածն է ԱԿ եղանակի վերջավորությամբ:

Օրինակ 9

ԱԿ «Ծաներուք», գ տուն
Չ. Չերչյանի ձայնագրություն

Օրինակ 10

ԱԿ «Ծաներուք», գ տուն
Ն. Թաշճյանի ձայնագրություն

Երկրորդ Ձայն եղանակ³⁴

ԲՁ ցուցիչով Հարության Ավագ օրհնությունների երգաշարում ԲՁ ձայնեղանակի նկարագիրն ընդհանուր է երեք ձայնագրությունների համար. այն ներկայանում է կվինտային հիմքով հիպոդորիական-էոլական օկտախորդի կառուցվածքով.

Օրինակ 11

ԲՁ
Ձեռ. N96,
Գ. Չերչյանի ձայնագրություն

4,3 3,3,Ա. Դ

Օրինակ 12

ԲՁ
Ն. Թաշճյանի ձայնագրություն

4,3 3,3,Ա. Դ

ԲՁ երգաշարերի մեղեդիական բնորոշ դարձվածքներն ուսումնասիրելիս առանձնացրել ենք դրանցից մեկը, որը հանդիպում է շարականի թե՛ սկզբնամասում, թե՛ հանգչող կամ միջանկյալ հատվածներում: Այն ուշագրավ է հատկապես իր մեղեդիական կառույցով.

Օրինակ 13

ԲՁ
Ձեռ. N96:

Յոյս եւ մեր ա - պա - ւեն:

Օրինակ 14

ԲՁ
Ն. Թաշճյանի ձայնագրություն

Յոյս եւ մեր ա - պա - ւեն:

³⁴ **ԲՁ** ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս **Ն. Թաշճեանց**, նշվ. աշխ., էջ 26-27; **Ա. Բրտեանց**, նշվ. աշխ., էջ 39; **Х. Кушнарев**, укр. соч., сс. 474-475; **Ռ. Աթայան**, նշվ. աշխ., էջ 162; **Н. Тагмизян**, укр. соч., с. 180; **Ա. Արևշատյան**, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 21; **Ա. Արևշատյան**, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

Բերված օրինակները N 96 ձեռագրում և Ն. Թաշճյանի ձայնագրությամբ Հարության Ավագ օրհնությունների ԲՁ երգաշարի «**Հաստատեցաւ**» երգի սկսող դարձվածքներն են: Այս երկու տարբերակները գրեթե նույնական են «**Dies irae**»³⁵ միջնադարյան կաթոլիկ սեկվենցիայի համապատասխան մեղեդիական դարձվածքի հետ: Սակայն Հ. Չերչյանի ձայնագրությամբ միևնույն «**Հաստատեցաւ**» ԲՁ շարականի Գ տան սկսող մեղեդիական դարձվածքը (օրինակ 15) առավել ճշգրիտ է արտացոլում «**Dies irae**» սեկվենցիայի ինտոնացիոն կառույցը, իմա՝ մեղեդիական դարձվածքի վերջում առկա մեծ տերցիա ինտերվալը՝ նախորդի փոքր տերցիայի փոխարեն (տե՛ս «*ապաւէն*» բառին համապատասխանող մոտիվը): Կարծում ենք, որ սա ամենևին էլ պատահական բնույթ չի կրում: Մեղեդիական այս կառույցը, փաստորեն, ձայնեղանակին բնորոշ տիպական մոդուլ է: Հատկապես, որ այն տեղ է գտել հայ հոգևոր երգաստեղծության երեք երգվածքներում՝ էջմիածնական, արմաշական, նաև պոլսական³⁶: Հետևապես, ազդեցության մասին խոսելը դժվար է:

Օրինակ 15

ԲՁ
 Հ. Չերչյանի ձայնագրություն

Յոյս եւ մեր ա - պա - վէն:
 «Dies irae» միջնադարյան կաթոլիկ սեկվենցիա
 Di. es i. rae, di. es il. la, sol. vet saec. lum
 in fa. vil. la: te. sie Da. vid cum Si. byl. la.

Երկրորդ Կողմ եղանակ³⁷

N96 ձեռագրի և Հ. Չերչյանի ձայնագրությամբ ԲԿ ցուցիչով Օրհնության երգերում ձայնեղանակի ձայնակարգը վերջավորող ձայնից վերև ունի տերցիային հիմքով դորիական պենտախորդի կառուցվածք.

³⁵ Ինչպես հայտնի է, “Dies irae” սեկվենցիայի տեքստի հեղինակը Թովմա Չելանացին է (XIII դ.): Տե՛ս *Музыкальная энциклопедия*, том 2, Москва, 1974, сс. 240-241.

³⁶ Դիտարկումը հիմնավորելու նպատակով ԲՁ երգաշարի վերոնշյալ երգը համեմատել ենք նաև 1933թ. Կ. Պոլսում հրատարակված Ե. Տնտեսյանի Շարակնոցի համանուն երգաշարի հետ:

³⁷ ԲԿ ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս X. **Կյուսարեւ**, *յկ. соч.*, сс. 483-489; Ն. **Թաշճեանց**, նշվ. աշխ., էջ 28; Ա. **Քրտեանց**, նշվ. աշխ., էջ 47; Ռ. **Աբայան**, նշվ. աշխ., էջ 162; Խ. **Կարամյան**, *յկ. соч.*, с. 181; Ա. **Արևշատյան**, *Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ*, էջ 21; Ա. **Արևշատյան**, *Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում*, էջ 26:

Օրինակ 16

ԲԿ

Ձեռ. N96,

7. Չերչյանի ծայնագրություն




Ն. Թաշչյանի ծայնագրության մեջ՝ հիպոփոյուզիական-դորիական հեքսախորդի սահմանում ծավալվող տերցիային հիմքով ծայնակարգի կառուցվածք.

Օրինակ 17

ԲԿ

Ն. Թաշչյանի ծայնագրություն



Մեղեդիական դարձվածքների, և առհասարակ, ծայնեղանակի մեղեդիական մտածողության հարազատությունն ընդգծելու նպատակով առանձնացրել ենք «Փարաօն հանդերձ կառօ» ԲԿ «Օրինութիւնը».

Օրինակ 18

ԲԿ «Փարաօն հանդերձ կառօ»

Ձեռ. N96

Օրինակ 19

ԲԿ «Փարաօն հանդերձ կառօ»

7. Չերչյանի ծայնագրություն

Օրինակ 20

ԲԿ. «Փարաւօս հանդերձ կառօք»
Ն. Թաշճեանի ձայնագրութիւն

Երրորդ Ձայն եղանակ³⁸

N 96 ձեռագրի Հարության ավագ օրինությունների ԳՁ երգաշարում ձայնեղանակի ձայնակարգն ունի հարմոնիկ հեպտախորդի կառուցվածք, որտեղ վերջավորող, դիմող և հանգչող ձայներն արտահայտված են հնչյունաշարի հինգերորդ աստիճանով.

Օրինակ 21

ԳՁ
Ձեռ. N96,
Յ. Չերչյանի ձայնագրություն

Հ. Չերչյանի ձայնագրության մեջ ձայնակարգի հնչյունաշարի ձայնաձավալն առավել լայն է և ընդգրկում է նոնախորդ ձայնաձավալ (տե՛ս 21-րդ նոտային օրինակում փակագծերի մեջ առնված երկու հնչյունները):

Երեք ձայնագրություններում էլ ԳՁ *դարձվածք*³⁹ ձայնեղանակին բնորոշ կառույցներ են հանդիպում «Տէր զլուր» երգում, որի Գ տան վերջնամասն ավարտվում է ԳՁ ձայնեղանակին հատուկ վերջին վերջավորող ձայնով: Ն.

³⁸ **ԳՁ** ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, նշվ. աշխ., էջ 29; Ա. Բրտեանց, նշվ. աշխ., էջ 51, X. Кумарев, ук. соч., сс. 379-386, 533; Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 162; Н. Тагмизян, ук. соч., с. 181; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 21; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

³⁹ **ԳՁ դարձվածք** ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, նշվ. աշխ., էջ 40-41; Ա. Բրտեանց, նշվ. աշխ., էջ 104; X. Кумарев, ук. соч., сс. 506-508; Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 162; Н. Тагмизян, ук. соч., с. 184; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 22; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

Թաշճյանի տարբերակում շարականն ավարտվում է «և այլն» գրությամբ: ԳՁ դարձվածք եղանակը հանդիպում է նաև Ն. Թաշճյանի «**Ի գիշերաց**» երգում:

ԳՁ եղանակի մեղեդիական բնորոշ դարձվածքների նմանությունն ու տարբերությունը ներկայացնելու համար ընտրել ենք ԳՁ «**Օրհնութիւն**» սկզբածքները:

Օրհնակ 22

ԳՁ
ձեռ. N96:

Օրհ-նես-ցուք ըզ-Տէր զի փա-ռօք է փա-ռա-ւոր-եալ:

Օրհնակ 23

ԳՁ. «Օրհնութիւն» սկզբածք
Գ. Չերչյանի ձայնագրություն:

Օրհ-նես-ցուք ըզ-Տէր զի փա-ռօք է փա-ռա-ւոր-եալ:

Օրհնակ 24

ԳՁ. «Օրհնութիւն» սկզբածք
Ն. Թաշճյանի ձայնագրություն:

Օրհ-նես-ցուք ըզ-Տէր զի փա-ռօք է փա-ռա-ւոր-եալ:

N96 ձեռագրում ԳՁ սկսող մեղեդիական դարձվածքը մեղեդու ծավալման տեսանկյունից տարբերվում է Հ. Չերչյանի և Ն. Թաշճյանի ձայնագրություններից («Օրհնեալ ես, Տէր» հատվածը), իսկ վերջին երկուսը միմյանց հարազատ մոտիվներ ունեն: Միջանկյալ մեղեդիական դարձվածքի ճշգրիտ նմանություն կա N96 ձեռագրի և Չերչյանի ձայնագրությունների միջև («զի փառօք է» հատվածը): Իսկ ահա վերջավորող մեղեդիական դարձվածքները երեք ձայնագրություններում էլ տարբեր են («փառաւորեալ» հատվածը):

Երրորդ Կողմ եղանակ⁴⁰

Հարության ավագ օրհնությունների ԳԿ ցուցիչով երգաշարում ձայնեղանակի ձայնակարգը վերջավորող ձայնից վերև ունի տերցիային հիմքով

⁴⁰ ԳԿ ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս Ն. Թաշճեանց, նշվ. աշխ., էջ 31; Ա. Բրտեանց, նշվ. աշխ., էջ 58; X. Кущанев, ук. соч., с. 447; Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 162; Н. Тагмизян, ук. соч., с. 181; Ա. Արևշատյան, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 22; Ա. Արևշատյան, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

դորիական պենտախորդի կառուցվածք: N 96 ձեռագրում և Հ. Չերչյանի ձայնագրության մեջ առկա է հնչյունաշարի երկրորդ իջեցված աստիճանը.

Օրինակ 25

Գ4
Ձեռ. N96,
Հ. Չերչյանի ձայնագրություն

Երեք ձայնագրությունների մեղեդիական բնորոշ դարձվածքները գրեթե նույնական են: Օրինակները Գ4 երգաշարի «**Ի գիշերաց**» երգի սկզբնամասից են.

Օրինակ 26

Գ4, «Ի գիշերաց»
Ձեռ. N96,
Հ. Չերչյանի ձայնագրություն:

Օրինակ 27

Գ4, «Ի գիշերաց»
Ն. Թաշճյանի ձայնագրություն

Չորրորդ Ձայն եղանակ⁴¹

ԴՁ ձայնեղանակն ունի հիպոիոնական-դորիական հեպտախորդի ասիմանում ծավալվող օժանդակ հենակետ չպարունակող ձայնակարգի կառուցվածք: Վերջին վերջավորող ձայնը հնչյունաշարի երկրորդ աստիճանն է, վերջավորող, դիմող և հանգչող ձայներն արտահայտված են հնչյունաշարի հինգերորդ աստիճանով:

Օրինակ 28

ԴՁ
Ձեռ. N96

⁴¹ **ԴՁ** ձայնեղանակի բնորոշ առանձնահատկությունների մասին տե՛ս **Ն. Թաշճեանց**, նշվ. աշխ., էջ 32; **Ա. Բրտեանց**, նշվ. աշխ., էջ 64-65; **Х. Кущнарев**, укр. соч., сс. 460-461; **Ռ. Աթայան**, նշվ. աշխ., էջ 162; **Н. Тагмизян**, укр. соч., сс. 181-182; **Ա. Արևշատյան**, Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, էջ 22; **Ա. Արևշատյան**, Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, էջ 26:

Հ. Չերչյանի և Ն. Թաշճյանի ձայնագրություններում ձայնակարգի հիպո-
 յորտի ձայնաձավալը մեկ աստիճանով ավելին է⁴².

Օրինակ 29



Ն. Թաշճյանի ձայնագրությամբ վերջին՝ «**Տէր զուր»** երգի ավարտին առկա է «ա այլն» գրությունը, որի արդյունքում վերջին վերջավորող ձայնը չենք կարող առանձնացնել:

Առհասարակ, երեք ձայնագրություններում էլ Հարության ավագ օրհնություններն ընթանում են առավելապես վանկային-ներվանկային մեղեդիական ոճում: Բացառություն է կազմում Հ. Չերչյանի ձայնագրությամբ ԴՁ «**Ծաներուք»** շարականը, որը ծավալվում է ներվանկային-զարդուրուն մեղեդիական ոճում: Ի դեպ, արմաշական ավանդույթը ներկայացնող ձեռագրերում շարականների տեմպի նշումներ գրեթե չեն հանդիպում:

ԴՁ ձայնեղանակի մեղեդիական դարձվածքների բնութագրման և համեմատության համար իբրև օրինակ առանձնացրել ենք «**Ծաներուք»** երգի սկսող մեղեդիական դարձվածքը: Հատկանշական է, որ երեք ձայնագրություններում էլ մեղեդիական նույն կառույցը գրառված է միևնույն ձայնաստիճանից:

Օրինակ 30



Օրինակ 31



⁴² 29-րդ օրինակում ներկայացված է Հ. Չերչյանի ձայնագրությամբ Հարության Ավագ օրհնությունների ԴՁ երգաշարի ձայնեղանակի ձայնակարգի հնչյունաշարը: Ըստ էության, Ն. Թաշճյանի ձայնագրությամբ նույն երգաշարի ԴՁ ձայնեղանակի ձայնակարգի հնչյունաշարը ձայների միջև ինտերվալային փոխհարաբերակցության և ձայնակարգային աստիճանների առումով չի տարբերվում Հ. Չերչյանի ձայնագրությունից: Սակայն այլ է հնչյունաբարձրությունը. Ն. Թաշճյանի պարագայում տվյալ նոտային օրինակի հնչյունաշարն անհրաժեշտ է մեկ աստիճան (մեծ սեկունդա) ներքև իջեցնել:

Օրինակ 32

72. «Ճաներուք»
Լ. Թաշճյանի ծայնագրություն

Տես-եալ ըզ-բեզ մա - հու

Մատենադարանի արմաշական ձեռագրերը մի նոր և հետաքրքրական էջ են բացում ոչ միայն երգեցողության տվյալ ավանդույթի, այլև հայ հոգևոր երգարվեստի պատմության մեջ ընդհանրապես: Մեր աշխատության մեջ առաջին անգամ ուսումնասիրվում են Ութձայն համակարգի ծայնեղանակային առանձնահատկությունները մաշտոցյան մատենադարանի N 96 ձեռագրում՝ Հարության ավագ օրհնությունների օրինակով: Այս ձեռագրի համեմատական վերլուծությունը Նիկողայոս Թաշճյանի և Համբարձում Չերչյանի ծայնագրած Շարակնոցների համանուն երգաշարերի հետ բացահայտում են մի շարք օրինաչափություններ, որոնք ընդհանուր են երկու ծայնագրությունների համար, ինչպես նաև որոշակի տարբերություններ, որոնք կրում են տեղային դրսևորումներ և փաստում Արմաշի ավանդույթի ինքնուրույնությունը:

Հարկ ենք համարում նշել, որ մեր դիտարկումները վերջնական արդյունք ի հայտ բերելու նպատակ չունեն: Նման եզրահանգում կարող ենք ունենալ հետագա համապարփակ ուսումնասիրություններ իրականացնելիս՝ համեմատելով այս երգաշարերը Եղիա Տնտեսյանի ծայնագրությամբ պոլսական երգվածքի հետ:

Ամփոփում

Հոդվածում առաջին անգամ ուսումնասիրվում են Ութձայն համակարգի ծայնեղանակային առանձնահատկությունները մաշտոցյան մատենադարանի N96 ձեռագրում՝ Հարության ավագ օրհնությունների օրինակով: Այս ձեռագրի համեմատական վերլուծությունը Նիկողայոս Թաշճյանի և Համբարձում Չերչյանի ծայնագրած Շարակնոցների համանուն երգաշարերի հետ բացահայտում են մի շարք օրինաչափություններ, որոնք ընդհանուր են երկու ծայնագրությունների համար, ինչպես նաև որոշակի տարբերություններ, որոնք կրում են տեղային դրսևորումներ և փաստում Արմաշի ավանդույթի ինքնուրույնությունը:

Բանալի բառեր՝ հայ հոգևոր երգարվեստ, Արմաշի ավանդույթ, Համբարձում Չերչյան, Նիկողայոս Թաշճյան, մաշտոցյան մատենադարանի ձեռագրեր, Ութձայն համակարգ, ծայնեղանակային և մեղեդիական բնորոշ դարձվածքների համեմատական ուսումնասիրություն:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКОГО ВОСЬМИГЛАСИЯ НА ОСНОВЕ ДВУХ АРМАШСКИХ РУКОПИСЕЙ ИЗ МАТЕНАДАРАНА ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

Резюме

*Нане Мисакян (Армения)
Музей-институт Комитаса*

Всестороннее и сравнительное исследование пяти традиционных распевов армянского духовного песнетворчества (Эчмиадзинский, Константинопольский, Венецианский, Иерусалимский и Новоджувльфинский или Индийско-армянский), сформировавшихся в XVIII-XIX веках, является одной из важнейших задач армянской музыкальной медиэвистики. Настоящая работа посвящена изучению *Армашской* традиции, являющейся самобытной ветвью Константинопольского распева. Армашская традиция армянского духовного песнетворчества сформировалась в Армаше (кантон Никомедия в Малой Азии), прославленный своей церковью Пресвятой Богородицы. Основатель данной традиции - Амбарцум Черчян (1828-1901) – известный константинопольский музыкант-теоретик, педагог, музыкально-общественный деятель. В течение длительного времени он был регентом и преподавателем музыкальных дисциплин в училище, а затем и в духовной академии (при церкви Пресвятой Богородицы), которая, как крупнейшее учебное заведение, имеющее свои богатые музыкальные традиции, сыграла важную роль в истории армянского профессионального песнетворчества.

Творческое наследие А. Черчяна составляют записанные им армянской нотописьмо сборники "*Шаракноц*" (Гимнарий), "*Жамагирк*" (Часослов), "*Тагаран*" (сборник духовных песнопений), Канон на Воздвижение Креста, отрывки из "Литургии", которые были им практически применены в годы его руководства. Большую ценность представляют дошедшие до нас сборники духовных песнопений, переписанные руками студентов академии, в числе которых пятнадцать *армашских* рукописей из новейшей коллекции ереванского Матенадарана имени Маштоца.

Предметом нашего исследования являются два *Шаракноца* (рук. N96, N97), как канонические сборники, отражающие армянское Восьмигласие. Они содержат богатый материал, изучение которого имеет огромное историческое значение для армянской духовной музыки. Одной из наших первоочередных задач является сравнение собранного в рукописях музыкального материала с *Шаракноцами*, записанными Амбарцумом Черчяном и Никогойосом Ташчяном. В результате подробного анализа выявляются их значимые сходства и различия, гласовые и ладовые особенности армянского Восьмигласия. Сравнительное исследование гласовых мелодических оборотов также является одним из стержневых вопросов. Все песни *Шаракноца* были нами транспортированы с армянской нотописки на европейскую.

Армашские рукописи Матенадарана открывают новую и примечательную страницу не только внутри традиции, но и в истории армянского духовного песнетворчества.

Ключевые слова: армянское духовное песнетворчество, *армашская* традиция, Амбарцум Черчян, Никогойос Ташчян, рукописи Матенадарана имени Месропа Маштоца, *Утдзайн* (армянская система восьмигласия), сравнительный анализ гласов и типичных мелодических оборотов.

OBSERVATIONS OF THE EIGHT-MODE SYSTEM BASED ON TWO ARMASH MANUSCRIPTS FROM MASHTOTS MATENADARAN

Abstract

*Nane Misakyan (Armenia)
Komitas Museum-Institute*

Conducting a comprehensive comparative study of the Armenian five singing traditions formulated in the XVIII-XIX in centuries in Etchmiadzin, Constantinople, Venice, Jerusalem and New Julfa is one of the significant tasks of the Armenian medieval music studies.

This article is a part of an ongoing study on the *Armash tradition* of Armenian sacred chanting. It was formed in *Armash*, village, located in the province of Nicomedia (Izmit) in Asia Minor, famous for its monastery of the Holy Mother of God Destroyer of Evil.

The *Armash tradition* was established by Hambardzum Cherchyan (1828-1901), a master of music notation, a music theorist, a teacher and a musical and public figure in Constantinople. For a long time he served as a music director at the *Armash Zharangavorats School* and later on at the *Armash Dprevank* (Theological Seminary). The latter had a significant role as an educational institution with its own musical traditions, thus having an invaluable contribution to the history of the Armenian school of sacred chanting. The *Armash tradition* is a separate and independent sub-branch of the Armenian traditional singing style of Constantinople.

H. Cherchyan left us a considerable heritage of notated music: *Sharaknots* (Hymnal), *Zhamagirk* (Breviary) and *Tagharan* (Book of Canticles), *Khachverats canon* (Canon of the Exaltation of the Holy Cross) and fragments of *Patarag* (Liturgy), which were used in practice during his service as a musical director.

Numerous manuscripts written with Armenian notation by the students of the *Zharangavorats School* and the *Dprevank* have been preserved, fifteen of which kept in the Collection of Latest Documents at the Mashtots Matenadaran in Yerevan. Two *Sharaknots* books (manuscripts №96 and №97) are the groundwork for this study, being canonical miscellanies reflecting the *Utdzayn* (Armenian eight-mode) system. They contain copious materials, the study of which is of great importance for the history of the Armenian sacred music.

One of the priorities for this research is the comparative analysis of the musical materials contained in the above-mentioned two *Sharaknots* books and those compiled by Hambardzum Cherchyan and Nicoghayos Tashchyan. As a result of a thorough comparison, the essential similarities and differences between above-mentioned materials were discovered, and the features of the modes and the scales of each of them regarding the *Utdzayn* system was identified. The comparative study of the distinctive modal melodic pattern is a core research subject here. All *Sharaknots* in the Armenian notation were transcribed into the European one.

The *Armash* manuscripts from Matenadaran open a new and attractive page not only in relation to this particular singing tradition, but in the history of the Armenian sacred chanting in general.

Keywords: Armenian sacred chanting, *Armash* tradition, Hambardzum Cherchyan, Nikoghayos Tashchyan, manuscripts of Mashtots Matenadaran, *Utdzayn* (Armenian eight-mode) system, comparative analysis of the modes and modal melodic patterns.

ՀԱՅՈՑ ԺԱՄԱԳԻՐՔԸ (Նախնական դիտարկումներ)

Անահիտ Բաղդասարյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

Ժամագիրքն, ինչպես հայտնի է, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու (հետայսու՝ Հայ Եկեղեցի) աստվածապաշտության ծիսաարարողակարգի կատարման համար նախատեսված ծիսական գրքերից է¹: Ծիսամատյանը հայտնի է նաև մեկ այլ՝ Աղոթամատուց անվանումով²: Հայ իրականության մեջ ընդունված են եղել նաև այլ եզրեր՝ Աղոթամատյան, Գիրք աղոթից, Սաղմոսարան³: Ժամագրքի օտարալեզու հոմանիշներն են՝ *ᾠρολόγιον* (հուն.)⁴, *Breviarium* (լատ.)⁵, *Часослов* (ռուս.)⁶ և այլն:

Հայոց ժամագրքում հաջորդաբար, ըստ ինը ժամերգությունների՝ Գիշերային, Առավոտյան, Արևագալի, Ճաշու Երրորդ ժամի, Ճաշու Վեցերորդ ժամի, Ճաշու Իններորդ ժամի, Երեկոյան, Խաղաղական, Հանգստյան, ներկայացված է Հայ Եկեղեցու ամենօրյա հասարակաց աստվածապաշտության բազմաժանր, բազմաբնույթ, ծավալուն ողջ ծիսակարգը⁷: Վերջինս նվիրված է համագո՝ «Միևնոյն գոյացութիւնն ունեցող, միևնոյն բնութիւնից, <...> էակից»⁸, միասնական և անբաժանելի Սուրբ Երրորդությանը՝ Հոր, Որդու և Ս. Հոգու, որոնցից յուրաքանչյուրին ուղղված է երեքական ժամերգություն, ընդ որում նկատելի որոշակի հաջորդականությամբ: Այսպես՝ ինը ժամերգությունների առաջին եռյակի առաջին ժամերգությունը՝ Գիշերային, երկրորդ եռյակի երկրորդ ժամերգությունը՝ Ճաշու Վեցերորդ ժամի, երրորդ եռյակի երրորդ ժամերգությունը՝ Հանգստյան, թվային 1, 2, 3 հաջորդականությամբ,

¹ Նույն նպատակով գործի են դրվում Շարակնոցը, Ճաշոցը, Մաշտոցը, Խորհրդատետրը (Պատարագամատուցը) և այլ ծիսական գրքեր. տե՛ս **Նորայր արք. Պողարեան**, *Ծիսագիրքութիւն*, Նիւ Եորք, 1990, էջ 2:

² Տե՛ս **Հ. Վարդան Հացունի**, *Պարմութիւն Հայոց Աղոթամատուցին*, Վենետիկ, Ս. Ղազար, 1965 (հետայսու կրճատ նշում ենք՝ Հացունի):

³ Նույն տեղում, էջ 141, 142:

⁴ **М. Фасмер**, *Этимологический словарь русского языка*, том IV, Москва, изд. "Прогресс", 1987, с. 318.

⁵ **И. Дворецкий**, *Латинско-русский словарь*, Москва, изд. "Русский язык", 1976, с. 137.

⁶ **М. Фасмер**, *ук. соч.*, с. 318.

⁷ Հարկ է նշել, որ հնում ինը ժամերգությունները կատարվել են ամեն օր: «Այժմ ամէն օր կատարում են Գիշերային և Արատրեան ժամերգութիւնները միասին՝ Արատրեան, և Երեկոեան ժամերգութիւնը՝ Երեկոեան», տե՛ս **Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2004, էջ Ժ: Մյուս ժամերգությունների կիրառության մասին տե՛ս նույն տեղում, էջ Ժ-ԺԱ:

⁸ *Հայերէն բացատրական բառարան*, կազմեց Ստ. Մալխասեանց, հատ. 3, Երևան, ՀՍՍՌ պետական իրատ., 1944, էջ 21:

կատարվում են «ի դէմն Հօր Աստուծոյ»: Միաժամանակ, առաջին եռյակի երկրորդ ժամերգությունը՝ Առավոտյան, երկրորդի երրորդ ժամերգությունը՝ Ճաշու Իններորդ ժամի, երրորդի առաջին ժամերգությունը՝ Երեկոյան, թվային 2, 3, 1 հաջորդականությամբ, կատարվում են «ի դէմն Որդւոյն Աստուծոյ»: Եվ վերջապես, ինը ժամերգությունների առաջին եռյակի երրորդ ժամերգությունը՝ Արևազալի, երկրորդի առաջին ժամերգությունը՝ Ճաշու Երրորդ ժամի, և երրորդ եռյակի երկրորդ ժամերգությունը՝ Երեկոյան, թվային 3, 1, 2, հաջորդականությամբ, կատարվում են «ի դէմն Հոգւոյն Սրբոյ»:

Դրա հետ մեկտեղ նշված ինը ժամերգություններից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը՝ կապված հիմնականում Հիսուս Քրիստոսի տնօրինությունների (երկրային կյանքի իրադարձությունների) հետ: Դրանցից են՝ Քրիստոսի երևալը յուդաբեր կանանց (Առավոտյան ժամերգություն), Հարությունը, երևալը աշակերտներին (Արևազալի ժամերգություն) և այլն⁹:

Ժամագիրքը հայոց մեջ անցել է կազմավորման ու զարգացման երկարատև ճանապարհ, որն ընդգրկում է Դ-ԺԳ դարերը¹⁰: «*Պէտք է գիտնալ նախ՝ թէ մեր առաջին Աղօթամատուցն էր Սաղմոսարանը, անջատուած Կտակարանէն (Հին Կտակարանից – Ա. Բ.)*»¹¹, որ հետզհետե համայրվեց նորաստեղծ, ոչ սուրբգրային թարգմանական, այլ մայրենի լեզվով ստեղծված, հայերեն բազմապիսի հորինվածքներով՝ քարոզներով, աղոթքներով և այլն: Ուստի և արդեն իսկ Ե դարում Հայոց ժամագիրքը՝ «իր տարրերու տեսակներով՝ նման միւս արեւելեան եկեղեցիներու», միաժամանակ ստացել էր հայկական ուրույն կերպարանք¹², իսկ «վերջին կատարելութեան» հասավ ԺԱ-ԺԳ դարերում¹³:

Ժամագրքի կազմավորման և զարգացման բազմադարյան ընթացքը կապված է Հայ Եկեղեցու ականավոր ներկայացուցիչների արգասավոր գործունեության հետ: Ծիսամատյանի կազմողներն են համարվում Ս. Սահակ Ա Պարթևը, Ս. Մեսրոպ Մաշտոցը, նրանց սաները՝ Ս. Գյուտ Ա Արահեզացին, Ս. Հովհան Ա Մանդակունին (V դ.)¹⁴: «*Այս տեսութիւնը ստուգապէս կրնայ հաստատուիլ ժամագրքի հայերէն լեզուին շնորհիւ, որ ոսկեդարեան մաքրութեամբ կը փայլի առ հասարակ*»¹⁵: Ժամագրքի կազմողներից է և

⁹ Այս մասին մանրամասն տե՛ս *Ժամագիրք Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ*, էջ ԺԱ-ԺԶ:

¹⁰ Այս ժամանակաշրջանի մանրամասն պարբերացումն ու հանգամանալից դիտարկումը տե՛ս **Հացունի**, էջ 143-281:

¹¹ Նույն տեղում, էջ 149:

¹² Նույն տեղում, էջ 182:

¹³ Նույն տեղում, էջ 281:

¹⁴ **Ն. արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 2:

¹⁵ Նույն տեղում, էջ 2-3:

Ս. Ներսես Շնորհալին (XII դ.)¹⁶: Այս գործիչների անունները բազմիցս զետեղվել են ժամագրքի տիտղոսաթերթերին՝ հնագույն նմուշներից մինչև նորոյա տպագրություններ¹⁷:

Հատկապես Ս. Սահակ Ա Պարթևին, Ս. Մեսրոպ Մաշտոցին, Ս. Գյուտ Ա Արահեզացուն և Ս. Հովհան Մանդակունուն է վերագրվում ժամագրքի հիմնական ժանրերից մեկի՝ երգվող քարոզի հնագույն օրինակների ստեղծումը¹⁸: «Քարոզների ներմուծումով փաստորեն նոր փուլ է սկսվում Աղոթամատուցի ազգայնացման գործում, և ձևավորվող ժամագիրքը ստանում է ավելի որոշակի տեսք»¹⁹: Այդ քարոզներից են Ս. Սահակ Ա Պարթևի «Վասն ի վերուստ», «Վասն ի Գիշերի», «Վասն ուղղելոյ», «Վասն գտանելոյ», Ս. Հովհան Ա Մանդակունու «Զարթուցեալքս ամենեքեան» (Գիշերային ժամերգություն)²⁰, Ս. Գյուտ Ա Արահեզացու «Յարեւելից մինչև ի մուտս արեւու, ընդ ամենայն տեղիս» (Արևազալի ժամերգություն)²¹ և այլն:

Սահակ-Մեսրոպյան դպրոցը մեծ ներդրում է ունեցել ոչ միայն քարոզագրության ասպարեզում: Սուրբ Թարգմանիչների ջանքերով հիմնվել են նաև ժամագրքի ծիսաարարողակարգային նույնպես խիստ կարևոր նշանակության մի շարք այլ ժանրեր. աղոթքներ, որոնք սովորաբար հաջորդել և կցվել են քարոզներին, մաղթանքներ, կցուրդներ (շարականների նախատիպերը) և այլն:

Ժամագիրքը զգալիորեն համալրվել և հարստացել է Ս. Ներսես Շնորհալու գործունեության շնորհիվ: Մեծ հայրապետը ստեղծել է տասնյոթ երգ գրեթե բոլոր ժամերգությունների համար (բացառությամբ՝ Երեկոյան ժամերգության)²², այդ թվում՝ «Յիշեսցուք ի գիշերի», այբբենական ծայրակապով (ակրոստիքոսով)՝ «Այսօր անճառ», «Աստուած անեղ», «Աշխարհ ամենայն», «Առաւօտ լուսոյ», «Արարչական», իր անվան ծայրակապով՝ «Նորոգող տիեզերաց», «Նորաստեղծեալ», «Նայեաց սիրով» և այլն, նաև «Հաւատով

¹⁶ Նույն տեղում, էջ 2:

¹⁷ Տե՛ս, օրինակ, Ոսկան Երևանցու տպագրությունները՝ 1667 թ., Ամստերդամ, 1673 թ., Մարսել, ինչպես նաև այլ տպագրություններ՝ 1742 թ. և 1793 թ.՝ Վենետիկ; 1799 թ. և 1813 թ.՝ Կ. Պոլիս; 1881 թ. և 1915 թ.՝ Երուսաղեմ; 1902 թ.՝ Վաղարշապատ և այլն:

¹⁸ Երգվող քարոզներն, ինչպես հայտնի է, հետագայում, Ս. Գրիգոր Նարեկացու օրոք և նրա ձեռքով վերածվեցին գանձերի: Տե՛ս **Գրիգոր Նարեկացի**, *Տաղեր և գանձեր*, աշխատասիրությամբ Ա. Քյոշկեռյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 9:

¹⁹ **Ա. Արևշատյան**, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, *Պարմաբանասիրական հանդես*, Երևան, 1992, թիվ 2-3, էջ 202:

²⁰ Ս. Հովհան Ա Մանդակունուն են վերագրվում նաև Ճաշու Երրորդ, Վեցերորդ, Իններորդ ժամերի քարոզները (**Հացունի**, էջ 164): Ս. Սահակ Ա Պարթևի և Ս. Հովհան Ա Մանդակունու քարոզների երաժշտաոճական հատկանիշների վերլուծությունը տե՛ս Ա. Արևշատյանի նշված հոդվածում:

²¹ **Ն. արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 3:

²² **Ն. արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 4:

խոստովանիմ» աղոթքը՝ «օրուան ժամերուն թիով՝ 24 տուն, ընտիր եւ գերազանց բովանդակութեամբ»²³:

Ժամագրքում ընդգրկվել են և Ս. Գրիգոր Ա Լուսավորչին (III-IV դդ.) վերագրվող «Աստուած մեծ, հզոր եւ փառատրեալ» քարոզը (Առավոտյան ժամերգություն)²⁴, հատվածներ Ս. Գրիգոր Նարեկացու (X դ.) «Մատենանոց երգերգության» պոեմից (Հանգստյան ժամերգություն)²⁵, ինչպես նաև Հովհաննես Սարկավագին (XI-XII դդ.), Գրիգոր Տաթևացուն (XIV-XV դդ.), Թովմա Մեծփեցուն (XIV-XV դդ.) և այլոց վերագրվող երկեր²⁶:

Հայոց ժամագրքի անբաժանելի մասերից են համաքրիստոնեական երգասացությունները: Դրանք են՝

1. «Սուրբ Աստուած» երեսրբյան աղոթքը, որը եկեղեցական օրվա խորհրդին համապատասխան («յաւոր պատշաճի»)՝ Հայ Եկեղեցում գործի է դրվում մի շարք տարբերակներով՝ նվիրված Տերունական տոներին՝ Ս. Ծննդան, Ծաղկազարդի, Ս. Զատիկի, Հոգեգալստյան, Այլակերպության, Սուրբ Կոյս Մարիամ Աստվածածնի Վերափոխման, Խաչի, Եկեղեցու և այլն, որոնց կցվում է Ս. Թովմաս առաքյալին վերագրվող «Փառատրեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս» մաղթանքը (Առավոտյան ժամերգություն):

2. «Փառք ի բարձունս» (նույնպես՝ Առավոտյան ժամերգություն):

3. «Լոյս զուարթ» (Երեկոյան ժամերգության), որ *«շար հին երգ մըն է, կիրակամորի հաւորկ, հունական ծագումով»*²⁷, Ս. Հովհան Ա Մանդակունու թարգմանությամբ²⁸:

Ժամագրքում ամփոփված է Հայ Եկեղեցու ծիսաարարողակարգային ժանրերի գրեթե ողջ բազմահարուստ համակարգը. Տերունական աղոթք, սաղմոս, փոխ, կցուրդ, քարոզ, աղոթք, մաղթանք, կանոնազուլիս, թագավոր, ալելու, օրհնություն, երգ, ստողոգի, հորդորակ, ծիսական բացականչություն (օրթի, պոստիումէ, ալէլուիա) և այլն, որոնք գրեթե բոլորը ժամերգությունների ընթացքում ավանդաբար կատարվում են երգեցողության միջոցով²⁹: Ուստի և դրանք միաժամանակ հայ եկեղեցական երաժշտության տարատեսակներից են՝ յուրաքանչյուրն իր ուրույն բովանդակությամբ, ծիսաարարողակարգային

²³ Նույն տեղում, էջ 5:

²⁴ Նույն տեղում, էջ 3:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 5 և 6:

²⁷ **Ն. արք. Պողարեան**, նշվ. աշխ., էջ 23:

²⁸ **Մ. Աբեղյան**, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք առաջին (սկզբից մինչև X դար): Տե՛ս *Երկեր*, հատ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 396:

²⁹ Ժամագրքը Հայ Եկեղեցու՝ գրեթե ամբողջությամբ երգվող ծիսական մատյաններից է, ինչպես և խորհրդատետր-Պատարագամատուցը, Մաշտոցը և այլն:

գործառույթով, կառուցվածքով, բանաստեղծական և մեղեդիական նկարագրով, կատարման ձևով, որոնք նաև հնուց ի վեր բազմիցս ծայնագրվել են³⁰, ընդ որում՝ երաժշտության ծայնագրության տարբեր համակարգերով: Սկզբնապես միջնադարում այդ նպատակով գործի է դրվել խազագրությունը³¹, XIX դարում՝ հայկական նոտագրությունը³²:

1877 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցու (գահակալության տարիներն են՝ 1866-1882 թթ.) նախաձեռնությամբ, հրամանով և հովանավորությամբ, հայկական նոտագրությամբ լույս տեսավ «Երգք ծայնագրեալք ի Ժամագրոց» հատորը³³, այլ կերպ ասած՝ ավանդական միաձայն Ձայնագրյալ Ժամագիրքը: Երգել է հենց ինքը՝ Վեհափառ Հայրապետը, ծայնագրել (նոտագրել) են պոլսահայ երաժիշտ, հայկական նոտագրության և հայ եկեղեցական երաժշտության հմուտ գիտակ Նիկողայոս Թաշճյանը (1841-1885) և իր սաները, որոնց թվում էր նաև երիտասարդ Մակար Եկմայանը³⁴:

«Երգք ծայնագրեալք ի Ժամագրոց» հատորը հայ ավանդական եկեղեցական երաժշտության բազմաժանր³⁵, սովորածավալ ծայնագրյալ ժողովածուներից է: Ինչպես 1870-ական թթ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում լույս տեսած «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» և «Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց» հատորները, «Երգք ծայնագրեալք ի Ժամագրոց»-ը ևս առանձնանում է երաժշտական նյութի առավել ամբողջականությամբ և ոճական մաքրությամբ³⁶:

Հատորում ընդգրկված է Հայ եկեղեցու ամենօրյա ինը ժամերգությունների

³⁰ Հայ եկեղեցական երաժշտությունը, ի տարբերություն բանավոր ավանդույթի՝ հայ ժողովրդական և աշուղական երաժշտության, գրավոր ավանդույթի երգարվեստ է:

³¹ Ինչպես հայտնի է, եվրոպական միջնադարյան երաժշտության մեջ խազագրությանը համապատասխանում է նևագրությունը (խազ – նև):

³² Հայկական նոտագրությունը ոչ գծային նոտային համակարգ է: Ստեղծվել է XIX դ. սկզբին Կոստանդնուպոլսում: Հաջորդել է խազագրությանը: Հեղինակն է համարվում պոլսահայ երաժիշտ Համբարձում Լիմոնջյանը (1768-1839), որի անունով հայկական նոտագրությունը հայտնի է որպես Լիմոնջյանի համակարգ, Համբարձումյան խազեր: Նախատեսվել է հայ ավանդական՝ մոնոդիկ (միաձայն) եկեղեցական երաժշտության ծայնագրության համար, ըստ այդմ կոչվում է նաև եկեղեցական ծայնագրություն հայոց, Հայկական եկեղեցական ծայնագրություն:

³³ Նույն տարիներին կաթողիկոսի հրամանով Էջմիածնում հայկական նոտագրությամբ լույս տեսան նաև *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի* (1874 թ.՝ առաջին հրատարակությունը, 1878 թ.՝ երկրորդը), *Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց* (Ձայնագրյալ Շարակնոց, 1875 թ.) և հայ եկեղեցական երաժշտության այլ հատորներ:

³⁴ Ժամագրքի ծայնագրության մասին տե՛ս **Ղազարոս քի. Յովսէփեան**, Յուշիկներ հայկական երգեցողութիւնից, *Գեղարուեստական այբում Յ.Կ. Այվազովսկու յիշատակին*, Ս.-Պետերբուրգ, «Պուշկինեան արագատիպ» տպարան, 1903, էջ 62-65:

³⁵ Բազմաժանր են նաև *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի* և *Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց* հատորները:

³⁶ **Н. Тагмизян**, *Теория музыки в древней Армении*, Ереван, изд. АН АССР, 1977, с. 8.

որչ եղանակավոր (երգվող) նյութը³⁷ բազում տարբեր ծավալի նմուշներ, որոնց մի մասն, ընդ որում, ներկայացված է «յաւոր պատշաճի» մեղեդիական տարբերակներով՝ երկու, երբեմն և ավելի, նախատեսված եկեղեցական տարբեր տոների և օրերի համար³⁸: Դրանցից են «Առաւօտ լուսոյ»-ն Վասն հանդիսաւոր Կիրակէից (Ձայնագրյալ Ժամագիրք, էջ 28), Ի հասարակ Կիրակէս Յարութեան (էջ 41), Ի Կիրակէս Մեծի Պահոց (էջ 45), Յաւագ Ուրբաթու եւ ի տօնս Խաչի (էջ 49)։

*Օրինակ 1*³⁹

Ի հասարակ Կիրակէս Յարութեան

Andantino

94.
III SM.

Ա - ռա - ւօ - տ լու - սո - յ Ա - րե - գակն ար - դա - ր առ իս
լոյս ծա - գեա: Բը - դ - խումն ի շօ - րէ: բըղ - խեա
ի հոգ - ւո - յս բա - ն Քե - գ ի հա - ճոյ - - - ս:

Օրինակ 2

Յաւագ ուրբաթու եւ ի փօնս խաչի

Andante sostenuto

92.
III M.

Ա - ռա - ւօտ լու - սոյ Ա - րե - գա - կն ար - դար
առ ի - ս լոյս ծա - գեա: Բըղ - խո - մն ի շօ - րէ: բըղ -
խեա ի հոգ - տոյս բա - ն Քե - գ ի հա - ճոյ - - - յս:

Մեղեդիական տարբերակներով են բերված նաև «Փառք ի բարձունս» (Ի հանդիսաւոր աւուրս, էջ 289, Վասն հասարակ աւուրց, էջ 291) և այլն:

Ձայնագրյալ Ժամագիրքը լավագոյնս արտացոլում է հայ ավանդական եկեղեցական երաժշտության ժանրային և հորինվածքային (կոմպոզիցիոն)

³⁷ Ձայնագրյալ Ժամագրքում չեն ընդգրկված շարականները և Ա. Պատարագի երգերը, որոնք, ինչպես վերը հիշատակվեց, 1870-ական թթ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում լույս տեսան առանձին ձայնագրյալ հատորներով:

³⁸ Մեղեդիական տարբերակներն ի հայտ են գալիս, երբ անփոփոխ պահպանվում է երգի բանաստեղծական տեքստը, սակայն փոխվում է երաժշտական բաղադրիչը: Երևոյթը բնորոշ է հայ եկեղեցական երաժշտությանը:

³⁹ Այս և հետագա նոտային օրինակները բերված են եվրոպական նոտագրությամբ, որ հայկական նոտագրությունից փոխադրվել են Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում:

նկարագիրը՝ դրանով իսկ դառնալով ազգային երգարվեստի հնագույն մասնագիտացված (պրոֆեսիոնալ) ճյուղի յուրօրինակ հանրագիտարանը⁴⁰: Այսպես, Ձայնագրյալ ժամագրքում ներկայացված են հայ եկեղեցական երաժշտության գրեթե բոլոր ժանրերը: Միաժամանակ ներկայացված են հայ եկեղեցական երաժշտության բազմապիսի ձայնակարգերը (լադերը)՝ մաժոր և մինոր թեքման, հեմիոլ (մեծացրած սեկունդայով), նաև՝ եվրոպական դասական երաժշտության տեսանկյունից ոչ տեմպերացված՝ «բարձր» և «ցածր» հնչյունների առկայությամբ: Վերջիններիս շնորհիվ զգալիորեն մեծանում է ժամագրքի երգվող նմուշների հնչյունային ծավալը և հարստանում դրանց մեղեդիական դիմագիծը: «Դասական» ինտերվալների կողքին մեծ տեղ ունեն «անսովոր» կառուցվածքով ինտերվալները: Դրանցից են նեղ փոքր սեկունդան՝ $e^1 - f^1$, նեղ մեծ սեկունդան՝ $b^1 - /c^2$ ⁴², լայն մեծացրած սեկունդան՝ $des^2 - e^2$ և այլն⁴³: Ձայնագրյալ ժամագրքում ներկայացված են հայ եկեղեցական երաժշտության մեղեդիական բոլոր ոճերը: Դրանք են՝ վանկային (սիլաբիկ) մեղեդիական ոճը, որը գոյանում է մեկ վանկ – մեկ հնչյուն հարաբերակցության միջոցով:

Օրինակ 3

⁴⁰ Նույնը կարող ենք ասել նաև վերը նշված «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» մասին, տե՛ս *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, փոխադրություն հայկական նոտագրությունից եվրոպականի, Խմբագրի կողմից, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2012, էջ 340-341:

⁴¹ Աստղանիշով՝ «*» նշվում են «բարձր» քառորդ տոն դեպի վեր այտերացված հնչյունները:

⁴² Քառորդ տոն իջեցումը նշվում է թեթ գծով՝ «/», որը դրվում է «ցածր» քառորդ տոն դեպի ներքև այտերացված հնչյունի ձայն կողմում:

Բարձր և ցածր հնչյուններն, ընդհանրապես, բնորոշ են հայ եկեղեցական երաժշտությանը, տես *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, Ձայնագրեալ Շարական հոգետր երգոց* և հայկական նոտագրությամբ հրատարակված և ձեռագիր մյուս ժողովածուները:

⁴³ Բարձր և ցածր հնչյունների միջոցով գոյացած «անսովոր» կառուցվածքով ինտերվալների մասին հայ ավանդական կամ մոնոդիկ (ժողովրդական, ժողովրդա-մասնագիտացված՝ գուսանական և աշուղական, մասնագիտացված՝ հոգևոր և աշխարհիկ) երաժշտության մեջ, տե՛ս *X. Кухнарёв, Вопросы истории и теории армянской монодической музыки*, Ленинград, Государственное музыкальное изд., 1958, сс. 332-335, նույնի հայերեն թարգմանությունը՝ *Ք. Քուշնարյան, Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր*, Երևան, «Ամրոց գրուպ», 2008, էջ 279-281:

Ձայնագրյալ ժամագրքի հատկապես սաղմոսներին բնորոշ է վանկային մեղեդիական ոճի այն ձևը, որը գոյանում է նույն հնչյունի բազմակի, շարունակական կրկնողության միջոցով (Ձայնագրյալ ժամագիրք, էջ 9-15 և այլն):

Ձայնագրյալ ժամագրքում առկա հայ եկեղեցական երաժշտության մյուս ոճերն են՝

ներվանկային (նևմատիկ), առաջանում է վանկ – 2-5 հնչյուն (ոչ ծավալուն մեղեդիական ֆրագ) փոխկապակցությամբ.

Օրինակ 4

Ի հանդիսաւոր աւուրս

զարդրվորուն (մելիզմատիկ) վանկը եղանակավորվում է ծավալուն մեղեդիական ֆրագի միջոցով.

Օրինակ 5

Ձայնագրեալ երգք կարգաւորութեան հասարակաց աղօթից երեկոյի ժամուն

Խոնարհեց: Ապրեց:

Adagio Ձայնաւորին ց' և d² / Pedal ց' and d²

խառը մեղեդիական ոճ, որն ի հայտ է գալիս մեղեդիական տարբեր ոճերի համակցությունից, օրինակ՝ վանկայինի և ներվանկայինի (խառը՝ վանկային-

ներվանկային մեղեդիական ոճ, որ խիստ բնորոշ է ժամագրքի եղանակավոր նմուշներին, նաև շարականներին), տե՛ս նոտային օրինակ 1, կամ ներվանկայինի և զարդուրունի համակցությունից (խառը՝ ներվանկային-զարդուրուն)։

Օրինակ 6

Ի ծննդեան Յիսուսի Քրիստոսի եւ սրբուհոյ Աստուածածնի

Adagio

և այլն:

Դիտարկված մեղեդիական ոճերով է պայմանավորված Ձայնագրյալ ժամագրքում հայ եկեղեցական երաժշտության հիմնական՝ Յորդոր (Allegro), Միջակ (Moderato), Չափաւոր (Andante), Ծանր (Adagio), նաև միջանկյալ տեմպերի առկայությունը. Յորդոր Միջակ (Allegro moderato), Չափաւոր Ծանր (Andante sostenuto) և այլն⁴⁴:

Հարկ է նշել, որ մոնոդիկ՝ միաձայն Ձայնագրյալ ժամագրքում, հատկապես մեղեդիական բարդ նկարագրով եղանակավոր նմուշներում հանդիպում են և երկձայնության օրինակներ, որոնք գոյանում են մեղեդու և վերջինիս ուղեկցող վոկալ ձայնառության (դամի) միջոցով.

Օրինակ 7 (տե՛ս նաև օրինակ 5)

Adagio Ձայնառութիւն c² և g¹ / Pedal c² and g¹

Հայոց ժամագիրքը հարստագույն նյութ է բովանդակում հայ եկեղեցական երաժշտության հետազոտման համար: Միաժամանակ, Հայոց ժամագրքի հնագույն, սակայն, այսօր ևս, հակառակ «պատկառելի հասակի»,

⁴⁴ Պահպանել ենք տեմպերի անվանումների գրաբարյան ուղղագրությունը: Յորդոր և Միջակ տեմպերով երգում են վանկային մեղեդիական ոճով ծավալվող եղանակավոր նմուշները, Չափաւորը հատուկ է խառը՝ վանկային-ներվանկային ոճին, Ծանրը՝ ներվանկային, զարդուրուն, խառը՝ ներվանկային-զարդուրուն ոճերին և այլն: Տեմպերի իտալերեն թարգմանությունը տե՛ս Ռ. Աթայան, *Ձեռնարկ հայկական նորագրության*, Երևան, Հայպետհրատ, 1950, էջ 34:

գեղարվեստական բարձր արժանիքները պահպանած, կենսունակ, գեղեցկագույն մեղեդիները, ստեղծագործական ներշնչանքի անսպառ նյութ են հանդիսանում կոմպոզիտորական և կատարողական երգարվեստում:

Ամփոփում

Ժամագիրքը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծիսամատյաններից է, որի շրջանակներում ըստ ինը ժամերգությունների ներկայացված է Հայ Եկեղեցու ամենօրյա հասարակաց աստվածապաշտության բազմաժանր, բազմաբնույթ ծավալուն ողջ ծիսակարգը: Ժամագիրքը հայոց մեջ անցել է կազմավորման և զարգացման երկարատև ժամանակաշրջան՝ Դ-ԺԳ դարերը: Ժամագրքի պատմական ընթացքը կապված է Հայ Եկեղեցու ականավոր ներկայացուցիչների գործունեության հետ՝ Ս. Սահակ Ա Պարթև, Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Գյուտ Ա Արահեգացի, Ս. Հովհան Ա Մանդակունի, Ս. Ներսես Շնորհալի:

Ժամագրքում ամփոփված է Հայ Եկեղեցու ծիսաարարողակարգային ժանրերի գրեթե ողջ բազմահարուստ համալիրը. սաղմոս, փոխ, քարոզ, օրհնություն, թագավոր, ծիսական բացականչություն և այլն, որոնք ժամերգությունների ընթացքում ավանդաբար կատարվում են երգեցողության միջոցով: Ձայնագրյալ ժամագիրքը լավագույնս արտացոլում է և՛ կերտվածքային բազմաբովանդակ նկարագիրը, և՛ դրանով իսկ, ասես, ազգային երգարվեստի՝ այս հնագույն մասնագիտացված ոլորտի յուրօրինակ հանրագիտարանը լինի:

Բանալի բառեր՝ Երգք ձայնագրեալք ի ժամագրոց, Հայ եկեղեցական երաժշտություն:

ЖАМАГИРК (ЧАСОСЛОВ)

Резюме

Анаит Багдасарян (Армения)

кандидат искусствоведения, доцент

Ереванская консерватория имени Комитаса

Жамагирк (Часослов) – одна из обрядово-ритуальных книг Армянской Апостольской Святой Церкви, в которой представлен весь многожанровый, развернутый ритуал девяти ежедневных служб Армянской Церкви. Формирование и развитие Жамагирка охватывает длительный исторический период – с IV до XIII веков, и связано с деятельностью крупнейших представителей Армянской Церкви – Св. Саака I Партева, Св. Месропа Маштоца, Св. Гюта I Араецаци, Св. Иоанна I Мандакуни (V в.) и Св. Нерсеса Шнорали (Благодатного, XII в.).

В Жамагирке заключен почти весь комплекс многочисленных и разнообразных ритуальных жанров Армянской церкви: псалм, *пох*, *кароз*, *тагавор*, славословие и т.д., которые во время служб поются. В 1877 году по повелению католикоса всех армян Геворка IV были изданы (армянской нотописью) “Записанные (нотированные – А.Б.) песни Жамагирка”. Это один из наиболее многожанровых, объемистых и значительных сборников армянской монодической церковной музыки.

Ключевые слова: Записанные песни Жамагирка (Армянского Часослова), Армянская церковная музыка.

ZHAMAGIRQ (BOOK OF HOURS)

Abstract

Anahit Baghdasaryan (Armenia)
PhD in Art, Associate Professor
Komitas State Conservatory

The *Zhamagirq* is the Book of Hours of the Armenian Apostolic Holy Church, in which, in accordance with the 9 canonical hours, the extensive and multi-genre daily ceremonies and services of the common rite of the Armenian Church are presented. The Armenian Book of Hours has passed through a long period of formation and development embracing the IV-XIII centuries. A number of distinguished representatives of the Armenian Church contributed to the Book of Hours in the history of its creation, among whom are St. Sahak I Partev, St. Mesrop Mashtots, St. Gyut I Arahezatsi, St. Hovnan I Mandakuni, and St. Nerses Shnorhali.

Almost the entire rich complex of the rite genres of the Armenian Church is included in the Book of Hours: psalm, *pokh*, sermon, benediction, king, ritual exclamation etc., which are traditionally performed with singing. In 1877, at the Mother See of Holy Etchmiatsin, upon the order of the Catholicos Gevorg the IV, the tome of *The Recorded Songs of the Book of Hours* was published with the Armenian notation system. This tome is an important codex in the Armenian traditional church singing. It maximally reflects the Armenian church singing tradition. Moreover, it appears to be an original encyclopedia of the national singing school.

Key words: Notated chants from the Zhamagirk (Armenian Breviary), Armenian Church music.

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ ՏԱՂԵՐՆ ՈՒ ՄԵՂԵԴԻՆԵՐԸ

*Աստղիկ Մուշեղյան (Հայաստան)
արվեստագիտության թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան հին
ձեռագրերի ինստիտուտ – Մատենադարան
Հայ հոգևոր երաժշտության կենտրոն*

Հայ հոգևոր տաղերգության հսկայածավալ ժառանգությունից երաժշտական բաղադրիչով սակավաթիվ օրինակներ են հասել մինչև մեր օրերը: Ժամանակի ընթացքում Հայաստանում ու Կիլիկիայում գործող բազմահազար եկեղեցիների վեհաշուք խորաններից հնչած երկնառաք ու հոգեզմայլ տաղերն ու մեղեդիները մոռացության են տրվել և մի քանի դար է, ինչ լուռ հանգրվանում են խազավոր ծիսամատյաններում: Բանավոր ավանդությամբ մինչև XIX դար հարատևած տաղային ստեղծագործության նմուշները հայկական նոտագրության ստեղծումից հետո գրի են առնվել: Դրանց մի մասը տեղ է գտել ձեռագիր ձայնագրյալ ժողովածուներում, իսկ մյուս մասը՝ առավել քաջածանոթ Նիկողայոս Թաշճյանի, Համբարձում Չերչյանի, Եղիա Տնտեսյանի, Էմի Աբգարի, Կոմիտասի, Էդվարդ Հակոբյանի և այլոց ձայնագրություններով, թեև մեծ մասամբ հրատարակվել, սակայն հիմնովին չեն ուսումնասիրվել: Խոսքը վերաբերում է նաև Հայ Եկեղեցու կողմից վավերացված՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» հատորին: Մեր աշխատանքը մի փորձ է՝ դույզն չափով լրացնելու այդ բացը և ներկայացնելու Նիկողայոս Թաշճյանի ձայնագրությամբ պահպանված Հայոց Պատարագի տաղերի և մեղեդիների ընդհանուր համապատկերը՝ ըստ կարելիվոյն ճշգրտելով դրանցից մի քանիսի ստեղծման ժամանակաշրջանն ու վայրը, հեղինակային պատկանելությունը, Գանձարան-Տաղարանների հետ ունեցած անմիջական աղերսները, վերհանելով երաժշտական բաղադրիչներին բնորոշ առանձնահատկությունները, մեղեդիական փոխառնչություններին վերաբերող և այլ հարցեր:

Ինչպես հայտնի է, 1873 թ. Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսը, ի նպաստ եկեղեցական երգեցողությանց միօրինակության, ձեռնարկում է Շարականի, Ժամագրքի և Պատարագի երգերի ձայնագրությունը, որին ձեռնամուխ է լինում Կ. Պոլսից հրավիրված Ն. Թաշճյանը՝ իրեն օգնական ունենալով Մ. Եկմայանին

ու Պ. Ճեպեճյանին¹, աջակից՝ Վ. Մանկունի սրբազանին, Ս. Ամատունուն, Գ. Այվազյանին և այլոց: Հրատարակության առաջաբանում (խորագրված՝ «Զեկուցում») Ն. Թաշճյանը գրում է. «*արժան դարեցաւ բազմավաստակ Հայրապետս մեր վերստին փապարութեամբ ի լոյս ընծայել զձայնագրեալն ըստ իրում իսկ թելադրութեան զերգս սպասատրութեան խորհրդոյ Պատարագին [...] եւ յակն արկեալ զամփոփեալսն յառաջին փապարութեանն երգեցողութեանց՝ անձանձիր աշխատութեամբ ճոխացոյց զնոսին փալով ձայնագրել եւ ճշդել զամենայնն ըստ իրում ներդաշնակ եւ հնաանդ գեղեցիկ եղանակատրութեանն*»²: Թեև սկզբնապես հայ պարբերական մամուլի էջերում, հայ երաժշտության պատմությանը նվիրված աշխատություններում տարակարծություններ և վերապահումներ են եղել այս ձայնագրությունների առնչությամբ³, սակայն հետագա ուսումնասիրությունների ընթացքում դրանք փարատվել են: Հայ երաժշտագիտության մեջ Ն. Թաշճյանի ձայնագրած ժողովածուները գնահատվել են որպես գիտական-գեղարվեստական բարձր արժեք ունեցող աշխատություններ (տե՛ս Ն. Թահմիզյանի⁴, Ռ. Աթայանի⁵, Մ. Մուրադյանի⁶, Ա. Արևշատյանի և Լ. Հակոբյանի⁷, Մ. Նավոյանի⁸, Ա. Բաղդասարյանի⁹ և այլոց ուսումնասիրությունները): Ն. Թահմիզյանը, մասնավորաբար, նշյալ ձայնագրյալ ժողովածուները, այդ թվում նաև Պատարագը, դիտել է որպես հայ հոգևոր երաժշտության հիմնասյունը

¹ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան, տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հատ. 4, Երևան, 1978, էջ 141:

² *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, երկրորդ տպագրութիւն, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1878, էջ 3:

³ Տե՛ս Ս. սրկ. Ամատունի, Պ. Նիկողայոս Թաշճյանի հողվածի աղթիվ, *Արարատ*, Ս. Էջմիածին, 1883, է. էջ 306-307: Ա. քին. Հիսարոյան, *Պարմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց* (1768-1919), Կ. Պոլիս, առևտրական նոր տպարան Մ. Յովակիմեան, 1914, էջ 77-79: Ք. Քուշնարյան, *Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2008, էջ 11 և 74:

⁴ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, Ереван, изд. АН Армянской ССР, 1977, с. 8, а также прим. 9.

⁵ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան, (ՀՍՀ):

⁶ Մ. Մուրադյան, *Հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 121:

⁷ Ա. Արևշատեան, Լ. Յակոբեան, *Յառաջաբան «Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց» հատորի*, Երեւան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1997, էջ XXVIII:

⁸ Մ. Նավոյան, *Ճաշու շարականներ՝ Ն. Թաշճյանի ձայնագրությամբ*. տե՛ս *Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Ճաշու շարականներ (փոխադրված հայկական նոտագրությունից եվրոպականի)*, Երևան, «Լիմուշ» հրատ., 2006, էջ 4-6:

⁹ Ա. Բաղդասարյան, *Խմբագրի կողմից*. տե՛ս *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի (փոխադրություն հայկական նոտագրությունից եվրոպականի)*, Երևան, «Ամրոց գրուպ» հրատ., 2008, էջ 339-341:

ներկայացնող և ավատատիրական Հայաստանի հոգևոր-մասնագիտացված երգաստեղծությունն արտացոլող գլխավոր սկզբնաղբյուրներ, որոնք առանձնանում են նյութի հարստությամբ և ոճական մաքրությամբ¹⁰: Ավելին, ըստ Ռ. Աթայանի՝ Ն. Թաշճյանի գրառած բազմաթիվ եղանակներում խազային նոտագրությունից շատ բան պահպանվել է առանց զգալի փոփոխության¹¹:

Ս. Պատարագի երգեցողությունը տրված է չորս տարբերակով.

Ա. Ի պէտս Կիրակէից եւ այլոց հանդիսաւոր ատուրց,

Բ. Ի պէտս լուր ատուրց,

Գ. Ի պէտս հինգ Տաղաւարաց, յորս պատարագիցէ Արքեպիսկոպոսն յիւրում վիճակի,

Դ. Ի պէտս Մեծի Պահոց շաբաթ եւ Կիրակէ ատուրց:

Ս. Պատարագի արարողության համար Ն. Թաշճյանը գրի է առել 16 մեղեդի և 19 տաղ, որոնք նախատեսված են Տերունական և սրբոց տոներին կատարվելու համար: Դրանք ներկայացված են երկու առանձին բաժիններով՝

«Մեղեդիք»¹²

Ծննդյան՝ «Այսօր տօն է»,

Աստվածածնի, Ծննդյան և Ավետյաց՝ «Բանին Հօր» և «Աչքն ծով»,

Ծաղկազարդի՝ «Յիսուս Քրիստոս»,

Հարության՝ «Դիտելով զհեթանոսս», «Այսօր մեռեալք», «Այսօր ողբային», «Ի կոյս վիմէն», «Ազատեա զգերեալսն»,

Հարության և Եկեղեցու՝ «Այսօր հարսն Լուսոյ»

Ջատկի և Հինանց Կիրակիների՝ «Միաշաբաթ օր հանգստեան»,

Համբարձման՝ «Այսօր անդրանիկ Հօր»,

Հոգեզալստյան՝ «Այսօր Սուրբ Հոգին եկեալ»,

Վարդավառի «Լեանն ցնծա դու, Թափօր»,

Առաքելոց «Այսօր ցնծացէք, եղբարք»,

Հայրապետաց՝ «Ի հանդէս տօնի»:

«Տաղք ըստ պատշաճի ատուրցն,

զորս երգեն զկնի «Քրիստոս պատարագեալ»-ի»¹³

Ծննդյան՝ «Երկինք երկնից»

¹⁰ Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, с. 8.

¹¹ Ռ. Աթայան, Ն. Թաշճյան:

¹² Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի, էջ 95-114:

¹³ Նոյն տեղում, էջ 156-171:

Տեառնընդառաջի՝ «Քրիստոս փառաց Թագաւորն»
 Զատկի՝ «Յարեաւ Քրիստոս»,
 Հարության՝ «Ով պարտիզպան», «Յայն առաւօտին»
 Համբարձման՝ «Եւ ի յերկինս վերացեալ»
 Հոգեգալստյան՝ «Միշտ էիդ անեղ»
 Վարդավառի՝ «Այսօր ցնծայ լեառն Թափօր»
 Աստուածածնի՝ «Իսնկին ծառին նման ես»
 Ավետյաց՝ «Աւետիս քեզ, Մարիամ»
 Խաչի՝ «Աստուածածին Կոյսն Մարիամ», «Տիրամայրն»
 Խաչի՝ «Խաչն ի նախնումն»
 Մարտիրոսաց՝ «Հանդուրժելով չարչարանաց»
 Հայրապետաց՝ «Հայրապետաց հանուրց»:

Տաղերից չորսը տեղ են գտել «Յաւելուած»-ում¹⁴ Ջրօրինյաց «Ով գարմանալի» (խորագիր՝ «Յորդորակ ի Գրիգորէ կաթողիկոսէ») և «Այսօր ծայնն հայրական», ինչպես նաև «Աստուածն ամենի» և Խաչի «Կանայք ամենայն» տաղերը:

Հայ երաժշտագիտության մեջ Ձայնագրյալ Պատարագում տեղ գտած 35 տաղերից ու մեղեդիներից քննության են արժանացել ընդամենը յոթը: Դրանցից առաջինը անհայտ հեղինակի «Ազատեա զգերեալսն» Հարության մեղեդին է, որը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել Ք. Քուշնարյանն իր «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության և տեսության հարցեր» կապիտալ աշխատության մեջ¹⁵: Հետագայում վեց տաղի է անդրադարձել Ն. Թահմիզյանը՝ «Աչքն ծով»¹⁶, «Խաչն ի նախնումն»¹⁷, «Դիտելով զհեթանոսս»¹⁸, «Տիրամայրն»¹⁹, «Աստուածն ամենի»²⁰ և «Ով պարտիզպան»²¹:

Ըստ ամենայնի՝ էջմիածնում Ն. Թաշճյանի ձեռքի տակ եղել են միջնադարյան ձեռագիր երաժշտաձիսական մատյաններ, որոնց հետ նա ստուգել-համեմատել է երգվող նմուշները²²: Ձայնագրյալ Պատարագի

¹⁴ Նույն տեղում, էջ 206-224:

¹⁵ Ք. Քուշնարյան, նշվ. աշխ., էջ 177-178 և 482-489:

¹⁶ Ն. Թահմիզյան, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 218:

¹⁷ Նույն տեղում, էջ 268:

¹⁸ Նույն տեղում, էջ 270:

¹⁹ Նույն տեղում, էջ 273:

²⁰ Նույն տեղում, էջ 312:

²¹ Նույն տեղում, էջ 315:

²² Н. Тагмизян, *Теория музыки в древней Армении*, с. 8-9.

երաժշտությունը, Ռ. Աթայանի գնահատմամբ՝ «ներկայացնում է երգային բազմազան ձևի մեղեդիներից կերպոված ծավալուն ամբողջություն՝ հայ միջնադարյան երգահանների վարպետության բարձրարժեք արգասիքը»²³: Պետք է նշել, որ այդ երգահանները մեծ մասամբ անանուն են: Մինչ այժմ հայտնի է տաղային միավորներից հինգի հեղինակային պատկանելությունը՝ «Աչքն ծով» և «Դիտելով զհեթանոսս»՝ Գրիգոր Նարեկացի (X-XI դդ.), «Խաչն ի նախնունն»՝ Կոստանդին Սրիկ Սսեցի (XIII դ.), «Աստուածն ամենի» և «Ով պարտիզպան»՝ Առաքել Սյունեցի (XIV-XV դդ.): Որքան էլ զարմանալի է, ձայնագրյալ նմուշների ցանկում ներառված չէ Ներսես Շնորհալու տաղերից և ոչ մեկը. անհնար է կարծել, որ մեծ երգեցողի և բարենորոգչի տաղային արվեստն այնքան էր մոռացվել, որ ձայնագրության համար չէր գտնվել գեթ մեկ նմուշ: Չէ որ հենց նույն ձայնագրյալ Պատարագում մեծ թիվ են կազմում Շնորհալի հայրապետի հորինած երգերը կամ սրբասացությունները²⁴: Շնորհալու տաղերը մշտապես ընդգրկված են եղել Հայոց Պատարագամատույցում. այսպես՝ XI-XIX դարերն ընդգրկող բնագրում, օրինակ, նշվում է չորս տաղ՝ «Բարբառ անտեսաց ձայնի» (Ավետյաց), «Նոր ծաղիկ բլխե այսօր» (Ծննդյան), «Այսօր Գաբրիել հրեշտակապետն» (Փոխման Ս. Կուսի) և «Աստուածային խորոցն անճառ» (Մարգարեից)²⁵: Հնարավոր է, որ դրանց մեղեդիները պահպանված չեն եղել, սակայն հենց այդ ժամանակաշրջանում՝ XIX դարի երկրորդ կեսին, հենց Ն. Թաշճյանի հարազատ միջավայրում՝ Կ. Պոլսում, իրենց երաժշտական բաղադրիչով կենցաղավարում էին Շնորհալու գրչին պատկանող այլ նմուշներ, որ մեզ են հասել հայտնի երաժիշտ և ձայնագրագետ Համբարձում Չերչյանի ձայնագրությամբ: Դրանք են՝ Խաչելության «Ծարաւեցաւ Տէրն ի Խաչին», Հարության «Նոր ծաղիկ պայծառ» և «Նստեալ կանայքն» տաղերը, որ տեղ են գտել Արմաշի վանքի ձեռագրերում²⁶:

Ձայնագրյալ Պատարագում, ըստ էության, արտացոլված է հայ տաղերգությունն իր գրեթե ողջ պատմական ընթացքով, որն իր թռիչքը սկսել էր X դարում՝ Գրիգոր Նարեկացու արվեստում՝ զարգանալով ու հարատևելով մինչև Վերանորոգության և Նոր շրջանի հեղինակներ: Հատորի առանցքն են կազմում կիլիկյան շրջանում ստեղծված տաղային նմուշները, որտեղ հայ

²³ Ռ. Աթայան, Պատարագ, ՀԱՀ, հատ. 9, Երևան, 1983, էջ 147:

²⁴ Չխոսելով արդեն Շնորհալու բազմաքանակ շարականների և ժամագրքի երգերի մասին, որ տեղ են գտել Ն. Թաշճյանի ձայնագրած մյուս ժողովածուներում:

²⁵ Յ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատուցք Հայոց, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1897, էջ 631:

²⁶ Մաշտոցի անվան Մատենադարան, Նորագույն հավաքածու, ձեռ. NN 5, 6, 103 և այլն:

երաժշտարվեստն աննախադեպ ծաղկման էր հասել: Գրիգոր Գ Պահլավունին, Ներսես Շնորհալիին, Ներսես Լամբրոնացին, Կոստանդին Սրիկ Սսեցին, Հակոբ Կլայեցին, Գրիգոր Սկևռացին, Գևորգ Սկևռացին, ինչպես նաև նրանց հետնորդները, այդ թվում նաև՝ բազմաթիվ անանուն ստեղծագործողներ, պատկառելի երաժշտական ժառանգություն էին թողել, ձևավորվել էին մի շարք երաժշտաժեսական մատյաններ (Շարակնոց, Մաշտոց, Պատարագամատույց, Ժամագիրք, Գանձարան, Տաղարան, Մանրումունք)²⁷, որոնց ընտիր օրինակներից վանքերում կատարվում էին ընդօրինակություններ, զարգացման բարձր աստիճանի վրա էր գտնվում մանրուման արվեստը: Տարբեր վարդապետարաններում գործունեություն ծավալած հայտնի երաժիշտ-փիլիսոփաներից էին՝ Ստեփանոս Մանուկ վարդապետը (Գիտնական մականվանյալ)՝ Ներսես Շնորհալու ուսուցիչը (XII դ., Կարմիր վանք)²⁸, Հովհաննեսը՝ «զընտիրն ի բեմբականս և զանյաղթն յերաժշտականս» (1198 թ., Հռոմկլա)²⁹, Գրիգոր Խուլը՝ «պատուական վարժապետն եւ երաժիշտն եւ առաջին քարտուղարն Սոյո» (XII-XIII դդ.)³⁰, Գրիգորիսը՝ թարմապար երգեցողն ու գրիչը (1238 թ., Սիս)³¹, Հովսեփ երաժշտապետը (Դրազարկ, 1241 թ.)³², Սամուել երաժշտապետը՝ «հոգևոր հայր եւ բարի վարդապետ [...] եւ մակացու յաստուածայինս» (1250 թ., Ձորոյբերդ)³³, Վարդան թարեշնորհ երաժիշտը (1257 թ., Ակներ)³⁴, Սիմեոն փիլիսոփան (1258-1260 թթ., Արքակաղին)³⁵, Մանուել

²⁷ Այս մասին տե՛ս **Ն. Թահմիզյան**, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, էջ 46:

²⁸ **Ղ. Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 51: **Նույնի՝ Հայապարում. պատմիչք եւ պարմութիւնք Հայոց**, հատ. Բ, Վենետիկ-Ս. Ղազար, 1901, էջ 320-321: **Ա. Ալպոյաճեան**, *Պապմութիւն հայ դպրոցի*, Ա. հատոր, Գահիրէ, տպարան «Նոր աստղ», 1946, էջ 194-195:

²⁹ *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, Ե-ԺԲ դդ., աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 294:

³⁰ **Հ. Ղեւոնդ Վ. Մ. Ալիշան**, *Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 105 և 517:

³¹ **Գ. Վ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար. Հայաստանի ճամփորդ*, մասն առաջին, Կ. Պոլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսան, 1879, էջ 63-65: **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 230: **Գ. Զարբեհնալեան**, *Մարենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ-ԺԳ)*, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1889, էջ 168: **Գարեգին Ա. Կաթողիկոս**, *Յիշարակարանք ձեռագրաց*, Ա. հատոր (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951, ս. 859-862 և 929-930: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 203-205:

³² **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 517: **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. Գ, Երևան, Պետական Համալսարանի հրատարակչություն, 1946, էջ 716: **Ա. Ղազարոսյան**, Կիլիկիայի գրչության կենտրոնների սկզբնավորումը, *Էջմիածին*, 2008, Ը, էջ 72:

³³ **Գարեգին Ա. Կաթողիկոս**, *Յիշարակարանք ձեռագրաց*, Ա. հատոր, ս. 1009: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 256:

³⁴ *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 292:

³⁵ **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, էջ 517: *Հայերեն ձեռագրերի հիշարակարաններ*, ԺԳ դար, էջ 298:

իմաստուն երաժիշտը (1273 թ., Ականց անապատ)³⁶, Թորոս վարդապետ փիլիսոփան (1307 թ., Ձորոյն Ս. Թորոսի վանք)³⁷, Մարգարա փիլիսոփան (1335 թ., Թշուրքթի վանք)³⁸ և Հովհաննես փակակալը (առանց թվականի, Ակներ)³⁹: Ղ. Ալիշանը հիշատակում է նաև մի քանի այլ երաժիշտների՝ Ավագ և Թորոս երեցներ, Հովհաննես կուսակրոն, Լևոն, Ներսես, Հովհան արեղա, Կոստան դպիր, «որոց անծանօթ են ուրն և գիա՛րդն»⁴⁰:

Կիլիկյան շրջանում է կատարելության հասել ազգային մասնագիտացված երգաստեղծության մեծակերտ-զարդարական ոճը⁴¹, որի կնիքն է կրում Ձայնագրյալ Պատարագի նմուշների գերակշիռ մասը: Ք. Քուշնարյանը, ուսումնասիրելով XII-XIII դարերի տաղային արվեստի նմուշները, գրում է, որ դրանք իրենց մտահղացման բարդության աստիճանով մոտոդիկ գրականության մեջ «գրավում են համարյա թե առաջին տեղը»⁴²: Նա ի մի է բերում դրանց առավել բնորոշ գծերը՝ երաժշտական բազմաբնույթ կերպարներ, մի քանի թեմայից բաղկացած և դրամատուրգիական բարդ հենքով ծավալվող կառույցներ, լայնաշունչ և ծավալուն հորինվածքներ, ոչ հստակ արտահայտված կառուցվածքային ձևեր, ազատորեն կիրառված գործիքային-իմպրովիզացիոն տարրեր, զարդուլորուն մեղեդիական հյուսվածք (որով դրանք համեմատելի են դառնում մեծակերտ-զարդարական ոճի ճարտարապետական հուշարձանների հետ): Այս տաղերում խոսքը դառնում է երկրորդական նշանակության բաղադրիչ, հաղթահարվում են ձայնեղանակային օրինաչափությունները, լայնորեն գործածվում են ձևափոխված աստիճաններով ձայնակարգեր՝ պայմանավորված երաժշտության բովանդակության մեջ հոգեբանական կողմի խորացմամբ և անհատի նրբին, անձնական ապրումների և կենսական բախումների արտացոլմամբ: Ի մի բերելով իր դիտարկումները՝ Ք. Քուշնարյանը գալիս է այն եզրահանգման, որ XII-XIII դարերի տաղերն իրենցից ներկայացնում են հայ մոտոդիկ մասնագիտացված երաժշտական արվեստի

³⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 432: **Գ. Զարբանալեան**, *Մարենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց* (դար Դ-ԺԳ), էջ 472:

³⁷ **Ղ. Ալիշան**, *Միտան*, էջ 156: **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, հատ. Բ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, § 1232 (ս. 2088): **Հ. Աճառյան**, *Հայոց անձնանունների բառարան*, հատ. Բ, Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, էջ 358, N 73:

³⁸ **Գ. Վ. Սրուանձտեանց**, *Թորոս Աղբար*. *Հայաստանի ճամփորդ*, մասն երկրորդ, Կ. Պոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան (Արամեան), 1874, էջ 449-450: **Ղ. Ալիշան**, *Միտան*, էջ 517 և 535:

³⁹ **Ղ. Ալիշան**, *Միտան*, էջ 517:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ **Ն. Թահմիզյան**, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, էջ 43:

⁴² **Ք. Քուշնարյան**, նշվ. աշխ., էջ 174-176:

զարգացման գագաթնակետերից մեկը⁴³: Այս համատեքստում նրա վերլուծած «Ազատեա զգերեալսն» Հարության տաղին հարում են Ձայնագրյալ Պատարագի բազմաթիվ այլ նմուշներ՝ «Երկինք երկնից», «Քրիստոս փառաց Թագաւորն», «Յարեաւ Քրիստոս», «Յայն առաւօտին», «Աւետիս քեզ, Մարիամ», «Խաչն ի նախնումն», «Բանին Հօր», «Յիսուս Քրիստոս», «Ի կոյս վիմէն», «Ազատեա զգերեալսն», «Այսօր հարսն Լուսոյ», «Միաշաբաթ օր հանգստեան», «Այսօր անդրանիկ Հօր», «Այսօր Սուրբ Հոգին եկեալ», «Լեանն ցնծա դու, Թափօր», «Այսօր ցնծացէք, եղբարք», «Ի հանդէս տօնի քո» և այլն: XII-XIV դարերում կիլիկյան երաժիշտները, «*ըստ երգաստեղծության զարդոյրուն ոճի նոր պահանջների*»⁴⁴, վերաեղանակավորել են նաև նախկինում ստեղծված՝ «Աչքն ծով»⁴⁵, «Տիրամայրն»⁴⁶, «Դիտելով զհեթանոսս»⁴⁷ տաղերը:

Ձայնագրյալ Պատարագի մի շարք մեծակերտ-գարդարական նմուշներ աչքի են ընկնում ոչ միայն ոճական ընդհանրությամբ, այլև բուն մեղեդիական դարձվածքների հարազատությամբ: Շատ դեպքերում արձանագրվում են նաև նույնական հատվածներ. ցայտուն օրինակ է «Այսօր ցնծայ լեառն Թափօր» վարդավառի տաղը⁴⁸, որի երաժշտական բաղադրիչը հորինված է Գրիգոր Նարեկացու երկերի ակնհայտ ազդեցությամբ և պարունակում է մասնավորաբար, «Աչքն ծով» տաղից փոխառնված մեղեդիական դարձվածքներ: Ձեռագրական սկզբնաղբյուրներում «Այսօր ցնծայ»-ն ընծայվում է Ներսես վարդապետ Մոկացուն («Մատաղ» մականունով, XV-XVI դդ.), ով հայտնի է Բաղեշի Ամրդուլու և Խնդրակատար Ս. Աստվածածին վանքերում ունեցած իր բազմադրյուն գործունեությամբ: «Այսօր ցնծայ»-ն եղել է ամենաշատ ընդօրինակված ու սիրված տաղերից մեկը, իսկ մեզ հայտնի ամենավաղ գրառումը տեղ է գտել 1476 թ. արտագրված Տաղարանում (ձեռ. N 1193, տեղն անհայտ, էջ 689)⁴⁹: Այն տվյալ դարաշրջանից մինչև մեր օրերը հասած եզակի հատակոտորներից է, մի նշխար՝ երաժիշտ-փիլիսոփա Ներսես Մոկացու թողած երաժշտաբանաստեղծական ժառանգությունից: Ամփոփելով X-XV դարերի հայ հոգևոր տաղերգության լավագույն ավանդույթները՝ տաղն ինքը ծնունդ է տվել

⁴³ Ք. Քուշնարյան, նշվ. աշխ., էջ 178:

⁴⁴ Ն. Թահմիզյան, *Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ.*, էջ 110:

⁴⁵ Նույն տեղում, էջ 43 և 219:

⁴⁶ Նույն տեղում, էջ 229:

⁴⁷ Նույն տեղում, էջ 271:

⁴⁸ *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 164:

⁴⁹ *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, կազմեց Ն. եպս. Պողարեան, հատ. 4, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1969, էջ 311:

մեկ այլ ստեղծագործության՝ ոգեշնչելով անանուն մի հեղինակի, որը հետագայում, ամենայն հավանականությամբ ուշ միջնադարում, համառոտել է «Այսօր ցնծայ» տաղի երաժշտական բաղադրիչը և այն զուգորդել գրական նոր տեքստի հետ: Արդյունքում ստեղծվել է «Եւ ի յերկինս վերացեալ» Համբարձման տաղը, որ նույնպես զետեղվել է Ձայնագրյալ Պատարագում⁵⁰:

Գրիգոր Նարեկացու երաժշտարվեստի կնիքն են կրում միջնադարյան տաղերգության այլ նմուշներ, որոնցում գործածվել են նրա տաղերից բազմաթիվ կտորներ. իբրև օրինակ բերենք «Աչքն ծով» մեղեդին, որի սկզբնական մոտիվն առկա է «Ազատեա զգերեալսն» տաղում կամ այլուր⁵¹, իսկ «ի ծով» բառերին համապատասխանող երաժշտական նյութը՝ «Ազատեա զգերեալսն» և «Բանին Հօր» տաղերում: Նարեկացու տաղերգությունը ծառայել է իբրև անսպառ աղբյուր, որից օգտվելով՝ միջնադարյան հեղինակներն արարել են նորանոր երկեր: Այդպիսի մի նմուշ է «Դիտելով զհեթանոսս» տաղը, որից ներշնչվելով՝ կիլիկյան մի անանուն հեղինակ իր հորինած «Այսօր ցնծացեք, եղբարք»⁵² տաղ է ներմուծել քաղածո մի քանի մեղեդիական դարձվածք: Մեզ հասած հնագույն Տաղարանում (1241 թ., Դրազարկ)⁵³, տաղը, որ նվիրված է Ս. Առաքյալներ Պետրոսին և Պողոսին, հանդես է գալիս որպես «Գլուխ եկեղեցոյ» տաղի փոխ՝ դրա հետ կազմելով «Գովեստ մատին առաքելոյն Պետրոսի» ծայրակապը, ինչն էլ ենթադրել է տալիս, որ տաղն ու փոխը գրվել են միևնույն հեղինակի կողմից: Պահպանվել են նախօրինակի հիմնական ԲՁ ձայնեղանակը, ծանր ընթացքն ու մեղեդիական զարդուլորուն ոճը: Ինչպես հայտնի է, «Դիտելով զհեթանոսս» տաղը Նարեկացու «Հաւուն, հաւուն» տաղի՝ Կիլիկիայում XIII-XIV դարերում վերաեղանակավորված տարբերակն է (առանց գրական բնագրի առաջին տողի). վերջինից ևս «Այսօր ցնծացեք» են ներմուծվել մեղեդիական բնորոշ դարձվածքներ: Սակայն, անկախ նույնական հատվածների

⁵⁰ *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 163:

⁵¹ Տե՛ս XIII դարում Վարդան Արևելցու վերաեղանակավորած Ս. Աստվածածնի Վերափոխման առաջին օրվա կանոնի «Անթառամ ծաղիկ» ԲՁ դարձվածք Ճաշուն (*Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց, Վաղարշապատ, ի տպարանի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1875, էջ 745*), որը Մովսես Խորենացու հորինած Ծննդյան V օրվա կանոնի «Անթառամ ծաղիկ» ԲՁ չափավոր Ճաշուի ծանր տարբերակն է: Տե՛ս նաև՝ ուշ միջնադարյան տաղային ստեղծագործության մի քանի այլ նմուշներ, որ ներկայացնում են երգչական այլ ավանդույթներ, մասնավորապես, «Այսօր ընդ զօրս» և «Որոյ ձայն հրեշտակաց» տաղերը Արմաշի վանքի ձեռագրերում (*Մաշտոցի անվան Մատենադարան, Նորագոյն հավաքածու, ձեռ. NN 5, 95, 97, 103*):

⁵² *Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի*, էջ 110:

⁵³ Փարիզի ազգային գրադարան, ձեռ. N 79, թ. 341ա. տե՛ս **R. Kévorkian. A. Ter-Stépanian.** Avec le concours de B. Outtier et de G. Ter-Vardanian. *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France.* Catalogue. Paris, Bibliothèque nationale de France/Fondation Calouste Gulbenkian, 1998, p. 163.

անկայությունից, «Այսօր ցնձացեք»-ը բոլորովին այլ ստեղծագործություն է, որ առանձնանում է զարգացման ավելի համեստ ու սուղ միջոցներով, անհամեմատ սեղմ չափերով և ձայնածավալով: Վառ կերպով կրելով Գրիգոր Նարեկացու երաժշտարվեստի ազդեցության կնիքը, այն լայնորեն կենցաղավարել է և մեծ տարածում ստացել՝ դառնալով Գանձարան-Տաղարանների անփոփոխ բաղկացուցիչը. ավելին՝ ինքն է որպես չափանմուշ ծառայել այլ ստեղծագործությունների համար: Նրա եղանակով երգվող նմուշներից է Կոստանդին Սսեցու «Կոյս անապական Մարիամ Սուրբ Աստուածածին» Վերափոխման տաղը⁵⁴:

1241 թ. գրված Տաղարանում «Այսօր ցնձացեք» տաղի անկայությունը մեզ թույլ է տալիս կատարել հետևյալ կարևոր ճշգրտումն առ այն, որ Գրիգոր Նարեկացու «Դիտելով զհեթանոսս» տաղի վերաեղանակավորումը՝ արված կիլիկյան անհայտ հեղինակի ձեռքով, գոյություն է ունեցել արդեն **XIII դարի սկզբներին**:

«Քաջ գիտեմք, - գրում է Գրիգոր Պախլավունի իշխանը,- զի հոյք ի հանդիսի հզորք եւ փառացի եւ փարթամք, եւ վիճակելոց դասք ոսկեհոտ զարդիք պարածածկեալք, սպիտակափառ եւ երաժշտական պարք գումարեալք դաստակերտացն տնօրէնութեամք, եւ ոտիք կաքաւեալք, եւ հնչմանց երգ արտակիտեալ եւ փողեալ քնարական ներդաշնակապէս. քանզի եւ այս ինքեանց յարտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն պատկանեալ եւ յարմարեալ ձայնի»⁴:

Տվյալ ուշագրավ պարբերությունը վերջին տարիներին լույս տեսած երաժշտագիտական ուսումնասիրություններից մեկում թարգմանվել է հետևյալ կերպ. «Քաջ գիտենք, որ վիճակավորների ոսկեհյուս զարդերով ծածկված դասը, դաստակերտներում տնօրինաբար սպիտակափառ և երաժշտական պարեր գումարած (մարդկանց խումբը), և ոտքերով կաքավողները, դրսում հնչեցնող երգողները, և շեփորվող ներդաշնակ մեղեդիները, որովհետև սրանք ինքնին սեփականված են, (կարծում ենք), թրակացիներից, հարկապես (դա) ցածր դասի մարդկանց է պատկանելիս եղել, որոնք մաքրագույն և վճիտ (երգը քթի տակ (կատարվող) բացականչությունների ձևով կամ հարմարեցված ձայնով են կատարել»⁵:

Այս պարբերության թարգմանության մեջ կան անճշտություններ, բացթողումներ և պարզապես սխալ հասկացված բառակապակցություններ, ընդ որում հենց երաժշտական, կատարողական հասկացողություններին վերաբերող, օրինակ. «ի յարտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ

³ Տե՛ս Ա. Արևշատյան, Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը, Պարմաբանասիրական հանդես, N 3, 2012, էջ 78-93; Նույնի՝ Անիի երաժշտական մշակույթը, «Երևան, «Գիտություն» հրատ., 2014, Գլուխ Գ և Դ, էջ 61-107; Նույնի՝ Գրիգոր Մագիստրոսը շարականագիր և գեղագետ, Երևան, «Գիտություն» հրատ., 2015:

⁴ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Բնագիրն յառաջաբանով ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 222-223:

⁵ Տե՛ս Հ. Հարությունյան, Երաժշտությունը V-XV դարերի հայ մատենագրության մեջ, Երևան, 2010, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Հավելված, էջ 147:

քմազարդութիւն եւ բացականչութիւն պատկանեալ եւ յարմարեալ ծայնի» նախադասությունը, որը մենք թարգմանել ենք հետևյալ կերպ. «...այն հատուկ է պատկանավոր և հարմարեցված ծայնեղանակով արտիկյան ներքինիների մաքրագույն և վճիտ ներդաշնակ երգեցողությանը և բացականչությանը»: Այսինքն, խոսքն այստեղ կաստրատների կամ ներքինիների երգեցողության մասին է, որը հայտնի է եղել Անիում Բյուզանդիայից հրավիրվող կատարողների՝ կաստրատների շնորհիվ, իսկ Գրիգոր Մագիստրոսը, որպես բյուզանդական հոգևոր երգարվեստին և արքունիքի երաժշտական կյանքին քաջատեղյակ և գեղարվեստի հանդեպ զգայուն անձնավորություն, անդրադարձել է երևույթին՝ հավաստելով, որ այն առկա է եղել Անիում ևս:

Ակնհայտ է, որ թարգմանիչը անտեղյակ է եղել ոչ միայն ներքինիների երգեցողության փաստին Անիում, այլ նաև հենց բուն Բյուզանդիայում: Այնինչ հայտնի է, որ դեռևս V դարի սկզբին՝ 400 թ., Եվրոպիա կայսրուհու օրոք արքունի երգչախմբի խմբավարը՝ Բրիստն անունով, ներքինի է եղել, ինչը վկայում է ներքինիների մասնակցությունը բյուզանդական երգեցիկ խմբերում: Ներքինի երգիչներն առավել հայտնի ու սիրված են դառնում Մակեդոնյան դինաստիայի իշխանության օրոք: IX դարում Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիայի տաճարի երգեցիկ խումբը բաղկացած է եղել ներքինիներից: Ներքինիների երգեցողությունը իր գագաթնակետին է հասնում XI դարում, Չոե կայսրուհու օրոք, որն, ամենայն հավանականությամբ, հովանավորել է մայր տաճարի երգեցողներին: Այդ երգեցողությունը պահանջված էր ընդհուպ մինչև 1204 թ., երբ չորրորդ խաչակրաց արշավանքի ընթացքում խաչակիրները գրավեցին և հարստահարեցին Կոստանդնուպոլիսը: Ներքինիների ծայնը և երգեցողությունը շատ հարգի էր և բարձր էր գնահատվում Բյուզանդիայում⁶: Այդ յուրահատուկ «անսեռ» երգչական տեմբրը, որն աչքի էր ընկնում մի կողմից՝ կանանց և դիսկանտներին հատուկ բարձր ծայնային ռեգիստրով ու ճկունությամբ, մյուս կողմից՝ բնորոշվում էր տղամարդկանց ծայնին հատուկ հզորությամբ, նմանեցվում էր հրեշտակային երգեցողությանը⁷:

Կարող է հարց ծագել. իսկ որտեղի՞ց ներքինիների երգեցողության այդ պաշտամունքը: Այն կապված է գեղագիտական մի ամբողջ ուսմունքի հետ, որն առաջատար նշանակություն ստացավ ողջ Միջնադարի ընթացքում: Դարերի ընթացքում քրիստոնեական եկեղեցին մշակեց իր գաղափարախոսական-աստվածաբանական գեղարվեստական տեսլականն ու դրան

⁶ Ներքինի-երգիչների մասին ավելի մանրամասն տե՛ս **II. Барбье**, Кастраты-певцы, в кн.: *История кастратов*, СПб, изд. “Ивана Лимбаха”, 2006, сс. 9-37.

⁷ Բյուզանդական կայսրության անկումից հետո, ավելի ուշ, գրեթե 300 տարի անց, կաստրատ երգիչների ավանդույթը վերածնվեց և կատարելագործվեց Իտալիայում՝ սկզբնավորվելով 1601 թ.:

համապատասխանող պահանջները, որոնք ձևավորվեցին նոր պլատոնականության և եկեղեցու հայրերի աստվածաբանական մեկնությունների ներքո: Դա ողջ միջնադարյան կանոնական արվեստի այսպես կոչված նույնության կամ նմանության էությունն էր, որը դրսևորվեց եկեղեցական արվեստի բոլոր ճյուղերում՝ ճարտարապետություն, որմնանկար, մանրանկար, կիրառական արվեստ, հոգևոր երգեցողություն և այլն⁸: Մշակվեց տաճարում հնչող երգեցողության գեղագիտական մի իդեալ, ըստ որի՝ տաճարում հնչող երաժշտությունը հրեշտակների երգեցողության արտացոլումն է երկրի վրա: Դրա հիման վրա ձևավորվեցին նաև եկեղեցական երգեցողության աստվածաբանական մեկնության հիմնական բաղկացուցիչները՝ աստվածատուր լինելը, աստվածային ներշնչվածությունը և հրեշտակաձայն բնույթը (богоданность, боговдохновенность и ангелогласность)⁹, ինչը կապվում էր մի կողմից՝ Դիոնիսիոս Արեոպագացու¹⁰ և մյուս կողմից՝ Իսիդորոս Խորիվացու¹¹ հոգևոր փորձի և ուսմունքի հետ: Այդ գեղագիտական հիմքի վրա կազմավորվեց Աստվածային լույսը, շնորհը և գեղեցկությունը փառաբանող մի ուսմունք, որը հոգևոր երգարվեստում ստացավ այսպես կոչված գեղեցկաձայն կամ հրեշտակաձայն երգեցողություն անվանումը: Իբրև հոգևոր երգաստեղծության մեղեդիական ոճ՝ այն կոչվեց կալոֆոնիկ¹² ոճ, բառացիորեն՝ գեղեցկաձայն ոճ, իսկ ավելի մասնավորվեց համաքրիստոնեական նշանակության հրեշտակային կամ խերուբիկոն (χερουβικον, херувимская песнь) ժանրային տեսակում, ինչպես, օրինակ, «Հրեշտակային կարգաւորութեամբ», «Սուրբ, սուրբ», «Ով է որպէս», «Լոյս զուարթ» և այլ երգասացությունները: Այստեղից էլ կալոֆոնիա (καλοφονια) եզրը, որն ընդհանուր առմամբ բնորոշում է այդ երգեցողական ոճում հորինված երգասացությունները: Ահա այս գեղագիտական ուսմունքով են տոգորված միջնադարյան, հատկապես արևելաքրիստոնեական եկեղեցիների՝ հույն, հայ, վրաց, ռուս, բուլղար ուղղափառ և մյուս արևելաքրիստոնեական երաժշտական եկեղեցական մշակույթների ներքո ձևավորված ազգային հոգևոր երգարվեստի

⁸ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **В. Бычков**, 2000 лет христианской культуры, sub speciae aestheticae, часть 1-ая, Раннее христианство. Византия, Москва-С.Петербург, 1999, Университетская книга, сс. 85-86; տե՛ս նաև՝ **Վ. Ղազարյան**, Դիոնիսիոսի «նման» և «ոչ նման» կատեգորիաները և դրանց պատմական արժեքը, *Հայ արվեստի հարցեր* 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 114-121:

⁹ Տե՛ս **Д. Болгарский**, Киево-Печерский распев как отражение личности, в кн.: *Православная монодия: ее богословская, литургическая и эстетическая сущность*, «Науковий вісник», 15, Киев, 2001, сс. 21-38.

¹⁰ Տե՛ս **Դիոնիսիոս Արեոպագացի**, Աթենացիների եպիսկոպոս Դիոնիսիոս Արեոպագացի նիսեացիների Տիմոթեոս եպիսկոպոսին՝ երկնային քահանայապետությունների մասին, **Դիոնիսիոս Արեոպագացի, Աստվածաբանական երկեր**, փոխադրությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ. Ղազարյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 15,19-20, 22-23, 34-35:

¹¹ Ճգնել է Սինայ լեռան վրա VI դարում: Նրա անվան հետ է կապված «իսիդամ» հասկացությունը և համապատասխան հոգևոր ուղղությունը:

¹² Καλος - գեղեցիկ և φωνος - ձայն՝ հունարեն բառերից:

տեսակները: Հայ հոգևոր երգարվեստում այն լավագույնս դրսևորվել է Պատարագի և Երեկոյան ժամերգության գեղեցկագույն սրբասացություններում և Մանրուման արվեստում: Հետևաբար, քաջատեղյակ լինելով իրեն ժամանակակից Մակեդոնյան հարստության, մասնավորապես, XI դարի առաջին կեսի բյուզանդական հոգևոր երգարվեստի ավանդույթներին և նվաճումներին, Բագրատունիները որոշել էին ետ չմնալ Կոստանդնուպոլսից և ճոխացնել իրենց հանդիսությունները ներքինիների քաղցրալուր երգեցողությամբ: Հենց այդ գեղարվեստական իրողությանն է անդրադարձել Գրիգոր Մագիստրոսը Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված իր նամակում՝ ակնհայտորեն բարձր գնահատելով այդ երգեցողությունը և նրանից ստացած գեղագիտական վայելքը:

Ի դեպ, սա մի խոսուն վկայություն է, որ չնայած դավանաբանական տարածայնությունների, հայ-բյուզանդական երաժշտական կապերը բավական աշխույժ բնույթ են կրել: Այստեղ արժե ընդգծել այն հանգամանքը, որ հայ-բյուզանդական երաժշտական կապերն ուսումնասիրված են անբավարար չափով: Ընդհանուր բնույթի դատողություններից և թռուցիկ հիշատակումներից բացի՝ առ այսօր հրապարակի վրա է այդ հարցին նվիրված ընդամենը մեկ մասնագիտական հոդված: Դա վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի՝ գրեթե կես դար առաջ լույս տեսած հոդվածն է, որը հրատարակվել է «Բանբեր Երևանի համալսարանի» պարբերականում¹³, այնինչ, հայ-բյուզանդական մշակութային, այդ թվում նաև երաժշտական կապերը արժանի են առանձին ուշադրության և ուսումնասիրության: Վաղեմի պատմություն ունեցող այդ կապերի համադրության հիմքի վրա ձևավորված մի փայլուն օրինակ է հենց Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ինտելեկտուալ աշխարհը և ժառանգությունը:

Ամփոփում

Գրիգոր Մագիստրոս Պահլավունին Բագրատունյաց շրջանի մտավոր վերնախավի փայլուն ներկայացուցիչներից էր: Նրա Թղթերը հայ միջնադարյան մատենագրության հանրագիտարանային գիտելիքներ պարունակող եզակի մի գրական հուշարձան են: Թիվ 75 նամակում (Ալեքսանդրապոլ, 1910), նկարագրելով Անիի հիշարժան ժողովրդական հանդիսություններից մեկը, Գրիգոր Մագիստրոսը հիշատակում է ատտիկյան, այսինքն՝ հույն ներքինիների երգեցողությունը: Տվյալ հատվածի սխալ թարգմանված լինելու պատճառով այդ ուշագրավ փաստը դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից: Հոդվածում առաջարկվում է հատվածի համարժեք թարգմանությունը և մեկնաբանումը, ինչն ապացուցում է Բյուզանդիայից հրավիրված ներքինի երգիչների առկայությունը

¹³ Տե՛ս Ն. Թահմիզյան, Գրիգոր Գոզիկը և հայ-բյուզանդական երաժշտական կապերը, *Բանբեր Երևանի համալսարանի*, 1968, N 3:

Անիում: Նրանց «իրեշտակաձայն» երգեցողությունը արտացոլում էր այն ժամանակվա գեղագիտական տեսլականը, եկեղեցու և հասարակության գեղարվեստա-երաժշտական ճաշակը:

Բանալի բառեր՝ Անի, Բագրատունիներ, Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, ներքինիների երգեցողություն:

УПОМИНАНИЕ ОБ ОДНОМ ФАКТЕ МУЗЫКАЛЬНОЙ ЖИЗНИ АНИ В “ПОСЛАНИЯХ” ГРИГОРА МАГИСТРОСА

*Анна Аревшатыан, доктор искусствоведения, профессор
Институт искусств НАН РА
Государственная консерватория имени Комитаса*

“Послания” одного из блестящих представителей интеллектуальной элиты Анийского царства эпохи Багратидов Григора Магистроса Пахлавуни (980-1058) - уникальный литературно-исторический памятник средневековой армянской книжной культуры, в которых наряду со многими сведениями из самых различных областей науки и искусства немало ценных сведений о музыкальной жизни столицы Багратидов Ани (IX-XI вв.), что свидетельствует об обширном кругозоре и научной эрудиции автора. В письме 75 (согласно нумерации первого издателя “Посланий” Карапета Костанянца, Александрополь, 1910), адресованному князю Торнику Мамиконяну, Григор Магистрос, описывая одно из памятных народных празднеств Ани, упоминает о пении аттических, то есть, греческих кастратов во время этого празднества. Фрагмент был неправильно переведен, вследствие чего данный факт выпал из поля зрения исследователей. В статье предлагается адекватный перевод фрагмента, а также его интерпретация, что доказывает наличие в Ани приглашенных из Византии кастратов-певцов, так называемое ангелогласное пение, которых соответствовало эстетическим идеалам и художественно-музыкальным вкусам церкви и общества того времени.

Ключевые слова: Ани, Багратиды, Григор Магистрос, Послания, пение кастратов.

ABOUT A FACT FROM THE MUSIC LIFE OF ANI MENTIONED IN THE LETTERS OF GRIGOR MAGISTROS

*Dr. Prof. Anna Arevshatyan (Armenia)
Honored Worker of Art of RA
Institute of Arts NAS RA
Komitas State Conservatory*

Grigor Magistros Pahlavuni (980-1058) was one of the outstanding representatives of the Bagratid Kingdom of Ani. His *Letters* are unique literary “memorials” that encompass encyclopedic information on Medieval Armenian literature, where one can find interesting facts on various fields of science and art, including information on the music life of the capital city of Ani. This witnesses Grigor Magistros’s exceptional knowledge, multifaceted interests and gifted nature. In his letter No. 75 (as corresponding to the enumeration of Karapet Kostanyants, who was the first publisher of the *Letters*, Aleksandropol, 1910), addressed to prince Tornik Mamikonyan, Grigor Magistros wrote about a folk festivity and mentioned the *Atikian* singers, that is to say the singing of the Greek castrates. As a result of the incorrect translation of this fragment, this remarkable fact was left out from the researchers’ sight. In this article, the adequate translation and interpretation of this fragment is proposed, which itself evidences the presence of the castrate singers in Ani invited from Byzantium. The so-called “angel-voiced” singing of theirs reflected the aesthetical priorities of those times, as well as the artistical-musical taste of the Church and the Society.

Key words: Ani, Bagratides, Grigor Magistros, Letters, chant of castrates.

**ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՏԵՍԱԿԱՆ ՄՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ**

Անի Մուշեղյան (Հայաստան)
**ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն**

Հայ իրականության մեջ XVII-XVIII դարերում ստեղծվել է նշանակալից մտավոր և հոգևոր ժառանգություն, որի համար էլ այդ ժամանակամիջոցը Մանուկ Աբեղյանն անվանել է «նորոգության»¹ շրջան: Դեռևս նախորդ դարում հայ տաղերգությունը, երաժշտությունը, մասնավորապես հայկական ձայնագրության համակարգը՝ խազարվեստը, անկումային փուլում էին. պակասել էին ձայնագրված երաժշտությունը կարդալ իմացողները, հետզհետե անհետացել էին ժամանակին երաժշտատեսական ոլորտում ձեռք բերված նվաճումները, ինչի հետևանքով հոգևոր երաժշտությունն օտարոտի ազդեցությունների ու աղճատումների էր ենթարկվում:

Այս հանգամանքը մեծ մտահոգություն էր պատճառում հոգևոր դասի ներկայացուցիչներին, ովքեր փորձում էին միջոցներ գտնել այդ երևույթը կանխելու և հոգևոր երգերն անկորուստ պահելու համար: Ոմանք առաջարկում էին ընդունել եվրոպական ձայնագրության համակարգը՝ հայ հոգևոր երաժշտությունը ձայնագրելու և հետագա աղավաղումներից ձերբազատելու համար, ոմանք գտնում էին, որ ազգային, հունական, մասամբ նաև արևելյան երաժշտական մտածողության տարրերի համադրմամբ պետք է նորոգել նոտագրության համակարգը, ուրիշներն էլ, ընդդիմախոսելով խազարվեստի ավանդույթի կողմնակիցներին, պահանջում էին ստեղծել հայկական երաժշտության առանձնահատկություններին համապատասխանող ձայնագրության նոր համակարգ՝ ձայնագրության հարազատությունն ապահովելու համար:

Այս առումով՝ նորոգության շրջանի հայ երաժշտատեսական մտքի ընթացքը տրոհել ենք երեք հիմնական ճյուղերի: Առաջինում ընդգրկել ենք Խաչատուր Էրզրումեցու և Մխիթար Սեբաստացու, երկրորդում՝ Թամբուրի Հարությունի, իսկ երրորդում՝ Գրիգոր Գապասաքայանի երաժշտատեսական հայացքները:

Առաջին ճյուղ:

Այս ճյուղից վերլուծել ենք Խաչատուր Էրզրումեցու «Համառոտական իմաստասիրութիւն»² և Մխիթար Սեբաստացու «Մաթեմաթիքա»³

¹ Մ. Աբեղյան, *Երկեր*, հատ. Դ, Երևան, Հայկական ՍՍՀ հրատ., 1970, էջ 511:

² Խաչատուր Էրզրումեցի, *Համառոտական իմաստասիրութիւն*, հատ. 2, Վենետիկ, 1711, էջ 529-535:

աշխատությունները, որոնցում միջնադարյան հայ երաժշտության տեսարանները մանրամասն քննության են առնում եվրոպական ծայնագրության համակարգը:

Երկու հեղինակների աշխատություններում էլ երաժշտությանը նվիրված բաժինը կրում է «Յաղագս երաժշտության» խորագիրը, որն իր հերթին տրոհված է երկուական գլուխների՝ Խաչատուր Էրզրումեցու մոտ «Յաղագս սահմանի երաժշտութեան» և «Տակալին յաղագս սահմանի երաժշտութեան» անվանումներով, իսկ Սեբաստացու մոտ՝ «Յաղագս երաժշտութեան» և «Յաղագս երաժշտութեան ըստ որումն լաթինսն»: Երկու բնագրերի էական տարբերությունը, թերևս, կայանում է նրանում, որ Խաչատուր Էրզրումեցին աշխատությունը շարադրել է չափաձո՝ կատեխիզիսի ձևով, ինչը բացատրություններում առանձին դեպքերում անորոշություն և կատարյալ շփոթ է ստեղծում: Սրամիտ է նկատել Լեոն. «Գիտնական վանականը վնասել է իր գործին, այդ միայն նրանով, որ փարօրինակ ձգտում է ունեցել թողնել պարունդական ոճը և կիրառել երգողական ոչանավորի ոճ, նույնիսկ այնպիսի անբանաստեղծական առարկաների վերաբերմամբ, ինչպիսիք են օրինակ թվաբանությունը, երկրաչափությունը կամ բժշկությունը»⁴: Ի տարբերություն Խաչատուր Էրզրումեցու, Մխիթար Սեբաստացին, ձերբագատվելով չափածոյի պարտադրած ուսուցողական որոշ ավելորդաբանությունից, իր աշխատությունը շարադրել է արձակ: Բացի շարադրման ոճից, երկու բնագրերում ցայտուն տարբերություններ (բացառությամբ երկու ոչ մեծ դեպքերի) գրեթե չեն նկատվում և ինչպես Հ. Համալյանն է նշում «...ինչպես արդեն կարելի է կոստել Մխիթարի յաղագս Մաթեմաթիքայի գրքի նկարագրութեան ու Խաչատուր Վրդ. ի գործի համեմատութենէն, Մխիթար ուրիշ բան ըրած չէ, եթէ ոչ Խաչատուր Վրդ.ի փաղաջափեալ գործը արձակի դարձնելով վերածել դասագրքի մը»⁵:

Երկու հեղինակներն էլ իրենց աշխատության չորրորդ հատվածում են անդրադառնում եվրոպական երաժշտական տեսական համակարգին, մասնավորապես՝ նոտագրության հնգատողյան (Pentagramma) գրության սկզբունքին, ձայների օկտավային դրությանը՝ բացատրելով ութ հիմնական և չորս ածանցյալ ձայների համակարգը, հատուկ կանգ առնելով դրանց համապատասխանող թվաշարքի վրա (1-8 կամ 1-10, վերջինը Ն. Թահմիզյանը

³ «Մաթեմաթիքա»-ի երաժշտական հատվածին ծանոթացել ենք Վ. Տայանի հրատարակած *Մխիթար արքահայր երաժիշտ* (իր շարադրած երգերով հանդերձ) աշխատությունից (Վենետիկ, տպ. Ս. Դազար, 1954):

⁴ Լեոն, *երկերի ժողովածու*, հատ. Գ, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, 468:

⁵ Հ. Համալյան, Մխիթար Աբբայի *Յաղագս Մաթեմաթիքայի* դասագիրքը եւ անոր նշանակությունը, *Բազմավէպ* հանդես, 1949, յուլիս-դեկտեմբեր, էջ 228:

բացատրում է որպես սոլմիզացիոն համակարգի նկարագրություն)⁶, մանրամասն անդրադառնում են ինտերվալների «մեծագոյն» և «փոքրագոյն» հարաբերման բոլոր հնարավոր տարբերակներին:

Եվրոպական տեսական մտքի շուրջ հաջորդ ուշագրավ բանաձևումն առնչվում է տևողություններին, մասնավորապես՝ ամբողջ, կես, քառորդ տևողությամբ հնչյուններին. բացատրվում է, որ ամբողջ և կես հնչյունները բաղկացած են քառորդ տևողությամբ հնչյուններից:

Ինչպես վերը նշեցինք, չնայած ակնհայտ նույնություններին՝ (բացի շարադրանքի ձևից), աշխատությունները, մեր կարծիքով, ունեն նաև որոշ տարբերություններ: Դրանք երկուսն են: Առաջին գլխում հեղինակները երաժշտությունը համարում են գիտություն, որը ցույց է տալիս երգելու և նվագելու կերպը, ծայնի եղանակավորումն ու կարգավորումը, էրգրումեցին նաև՝ գիտական ճանաչողության ձև (հարկ է նշել, որ սա արտացոլանքն է միջնադարյան ավանդույթի):

Խաչատուր Էրգրումեցի
«Յաղագս երաժշտութեան»
Գլուխ 1 «Յաղագս Սահմանի
երաժշտութեան»

*Երաժշտութիւն գիտութիւն. և
գիտնական ճանաչողութիւն:*

*Որ զնուագել ուսուցանէ, զկերպ
երգելոյ ցուցանէ:*

*Զծայնս եղանակավորէ, կարգէ և
կանոնավորէ:*

*Ուստի շուրջ զծայնիւնք շրջի. նաև
գգործիս ընդունի:*

Մխիթար Սեբաստացի
«Յաղագս երաժշտութեան»
Գլուխ 1

*Երաժշտութիւն է գիտութիւն
կարգաւորելոյ եւ եղանակաւորելոյ
զծայնս. Ուստի ուսուցանէ զնուագելն և
զկերպն երգելոյ, եւ սս շուրջ զծայնիվ
դեգերի, ընդունի որք ախորժք եւ
անուշք իցեն լսողութեան:*

⁶ Նույն տեղում, էջ 534:

Աշխատության երկրորդ գլխում հեղինակներն անդրադառնում են «ի նախնեաց» մեզ ավանդված Ութձայն համակարգին (նկատի ունենալով չորս ձայն և չորս կողմ եղանակները) նշելով, որ ԱԶ-ԴԿ գոյանում է որոշակի աստիճանավորություն՝ ցածրից բարձր հետևյալ հաջորդականությամբ. ԱԶ-ԱԿ, ԲԶ-ԲԿ, ԳԶ-ԳԿ, ԴԶ-ԴԿ: Որպես ապացույց՝ հաջատուր էրգրումեցին վկայակոչում է Մարտիրոսաց կարգի «Հարցերը»՝ ըստ ութ ձայների.

ԱԶ- «Զքեզ արդար»

ԱԿ- «Սուրբ Աստուած»

ԲԶ-«Անոխակալ»

ԲԿ- «Օրհնեմք քեզ»

ԳԶ- «Որք զտանջանս»

ԳԿ- «Զինուորութիւնք»?

ԴԶ- «Յասացեալքն»

ԴԿ - «Առ քեզ Աստուած»

Այս մոտեցմամբ հաջատուր էրգրումեցին փորձում է Ութձայնը մեկնաբանել նաև որպես աստիճանաբար աճող տոնայնական համակարգ: Ն. Թահմիզյանը հնարավոր է համարում սա դիտարկել որպես միջնադարյան ավանդույթի արձագանք, թեև ինքն էլ նշում է, որ ո՛չ Ն. Թաշճյանի, ո՛չ էլ Ե. Տնտեսյանի ձայնագրություններում արտացոլված չէ Մարտիրոսաց կանոնի «Հարցերի» մեղեդիներին հատուկ տոնայնական կամ, առհասարակ, տեսիտուրային կարգի այն աստիճանավորությունը, որի մասին խոսում էր հաջատուր էրգրումեցին: Այնուամենայնիվ, հեղինակի քննարկվող պնդումն արժանի է լուրջ ուշադրության՝ որպես ձայնեղանակների կատարման մեջ հնում արմատացած մի ավանդույթի մի արձագանք⁷: Մարտիրոսաց «Հարցերի» այս ստվար հատվածն ամբողջությամբ բացակայում է Մխիթար Սեբաստացու աշխատության մեջ: Բերենք ԱԶ և ԱԿ ձայնեղանակները բնորոշող հատվածները երկու հեղինակների մոտ՝ ասվածը փաստելու համար:

**հաջատուր էրգրումեցի,
«Յաղագս երաժշտութեան»
Գլուխ 2, «Յաղագս Սահմանի
երաժշտութեան»**

*Եւ նա որ առաջին դնի, առաջի ձայն
յարանուանի:*

Եւ է, որ ցածագունեղ է, այն որ

**Մխիթար Սեբաստացի
Գլուխ 2, «Յաղագս
երաժշտութեան»**

*Առաջին ասի առաջի[ն] ձայն. եւ սա է
ցածագոյն քան զայլս: Եւ ունի զայս ձայն ի
շարակնոցի զայս նշան. . աճ, այսինքն այր*

⁷ Ն. Թահմիզյան, հաջատուր էրգրումեցին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1966, № 11, էջ 67:

խոշորագունեղ է:

Յայնմանէ՛ գորինակ կայցուք.

աստանօր առաջադրեսցուք:

Որ այսպէս անունակոչի. կարգ

մարտիրոսաց անունանի:

Ուստի այն առաջի ծայն է, որ զքեզ արդար կոչեալ է:

Եւ նա, որ երկրորդ եղանի. Առաջի

կողմն յարանունանի:

Այս քան զառաջին բարձրանայ. և ի

միասին նրբանայ:

Ուստի այն առաջին կողմն է. որ սուրբ

Աստուած կոչեալ է:

Եւ ծայն որ նշանակի թէ այն երգէ առաջի ծայն: **Երկրորդ ասի առաջի կողմն** Եւ սա է սակաւ ինչ բարձր քան զառաջինն նաեւ նրբացեալ: Եւ սա ունի նշան, զայս ակ. այսինքն այբ Եւ կեն: Երրորդ ասի երկրորդ ծայն կամ պզտի երկրորդ (...)

Այս սկզբունքով հեղինակները շարունակում են հաջորդաբար բնորոշել մնացած վեց ծայն և կողմ եղանակները: Մեր նկատած այս երկու տարբերությունները գուցե ո՛չ ընդգծված, սակայն առկա փաստ են, որ մեզ թույլ չեն տալիս համաձայն լինելու Ն. Թահմիզյանի հետ և պնդելու, թե Մխիթար Սեբաստացին ուղղակի վերարձարժեղ է Խաչատուր Էրզրումեցու աշխատությունները՝ առկա մեծ ընդհանրություններով հանդերձ:

Ավելին՝ Մխիթար Սեբաստացին հայկական երաժշտամտածողությունը եվրոպականով փոխարինելու փորձերում չի սահմանափակվել զուտ տեսական շարադրանքով, այլ այն տեղափոխել է գործնական դաշտ, ինչը վկայում են «Երանուհի Մարիամ կոյս Դրուատելի» և «Գովեալ դասուց» տաղերը, որոնց կանդրադառնանք մեկ այլ առիթով:

Վերը բերված մեր դիտարկումները ակնբախ ցույց են տալիս, որ Խաչատուր Էրզրումեցին ու Մխիթար Սեբաստացին փորձել են խազարվեստը նորոգել եվրոպական տեսական միտումների որդեգրմամբ: Այդ միտումները, հետագայում, համադրվելով ազգային երաժշտական ավանդույթին, ըստ էության, դարձան հայ երաժշտության տեսության այն հիմնական հիմքը, որն էլ XIX դարի կեսից նախապատրաստեց հայկական կոմպոզիտորական արվեստի ձևավորմանը:

Երկրորդ ճյուղ:

Խաչատուր Էրզրումեցու և Մխիթար Սեբաստացու հետ միասին խիստ կարևորում ենք Թամբուրի Հարությունի դերն ու նշանակությունը, ով հայ երաժշտության հետագա ընթացքը տեսնում էր արևելյան ավանդույթի շրջանակներում: Հարկ է նշել, որ «Արևելյան երաժշտության ձեռնարկ» աշխատության բնագրային տարբերակի հետ ծանոթանալ չենք կարողացել,

քանի որ այն շարադրված է հայատառ թուրքերենով, ուստի մեր տեսական պնդումները բացառապես հիմնված են Ն Թահմիզյանի «Тамбурист Арутин и его Руководство по восточной музыке»⁸ աշխատության վրա: Ձեռնարկը, որը դարձյալ շարադրված է կատեխիզիսի ձևով, բաղկացած է պատմական և տեսական բաժիններից: Պատմականում նա ներկայացրել է առասպելական երաժիշտ-իմաստունների կյանքը, իր ընդհանուր գծերով նկարագրված՝ երաժշտական արվեստի ծագման և զարգացման ընթացքը, իմաստունների երաժշտագեղագիտական ասույթները: Աշխատության այս հատվածն, ըստ Ն. Թահմիզյանի, քաղված է պարսկական աղբյուրներից⁹: Տեսական բաժնում կատարող-երաժիշտների համար առաջարկված են անհրաժեշտ գիտելիքներ արևելյան երաժշտությունից առնված մի քանի նմուշների օրինակով: Նախ՝ բացատրվում է թամբուր նվագարանի մատնատեղերի շարքը, որով լրիվ գաղափար է տրվում ձայների միակցության մասին: Այնուհետև նկարագրվում են նվագարանի մատնատեղերը բաժանող մեղեդիական դարձվածքները՝ փերդեները (փարդաները), անդրադարձ կատարվում մուղամ, ավագե և շրե մեղեդիական կառուցվածքաբանական միավորներին: Ապա հեղինակը հատուկ կանգ է առնում չափակշռությային դարձվածքների՝ ուսույների դրության վրա, բացատրում միջնադարյան նևմային գրության սկզբունքները:

Ինչպես Ն. Թահմիզյանն է նշում. «*Ձեռնարկի երկրորդ մասի համար նույնպես օգտագործված են պարսկական երաժշտական-տեսական աղբյուրները, բացի դրանից այսպեղ արտացոլված է Կոստանդնուպոլսի երաժշտական փորձը ևս: Ըստ որում հեղինակը ձգտում է հարաբերակցել միևնույն մարմնի մեջ անփոփոխ երկու, թեպետ տարբեր, ոչ անհնարին ոլորտներ*»¹⁰: Ն. Թահմիզյանն իր հետագա շարադրանքում նշում է, որ Թամբուրի Հարությունը, ապրելով Կ. Պոլսում և հակվելով արաբա-պարսկական և հատկապես պարսկական երաժշտական մտքի ավանդույթներին, դրանք սկզբունքորեն ձուլել է իրար¹¹: Փաստորեն, նա դրանով հանդես է եկել որպես թուրքական երաժշտական տեսության սկզբնավորող և իր կատարողական արվեստով նպաստել է դրա հետագա զարգացմանը: Հատկապես պետք է նկատել, որ թուրքական իրականության

⁸ Н. Тагмизян, Тамбурист Арутин, Руководство по восточной музыке, издательство АН армянской ССР, Ереван, 1968.

⁹ Там же, с.143.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

մեջ դիտարկվող համանման ձեռնարկները կամ հնացած էին, կամ իրենց լեզվով անմատչելի: Եվ ահա Թամբուրի Հարութինը փորձ է արել տեղայնացնել պարսից և արաբական եղանակային սկզբունքները, իրեն ժամանակակից թուրքերենով ստեղծել ձեռնարկ թուրք և թրքախոս կատարողների համար՝ ծավալելով երաժշտական-լուսավորչական բնույթի գործունեություն, մի բան, որը հայտնի է դառնում ձեռնարկի տեքստում տեղ գտած բնորոշ ընդմիջարկումներից: Սակայն կարծում ենք, որ Թամբուրի Հարութինը նույնչափ կարող է դիտարկվել որպես հայ երաժշտական-տեսական մտքի ընթացքը կազմակերպող դեմքերից մեկը, ինչը կփորձենք մեկ-երկու կոնկրետ օրինակներով ցույց տալ:

Նշված ձեռնարկից երևում է, որ Թամբուրի Հարութինը որոշակի առնչություններ է ունեցել XVIII դարի առաջին կեսի հայ գաղթականների երաժշտական կյանքի հետ: Արդարև, XVII-XVIII դարերում, երբ հայ կենտրոններում, այդ թվում՝ Սպահանում, Կոստանդնուպոլսում և Թիֆլիսում նկատելի տեղաշարժեր էին կատարվում քաղաքային երգիչ-նվագածուների, աշուղների արվեստում, Թամբուրի Հարութինը մեծ դեր ունեցավ իր գործունեությամբ, այդ թվում՝ իր ձեռնարկով: Համաձայն ենք Ն. Թահմիզյանի հետ, որ դրա արդյունքը եղավ այն, որ մի կողմից՝ ուշ միջնադարում հայերը նույնպես մասնակից եղան մուղամաթի զարգացմանը, իսկ մյուս կողմից՝ բուն հայկական երաժշտությունն էլ զարգացավ մուղամաթի էական ազդեցությամբ:

Կարծում ենք, որ Թամբուրի Հարութինը մարմնավորում է XVIII դարի հայ երաժշտատեսական մտքի մեջ նկատելի, հիմնական արևելամետ ու արևմտամետ ընթացքներից մեկը: Ու եթե Մխիթար Սեբաստացին և Խաչատուր Էրզրումեցին հայ երաժշտության զարգացման միտումները տեսնում էին եվրոպական ավանդույթի որդեգրումով, ինչպես նաև տեսական համակարգի ներդրումով հետագա ընթացք կազմակերպելու մեջ, ապա գրեթե նույն ժամանակամիջոցում Թամբուրի Հարութինը ճիշտ էր համարում երաժշտության զարգացումը կազմակերպել արևելյան ավանդույթի շրջանակներում: Արևելյան երաժշտատեսական միտումները չեն սահմանափակվում Թամբուրի Հարութինի ներդրումով, այլ շարունակելով զարգանալ, արտացոլվել են Համբարձում Լիմոնճյանի ծայնագրության համակարգի անվանացանկի նախնական տարբերակում և նույնիսկ

Կոմիտասի որոշ ուսումնասիրություններում՝ համեմատվող հնչյունաշարերից մեկի տեսքով:

Երրորդ ճյուղն արտացոլված է Գրիգոր Գապասաքայանի երաժշտատեսական հայացքներում: Այն հայ երաժշտության միջնադարյան ավանդույթի վերանորոգման փորձ է՝ հունական նևների, նաև իր իսկ ստեղծած տարբեր խազանիշերի ներգրավմամբ: Հայտնի է, որ XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Կոստանդնուպոլսում հունական եկեղեցական երգեցողության ոճը և երաժշտության տեսությունը բավականաչափ տարածված էին: Գրիգոր Գապասաքայանը հեռու չի մնացել ժամանակի հոսանքից և հայկական երգեցողության համար ձայնագրության իր նոր համակարգում որոշել է օգտագործել բյուզանդական գրության սկզբունքները՝ դրանով իսկ փորձելով հեշտացնել խազերի բարդ համակարգը:

Ռ. Աթայանը պնդում է, որ Գապասաքայանի համակարգի մեջ բյուզանդական ձայնագրության սկզբունքը գործնականորեն արտահայտվել է նրանով, որ նա, խազերից կամավոր ընտրությամբ վերցնելով տասնչորս ձայնանիշ, անվանել է դրանք «եղանակի խազեր» և տվել նրանց ուշ բյուզանդական ձայնագրության տասնչորս գլխավոր նևների ինտերվալային նշանակություն: Համակարգի մնացած նշաններն անվանել է «մեծամեծ» խազեր և բարձր է դասել հունական համապատասխան նշաններից¹²:

Գ. Գապասաքայանի խազագիտական ժառանգությունն ունի պատմական արժեք այն տեսանկյունից, որ նա կազմել է շարականի խազերի լրիվ ցուցակը, ինչը հետագայում օգտագործվել է նրանից հետո շատ երաժշտագետների՝ այդ թվում՝ Կոմիտասի կողմից: Սակայն, դժբախտաբար, խազերի մոռացված անունների փոխարեն նոր անուններ է մտցրել, ինչը մեծ շփոթ է առաջացրել. *«խազերի հին ցուցակների և Գապասաքայանի ցուցակի համեմատությունից պարզվում է, որ մենկորճ, պեկորճ, շակորճ, զակորճ, յիկորճ, իյեե, վեմվե, բեյրե, խոսրովայենա, խոսրովափոռ և մի շարք այլ նման անուններ հորինել է ինքը՝ Գապասաքայանը»*¹³: Այդ անունները, կրկնվելով հետագա այլ տպագրություններում ևս, վերջնականապես մոռացության են տվել որոշ հին խազերի բուն, իսկական անունները, որոնց վերականգնումը մեծ կարևորություն կունենար դրանց էությունը բացահայտելու գործում:

¹² Ռ. Աթայան, Գրիգոր Գապասաքայանը և խազաբանությունը, *Բաների Մարենադարանի*, Երևան, 1960, 5, էջ 169-166:

¹³ Նույն տեղում, էջ 173:

Յավոք, Գապասաքայանի երկերում ևս նկատելի է միջնադարյան ավանդույթին խիստ բնորոշ սքոլաստիկ մտածողությունը, բանաստեղծական շարադրանքի խրթին ու պաճուճազարդ լեզուն, ինչը բացատրություններում հաճախ անորոշություն է ստեղծում. «Ահաասիկ այս տեսակ բացաբրութիւններէ կը բաղկանան Գապասաքալեանի բոլոր գործերը, որոնցմէ լոյս քաղելու համար Դանիէլ մարգարէ մը ըլլալ պէտք է, որպեսզի կարենայ մեկնել «Մենէ, Թէկէ, Փարէս»-ի պես խորհրդատր բառերը»¹⁴:

Տեսական այս հարցերի քննության մակարդակը պայմանավորված է հայկական երաժշտատեսական մտքի ուշմիջնադարյան ընդհանուր վիճակով, որոնք Գրիգոր Գապասաքայանի գրչի տակ ստացել են ինքնուրույն մեկնաբանություն:

Այս առումով երևելի երաժշտագետի աշխատությունները՝ որպես հայ երաժշտատեսական մտքի զարգացման շրջաններից մեկին բնորոշ երևույթ, ունեն շատ կարևոր պատմական նշանակություն, դրանք «որոշ իմաստով հայ ուշմիջնադարյան և միջնադարյան երաժշտական տեսագեղագիտական մտքի հանրագիտարան են ներկայացնում»¹⁵, և արժանի են համակողմանի ուսումնասիրության: Թեև, մի կողմից, դրանք ապացուցեցին խազային համակարգի հետագա կիրառության անհեռանկարայնությունը, խթանելով խազերի բարդ համակարգից վերջնականապես հրաժարվելուն և արդեն եվրոպական տեսության տվյալները հաշվի առնելով նոր համակարգ ստեղծելուն, սակայն, մյուս կողմից, XIX դարի սկզբներին Գապասաքայանի ձայնագրության յուրատեսակ համակարգը շարունակեց դեռևս ունենալ որոշ հետևորդներ, որոնք շարունակեցին զարգացնել և ավելի ճշգրիտ դարձնել այն, չնայած այդ համակարգն այդպես էլ գործնական նշանակություն չստացավ:

Ամփոփելով նշենք, որ վերոնշյալ երեք ճյուղերը հայ երաժշտական մշակույթի զարգացման համար ի հայտ են բերել մի շարք խորքային միտումներ:

Առաջինը ներկայացնում էին Խաչատուր Էրզրումեցին և Մխիթար Սեբաստացին, ովքեր հայ երաժշտության զարգացման միտումները տեսնում

¹⁴ Ա. քին. Հիսարլեան, Պատմութիւն հայ ձայնագրութեան և կենսագրութիւնք երաժիշտ ազգայնոց 1768-1809, Կ. Պոլիս, 1914, էջ 25:

¹⁵ Ա. Արևշատյան, Գրիգոր Գապասաքայանի երաժշտագիտական ժառանգությունը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2013, էջ 96:

էին եվրոպական երաժշտատեսական համակարգը որդեգրելու, նոտագրությամբ նոր ընթացք կազմակերպելու մեջ: Այս միտումը, համադրվելով ազգային երաժշտական ավանդույթին, փաստորեն, դարձավ երաժշտության տեսության հիմնական հունը, որը նախապատրաստեց XIX դարի հայկական կոմպոզիտորական արվեստի ձևավորումը:

Երկրորդ միտումը արտացոլված է Թամբուրի Հարութինի «Արևելյան երաժշտության ձեռնարկում»: Վերջինս, կարծում ենք, երաժշտության զարգացումը պայմանավորել է արևելյան ավանդույթների հետ: Արևելյան ճյուղը, չմնալով իր եզակի դրսևորմամբ, շարունակում է զարգանալ ընդհուպ մինչև XX դարը ի դեմ Հակոբոս Այվազյանի: Մինչև Հակոբոս Այվազյանը մասնակի՝ դետալային արտացոլումներ կարելի է նկատել այլ հեղինակների՝ Համբարձում Լիմոնճյանի ծայնագրության համակարգի անվանացանկի նախնական տարբերակում, նույնիսկ Կոմիտասի որոշ ուսումնասիրություններում՝ համեմատվող հնչյունաշարերից մեկի տեսքով:

Երրորդ միտումն արտացոլված է Գրիգոր Գապասաքայանի աշխատություններում: Այս ուղղությունը հայ միջնադարյան ավանդույթի վերանորոգության փորձ էր՝ այլ երաժշտական մշակույթների ներգրավմամբ: Խոսքն այս դեպքում կոնկրետանում է ծայնագրման համակարգի՝ խազագրության շուրջ, որի նորովի կիրառության Գապասաքայանի փորձը ենթադրում էր հունական, արևելյան, հայկական և բյուզանդական գրության սկզբունքների ընդգրկումը: Թեև վերջինիս փորձերը այդ բնագավառում ձախողվեցին, այդուհանդերձ, այդ նույն սկզբունքի հաջորդ հաջողված փորձը կարելի է համարել Համբարձում Լիմոնճյանի «Նոր հայկական ծայնագրության» համակարգը, որտեղ դարձյալ հայ երաժշտության ձևավորված ավանդույթը, համադրվելով եվրոպականին, սակավ չափով նաև արևելյանին (ծայնանիշերի նախնական անուններ), հաջողվեց՝ հսկայական դեր խաղալով XIX դարի հայ երաժշտության պատմության մեջ թե՛ երաժշտատեսական, թե՛ կրթական և թե՛ միջնադարյան մոնոփայի վերագրանցման համար, ինչպես նաև XIX դարի վերջին և XX դարի սկզբին նաև ժողովրդական երգերի գրառման բնագավառում:

Հետագայում առաջին ու երրորդ, այսինքն՝ եվրոպական և հայկական ավանդույթներով նորոգության միտումները մեկտեղվեցին պոլսահայ տեսաբանների դպրոցում, իսկ երկրորդը շարունակեց զարգանալ մինչև XIX–XX դարերը:

Այսպիսով, XVIII դարի հայ երաժշտատեսական մտքի դիտարկումներն ի հայտ են բերում հայ երաժշտական մշակույթի զարգացման՝ XIX դարի և XX դարասկզբի մի շարք կարևոր իրողություններ նախապատրաստող խորքային միտումներ, ուստի ժամանակաշրջանի վերաբերյալ Մ. Աբեղյանի օգտագործած **նորոգության շրջան** ձևակերպումը որքանով ճիշտ է, նույն չափով էլ ունի այլ երանգավորում՝ որպես հայ երաժշտական մշակույթի հետագա կարևոր զարգացումներ նախապատրաստող փուլ:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է «նորոգության» շրջանում (XVII–XVIII դարեր) հայ երաժշտատեսական մտքի դրսևորումներին: Դիտարկվում է երեք ճյուղ՝ առաջինը հաշատուր Էրզրումեցու և Մխիթար Սեբաստացու, երկրորդը՝ Թամբուրի Հարութինի, երրորդը՝ Գրիգոր Գապասաքայանի տեսական հայացքների օրինակով:

Դատելով հաշատուր Էրզրումեցու և Մխիթար Սեբաստացու երաժշտատեսական աշխատություններից՝ կարելի է եզրակացնել, որ հեղինակները տեսական մտքի հետագա զարգացման միտումները կապել են եվրոպական տեսական համակարգը որդեգրելու հետ: Թամբուրի Հարութինի երաժշտատեսական հայացքներից կարելի է եզրակացնել, որ հեղինակը հայ երաժշտության զարգացումը կապել է արևելյան ավանդույթների հետ: Երրորդ ճյուղն արտացոլված է Գրիգոր Գապասաքայանի երաժշտատեսական աշխատության մեջ: Այն հայ երաժշտության միջնադարյան ավանդույթի վերանորոգության փորձ է՝ հունական նևների, նաև իր իսկ ստեղծած տարբեր խազանիշերի ներգրավմամբ:

Բանալի բաներ՝ Նորոգության շրջան, հաշատուր Էրզրումեցի, Մխիթար Սեբաստացի, Թամբուրի Հարութին, Գրիգոր Գապասաքայան:

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ АРМЯНСКОЙ МУЗЫКАЛЬНО-ТЕОРЕТИЧЕСКОЙ МЫСЛИ В XVIII ВЕКЕ

Резюме

Ани Мушегян (Армения)

Институт литературы имени М. Абегамян НАН РА

Издательство “Армянская энциклопедия”

В статье исследуется армянская музыкально-теоретическая мысль “Эпохи обновления” (XVII–XVIII вв.), изучение которой даст возможность выявить основные вехи дальнейшего развития армянской музыкальной культуры. Развитие армянской музыкальной культуры “Эпохи обновления” рассматривается в 3-х направлениях: эстетические взгляды Хачатура Эрзрумского и Мхитара Севастийского (первый период), эстетические взгляды Тамбури Арутина (второй период) и эстетические взгляды Григория Гапасакаляна (третий период). На основе работ Хачатура Эрзрумского и Мхитара Севастийского можно заключить, что тенденции развития музыкально-теоретической мысли названные авторы связывали с принятием европейской теоретической системы и организации нового этапа с помощью нотописи. В дальнейшем эти тенденции совместились с национальной музыкальной традицией, по сути ставшей основой армянского музыковедения, которая в свою очередь стала предпосылкой для формирования армянского композиторского искусства половины

XIX века. Из музыкальных взглядов Тамбури Арутина можно заключить, что он связывал развитие армянской музыки с восточной традицией. Третья ветвь отражена в работах Григория Гапасакаляна, которая является попыткой возобновления средневековой традиции армянской музыки, сочетавшая греческие неумы и свои собственные *хазовые* системы. Несмотря на то, что его попытки в этой области провалились, следующим удачным проявлением этого принципа можно считать систему “Новой армянской нотописи” Амбарцума Лимонджяна.

Ключевые слова: Эпоха обновления, Хачатур Эрзрумский, Мхитар Севастийский, Тамбруист Арутин, Григор Гапасакалян.

THE MAIN TENDENCIES OF THE ARMENIAN MUSICAL-THEORETICAL THOUGHT IN THE XVIII CENTURY

Abstract

Ani Musheghyan (Armenia)

**M. Abeghyan Institute of Literature of NAS RA
Armenian Encyclopedia Publishing House of NAS RA**

The article observes the manifestations of the Armenian musical-theoretical thought during the “renewal” period (XVII-XVIII centuries) to define the realities and nodes, which gradually acquired the role of an introductory stage for the further development of Armenian music culture. The development of the Armenian music theory of the “renewal” period is reviewed from the perspectives of three main branches: the theoretical views of (1) Khachatur Erzurumetsi and Mkhitar Sebastatsi, (2) Tamburi Harutin, (3) Grigor Gapasakalyan. Considering Khachatur Erzurumetsi's and Mkhitar Sebastatsi's musical-theoretical works, a conclusion arises that the authors linked the tendencies of the further development of the theoretical mind with the adoption of the European theoretical system and the introducing of music notation. Those tendencies were later synthesized with national music traditions, thereby becoming the mainstream of Armenian music theory that beginning from the middle of the XIX century prepared for the development of Armenian art music. Tamburi Harutin's musical-theoretical views allow concluding that he searched for the paths of development of Armenian music in the Eastern tradition. The third branch is reflected in Grigor Gapasakalyan's musical-theoretical works. He was attempting to revive the medieval Armenian musical tradition through the involvement of Greek neumes, as well as various *khaz* signs, invented by him. Though these kinds of attempts actually failed in this area, however, an important result was seen in the creation of Hampartsum Limondjian's so-called Armenian New Notation.

Key words: Renewal period, Khachatur Erzurumetsi, Mkhitar Sebastatsi, Tamburi Harutin, Grigor Gapasakalyan.

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գիտական հոդվածների ժողովածու
Պատասխանատու խմբագիր՝ Տաթևիկ Շախկուլյան
Երևան
Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հրատարակչություն
2016

KOMITAS AND MEDIEVAL MUSIC CULTURE

Articles
Edited by Tatevik Shakhkulyan
Yerevan
Publication of Komitas Museum-Institute
2016

Կոմիտասի թանգարան – ինստիտուտ
Հասցե՝ Երևան, Արշակունյաց 28
Հեռ.՝ +374 11 570570
Էլ. փոստ՝ institute@komitasmuseum.am

Համակարգչային էջադրումը և կազմի դիզայնը՝ Մուշեղ Գարուկյանի

Տպագրված է «Հայկարի» ՍՊԸ տպարանում
Հասցե՝ Երևան, Կիևյան 18/6
Հեռ.՝ +374 43 107090

Ստորագրված է տպագրության՝ 19.12.2016
Չափսը՝ 60x84 1/16
Տպաքանակը՝ 500 օրինակ

